

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑՈՒ
ՍԻԴՆԵԱՅ ԹԵՄԻ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ

ՆՈՐԱՎԱՆՔ

ՁՕՆՈՒԱԾ
ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ 1700-ԱՄԵԱԿԻՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. ԱԲՐԱՀԱՄԻ
ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՍԻՒՆԵԱՑ ԹԵՄԻ

ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ
ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՏԻԳՐԱՆ ԵՒ ՏԻԱՆԱ
ՀԱՃԷԹԵԱՆՆԵՐՈՒ
(Մոնրէալ-Գանատա)

ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ՝
ԿԱՐԷՆ ՍԱԹԵՒՈՍԵԱՆ

281.6
368442

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ
ՍԻՒՆԵԱՑ ԹԵՄԻ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ

ՆՈՐԱՎԱՆՔ

Բ Հրտ.

ՁՕՆՈՒԱԾ՝
ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՕՆ ՀՌՉԱԿՄԱՆ
1700-ԱՄԵԱԿԻՆ

БИБЛИОТЕКА
Институт Истории АН Арм.ССР

պ.գ.դ. Ռ.Մաթևոսյանի
անձն. գրադարան

ՄՈՆՐԵԱԼ-ԵՐԵՒԱՆ
2001



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑՒ ՍԻՒՆԵԱՑ ԹԵՄԻ «ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ

Հայ Առաքելական Ս. Եկեղեցու Սիւնեաց հնամեայ թեմի տարածքում են գործել միջնադարեան Հայաստանի վանական գիտամշակութային այնպիսի նշանաւոր կեդրոններ, ինչպիսիք են Տաթեւը, Վահանավանքը, Որոտնավանքը, Նորավանքը, Գլաձորը, Հերմոնը եւ այլն: Հայոց միջնադարեան համալսարանը հիմնուել է Սիւնիքում եւ այստեղ ուսանելու են եկել անգամ հեռաւոր Կիլիկիայից ու Ղրիմից: Այսպիսի հարուստ աւանդոյթներ ունեցող երկրամասում եւ նորօրեայ անկախ Հայաստանում վերազարթօնք ապրող թեմում աւելի քան պատշաճ էր Եկեղեցու հովանու ներքոյ հայագիտական տարեգրքի հրատարակութիւնը, որը իրագործուեց Նորավանքի վերաբացումից յետոյ, թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Սկրտչեանի նախաձեռնութեամբ:

1999 թ. Ապրիլի 18-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս երջանկայիշատակ Գարեգին Ա-ի նախագահութեամբ, մեծ շուքով կայացաւ Հայոց ամենահռչակաւոր վանքերից մէկի՝ Նորավանքի Ս. Աստուածածին եկեղեցու օծումը: Դրանից երկու օր առաջ՝ Ապրիլի 16-ին Եղեգնաձոր քաղաքի մշակոյթի պալատի մեծ սրահում տեղի ունեցաւ «ՆՈՐԱՎԱՆՔ-99» գիտաժողովի բացումը, ուր ելոյթ ունեցան 1700-ամեակի գրասենեակի վարիչ քարտուղար Տ. Մեսրոպ արք. Աշճեանը եւ Սիւնեաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Սկրտչեանը: Այդ եւ յաջորդ օրը կայացած 3 նիստերի ընթացքում գիտաժողովի մասնակիցները կարդացին հետեւեալ զեկուցումները. ՇԱՀԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԷՄԵԱՆ, աստուածաբանութեան դոկտոր պրոֆեսոր, «ՍԻՒՆԵԱՑ ԱԹՈՌԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ», ՎԱՐԱԶԴԱՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՔԱՐԱԿԵՐՏ ԳԱՆՁԵՐԸ», ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ, պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, «ՍԻՒՆԵԱՑ ՄԵՏՐՈՊՈԼԻՏՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ (9-14-ՐԴ ԴԴ.)», ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐԵԱՆ, պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, «ՆՈՐԱՎԱՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ

ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՆԵՐԸ ԺԲ-ԺԴ ԴԱՐԵՐՈՒՄ», ԱՐՏԱՇԵՍ ՍԱԹԵՒՈՍԵԱՆ, պատմական գիտութիւնների թեկնածու, Մատենադարան, «ՆՈՐԱՎԱՆՔԸ ՍԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ», ԱՍՏՂԻԿ ԳԵՒՈՐԳԵԱՆ, արուեստագիտութեան թեկնածու, Մատենադարան, «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐԸ 14-15-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ», ՅԱԿՈԲ ՔԷՕՍԷՅԵԱՆ, բանասիրական գիտութիւնների թեկնածու, Մատենադարան, «ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼԵԱՆԻ ԴԱՒԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ», ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, պատմական գիտութիւնների թեկնածու, Մատենադարան, «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐԸ», ՍՈՒՐԷՆ ՍԱՂՈՒՄԵԱՆ, պատմական գիտութիւնների թեկնածու, ՀՀ Պատմութեան եւ մշակոյթի յուշարձանների պահպանութեան եւ վերականգնման վարչութիւն, «ՆՈՐԱՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԸ», ՅՈՒՍԻԿ ՄԵԼՔՈՆԵԱՆ, պատմական գիտութիւնների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, «ՅԱՂԱՑ ՔԱՐ ՎԱՆՔԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՆՈՐԱՅԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ», ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ, պատմական գիտութիւնների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, «ՆՈՐԱՎԱՆՔԻ ՆՈՒԻՐԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳԲՈՒԹԻՒՆՆԵՐԸ», ՀԱՍԼԵՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ, պատմական գիտութիւնների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՏԱՊԱՆԱՔԱՐԱՅԻՆ ՔԱՆԴԱԿՆԵՐԸ», ՔՆԱՐԻԿ ԱՒԵՏԻՍԵԱՆ, Հայաստանի Ազգային պատկերասրահ, «ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՊԱՏԿԵՐԱՔԱՆԴԱԿՆԵՐԸ ԱՐԵՒԻՒՄ ԵՒ ՆՈՐԱՎԱՆՔՈՒՄ»:

Գիտաժողովի աւարտից յետոյ որոշուեց զեկուցումների նիւթերը հրատարակել առանձին ժողովածուով, որով պիտի հիմք դրուի Սիւնեաց թեմի հայագիտական տարեգրքին: Եւ ահա մէկ ու կէս տարի անց այդ ցանկութիւնն իրականութիւն է դառնում շնորհիւ Տէր եւ Տիկին Տիգրան եւ Տիանա Հաճէթեանների նոր բարեգործութեան:

Սոյն ժողովածուում ընդգրկուած են «Նորավանք - 99» գիտաժողովի զեկուցումների մեծ մասը: Չեն ընդգրկուած այն զեկուցումները որոնք այս ընթացքում հրատարակուել են գիտական այլ պարբերականներում կամ ժողովածուներում, սակայն այստեղ ներառել ենք այդ զեկուցումների դրոյթները:

Գիտական յօդուածներից բացի ընթերցողին ենք ներկայացնում Նորավանքի օծմանը եւ Սիւնեաց թեմի ներկային վերաբերող հակիրճ լրատուական նիւթեր, իսկ վերջում՝ 2001 յոբելեանական



Նորավանք 99 գիպսաժողովի բացում.
Շահէ Արք. Ամէմեան եւ Մեսրոպ Արք. Աշճեան

տարուայ եկեղեցական օրացոյցը:

Մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում տարեգրքի նախաձեռնող Սիւնեաց թեմի առաջնորդարանին, հրատարակութեան գործը յանձն առած Տէր եւ Տիկին Տիգրան եւ Տիանա Հաճէթեաններին, գիտաժողովին մասնակցած եւ տարեգրքին յօդուածներ տրամադրած բոլոր հեղինակներին, ինչպէս նաեւ ձեւաւորումն ու տպագրութիւնն իրականացնողներին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ՁԵՌԱՄԲ ՎԵՐԱԲԱՑՈՒԵՑ ՀՌՉԱԿԱՒՈՐ ՆՈՐԱՎԱՆՔԸ

Ապրիլի 18-ին՝ Կանաչ Կիրակի, ձեռամբ Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Գարեգին Ա կաթողիկոսի, տեղի ունեցաւ Նորավանքի՛ Ս. Աստուածածին եւ Ս. Ստեփանոս Նախավկայ եկեղեցիների օծումը:

Նորավանքը, որ ժամանակին եղել է Սիւնեաց մետրոպոլիտների աթոռանիստը, Օրբելեանների հոգեւոր կեդրոնն ու դամբարանավայրը, նաեւ հայ եկեղեցական ճարտարապետութեան ամենանշանաւոր իրագործումներից է: Վանական համալիրը, որ տեղացիները «Կարմիր վանք» են անուանում, չէր գործում շուրջ մէկ դար: Վանքի Սուրբ Ստեփանոս Նախավկայ եկեղեցին պետական հովանաւորութեամբ վերականգնուել էր 1980-ական թուականների սկզբին: Իսկ Ս. Աստուածածին եկեղեցին, անցեալ դարի կէսերին կիսով չափ աւերուած լինելով երկրաշարժից, վերականգնուել էր միայն մասնակիօրէն: Եւ ահա, Ամենայն Հայոց Գարեգին Ա կաթողիկոսի անմիջական հովանաւորութեամբ, Սիւնեաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչեանի եւ Տ. Մեսրոպ արք. Աշճեանի գլխաւորած 1700-ամեակի գրասենեակի կազմակերպմամբ, գանատահայ բարերարներ տէր եւ տիկին Տիգրան եւ Տիանա Հաճէթեաններ բարերարութեամբ, երկու տարուայ ընթացքում՝ 1996-1998 թթ., իրականացուեց Մոմիկ ճարտարապետի նախագծով կառուցուած եկեղեցու ամբողջական վերականգնումը:





Մինչեւ եկեղեցու օծումը՝ Ապրիլի 16-ին, Վայոց ձորի մարզկեդրոն Եղեգնաձորում սկսուեց «Նորավանք-99» գիտաժողովը, որի առաջին նիստը վարեց Տ. Մեսրոպ արք. Աշճեանը: Գիտաժողովին զեկուցումներով հանդէս եկան Տ. Շահէ արք. Ամէմեանը, ակադեմիկոս Վարազդատ Յարութիւնեանը, գիտութիւնների դոկտորներ, թեկնածուներ, Մատենադարանի եւ ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի, Հայաստանի ազգային պատկերասրահի գիտաշխատողներ: Ներկայ էին եկեղեցու բարեբարները, Սիւնեաց թեմի հոգեւոր դասը, Եղեգնաձորի մտաւորականութեան եւ հասարակութեան տարբեր խաւերի ներկայացուցիչներ: Նոյն օրը Հայաստանի ազգային պատկերասրահի՝ Եղեգնաձորի մասնաճիւղում բացուեց «Մոմիկ» մշակութային միութեան եւ Եղեգնաձորի նկարիչների՝ ժամանակակից հայ քրիստոնէական արուեստը ներկայացնող ցուցահանդէս, իսկ քաղաքի երկրագիտական թանգարանի սրահում կայացաւ գանատայում հրատարակուած «Նորավանք» գրքի շնորհանդէսը: Ապրիլի 17-ին գիտաժողովի աշխատանքներն ամփոփող ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի տնօրէն Արամ Քալանթարեանն ընդգծեց զեկուցումների գիտական եւ ողջ ծրագրի կազմակերպչական բարձր մակարդակը:

Ապրիլի 18-ի վաղ առաւօտից Եղեգնաձորից, շրջակայ քաղաքներից ու գիւղերից, Երեւանից, Արցախից ու այլ վայրերից դէպի Նորավանք շարժուեցին հազարաւոր ուխտաւորներ: Այստեղ՝ ամբողջութեամբ վերականգնուած Ս. Աստուածածին եկեղեցում, մատուցուեց առաջին Ս. Պա-



տարագը: Պատարագիչն էր Գանատայի թեմի առաջնորդ Տ Յովնան արք. Տէրտէրեանը:

Շուտով, մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան հայրերի ուղեկցութեամբ Նորավանք ժամանեց Ամենայն Հայոց Գարեգին Ա կաթողիկոսը՝ կատարելու Ս. Աստուածածին եւ Ս. Ստեփանոս Նախավկայ եկեղեցիների օծումը:

Արարողութեանը ներկայ էին նաեւ ՀՀ մշակոյթի նախարար Ռոլանդ Շառոյեանը, տարածքային կառավարման եւ գործադիր հարցերի նախարար Դաւիթ Ջաղոյեանը, ՀՀ գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեանը, Ս. Աստուածածին եկեղեցու բարերարներ տէր եւ տիկին Հաճէթեաններն, հազարաւոր ուխտաւորներ Հայաստանից եւ Սփիւռքից: Նորավանք ուխտի էր եկել նաեւ ԼՂՀ պատուիրակութիւնը՝ Ա֊ր նախագահ Օլեգ Եսայեանի գլխաւորութեամբ: Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռամբ՝ սրբալոյս միւռոնը հեղուեց գաւաթի մէջ, որը դպրաց դասի երգեցողութեամբ՝ հանդիսաւորապէս տարուեց Ս. Աստուածածին եկեղեցի: Շարականների ու սաղմոսների երգեցողութեամբ՝ կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Տ. Գարեգին արք. Ներսիսեանը, Տ. Մեսրոպ արք. Աշճեանը, Տ. Պարգեւ եպս. Մարտիրոսեանը, Տ. Յովնան արք. Տէրտէրեանը, Տ. Աբրահամ եպս. Մկրտչեանը, Տ. Առաքել եպս. Քարամեանը կատարեցին Ս. Աստուածածին եկեղեցու օծումը, որից յետոյ սրբալոյս միւռոնով ուղղուեցին դէպի Ս. Ստեփանոս՝ օծելու նաեւ այս եկեղեցին:

Յաւարտ եկեղեցու օծման՝ երախտիքի խօսք ասաց Սիւնեաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչեանը: Եկեղեցու բանալիներից մէկը սրբազան հայրը հանդիսաւորապէս յանձնեց Վեհափառ Հայրապետին,



երկրորդը՝ եկեղեցու բարերարներ տէր եւ տիկին Տիգրան եւ Տիանա Հաճէթեաններին, իսկ երրորդն առյաւէտ կը մնայ եկեղեցում:

Ծնորհաւորանքի խօսքեր ասացին նաեւ Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ եպս. Մարտիրոսեանը, Վայոց ձորի մարզպետ Պանդուխտ Մանուկեանը, ԼՂՀ մշակոյթի նախարար Արմէն Սարգսեանը:

Ապա Նորավանքի օծման առիթով Վեհափառ Հայրապետի խօսքն ընթերցեց գերշ. Տ. Մեսրոպ արք. Աշճեանը:

«Սա այլեւս յուշարձան չէ. սա հաւատքի եւ մշակոյթի օճախ է: Սա ճարտարապետական եւ քանդակագործական կոթող չէ. սա «դպրոց» է, մի «շքոլա», ինչպէս այնքան կը սիրէր ըսել Խաղբակեանց, Պռոշեանց, Օրբելեանց եւ աւատապետական այլ մեծ գերդաստաններու պատմութեան հմուտ մասնագէտ Գարեգին կթղ. Յովսէփեանց, ուր պիտի գան սերունդներ՝ այստեղ գտնելու համար աղբիւրն հաւատքի, գեղեցկութեան եւ հոգեւոր ու մտաւոր ճառագայթումի: Սա այլեւս սոսկ անցեալի յուշարար չէ, այլ ապրող, շնչող ուխտատեղի, ուր մեր ժողովուրդի զաւակները պիտի գան յաճախակի հերթականութեամբ, դպրոցականներ, համալսարանականներ, որպէսզի «քարեղէն» գիրքերու մէջէն հոգեղէն ճշմարտութեան արժէքները քաղեն, միախառնեն իրենց հոգեբանութեան եւ գիտութեան մէջ եւ դառնան Նորավանքի նոր «հաւատացեալները»:

Այսօրուան օծումը մի նոր անկիւնադարձ կը բանայ Նորավանքի դարագնաց պատմութեան մէջ. այնպիսի անկիւնադարձ, որ հինին կ'ըսէ. «Դու հնացեալ չես», եւ նորոգեալին, բարեզարդեալին կ'ըսէ. «Դու ծաղկազարդի մի նոր դրուագ ես, կուգաս Յիսուսի նման եւ սրբութիւն կը ցանես այս լեռնալանջերուն»,- ասում էր Վեհափառ Հայրապետի խօս-



Աբրահամ Եպս. Մկրտչեան բարեւարին յանձնեց եկեղեցու բանալին



Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը անձամբ «Ս. Գրիգոր Լուսաւորիչ շքանշանը փակցրեց Տիգրան Համէքեանի կրծքին եւ յանձնեց Կոնդակը

քում, որտեղ Նորին Սրբութիւնն նաեւ իր գնահատանքի խօսքն էր ուղղում բոլոր նրանց, ովքեր իրենց աւանդն են ունեցել եկեղեցու վերականգնման գործում:



Աւարտելով ընթերցանութիւնը՝ Մեսրոպ սրբազանը Կանաչ Կիրակին հռչակեց Նորավանքի ուխտի օր:

Ապա Արտակ աբդ. Տիգրանեանն ընթերցեց Վեհափառ Հայրապետի կոնդակը, որով Ս. Աստուածածին եկեղեցու բարերարին շնորհուեց Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու բարձրագոյն պարգեւը՝ «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանը: Ամենայն Հայոց հայրապետն անձամբ շքանշանը փակցրեց Տիգրան Հաճէթեանի կրծքին:

Հանդիսաւոր մասից յետոյ ներկայացուեց ընդարձակ մշակութային յայտագիր, ելոյթ ունեցան մարզի պարային խմբերը, իրենց ստեղծագործութիւնները ցուցադրեցին տեղացի եւ Երեւանից ժամանած արուեստագէտները:

Երեւի վեց-եօթ դար Նորավանքի ձորը չէր տեսել այդքան մարդկային խուռն բազմութիւն: Նորավանքի ձորը կեանք էր առել, որովհետեւ վերաբացուել էր նրա մարգարիտը՝ Նորավանքը:

Ցանկանք, որ օծումից յետոյ Նորավանքում շուտով աւարտուեն նաեւ յարակից շինութիւնները եւ, Սիւնեաց թեմի առաջնորդ Աբրահամ սրբազանի բաղձանքի համաձայն, այն դառնայ կանոնաւորապէս գործող վանք, վերագտնի իր պատմական հարուստ աւանդոյթները:

ՄԱՍԼՈՅ ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ
«Քրիստոնեայ Հայաստան»,
Ապրիլ Բ, 1999, (թիւ 52)

«ՆՈՐՈԳՈՂ ՀՆՈՒԹԵԱՆՑ, ՆՈՐՈԳԵԱ՛ ԵՒ ՁԻՍ, ՆՈՐՈԳ ՁԱՐԴԱՐԵԱ՛»

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՕՍՔ ՆՈՐԱՎԱՆՔԻ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ 18 ԱՊՐԻԼ, 1999

Այս պահը յուզախառն ապրումներու մի բացառիկ պահ է ինծի համար: Սա պահին, աչքերիս կողմից համընդգրկումը այս քարերին, ձեռքերիս հպումը սա վէմերին, տարբեր երանգ կու տան պատմութեան, եկեղեցու, հայրենիքի եւ մշակոյթի իմ հասկացողութեան եւ ընկալման: Քարերը սա բլուրների վրայ դիզուած, տարտղնուած, երբեմն ժայռացած ուրիշ բան են, քան ինչ որ քարն է: Նորավանքի եկեղեցին վանական, յուշախօսային այս համոյթը կենդանի քարերի մի համերգ է ունկնդրել գիտցող հաւատացեալին եւ սրբութիւնից այցելուող ուխտաւորին համար: «Կենդանի քարեր» են սրանք՝ ըստ Աստուածաշունչ մատեանի խօսքին (Ա. Պետր., Բ, 5): Նրանք ունին իրենց յատուկ լեզուն, որ անջնջելի է, որովհետեւ իր մէջէն կը խօսին հաւատքը, սէրը, Աստուծոյ անստուեր ներկայութիւնը, աղօթքին մրմունջը, շարականի մեղեդին, մոմի իւղը, խունկին բոյրը, արեւին շողը, քրտինքին հոտը, նոյնիսկ երբեմն արեան գիծն ու գոյնը:

Այս բոլորը սակայն անմիջական հաղորդութենէ զուրկ էին մագաղաթ գիրքի մէջ, լուսանկար, «անանձնական» մի գոյութիւն, որ կը «խօսէր» մեզի առանց բարբառելու: Կը խօսէր պատմութեան էջերէն, կը խօսէր իշխաններու սաղաւարտներէն եւ նիզակներէն, կը խօսէր վարպետ քարտաշներու մուրճի հարուածներու կշռութաւոր եւ հոգիէն ճառագայթող ապրումներու իմաստաշեշտ ընթացքէն, կը խօսէր «գրիչներու», «ծաղկողներու», «ոսկողներու» վրձինահար մեղմ հպումներէն մագաղաթներու վրայ տժգոյն: Կը խօսէր նոյնիսկ եւ վերջերս մանաւանդ աւերակներու բեկբեկեալ լեզուով, եւ սակայն թելադրական անօրինակ զօրութեամբ:

Այսօր այն կը թողու աւերակներու այդ լեզուն եւ կը խօսի իր հարազատ եւ ամբողջական լեզուով: Միջին դարերու մեր մշակութային ժառանգութեան ամենէն նշանակալից այս շրջանը Օրբելեան մեծ աւատապետական իշխանութեան քաջալերանքին տակ եւ Սիւնեաց մետրոպոլիտական Աթոռի անմիջական հոգածութեան ներքեւ վստահաբար առաւել խոր հասկացողութեան պիտի բարձրանայ Նորավանքի այս գեղատեսիլ վանական համալիրի նորազարդ պայծառացեալ տեսքովը, որ ինքնին ներշնչման աղբիւր է ոեւէ պարզ դիտողի համար այս լեռնալանջի տարածութեանը մէջ:

Սա այլեւս յուշարձան չէ. սա հաւատքի եւ մշակոյթի օճախ է: Սա ճարտարապետական եւ քանդակագործական կոթող չէ. սա «դպրոց» է (մի «շքոլա», ինչպէս այնքան կը սիրէր ըսել Խաղբակեանց, Պռոշեանց, Օրբելեանց եւ աւատապետական այլ մեծ գերդաստաններու պատմութեան

հմուտ մասնագէտ Գարեգին կթղ. Յովսէփեանց), ուր պիտի գան սերունդները՝ այստեղ գտնելու համար աղբիւրն հաւատքի, գեղեցկութեան եւ հոգեւոր ու մտաւոր ճառագայթումի: Սա այլեւս սոսկ անցեալի յուշարար չէ, այլ ապրող, շնչող ուխտատեղի, ուր մեր ժողովուրդի զաւակները պիտի գան յաճախակի հերթականութեամբ՝ դպրոցականներ, համալսարանականներ որպէսզի «քարեղէն» գիրքերու մէջէն հոգեղէն ճշմարտութեան արժէքները քաղեն, միախառնեն իրենց հոգեբանութեան եւ գիտութեան մէջ եւ դառնան Նորավանքի նոր «հաւատացեալները»:

Այսօրուան օծումը մի նոր անկիւնադարձ կը բանայ Նորավանքի դարագնաց պատմութեան մէջ, այնպիսի անկիւնադարձ՝ որ հինին կ'ըսէ. «Դու հնացեալ չես», եւ նորոգեալին, բարեզարդեալին կ'ըսէ. «Դու ծաղկազարդի մի նոր դրուագ ես, կուգաս Յիսուսի նման եւ սրբութիւն կը ցանես այս լեռնալանջերուն»:

Բնականօրէն, Նորավանքի հիմնական վերականգնումը իր սկզբնային պատկերին մէջ՝ արդիւնք է ամենէն առաջ մեր պետական հոգածութեան, յատկապէս այն գիտնականներու, որոնք տարիներ շարունակ յոգնաջան աշխատանքով կատարեցին հարկ եղած ուսումնասիրական, հետազօտական աշխատանքներ, որպէսզի մնայ հարազատ եւ անփոփոխ՝ հայ հոգու այս շքեղածայն եւ «անլռելի զանգակատունը»:

Բոլորին կը յայտնենք Մեր հայրական ամենաջերմ սէրը եւ հայրապետական բարձրագոյն գնահատանքը:

Հայց. Եկեղեցւոյ պաշտօնական հիմնադրութեան 1700-ամեակի ծրագրերու շարքին մէջ յատուկ տեղ եւ նշանակութիւն ունի այս եկեղեցական վանական համալիրին վերաշինութիւնը: Դալար եւ ուժեղ մնան օրհնեալ ձեռքերը մեր քարտաշներուն, տաղանդաւոր ճարտարապետներուն եւ քանդակողներուն:

Մեր գնահատանքի խօսքը 1700-ամեակի գործադիր յանձնախումբին եւ անոր նուիրեալ աշխատողներուն, որոնք ամէն ինչ գործ դրին առանց դադարի եւ գործը գլուխ հանեցին:

Վերջապէս, Մեր հայրական սիրոյ ջերմագին խօսքը Մոնրէալի (Գանատա) մեր անձնուէր եւ եկեղեցասէր բարեկամներուն՝ տէր եւ տիկին Տիգրան եւ Տիանա Հաճէթեաններուն, որոնց նիւթական զոհողութեան գեղեցիկ պտուղն է, որ կը վայելենք այս օրերուն, եւ յատկապէս այս Կիրակի, որ մեր Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ համար «Կանաչ Կիրակի» կը կոչուի՝ փոխաբերականօրէն այնքան ներշնչողական իմաստով: Թող Աստուած արեւու պէս երջանկութիւն ցանէ իրենց կեանքին մէջ:

Թող Նորավանքը՝ թարմօրէն միւռոնեալ, նոր շունչ, նոր հաւատք, նոր տեսիլք ցանէ ձեր եւ գալիք ուխտաւորներու կեանքերուն մէջ:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
18 Ապրիլ, 1999 ի Ս. Էջմիածին

ՈՒԽՏԻ ՕՐԸ ՆՈՐԱՎԱՆՔՈՒՄ 2000 ԹՈՒԱԿԱՆԻՆ

Նորավանքի ուխտի օրը՝ Կանաչ Կիրակին՝ 2000 թուականին Մայիսի 7-ին էր: Սիւնեաց թեմի հոգածութեամբ այս առիթով Նորավանքում մատուցուեց Սուրբ Պատարագ ձեռամբ Տ. Յովնան արք. Տէրտէրեանի, մասնակցութեամբ Սիւնեաց թեմի հոգեւոր դասի եւ Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանի աւագ լսարանների սաների: Պատարագից յետոյ վանքի բակում հաւաքուած բազմաթիւ հաւատացեալներին եւ հիւրերին դիմեց Սիւնեաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչեանը, որը Վայոց ձորի



բնակիչներին կոչ արեց տէր կանգնել հայոց հնամեայ վանքերին ու եկեղեցիներին, որոնց մէջ մի մարգարիտ է Նորավանքը: Նա միաժամանակ երախտագիտութեան խօսք ուղղեց Ս. Աստուածածին եկեղեցու նորոգման բարերարներ տէր եւ տիկին Տիգրան եւ Տիանա Հաճէքեաններին, որոնք մտադիր են շարունակել հովանաւորութիւնը նաեւ Նորավանքի ընդհանուր բարեկարգման ուղղութեամբ, որի շնորհիւ հնարաւոր կը լինի հոգեւոր սպասաւորի մշտական ներկայութիւնը վանքում:

Այնուհետեւ ելոյթ ունեցան Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանը, որը ներկաներին փոխանցեց Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի պատգամն ու բարեմաղթութիւնը, Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճեանը, որը վերյիշեց Նորավանքի անցեալ տարի կայացած





օծումը եւ երջանկայիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի առանձը Ս. Աստուածածին եկեղեցու վերականգնման գործում, բարերարուհի Տիանա Հաճէթեանը, որը ներկաներին յորդորեց անայցելու չթողնել Նորավանքը, որպէսզի իրենց կատարածը սոսկ ճարտարապետական կառոյցի նորոգում չնկատուի, այլ իրօք հոգեւոր կեդրոնի վերականգնում: Ապա տեղի ունեցաւ մատաղի օրհնութիւն, որին յաջորդեց համերգային մասը Սիւնեաց թեմի կիրակնօրեայ դպրոցների սաների երգչախմբի, Եղէգնաձորի եւ Վայքի պարային համոյթների մասնակցութեամբ: Վանքի բակում





գեղանկարչական աշխատանքների ցուցահանդես էին կազմակերպել Եղեգնաձորի նկարիչները, Հայ քրիստոնեական մշակոյթի «Մոմիկ» միութիւնն ու նրա մանկապատանեկան նկարչական դպրոցի սաները:

Առաջնորդարան Սիւնեաց թեմի

ՍԻՒՆԵԱՑ ԹԵՄՈՒՄ
ԳՈՐԾՈՂ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Տաթեւի վանք
Նորավանք
Գնդեվանք
Ս. Խաչ վանք (Եղէգնաձոր)
Ս. Աստուածածին (Եղէգնաձոր)
Ս. Յովհաննէս (Սիսիան)
Ս. Տրդատ (Վայք)
Ս. Մինաս (Տաթեւ գիւղ)
Ս. Գրիգոր Լուսաւորիչ (Գորիս)
Ս. Նորակնունք (Վերիշէն գիւղ)
Ս. Աստուածածին (Մեղրի)
Ս. Յովհաննէս (Մեղրի)
Ս. Հռիփսիմէ (Կապանի Գեղանոյշ գիւղ)
Ս. Գեւորգ (Կապանի Ծաւ գիւղ)
Ս. Յակոբ (Վայքի Մարտիրոս գիւղ)
Ս. Աստուածածին (Արենի գիւղ)
Ս. Աննա (Մալիշկա գիւղ)
Ս. Մեսրոպ Մաշտոց (Կապան, կառուցման ընթացքի մեջ է)

Թեմի առաջնորդարանը գտնւում է Գորիսում,
փոխառաջնորդարանը՝ Եղէգնաձորում:


ՏԱԹԵՒԻ ՎԱՆՔԸ



Նորավանքի
Ս. Սրբիփանոս եկեղեցին



Գորիսի
Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին

Եղէգնաձորի
Ս. Աստուածածին եկեղեցին



ՍԻՒՆԵԱՑ ԹԵՄԸ ՎԵՐԱԶԱՐԹՕՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Վերջին տարիներին Սիւնեաց թեմում բազմաթիւ աշխատանքներ են տարուել ժողովրդի հոգեւոր կարիքների բաւարարման, Հայ Առաքելական Ս. Եկեղեցու քարոզչութեան տարածման համար:

Մեծ առաջընթաց է արձանագրուած եկեղեցաշինութեան եւ եկեղեցիների նորոգման բնագաւառում: Սիւնիքի եւ Վայոց ձորի մարզերում այսօր արդէն չկայ մի քաղաք, որը գործող կամ կառուցման ընթացքի մեջ գտնուող եկեղեցի չունենայ: Վերաբացուած եւ նորաշէն եկեղեցիներում հոգեւոր ծառայութիւն են կատարում թէեւ փոքրաթիւ, բայց նուիրեալ հոգեւորականներ: Նրանց համար ձեռք են բերուել բնակարաններ, ստեղծուել անհրաժեշտ կենցաղային յարմարութիւններ: Գորիսում, Կապանում, Մեղրիում, Սիսիանում, Եղեգնաձորում, Վայքում, Ջերմուկում գործում են 48 կիրակնօրեայ դպրոցներ: Եկեղեցական երգչախմբեր կան Սիսիանի Ս. Յովհաննէս, Գեղանոյշի Ս. Հռիփսիմէ, Եղեգնաձորի Ս. Աստուածածին, Մեղրիի Ս. Աստուածածին, Գորիսի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցիներում:

Թեմն ունի վանքապատկան կալուածքներ, բարեգործական վեց ճաշարան: Գործում է զոհուած ազատամարտիկների երեխաների «Սիրանոյշ» բարեգործական ճամբարը: Արդէն 6-րդ տարին է, որ այստեղ ամառային արձակուրդների ժամանակ հանգստանում է Սիւնեաց թեմի տարածքից, նաեւ Արցախից ու Երեւանից եկած շուրջ 500 երեխայ:

Սիւնեաց թեմի եւ ՀՕՖ-ի համատեղ ջանքերով կառուցուել են նաեւ ջրագծեր՝ «Նորավանք-Ռինդ» 14 կիլոմետր երկարութեամբ ոռոգման համակարգ, որը ջուր է մատակարարում 3 գիւղի, Ամաղու-Արենի խմելու ջրի ջրագիծ, չրանոցներ եւ փոքր ձեռնարկութիւններ:

Առաջիկայում նախատեսւում է ստեղծել թեմի լրատուական, մշակութային կեդրոնը, քարոզչական, հրատարակչական բաժինները, կրօնական ամսագիր եւ այլն:

Սիւնեաց թեմում մեծ շուքով են նշւում Հայ Եկեղեցու տաղաւար տօները, միաժամանակ յաճախակի են տեղի ունենում բազմամարդ միջոցառումներ, ինչպէս օրինակ հաւաքական մկրտութիւնը Ծաւ գետում (1999, Ապրիլ), տարբեր բնակավայրերում յուշարձանների բացում, խաչքարերի օրհնում եւ այլն: Վերջին շրջանում տեղի ունեցած առաւել կարեւոր աշխատանքները Նորավանքի վերաբացումն էր (այս մասին տե՛ս տարեգրքի նախորդ հրապարակումները), Եղեգնաձորում ուսուցիչների վերապատրաստման դասընթացների հաստատումը, Վայք քաղաքի Ս. Տրդատ, Մալիշկայի Ս. Աննա եկեղեցիների օծումը:

Սիւնեաց թեմի նախաձեռնութեամբ առաջին անգամ Հայաստանում,



Մանուկների ամառային հանգիստը «Սիրանոյշ» ճամբարում



Մկրտութիւն Ծաւ գեղում

Վայոց ձոր մարզում ՀՀ Կրթութեան եւ գիտութեան նախարարութեան գործակցութեամբ ստեղծուեց հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման կեդրոն: Շուտով նման կեդրոններ կը բացուեն Սիսիանում եւ Գորիսում: Կրթական այս կարեւորագոյն ծրագրի իրականացման համար միջոցներ էր հայթայթել Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանի կլոր սեղանի գրասենեակը:

1999 թ. Դեկտեմբերի 27-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.U.O.S.S. Գարեգին Բ-ը եւ ՀՀ վարչապետ Արամ Սարգսեանն այցելեցին Սիւնեաց թեմի Եղէգնաձորի փոխառաջնորդարան, ուր Հայոց Հայրապետի օրհնութեամբ բացուեց ուսուցիչների վերապատրաստման Վայոց ձորի կեդրոնը:



Եղէգնաձորի փոխառաջնորդարանի բացումը եւ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կեդրոնի հաստատումը օրհնութեամբ Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի ձեռամբ



Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հիմնօրհնէքը



Ներկայ էին թեմակալ առաջնորդներ, նախարարներ, մարզի ղեկավարները:

2000 թ. Օգոստոսի 6-ին բազմահազար ժողովրդի ներկայութեամբ եւ մեծ շուքով Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.U.O.S.S. Գարեգին Բ-ի ձեռամբ օծուեց Վայք քաղաքի Սուրբ Տրդատ եկեղեցին (ճարտարապետ՝ Ա. Գալիկեան): Արարատեան դաշտից Սիւնիք ու Արցախ տանող գլխաւոր մայրուղու եզրին վեր յառնող այս գեղաշէն եկեղեցու կառուցման նախագիծը կար դեռեւս երջանկայիշատակ Վազգեն Ա կաթողիկոսի ժամանակ, սակայն նիւթական

Խաչքարի օրհնութիւն Մարտիրոս գիւղում



Վայքի Ս. Տրդատ եկեղեցու խաչերի օծումը

միջոցների բացակայութեան պատճառով շինարարութիւնն անհնար էր սկսել: 1998-ին մեր յաջորդ երջանկայիշատակ Հայրապետի՝ Գարեգին Ա-ի նախաձեռնութեամբ եւ 1700-ամեակի գրասենեակի վարիչ-քարտուղար Տ. Մեսրոպ արք. Աշճեանի միջնորդութեամբ եկեղեցու շինարարութեան հովանաւորութիւնը ստանձնեցին ԱՄՆ-ի Տիթրոյթ քաղաքում բնակուող տէր եւ տիկին Գալուստ եւ Էմմա Սողոյեաններն եւ շինարարական աշխատանքները բուռն թափով առաջ ընթացան: Բարերար ամուսինները հոգացին նաեւ եկեղեցին անհրաժեշտ գոյքով ու ծիսական առարկաներով ապահովելու մասին:

2000 թ. Նոյեմբերին մեծ հանդէսով օծուեց նաեւ Հայաստանի ամենամեծ գիւղերից մէկի՝ Մալիշկայի Ս. Աննա եկեղեցին, որի շինարարութեան հովանաւորները նոյն գիւղից են:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ հնամեայ Սիւնեաց թեմն այսօր հաստատուն քայլերով ընթանում է բարեշինութեան ու վերազարթոնքի ճանապարհով:

Ըստ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մամլոյ դիւանի եւ
Սիւնեաց թեմի առաջնորդարանի լրատուական նիւթերի



Տ. ՇԱՀԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԷՄԵԱՆ
Աստուածաբանութեան դոկտոր պրոֆեսոր
Երեւանի պետական համալսարան

ՄԵՏՐՈՊՈԼԻՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Մետրոպոլիտութիւնը եպիսկոպոսական աստիճան մըն է, որ բնութագրած է Պոլսոյ պատրիարքութեան ենթակայ որոշ մայրաքաղաքներու եպիսկոպոսները: Չորրորդ դարուն, քրիստոնեայ Եկեղեցիները կազմակերպուեցան ըստ Հռոմէական կայսրութեան վարչական բաժանումներուն: Իւրաքանչիւր քաղաք և անոր շրջակայքը կոչուեցաւ թեմ, առաջնորդութիւն կամ վիճակ, իսկ անոր հոգեւոր գլուխը՝ եպիսկոպոս: Նահանգային մայրաքաղաքներու եպիսկոպոսները կոչուեցան մետրոպոլիտ, իսկ բղեչխութիւններու նուիրապետական աթոռները բարձրացուեցան պատրիարքութեան:

Հայոց մօտ, մետրոպոլիտ անուանումը գործածուած է միայն Սիւնեաց Աթոռի որոշ եպիսկոպոսներու պարագային և կապուած է այդ եպիսկոպոսներու յաւակնոտութիւններուն հետ, յաւակնոտութիւններ, որոնք չափով մը հասկնալի կը դառնան, երբ նկատի ունենանք Սիւնիքի տարածքը և կարեւորութիւնը: Բաւ է յիշել, թէ եօթներորդ դարուն, Ս. Երկրի մէջ գոյութիւն ունեցած են եօթանասուն երկու հայկական վանքեր, իւրաքանչիւրը կապուած նախարարական տունի մը: Անոնցմէ հինգը և ամենէն կարեւորները եղած են սիւնեցիներու վանքերը: Ասոնք են.

1. ՍԻՒՆԵԱՑ ՎԱՆՔ, *արեւելք*
2. ՍԻՒՆԵԱՑ ՎԱՆՔ, *Յովասափեթի ձոր*
3. ՍԻՒՆԵԱՑ ՎԱՆՔ, *Սաբայի ձոր*
4. ՍԻՒՆԵԱՑ ՎԱՆՔ, *Գեթսեմանի*
5. ՍԻՒՆԵԱՑ ՎԱՆՔ, *տաճիկներէն յափշտակուած:*

Եթէ ասոնց վրայ աւելցնենք Կաղանկատուաց վանքը, Աղուանից երեք վանքերը, Մաղասայ վանքը և Արցախայ վանքը, պատկերացում մը կ'ունենանք թէ Սիւնեաց աշխարհը ինչպիսի լայն տեղ գրաւած պիտի ըլլայ քրիստոնեայ աշխարհի նուիրապետական կարգ ու սարքին մէջ:

Պատմական ակնարկ մը բաւական է ցուցաբերելու համար Սիւնեաց եպիսկոպոսներու կեդրոնախոյս հակումները:

Սիւնեաց առաջին եպիսկոպոսը եղած է Եւսթաղէոս, աշակերտ Թադէոս առաքեալի, ձեռնադրուած առաքեալին ձեռքով: Ան նահատակուած է և ունեցած է իր դամբարանը Տաթեւի վանքին մէջ:

Օրբելեան կը յիշատակէ նաև երկրորդ, Կումսի անունով եպիսկոպոս մը, ձեռնադրուած Բարթուղիմէոս առաքեալի ձեռքով:

Օրբելեանի սոյն տեղեկութիւնները հիմնուած են հին ժամանակի զրոյցներու վրայ, ինչպէս կ'ըսէ պատմիչը «Զրոյցք հին ժամանակաց»։ Դժուար չէ զգալ, թէ սիւնեցիները յատուկ փառասիրութեամբ սիրած են յիշել իրենց Աթոռի կրկնակի առաքելականութիւնը։

Առաքելական դարէն ետք, Սիւնեաց Աթոռի գահակալները յիշուած չեն մինչեւ Հայոց դարձը։ Օրբելեան յատուկ գլուխ մը կը յատկացնէ Սիւնեաց Աթոռի հաստատութեան։ Այդ գլուխը կը կոչուի «Սակս լուսաւորութեան աշխարհիս Սիւնեաց ի ձեռն սրբոյն Գրիգորի»։

Ուխտանէս պատմիչը կը յիշէ 30 վիճակներ, որոնք «ընկալան աթոռ ի տեղիս տեղիս ի սրբոյն Գրիգորէ»։ Այդ տեղերէն մին է Սիւնիքը, որ Հայ Եկեղեցւոյ եպիսկոպոսական աթոռներու չարքին կը գրաւէ եօթներորդ տեղը։

Ս. Մեսրոպի կենսագիր Կորիւնը տարբեր տեղեկութիւն մը կու տայ այս մասին։ Ան կը գրէ. «Ապա յետ այնորիկ ի սահմանակից ի Սիւնական աշխարհս ելանէր՝ ...։ Եւ ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն ... մինչեւ իսկ ի նոցունց վայրենեացն եպիսկոպոս տեսուչ եկեղեցւոյն Սիւնեաց կարգել, որոյ անունն կոչէր Անանիայ այր սուրբ և երեւելի, հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ։ Ապա և զերկիրն Սիւնեաց դասուք վանականաց լնոյր»։ 450 թուի Արտաշատի ժողովի մասնակցողներու ցուցակի երկրորդ անունն է Անանիա Սիւնեաց եպիսկոպոսը։

Բաբգէն Ա Ողմսեցի կաթողիկոսի առաջին և երկրորդ թուղթերէն, գրուած 506-508 թուականներուն, հաստատ կ'իմացուի, թէ Հայոց կաթողիկոսարանը կը հանդիսանար Պարսկաստանի Ասորիներու, Հոռոմոց, Վրաց և Աղուանից եպիսկոպոսներու եկեղեցական կեդրոնը, ուր կը գումարուէին կարեւոր ժողովները, որոշելու համար դաւանական հարցեր։ Բոլորին սկզբունքն էր հաւատարիմ մնալ Տիեզերական երեք ժողովներու հաւատքի բանաձեւումին, նզովել Եւտիքէսի բանաձեւը և մերժել Քաղկեդոնի ժողովը։

Սկսեալ երրորդ դարէն մինչեւ վեցերորդի վերջը, Սիւնեաց Աթոռը չբացառուեցաւ միւս Աթոռներէն և պահեց եպիսկոպոսական իր հանգամանքը, եպիսկոպոսական միւս Աթոռներու կարգին, այսինքն չհակադրուեցաւ Հայ Եկեղեցւոյ ուսուցումին և եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ու Ս. Միւռոնը ընդունեց Հայոց Հայրապետէն։

Կացութիւնը հիմնապէս փոխուեցաւ, երբ Մաւրիկ կայսրը Յովհան Բագարանցին նատեցուց իբրեւ հակաթոռ կաթողիկոս, Հայաստանի յունաց բաժինին մէջ։ Անոր հետեւեցաւ վրացիներու կիւրիոն կաթողիկոսի անջատուիլը Հայոց կաթողիկոսութենէն և ենթարկուիլը Բիւզանդական Եկեղեցիին, նոյն Մաւրիկ կայսեր ճիգերով։ Մաւրիկի ծրագիրն էր ընդունիլ տալ հայերուն Քաղկեդոնի ժողովը, ի հարկին բռնութեամբ, «հրաման ելանէ դարձեալ ի կայսերէն վերատին քարոզել զժողովն Քաղկեդոնի յամենայն եկեղեցիս Հայաստան երկրի», կը գրէ

Սեբէոս պատմիչ։ Մովսէս Եղիվարդեցի կաթողիկոսը պաշտպան կեցաւ Հայ Եկեղեցւոյ աւանդական հաւատքին և մերժեց «անցանել զգետն Ազատ, ուտել ի պատարագի զեփեալն ի փուռն և ըմպել զջերմ բաժակ»։

Լարուած վիճակը աւելի սաստկացաւ Մովսէս կաթողիկոսի վախճանէն ետք։ Մովսէս կաթողիկոսի մահուան յաջորդեցին Վրթանէս Քերթողի տեղակալութեան երեք տարիները։ Այդ տարիներու ընթացքին, յոյներու բաժինի կարգ մը հայ եպիսկոպոսներ, փորձեցին հակաթոռ կաթողիկոսը փոխադրել Դուին, իբրեւ Հայոց հայրապետ։ Սմբատ Բագրատունիի ջանքերով, 607-ի Մարտ ամսու 25-ին, Դուինի կաթողիկոսարանին մէջ գումարուած ժողովը, որուն մասնակցած են երկու բաժիններէն եկած 50 եպիսկոպոսներ և 390 վարդապետներ ու քահանաներ, կը գումարէ առաջին իր նիստը, սակայն կը ձախողի կաթողիկոս ընտրել, որովհետեւ ներկաներուն մէջ կային եպիսկոպոսներ, որոնք դաւանափոխ եղած էին Բագարանցիի հետեւողութեամբ։ Առնցմէ կը պահանջուի զղջում և հաւատոյ գիր, ըստ նոյն ժողովին կողմէ հաստատուած եօթը կանոններու։ Նոյն տարուան զատիկի յաջորդ Կիրակի օր կ'ընտրուի Աբրահամ Աղբաթանեցին։ Զայն ձեռնադրող եպիսկոպոսներուն գլխաւորներն են Վրթանէս տեղապահ, Մանասէ Բասենոյ և Քրիստափոր Սիւնեաց։ Ժողովներու բոլոր ցուցակներուն մէջ, ուր յիշուած են Սիւնեաց եպիսկոպոսներ, բնաւ չենք հանդիպիր մետրոպոլիտ կոչումին։

Ուխտանէս պատմիչ յատուկ կերպով կը չեշտէ Սիւնեաց Քրիստափոր եպիսկոպոսը։ Սիւնեաց Աթոռը կը գտնուէր յունաց բաժինին մէջ, ան բաժնուած էր Դուինի կաթողիկոսարանէն և կը պահանջէր իրեն համար կաթողիկոսական իրաւասութիւններ, Աղուանից և Վրաց կաթողիկոսներու իրաւասութիւններուն հաւասար, որոնք կը համապատասխանէին յունաց բաժնի մետրոպոլիտներու իրաւասութիւններուն։ Այդ իրաւասութիւններուն գլխաւորն էր ունենալ իրենց ենթակայ եպիսկոպոսներ և զանոնք ձեռնադրելու իրաւունք։

Օրբելեան կը վկայէ, թէ անջատողական այդ միտումը սկսած է Պետրոս Սիւնեցիի նախաձեռնութեամբ և վերջ գտած՝ երբ Քրիստափոր մասնակցեցաւ Աբրահամ Աղբաթանեցիի ընտրութեան և ձեռնադրութեան, թէև ինք եղած է մին անոնցմէ, որոնք Ս. Մեսրոն և ձեռնադրութիւն ստացած էին Աղուանից կաթողիկոսէն։ Քրիստափոր վախճանեցաւ Աբրահամ կաթողիկոսի ընտրութենէն ետք և անոր յաջորդող Դաւիթ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ նորընտիր կաթողիկոսի ձեռքով։

Պատմական այս եղելութիւններու նկարագրութենէն պարզ կ'երեւի, թէ Գրիգոր Լուսաւորիչէն սկսեալ մինչեւ Բաբգէն կաթողիկոս Որմսեցի, Հայոց հայրապետի իշխանութեան կ'ենթարկուէին Վրաց և Աղուանից Աթոռները։ Սիւնեաց առաջնորդները կը ձգտէին անոնց կարգին հաւասարիլ։ Այդ առիթը չունեցան այնքան առեն, որ Քաղկեդոնի ժողովին ստեղծած պառակտումը չէր ազդած Վրաց և Աղուա-

նից Եկեղեցիներուն վրայ և անոնք պահած էին իրենց հաւատարմութիւնը Հայոց Եկեղեցիին։ Մէկ հարց միայն խռոված էր յարաբերութիւնները՝ աղուաններու յարուցած նախաթոռութեան հարցը։ Անոնք միշտ ձգտած էին նախաթոռութեան, որ տրուած էր Վրաց Ամթոռին։ Այդ միտումը եւս չէր ազդած երեք Ամթոռներու յարաբերութեան վրայ։

Նոյնպէս բնական յարաբերութիւններ պահուած էին ասորիներու Եկեղեցիին հետ, մանաւորաբար Պարսկաստանի ենթակայ բաժնին մէջ։ Երբեմն ժամանակ քաղկեդոնական վէճերը պառակտած չէին Եկեղեցին վերջնականապէս, Արեւելեան Եկեղեցիներու միջեւ յարաբերութիւնները չարունակուած էին բնականոն կերպով։

506 թուականին, Բաբգէն Ողմսեցի կաթողիկոս կը գումարէ Դուինի առաջին ժողովը, որուն կը ներկայանայ ասորիներու պատգամաւորութիւն մը, խնդրելու համար Հայոց օգնութիւնը, զիրենք հալածող նեստորականներուն դէմ։ Պատգամաւորները կը յայտնէին, թէ նեստորականները, քալկեդոնականներէն, կը հալածէին ասանդապահ ասորիները։ Բաբգէն կաթողիկոս կը յանձնէ անոնց հաւատոյ գիր մը, որով «նզովեալ խոտեցին զժողովն Քաղկեդոնի» (Յով. 81)։ Իր գրած թուղթին մէջ, Հայոց կաթողիկոսը կը յայտարարէ թէ «զայս հաւատ Հոռոմք և մեք Հայք և Վիրք և Աղուանք ունիմք»։

Վրացիներու, աղուաններու և ասորիներու միջեւ տիրող հաւասարակշռութիւնը խախտեցաւ, երբ Վրաց Կիւրիոն կաթողիկոսը բաժնուեցաւ Հայոց Եկեղեցիէն և ենթարկուեցաւ Բիւզանդական Եկեղեցիին։ Ամթոռներու յարաբերութեան տեսակէտէն, աղուանները նախաթոռութեան հարց չունէին այլեւս։ Այդ նոր կացութեան մէջ, Սիւնեաց Ամթոռը ինքզինքը սկսաւ արժանի զգալ տեսակ մը նախաթոռութեան։

Այդ առիթը ստեղծուեցաւ Աբրահամ Աղբաթանեցի կաթողիկոսի օրով։ Ճիշդ այն թուականին, երբ Աբրահամ կ'թղ. կը ղրկէր իր վերջնագիրը Կիւրիոնի, նոյն ատեն կը դրէր աղուաններուն, եւ հրաւիրելու զանոնք մխուրեան, որը խզուած էր Վրաց Ամթոռին նախապատուութիւն տրուած ըլլալու պատճառով։ Աղուաններուն գրուած երկար գրութեան խմբագիր եղած է Վրթանէս Քերթող, իսկ անոր պատրաստութեան մասնակցած է Սիւնեաց Դաւիթ եպիսկոպոսը։

Աբրահամ կաթողիկոսի ջանքերով վերահաստատուեցաւ միութիւնը Սիւնեաց Ամթոռին և Աղուանից կաթողիկոսութեան հետ, ճիշդ այն ատեն, երբ Վրաց կաթողիկոսութիւնը կը խզէր իր յարաբերութիւնը Հայոց կաթողիկոսութեան հետ։

Բիւզանդիոնի Եկեղեցին հակազդեց Աբրահամ կաթողիկոսի վճռական դիրքորոշումին, որով դատապարտուեցան վրացիները, իսկ աղուանները վերջ դրին Հայոց կաթողիկոսութենէն խզուելու միտումներուն։ Յունական հակազդեցութիւնը առաւ Հայոց կաթողիկոսական Ամթոռը նուաստացնելու ձեւ։ Յոյներու առաջադրած հարցը ծանօթ է իրենց ինը դասուց խնդիր։ Յոյները եպիսկոպոսական աստիճանը տե-

սակաւորած էին և բաժնած չորս աստիճաններու· եպիսկոպոս, մետրոպոլիտ, արքեպիսկոպոս և պատրիարք։ Յոյները կը յաւակնէին Հայոց կաթողիկոսական Աթոռը հաւասարեցնել մետրոպոլիտի կամ արքեպիսկոպոսի աստիճանին, մերժելու համար Հայոց կաթողիկոսին պատրիարքական հանդամանքը, որպէսզի ենթակայ ըլլայ այլազգի պատրիարքի մը։ Աբրահամ կաթողիկոս հակազդեց յոյներուն, որդեգրելով անոնց անուանումները, բայց ոչ՝ իշխանութիւնները։

Բացատրենք· եկեղեցական կարգը ունեցած է հիմնական երեք աստիճաններ Առաքեալներու հիմնած եկեղեցիներուն մէջ։ Եկեղեցիի պաշտօնեաները եղած են երեք կարգի· սարկաւագ, քահանայ կամ երէց և եպիսկոպոս։ Երբ եկեղեցիները բազմացան և ծառայութեան դաշտը ընդարձակուեցաւ, սարկաւագութիւնը դասաւորուեցաւ չորս աստիճաններով· սարկաւագ, դպիր, ընթերցող և սաղմոսերգու։ Ասոնց վրայ աւելցնելով քահանայութիւնը, կը ստացուին հինգ աստիճաններ։ Յոյները եպիսկոպոսական կարգը դասաւորած էին չորս աստիճաններով· եպիսկոպոս, մետրոպոլիտ, արքեպիսկոպոս և պատրիարք։ Գումարելով քահանայական հինգ աստիճանները, եպիսկոպոսական չորս աստիճաններուն, յոյները կը հասնէին ինը թուին, ի նմանութիւն հրեշտակներու ինը դասերուն։ Օրբելեան բառացի կը մէջբերէ յոյներուն կողմէ հայերուն ներկայացուած պահանջը· «Ո՞ւր է ձեր աթոռն և պատրիարքն, ընդ որով առեալ է արքեպիսկոպոսն եւ այլն· կամ ցուցէք զձերն և կամ թէ ոչ ունիք, հնազանդեցէք միումն ի չորս աթոռացս»։ Չորս Աթոռներու ակնարկութիւնը հիմնուած էր Նիկիոյ ժողովի կանոններուն մէջ յիշուած Անտիոքի, Աղեքսանդրիոյ, Հռոմի և Կոստանդնուպոլսոյ չորս Աթոռներուն։

Աբրահամ կաթողիկոս չպատասխանեց յոյներուն՝ բացատրելու համար, թէ ըստ հին աւանդութեան, պատրիարք կոչուած է ինքնագլուխ եկեղեցիի մը եպիսկոպոսապետը, մանաւանդ, երբ անոր աթոռը Առաքելական հիման վրայ է հաստատուած, այլ հրաւիրեց աշխարհաժողով մը, արքեպիսկոպոսի և մետրոպոլիտի աթոռներ կազմելու համար, որպէսզի կաթողիկոսութիւնը իններորդի բարձրանայ և հաւասարի պատրիարքութեան։ Սոյն աշխարհաժողովին, Հայոց աթոռը կ'անուանուի պատրիարքական, Աղուանից աթոռը՝ արքեպիսկոպոսական և Սիւնեաց աթոռը՝ մետրոպոլիտական։ Օրմանեան կ'ենթադրէ, թէ Սիւնեաց աթոռը միակը չէ եղած մետրոպոլիտական, այլ Հայաստանի տասնհինգ նահանգներու եպիսկոպոսները նոյնպէս կոչուած են մետրոպոլիտ։ Այս հարցի մասին, Օրբելեանը և Դրասխանակերտցին հակասական վկայութիւններ արձանագրած են։ Առաջինը կը դրէ, թէ Մարդպետական եպիսկոպոս Թէոդորոսին եւս տրուեցաւ Վասպուրականի մետրոպոլիտի կոչում, սակայն յետագային, առնուեցաւ անկէ այդ կոչումը։ Դրասխանակերտցին կը յիշատակէ Սեբաստիոյ, Մելիտինէի և Նփրկերտի հայ մետրոպոլիտներ։

Ցոյն մետրոպոլիտները ունէին եպիսկոպոսական ձեռնադրութիւն կատարելու իրաւասութիւն։ Արդ, շատ աւելի դժուար է որոշել, թէ մետրոպոլիտի պատիւին հետ հայ մետրոպոլիտներուն տրուեցա՞ւ արդեօք նոյն իշխանութիւնը։

Օրբելեան յատուկ կերպով կը յիշատակէ, թէ մետրոպոլիտութեան առանձնաշնորհումներն էին առջեւէն խաչանիշ կրել, կաթողիկոսի բարձակից և սեղանակից բազմիլ, աստուածապատիւ և հոգեւոր ամէն պատուանունը վայելել և իր եկեղեցիներուն մէջ յիշել տալ միայն իր անունը։ Օրբելեան կը յիշէ նաև, թէ եպիսկոպոս ձեռնադրելու իրաւունքը չտրուեցաւ մետրոպոլիտներուն։ Նոյն պատմաբանը կ'ակնարկէ, թէ ընդհանուր կերպով «մետրոպոլիտն ձեռնադրէ զեպիսկոպոսն», ըսել ուզելով թէ յոյներու մօտ այդպիսին է կանոնը։

Կարեւոր է դիտել, թէ 450 թուականի Արտաշատի ժողովականները բոլորն ալ կոչուած են եպիսկոպոս, բացի եպիսկոպոսապետէն, որ կոչուած է կաթողիկոս։ 506 թուականի Դուինի ժողովին Բաբգէն կաթողիկոս յիշուած է իբրեւ եպիսկոպոսապետ և եպիսկոպոս Այրարատայ։ Սիւնեաց եպիսկոպոսի յիշատակութիւն չկայ այստեղ։ 554 թուականի Դուինի ժողովի մասնակցողներու ցուցակին գլուխն է Ներսէս Շայոց կաթողիկոս, իսկ թեմակալները բոլորը յիշուած են իբրեւ եպիսկոպոսներ նահանգի կամ նախարարական տան մը։ Սիւնեաց եպիսկոպոս յիշուած է Պետրոսը։ Ոչ մէկ տեղ կը գտնենք մետրոպոլիտ կոչումը։

Նիկիոյ ժողովի կանոններու հայերէն թարգմանութեան մէջ չէ՛ գործածուած մետրոպոլիտ բառը։ Զորրորդ կանոնին մէջ, յունարէն մետրոպոլիտ բառը թարգմանուած է «կաթողիկոս»։ Այլ կանոններու մէջ՝ «մայրաքաղաքի եպիսկոպոս»։ «... Զպատիւն (խօսքը եպիսկոպոսութեան մասին է) և զչնորհն գլխաւորին արժան է տալ, այսինքն կաթողիկոսին՝ կամելով սուրբ ժողովոյն»։ (Կանոնագիրք Ա. էջ 119)։

Գլխաւոր եպիսկոպոս աչխարհին բացատրութիւնը կը թուի նշանակել պատրիարք։ «Բայց որ գլխաւորն եպիսկոպոսն աչխարհին՝ առանց նորա կամաց եպիսկոպոս ոք մի՛ լիցի»։ (Կանոնագիրք էջ 455, Շահապիւանի ժողով, ԺԶ. կանոն)։

Ժողովներու կանոններու հայերէն թարգմանութեան մէջ, գլխաւոր եպիսկոպոս կամ գլխաւոր եպիսկոպոս աչխարհին կը թուին ըլլալ պրքեպիսկոպոսները։

Մայրաքաղաքի եպս. անուանումը բառացի թարգմանութիւնն է մետրոպոլիտ յունարէն տիտղոսին. «Այլ պարտ է կոչել և որք մասատուրք են ի գաւառին եպիսկոպոսք առ ի ձեռնադրութիւն մայրաքաղաքի եպիսկոպոսին»։ (Սարդիկայի ժողով (343) կանոն Զ, էջ 258)։

Վիճակի եպիսկոպոս և աչխարհի եպիսկոպոս կը թուին ըլլալ նահանգի մը եպիսկոպոսները, ըստ Նիկիոյ չորրորդ կանոնին։

Հայերէն քորեպիսկոպոս կոչումը բացատրուած է Անկիւրիոյ

ժողովի (358) ԺԴ. կանոնով. «Քանզի յորժամ ի գաւառս լինէին եպիսկոպոսունք՝ այսինքն ի գեաւղս, զայնպիսին կոչէ քորեպիսկոպոս, քանզի քորեպիսկոպոսդ տեսուչ գաւառի (գեաւղս) ասի (Կանոնագիրք, էջ 162)։ Կը նշանակէ թէ գաւառի եպիսկոպոսը կրնայ կոչուիլ նաև քորեպիսկոպոս։

Ամէն անգամ, որ կաթողիկոսական Աթոռը հեռացած է Սիւնիքէն, մետրոպոլիտը անկախութեան նշաններ ցոյց տուած է։ Ամենէն յատկանշականն է Օրբելեանի կողմէ «Ասպետամբուխիւն Յակոբայ» բնութագրուած երեւոյթը։ Տասներորդ դարու կէսերուն, Անանիա Մոկացի կաթողիկոսի օրով, Սիւնեաց եպիսկոպոսն էր Յովհաննէս Դրասխանակերտցի կաթողիկոսի եղբօր որդին, Օրբելեանի կողմէ նկարագրուած իբրեւ «այր բարձրահասակ և գեղեցկատեսիլ, հանճարեղ և իմաստուն, քաղցրաբարոյ և հեզամիտ, լի ամենայն առաքինութեամբ»։ Օրբելեան կը բացատրէ թէ մետրոպոլիտին ապստամբութիւնը, կաթողիկոսներու Դուինէն հեռացած ըլլալու հետեւանքն էր։ «ոչ կարէր ամ յամէ երթալ առ կաթողիկոսն Հայոց և առնուլ միւռոն, ապա հարկ եղեւ խնդրել զմիւռոն ի կաթողիկոսէն Աղուանից»։

Սիւնեաց կեդրոնախոյս շարժումները կապուած են միշտ Աղուանից կաթողիկոսներու անկախութեան ձգտումներուն հետ, որով փորձած են զօրանալ Սիւնեաց գործակցութեամբ և դառնալ ինքնագլուխ։ Նոյնն էր պարագան Անանիա Մոկացի կաթողիկոսի օրով։ Կաթողիկոսական Աթոռը փոխադրուած էր Աղթամար, անկէ Արգինա։ Սիւնեաց Յակոբ եպիսկոպոս ձեռնադրութիւն ընդունած էր Աղուանից Սահակ կաթողիկոսէն։ Վերջինս ձեռնադրած էր նաև այլ եպիսկոպոսներ։ Բաժանումը աւելի խորացած էր երկուքի գործակցութեամբ, որուն նպատակն էր Աղուանից Աթոռը դարձնել ինքնագլուխ և Սիւնեաց եպիսկոպոսին տալ մետրոպոլիտի ոչ միայն կոչումը, այլեւ եպիսկոպոս ձեռնադրելու իրաւունքը։ Անանիա կաթողիկոս գնաց մինչեւ Սիւնիք, վերջ տալու համար բաժանումին։ Յակոբ մեղայի եկաւ և նախկին կարգը վերահաստատուեցաւ, փաստելէ ետք, թէ Սիւնեաց մետրապոլիտութիւնը Սիւնեաց աշխարհի անկախութեան դրօշը եղաւ դարեր շարունակ։

Եզրակացնելու համար, հարկ է ընդունիլ, թէ Սիւնեաց Աթոռը փայլեցաւ միշտ իր արդար հպարտութեամբ, իբրեւ մեծ վանքերու աշխարհը, ուր գիտութիւնը և արուեստը սիզապատնէշ լեռներու աստուածասլաց բարձունքներու հասան։

ՎԱՐԱԶԴԱՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Յուշարձանների պահպանութեան ընկերութիւն

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՔԱՐԱԿԵՐՏ ԳԱՆՁԵՐԸ

Դիւթիչ է Վայոց ձորի բնութիւնը՝ չռայլօրէն օժտուած զմայլելի գեղեցկութիւններով։ Այնքան ինքնատիպ ու անկրկնելի է Վայոց ձորը, որ անկարելի է չփոթել Հայաստանի որեւիցէ գեղատեսիլ բնատարածքի հետ։ Սքանչելի համայնապատկերներն այստեղ մերթ յայտնւում են հեռուհետէ հեռացող ալպեան լեռներով ու կորչում ոսկեմանուշակագոյն շղարշի ետեւում, մերթ փարթամ այգիներով պատուած հովիտներով, որոնք գնալով նեղանում, մտնում են անդնդախոր կիրճերն ու սեղմւում գեղնակարմրաւուն ժայռերի արանքում։

Արփա և Եղեգիս գետերն ու նրանց բազմաթիւ վտակները դարեր շարունակ իրենց կենարար ջրերով կեանք են պարգեւել մարդկանց, որոնք այստեղ հանդրուանել են վաղնջական ժամանակներից, ապրել, գործել ու թողել իրենց մտքի, ճարտար ձեռքերի հրաշագործ հետքերը։ Բնութեան սիրահարն այստեղ ակամայ դառնում է նաև հնութիւնների սիրահար, քանզի դրանք այս համայիլ բնաշխարհի անբաժանելի զարդն են։

Յիրաւի, պատմական Սիւնիքի Վայոց ձոր գաւառը հայ ճարտարապետութեան մի կատարեալ թանգարան է՝ բաց երկնքի տակ։

Բերդեր ու դղեակներ, վանքեր ու եկեղեցիներ, մատուռներ ու մատրճաններ, քարաւանատներ ու կամուրջներ, անհամար խաչքարեր՝ մէկը մէսից գեղեցիկ…

Այստեղ են ստեղծագործել հայ միջնադարի հանճարեղ ճարտարապետ քանդակագործ, գրիչ ու մանրանկարիչ, ասեղնագործ խաչքարերի կերտող Մոմիկը, ճարտարապետներ Սիրանեսը, Գրիգորիկը, Մխիթարը, Շնորհաւորը, քարագործ վարպետներ Դաւիթը, Սարգիսը, Վարդանը, Պաղտասարը և շատ ուրիշներ։ Ու քանի-քանի անուններ դեռ մնացել են անյայտ։

Վայոց ձորը, բացի միջնադարեան հայ ճարտարապետութեան հարուստ տարածք լինելուց, ունեցել է դպրութեան և գրչութեան նշանաւոր կենդրոններ, ինչպիսիք էին Գլաձորի համալսարանը, Հերմոնի վանքը, Նորավանքը և այլն։ Այստեղ են տքնել Ներսէս Մշեցին, Եսայի Նչեցին, Յակոբ Թագւորցին, Խաչատուր Կեչառեցին, Գրիգոր Տաթեւացին, Մատթէոս Օրբելեանը, շատ գրիչներ և մանրանկարիչներ։

Վայոց ձորի ճարտարապետների և քարագործ վարպետների մտքի ու ձեռքերի արգասիք բարձրարուեստ կոթողները, որ սփռուած են այս

լեռնաշխարհով մէկ, հռչակ ու պատիւ են բերել իրենց ստեղծողներին։

Անդրադառնանք Վայոց ձորի առաւել կարեւոր պատմաճարտարապետական յուշարձաններից մի քանիսին։

Այստեղ առատ են բերդ-ամրոցները, որոնք թառած ամեհի լեռների կատարներին, կարծես նրանց թագը լինեն։ Անառիկ ու անմատչելի այդ պաշտպանական կառոյցները իրականացուած են միջնադարի ամրաշինական արուեստի բարձր հմտութեամբ և որպէս դիմադրութեան հզօր յենակէտեր են ծառայել ոսոխների յարձակումների ժամանակ։ Աւերակ կամ կիսականգուն այս ամրոցները կառուցուել են վաղ և զարգացած միջնադարում՝ Պռոշեան, Օրբելեան ու այլ իշխանական տոհմերի կողմից։

Օրբելեաններն են կառուցել Կապոյտ բերդը (Սմբատաբերդը) և Հրաշկաբերդը, Պռոշեանները՝ Բոլորաբերդը (Պռոշաբերդը) Մահեւանեաններն՝ Նրբոյն բերդը, Շահուռնեցիները՝ Հերհերի բերդը և այլն։[1]

Պատմիչ Ստեփանոս Օրբելեանը Վայոց ձորի հնագոյն բերդերից յիշատակում է Սուլեմայ բերդը՝ Աղքենդ (այժմ Աղնջաձոր) գիւղի մօտ, Նրբոյն բերդը՝ (Ելփին գիւղի մօտ), Անապատ բերդը (Ագարակաձորի մօտ), Գոլոշտի բերդը (Գնդեվանքից ոչ հեռու, Արփայ գետի ալ ափին), Ջերմուկի ամրոցը, Վեյսալի (Տանձիկ գիւղից հարաւ), Շիրալի (Երդիզ գիւղից հարաւ), Աղնջոց, Կգլասի, Վանի և ուրիշ շատ բերդեր[2]։

Յիշատակուածների մէջ **Կապոյտ բերդը** կամ **Սմբատաբերդը** հետաքրքրական է իր պաշտպանական կառուցուածքների հզօր համակարգով և համեմատաբար լաւ է պահպանուել։ Բերդը տիրաբար թառած է Եղեգիսի և Արտաբոյնք գիւղերի միջեւ վեր խոյացող մի հսկայ ժայռազանգուածի կատարին, ուր կարելի է դժուարութեամբ հասնել միայն Արտաբոյնք գիւղի կողմից, իսկ Եղեգիսի կողմից չրջապատուած է գահավէժ իջնող, ուղղաբերձ ժայռերով։ Քար ու կրով կառուցուած բարձր ու ամուր պարսպապատի միակ կամարակապ դարպասը բացւում է Արտաբոյնք գիւղի կողմից, ուր տանում է ոլորապտոյտ կածանը։ Պարսպապատերն այնքան հաստ են, որ դրանց վերնամասում, դրսի և ներսի պատերի միջեւ կայ միջանցք, որի արտաքին դիտանցքներից բերդապահները կարող էին հսկողութեան տակ պահել չրջակայքը։

Բերդի ներսում պահպանուել են տարբեր չէնքերի, հաւանաբար, նաեւ չրաւազանի աւերակների հետքերը։ Յաւօք, բերդատարածքը տակաւին չի պեղուել և ուսումնասիրուել։

Դեռեւս հնագոյն ժամանակներից Հայկական բարձրաւանդակով անցել են առեւտրական մայրուղիներ, որոնք ճիւղաւորւում էին Հայաստան աշխարհով մէկ՝ կապւում Անդրկովկասի գլխաւոր կեդրոնների հետ, ապա՝ շարունակելով ուղղւում դէպի հարեւան երկրները, լինելով Արեւմուտքը և Արեւելքը կապող «մետաքսի ճանապարհի» մի հատուածը։ Մայրուղին Գեղարքունիքից (Սեւանի աւազանից), Սուլեմայի (Սելիմի) լեռնանցքով իջնելով Վայոց ձոր, մի ճիւղով ուղղւում էր դէպի հարաւ՝

Սիւնիք, միւսով՝ Արփայի հովիտ, դուրս գալիս Արարատեան դաշտի շարունակութիւնը կազմող Շարուրի դաշտը, ապա Արաքսի հովտով՝ դէպի Ատրպատական՝ Պարսկաստան։

Վայոց ձորով մի ժամանակ անցնող ճանապարհների լուռ վկաները քարաւանատներն ու կամուրջներն են, որոնցից մի քանիսը կանգուն կամ կիսաւեր վիճակում մնացել են մինչ այսօր։

Սելիմի քարաւանատունը, որ կառուցել է Ջեսար Օրբելեանը 1332 թուականին, եռանաւ, համեմատաբար լաւ պահպանուած չինութիւն է։ Միւս՝ աւելի փոքր ու միանաւ քարաւանատունը գտնւում է լեռնանցքի ստորոտում, Աղքենդ (այժմ Աղջնաձոր) գիւղից ոչ հեռու։ Մի ուրիշ քարաւանատուն, նոյնպէս եռանաւ, պեղուեց 1953-ին Աղաւնաձոր գիւղից հարաւ սփռուած տարահարթում[3]։

Քարաւանատներն ըստ էութեան, մոնումենտալ դամասիպ չինութիւններ էին, որոնցում քարէ մսուրքների երկայնութեամբ կապում էին գրաստներին, իսկ առանձին սենեակներում (ինչպէս Սելիմի քարաւանատանը), տեղաւորւում էին քարաւանի ուղեկիցները։ Կիսաւեր կամ կանգուն վիճակում, կամուրջներ են պահպանուել Արփայի և Եղեգիսի հովիտներում։ Դրանցից յիշատակելի են Արենիի կամուրջը Արփայ գետի վրայ՝ կառուցուած 1265-1287 թուականներին Նորավանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսի կողմից (խելերի հիմքերն են պահպանուել), Ծատուրի կամուրջը Եղեգիս գետի վրայ՝ կառուցուած 1666-ին, Շատինի վանքի առաջնորդ Սարգիս վարդապետի կողմից (կամուրջի կէսն է պահպանուել), Շատինի կամուրջը Արտաբոյնք գետակի վրայ, մի կամուրջ Ղապախլու (այժմ Գողթանիկ) գիւղի մօտ, փայտաշէն անցումներով կամուրջը Ազատեկի հիդրոէլեկտրակայանի մօտ, Արփայ գետի վրայ (պահպանուել են քարաշէն 3 խելերը)։ Կանգուն վիճակում է և այժմ էլ գործում է Ագարակաձորի կամուրջը Արփայ գետի վրայ[4]։

Վայոց ձորը առաւել հարուստ է մեր հաւատքի ամրոցներով՝ վանական համալիրներով, եկեղեցիներով, մատուռներով։ Գնդեվանքի կառուցման մասին Սիւնեաց Սոփիա իշխանուհին թողել է հետեւեալ յիշատակութիւնը. «Վայոց ձորը մի մատանի է առանց ակի, ես չինեցի այս վանքը՝ ակը դնելով վրան»։

Վայոց ձորի տարածքում են գտնւում Գնդեվանքը, Քարկոփի և Յաղացքարի վանքերը (10-11-րդ դդ.), Թանահատի, Նորավանքի, Կճեվանքի, Արատեսի, Սպիտակաւորի, Մարտիրոս դիւղի (ժայռափոր) վանքերը, Արենիի, Եղեգիսի և այլ եկեղեցիները (12-14-րդ դդ.), Շատինի, Գլաձորի, Խաչիկ գիւղերի ուշ միջնադարեան վանքերն ու շատ եկեղեցիներ։

Վայոց ձորն այն քուրան է, որտեղ կազմաւորուել են հայ ճարտարապետութեան առանձնայատկութիւնները, որոնք 13-14-րդ դարերում վերածուել են կուռ և ինքնուրոյն ուղղութեան՝ Վայոցձորեան ճարտարապետական դպրոցի[5]։

Քարկոփում և Գնդեվանքում են հանդէս եկել գաւիթ-ժամատների

առանձին, դեռևս անկատար նմոյշները։ Վայոց ձորում են յուշարձանների ճակատները (յատկապէս մուտքի բարաւորները) զարդարուել պատկերաքանդակներով և տոհմանշաններով, որոնք միջնադարեան Հայաստանի ճեւակերտ (plastic) արուեստի նշանաւոր գործեր են։ Եւ, վերջապէս, այստեղ է իր աւարտուն կատարելութեանը հասել իշխանական դամբարան-եկեղեցու կրկնայարկ յօրինուածքը։

«Ջերմուկ» առողջարանից քիչ ներքեւ, Արփայի լայնացող հովտի ձախափնեայ լեռնալանջին է տեղադրուած Գնդեվանքի ճարտարապետական համալիրը։ Յուշարձանախումբը բաղկացած է պարզ ու անպաճոյճ ծաւալաձեւերով հռիփսիմէատիպ եկեղեցուց (հիմնադրուած Սիւնեաց Սոփիա իշխանուհու կողմից 936 թուականին)։ Նոյն դարի վերջերին եկեղեցու արեւմտեան կողմից յաւելուած է ինքնատիպ ու թաղածածկ գաւիթ-ժամատունը։ Վանքի տարածքը պարփակող պարսպապատի հարաւային հատուածի ուղղութեամբ ձգուած են եղել բնակելի և տնտեսական բնոյթի շէնքեր, այդ թւում՝ սեղանատունը։ Եկեղեցու ներսում, աւազ խորանի ձախակողմեան պատին, դէպի աւանդատուն տանող մուտքի վերեւում պահպանուել է Աստուածամօր պատկերը՝ մանուկ Յիսուսը գրկին։ Սա հին միջնադարեան որմնանկարչութեան աչքի ընկնող գործերից է։

Բոլորովին այլ յօրինուածք ունի Սիւնեաց Շուշան իշխանուհու կողմից 911 թուականին կառուցուած Քարկոփի եկեղեցին (գտնւում է Ամաղու և Խաչիկ գիւղերի միջեւ)։ Այս եկեղեցին զմբէթաւոր դահլիճատիպի մի նոր տարբերակ է, ներքուստ խաչաձեւ, արտաքուստ՝ ուղղանկիւն յատակագծով, արեւմտեան կողմից զոյգ աւանդատներով։ Այս ձեւը նոյն դարի երկրորդ կէսին և յետագայ դարերում տարածւում է Այրարատում, մասնաւորապէս, Շիրակում և Գուգարքում[6]։

Համարեայ նոյն յօրինուածքն ունի 130 տարի յետոյ՝ 1041 թուականին կառուցուած Ցաղացքարի Ս. կարապետ եկեղեցին, այն տարբերութեամբ, որ արտաքին ճակատները կրում են դարաշրջանին բնորոշ յարդարանք, այդ թւում՝ վաղնջական (antique) զարդարուեստի ձեւեր (motive)։ Վանական համալիրի մէջ մտնում է մի ուշագրաւ յուշարձան՝ երկյարկանի դամբարան-եկեղեցին՝ խաչքարերով յարդարուած արեւմտեան ճակատով, որտեղից մուտքը տանում է դէպի գետնայարկ դամբարանը։

Որքանով էլ հետաքրքիր են 10-11-րդ դարերի վերը յիշատակուած վանքերն ու եկեղեցիները, սակայն Վայոց ձորի ճարտարապետութեան իսկական գլուխգործոցներն ստեղծուել են 13-14-րդ դարերում։ Դրանց թագը, իրաւամբ, Ամաղուի **Նորավանքն** է, յատկապէս Մոմիկ ճարտարապետի հանճարեղ ստեղծագործութիւնը՝ Բուրթելաշէն կրկնայարկ եկեղեցի-դամբարանը (1339 թ.), որը միջնադարեան Հայաստանի ճարտարապետութեան վերջին հզօր գործն է, կարապի երգը։

Բոսորագոյն ժայռերով չրջապատուած վանական համալիրի մէջ են

մանում Ս. կարապետ, նաև Ստեփանոս Նախավկայ անունը կրող եկեղեցին (1216–1227 թթ.), դրա եզակի յօրինուածք ունեցող ժամատունը (1261 թ.), հիւսիսային կողմի կիսակառոյցը՝ Սմբատ Օրբելեանի դամբարանը (1275 թ.)։ Դրանք Օրբելեան իշխանական տոհմի շինարարական գործունէութեան արդասիքն են։ Այդ յուշարձաններում ճարտարապետական յարդարանքի հոյակապ նմոյշներ են կրկնայարկ եկեղեցի-դամբարանի և ժամատան արեւմտեան մուտքերի (ժամատանը՝ նաև լուսամուտի) բարաւորները զարդարող Աստուածամօր, Քրիստոսի և Հայր Աստծու պատկերաքանդակները։ Այդպիսիք հանդիպում են նաև Սպիտակաւոր վանքի Ս. Աստուածածին եկեղեցու (1321 թ.), Թանահատի վանքի Ս. Նշան եկեղեցու (14–րդ դ.) և Արենիի Ս. Աստուածածին եկեղեցու (որը կառուցել է տարեալ Մոմիկ ճարտարապետը) մուտքերի բարաւորների վրայ։

Անդրադառնալով Վայոց ձորի միւս կարեւոր վանական համալիրներին, պէտք է ասել, որ դրանցից իւրաքանչիւրին յատուկ են ինքնատիպութիւնը և միեւնոյն ժամանակ վայոցձորեան ճարտարապետական դպրոցին բնորոշ ընդհանրութիւնը։ Այդպիսի է, օրինակ, Արատեսի վանքի Ս. Աստուածածին եկեղեցու գաւիթ-ժամատունը, որը Սիրանես ու Գրիգորիկ ճարտարապետների միջոցով 1270 թուականին կառուցել է տուել Սմբատ Օրբելեանը։ Սրա ծածկի հատուող կամարներով համակարգը միակն է, որում զոյգ կամարները հատուում են ոչ թէ զոյգ, այլ մէկ կամարով։

Օրբելեանների կառուցած եկեղեցիներից Եղեգիսի Զօրացը կամ Ս. Աստուածածինը (14–րդ դ.) քրիստոնէական աշխարհում աննախադէպ յօրինուածք ունի։ Այն կառուցուածք է աւագ խորանով ու երկու կողմերի աւանդատներով, բայց առանց ապօթասրահի[7]։

Ինքնատիպութեամբ աչքի են ընկնում նաև Պռոշեան իշխանների վանքերն ու եկեղեցիները։ Օրինակ, Սպիտակաւոր Ս. Աստուածածին վանքի (1321 թ.)՝ իր ձեւերով աննախադէպ զանգակատունը, Թանահատի վանքի կամ Ղարավանքի՝ Պռոշեան իշխանի պատուէրով 1273–1279 թուականներին կառուցուած Ս. Ստեփանոս եկեղեցին և վերջապէս Մարութրոս գիւղի մօտ 1286 թ. կառուցուած ժայռափոր վանքը, որը վաստօրէն երկրորդն է Գեղարդավանքից յետոյ։

Նշելի են Վայոց ձորի որմնախիտ և առանձին կանգնեցուած խաչքարերը՝ ճարտարապետական անզուգական ու դողտրիկ այդ կոթողները։ Այդ բնագաւառում եւս ակնյայտ է տեղական դպրոցի դրոշմն իր որոշակի առանձնայատկութիւններով։ Բաւարարուենք միայն յիշատակելով Եղեգիսի որմնափակ խաչքարը (1340 թ.) և վայոցձորեան խաչքարերի թագն ու պսակը՝ Մոմիկի կերտած Նորավանքի խաչքարերը, որոնցից լաւագոյնը (1308 թ.) փոխադրուած է Էջմիածնի վեհարան։

Խոշոր է Վայոց ձորի պատմաճարտարապետական յուշարձանների համակողմանի նշանակութիւնը։ Բացի մեր ժողովրդի պատմութեան, գեղարուեստական ստեղծագործութեան ու շինարարական արուեստի

կրողները լինելուց, դրանք մեծ ծառայություն են մատուցել ժողովրդի հոգեւոր, բարոյագաղափարական, հայրենասիրական ու գեղագիտական դաստիարակության գործին:

Աչքի լույսի պէս պահպանենք Վայոց ձորի քարակերտ գանձերը: Թող անպակաս լինի խնամքն ու հոգատարությունը դրանց նկատմամբ:

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Գ.Մ. Սարգսյան, Ա. Օ. Խաչատրյան, «Վայոց ձոր», Երեւան, 1980, էջ 59:
2. Նույն տեղում, էջ 64:
3. Վ. Մ. Հարությունյան, «Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները», Երեւան, 196 ... (թիւը չկայ) Թ., 17-26, 35-37, 48-50:
4. Նույն տեղում, էջ 102-112:
5. Ա. Խ. Մնացականյան, «Հայ ճարտարապետության Սյունիքի դպրոցը», Երեւան, 1960 թ.:
6. Ս. Խ. Մնացականյան, նշ. աշխ., էջ 123:
7. Հ. Եղիազարյան, «Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները», Երեւան, 1955, էջ 58: Հեղինակը կրկնելով այլոց սխալը, եկեղեցու շինարարութիւնը վերագրում է պատմագիր Ստեփանոս Օրբելեանին: Ինչպէս պարզաբանում է Ս. Բարխուդարյանը (տես՝ «Դիվան հայ վիմագրության», հ. 3-րդ, Ե., 1967, էջ 108), շինարարական արձանագրութեան մէջ յիշատակուած տէր Ստեփանոսը՝ Զալալի որդին, պատմագիր Ստեփանոս Օրբելեանի եղբօրորդին է:

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ ԳՈՐԾԱԴՐՈՒԱԾ ՋԱՆՔԵՐԸ

Ձեմարտուհեան դէմ մեղանչած չեմ լինի, եթէ ասեմ, որ Վայոց ձորի քարակերտ կոթողների նկատմամբ խնամքն ու հոգատարութիւնը կազմակերպուեցին հիմնականում խորհրդային տարիներին, իսկ վերականգնումներն սկսուեցին 40-ական թուականներից: Դրանց արդիւնքներն արժանի են ուսումնասիրման և գիտական արժէքաւորման:

Ներկայ հաղորդմամբ, յենուելով փաստական տուեալների վրայ, պիտի լոկ համառօտակի պատմեմ կատարուածի մասին, ամենեւին յաւակնութիւն չունենալով հանգամանօրէն անդրադառնալու իւրաքանչիւր գործընթացին, մասնակի կամ լրիւ վերականգնման ժամանակ կիրառուած սկզբունքներին ու մանրամասնութիւններին: Դրա համար առաւել ընդարձակ չարադրանքի կարիք կայ:

Որպէս կանոն, պատմաճարտարապետական յուշարձանների նկատմամբ խնամք ու հոգատարութիւն կազմակերպելուն նախորդում է դրանց գիտական ուսումնասիրութիւնը: Ստորեւ խիստ համառօտակի կ'անդրա-

պառնամ Վայոց ձորի յուշարձանների գիտական ուսումնասիրութիւններին, դրանց արդիւնքներին ու գնահատմանը։

Առաջին ուսումնասիրութեան պատիւը պատկանում է Մոսկուայի կայսերական հնագիտական ընկերութեանը։ Նրա կողմից գործուղուած արշաւախումբը 1907–1908 թթ. Վասիլի Սիտեւի գլխաւորութեամբ կազմակերպել է այս տարածաշրջանի գիտական ուսումնասիրութիւնն ու փաստագրումը, լուսանկարումը, չափագրումը։ Դրա արդիւնքները հրատարակուած են Մոսկուայում 1916 թուականին, խմբագրութեամբ Լազարեան ճեմարանի պրոֆեսոր Քրիստափոր Քուչակ Յովհաննիսեանի։ Գիտաշխարհի մանրամասն հաշուետուութիւնն օժտուած է արհեստավարժ լուսանկարիչ Դ. Կոնդակովի լուսանկարներով, որոնցում արձանագրուած է Վայոց ձորի յուշարձանների վիճակը դարասկզբի դրութեամբ։ Գիտարշաւային (expedition) բնոյթի չափագրութիւնները (ցաւօք, որոշ պրալներ պարունակող) կատարել է Տարագրոս Վարդանեանը։

Երկրորդ գիտարշաւը երկրորդ աշխարհամարտի տարիներին կազմակերպուել է ակադեմիկոս Յովսէփ Օրբելու գլխաւորութեամբ, Նորավանքում։ Դրան մասնակցել են լենինգրադցի և տեղացի գիտնականներ ու ճարտարապետներ։ Այս շրջանից մնացել են Ա. Սիվկովի, Մ. Մոխի և Լ. Սադոյեանի միացեալ ջանքերով կատարուած բարձրարուեստ չափագրութիւնները, որոնք մասամբ հրատարակուած են[1]։

Վայոց ձորում կատարուած հնագիտական պեղումներից յիշարժան են երեքը։ Պատմական գիտութիւնների թեկնածու Յովսէփ Եղիազարեանի ղեկավարութեամբ 1952–1954 թթ. Աղաւնաձոր գիւղի դաշտում պեղուել են միջնադարեան քարաւանատան աւերակները։ Դրանց գիտական արժէքը մեծ է, քանզի լոյս են սփռում Վայոց ձորով անցնող հին ճանապարհի ուղղութեան հարցի վրայ։ Պատմական գիտութիւնների թեկնածու Յուսիկ Մելքոնեանի գլխաւորած հնագիտական արշաւախումբը 1986–1991 թթ. պեղումներ է կատարել Յաղացքարի վանական համալիրում։ Տարիներ առաջ կարեւոր իրադարձութիւն համարուեցին պատմական գիտութիւնների թեկնածու Իգիթ Ղարիբեանի գլխաւորած արշաւախումբի կողմից Թանահատի վանքի տարածքում կատարուած պեղումները։ Դրանց արդիւնքների հիման վրայ համարուեց, որ Գլաձորի համալսարանը այստեղ է գտնուել։ Ոմանք, նրանց թւում նաև ես, դա ընկալեցինք որոշ վերապահութեամբ, նկատի ունենալով, որ այդպիսի նշանաւոր համալսարանի ու բազմամարդ միաբանութեան գոյութիւնն այստեղ, պիտի որ թողնէր առաւել կոթողային (monumental) շէնքերի մնացորդներ, քան նրանք, որ պեղումներով բացուել են։ Ահա թէ ինչու ինձ թւում է հարկ կայ շարունակելու Գլաձորի համալսարանի տեղի որոնումները, եթէ, ի հարկէ, դրա հետքերը ի սպառ չեն ոչնչացել ...

Վայոց ձորը բազմահարուստ է ոչ միայն պատմաճարտարապետական մեծագէս արժէքաւոր յուշարձաններով, այլեւ բնութեան հրաշակերտութիւններով։ Խօսքը վերաբերում է Սամուէլ Խաչատրեանի յայտնաբե-

րած և նախնական ուսումնասիրման ենթարկած կարստային քարանձաւներին։ Երբ Արփայ, Գնիշիկ, Գրաւ գետերի կիրճերում գտնուող «Մոզրովի», «Արջերի» ու «Մագիլի» քարանձաւները յարմարեցուեն այցելութիւններ կատարելուն, լայն հեռանկարներ կը բացուեն տարածաշրջանում զբօսաշրջիկութեան զարգացման համար, իսկ բնութեան յուշարձանները կը դառնան եկամտաբեր։

Վայոց ձորի պատմաճարտարապետական յուշարձանների վերաբերեալ լոյս են տեսել ինչպէս հիմնարար աշխատութիւններ, այնպէս էլ գիտահանրամատչելի գրականութիւն։

Առաջինի կարգին են պատկանում ճարտարապետութեան դոկտոր Ստեփան Մնացականեանի «Հայկական ճարտարապետութեան Սյունիքի դպրոցը» մենագրութիւնը (Եր., 1960) և իմ ասպիրանտ, այժմ պատմական գիտութիւնների դոկտոր, Ֆրանսահայ Պատրիկ Տօնապետեանի Վայոցձորեան քանդակագործական յօրինուածքների արուեստագիտական հանգամանալից վերլուծութեանը նուիրուած թեկնածուական ատենախօսութիւնը։ Գիտահանրամատչելի գրականութիւնից են պատմական գիտութիւնների թեկնածու Յովսէփ Եղիազարեանի «Ագիլբեկովի չրջանի կուլտուրայի հուշարձանները» հայերէն, ինչպէս նաև ռուսերէն, 1955 թուականին լոյս տեսած գրքերը։ Դրանցում ամփոփուած են հնութիւնների պահպանութեան կոմիտէի տարիների ընթացքում կազմակերպուած գիտարշաւների չնորհիւ կուտակուած նիւթերը։

Նոյն կարգին պէտք է դասել Գ. Մ. Սարգսեանի և Ա. Օ. Խաչատրեանի «Վայոց ձոր» գիրքը, որ լոյս է տեսել 1980-ին։

Հարկ չեմ համարում վկայակոչել Վայոց ձորի յուշարձանների վերաբերեալ պատմաբանասիրական բազում աղբիւրները, որոնք առատ նիւթ են պարունակում։ Բոլորը միասին կարող են մեծապէս նպաստել Վայոց ձորի ճարտարապետութեան, քանդակային արուեստների ու վիմագրութիւնների վերաբերեալ մի համապարփակ մենագրութիւն ստեղծելուն, որի կարիքը վաղուց է զգացւում։

Անցնեմ հաղորդմանս բուն նիւթին՝ Վայոց ձորի պատմաճարտարապետական յուշարձանների պահպանման ուղղութեամբ գործադրուած ջանքերին, դրանք ներկայացնելով երկու խմբաւորմամբ, առաջինում՝ պետական, երկրորդում՝ պատմական յուշարձանների պահպանման հայկական ընկերութեան միջոցներով իրագործուածները։

Առաջին քայլերը կատարուեցին Նորավանքում, սրանից կէս դար առաջ, 1948-1949 թուականներին, երբ որպէս նախագահ գլխաւորում էի Հայաստանի կառավարութեանն առընթեր ճարտարապետութեան գործերի վարչութեան համակարգում գործող՝ հնութիւնների պահպանութեան կոմիտէն։

Ցիրաւի տանջալից եղան գործադրուած ջանքերը։ Դրանք մի կատարեալ սխրանք էին։ Այն տարիներին դէպի Նորավանք տանող կարգին ճանապարհ չկար։ Շինանիւթով բարձուած մեր ինքնաշարժը Տանձիկից

բարձրանում էր Խաչիկ գիւղ, այնտեղից Քարկովի վանքի մօտով իջնում Ամաղու, առաջին անգամ անցնելով այդ անբարեկարգ, ինքնաշարժի համար խիստ վտանգաւոր ճանապարհով։ Ամաղու գիւղից մինչեւ Նորավանք չինանիւթերը ստիպուած էին փոխադրել աւանակներին բարձած։

Սկզբում նախատեսուած էր միայն տեղադրել ու ամրացնել Բուրթելաչէն Սուրբ Աստուածածին եկեղեցու ճակատներից թափուած քարերը։ Սակայն ստիպուած եղանք վերանայել նախագիծը (որի հեղինակը ճարտարապետ Ալբերտ Բալասանեանն էր), քանզի, ինչպէս պարզուեց, խոնաւութիւնը տեւականօրէն ներթափանցելու պատճառով, պատերի մէջ առաջացել էին դատարկութիւններ, որմնանցքը դարձել էր խախուտ, անկրողունակ։

Նորավանք հրաւիրուած յանձնաժողովի որոշմամբ, արեւմտեան և հիւսիսային ճակատներում, առաջին յարկը պսակող գօտուց վեր, որմնանցքի քարերը մէկ-մէկ համարակալուեցին ու գետնին դասաւորուեցին, լուացուեցին պեղումներով յայտնաբերուած քարերով ու վերաշարուեցին իրենց տեղերում։ Եռայարկ եկեղեցու երրորդ աստիճանի՝ սիւնազարդ կաթողիկէի (rotunda) վերականգնումը միջոցների պակասութեան պատճառով ծրագրուած չէր։ Տեղումներից պաշտպանելու նպատակով կտրաններն ու գմբէթի խոռոչը ժամանակաւորապէս թիթեղապատուեցին։ Նկարագրուած աշխատանքներն ընթացան ճարտարապետ Ալբերտ Բալասանեանի ղեկավարութեամբ ու վարպետ Յոլակ Սարգսեանի բրիգադի ջանքերով։

Նորավանքի ճարտարապետական համալիրում վերականգնման աշխատանքները շարունակելու նպաստաւոր պայմաններ առաջացան, երբ 1978 թուականին աւարտուեց դէպի վանք տանող խճուղու մեծածախս շինարարութիւնը։ Վերսկսուած վերականգնման աշխատանքներն իրականացուեցին երկու փուլով՝ 1982–1986 թթ. (պետութեան միջոցներով ու համապատասխան վարչութեան ղեկավարութեամբ), և 1996–1998 թթ.՝ տէր և տիկին Տիգրան և Տիանա Հաճէթեանների բարերարային ներդրմամբ, ճարտարապետ Հրաչեայ Գասպարեանի նախագծով ու անմիջական հսկողութեամբ, վերականգնող շինարար Արտաշէս Յովսէփեանի ջանքերով։

Վայոց ձորի տարածքում է գտնուում հայկական աշխարհիկ ճարտարապետութեան լաւագոյն յուշարձաններից մէկը՝ Սելիմի քարաւանատունը։ Համաձայն արաբերէն (դրսում) և հայերէն (ներսում) չինարարական արձանագրութեան, այն կառուցուել է ՉՉԱ (1332) թուականին, Ջեալար Օրբելեան իշխանի պատուէրով։ Ծովի մակերեսից 2410 բարձրութեան վրայ, Սուլեմայի լեռնանցքի գագաթին տեղադրուած այս քարաւանատունը սպասարկել է մօտով անցնող մայրուղուն, որը մի կողմից Զանգիքով տանում էր Պարսկաստան, միւս կողմից՝ մինչեւ Կուր գետի հովիտը[2]։ Քարաւանատունը պահպանուած էր կանգուն վիճակում, սակայն ունէր տարանցիկ լայնական ճեղք, կտրասալերը կիսաւեր էին, ներսն ու շրջապատը գտնուում էին անբաւարար վիճակում։

Տակաւին 40-ական թթ. երկրորդ կէսին ճարտարապետներ Սուրբ-Թանիկ Դաւթեանից, Ալբերտ Ժամհարեանից ու Սեդրոս Մարգարեանից բաղկացած խմբի միջոցով կատարուել էր քարաւանատան մանրամասն չափագրութիւնը։

Երիտասարդ ու չնորհալի վերականգնող ճարտարապետ վաղամեռիկ Հրանդ Յակոբեանը դրա հիման վրայ, 1956 թուականին կազմեց քարաւանատան հիմնական վերանորոգման նախագիծը, որն իր իսկ ղեկավարութեամբ 1956-1958 թուականներին վերանորոգման ենթարկուեց քարագործ վարպետներ Հ. և Մ. Մենեջեան եղբայրների աքնաջան աշխատանքով։ Դրանց ընթացքում առաջացած վիճելի հարցերի քննարկման ու լուծման համար անհրաժեշտ համարուեց պատմական յուշարձանների պահպանման և վերականգնման վարչութեան գիտամեթոտական խորհրդի լիակազմ նիստ գումարել հենց տեղում։ Անցել է աւելի քան 40 տարի։ Քարաւանատունը գտնուում է կանգուն, սակայն անխնամ ու անօգտագործելի վիճակում, որովհետեւ այդ կարեւոր ճանապարհը համարեայ դադարել է երթեւեկելի լինելուց ... Այնինչ դա ամենաապահովն է Սիւնեաց աշխարհի հետ կապ պահպանելու առումով։

Պետական միջոցներով վերականգնուել են Սպիտակաւորի ու Թանահատի վանական համալիրները։ Դրանցից առաջինը իրականացուել է վարպետ Պետրոս Մարաքեանի միջոցով, վերականգնող շինարար Շաւարշ Մակեանի ղեկավարութեամբ։ Լիովին վերականգնուել են եկեղեցու արեւելեան ճակատը, թմբուկն ու վեղարը, վերաապարկուել է տանիքը, մասամբ օգտագործելով տեղում պահպանուած պիտանի սալաքարերը։ Նորոգուել է նաև եկեղեցու արեւմտեան կողմից կցուած գաւիթ-զանգակատունը։

Շուրջ երեք տարի (1972-1974 թթ.) է տեւել Թանահատի (Գլաձոր) վանքի երկու եկեղեցիների վերականգնումը։ Դա կատարուել է վերականգնող ճարտարապետ Սարգիս Մաթեւոսեանի նախագծով և իր մշտական հսկողութեամբ, վարպետներ Պետրոս Մարաքեանի, Սիմոն Զելեբեանի ու Վանիկ Մակարեանի բրիգադի միջոցով, Արսէն Աբրահամեանի աշխղեկութեամբ։ Վանքի գլխաւոր՝ Սուրբ Ստեփանոս եկեղեցին (կառուցուած 1279 թուականին, հաւանաբար Պռոշ իշխանի հովանաւորութեամբ) զգալի աւերումներ ունէր, իսկ կողքին կցակառուցուած Վարագայ Սուրբ Նշան կաթողիկէատիպ եկեղեցին բոլորովին զուրկ էր թաղածածկից։ Արդիւնքում՝ երկու եկեղեցիներն էլ հիմնովին վերականգնուեցին ու իրենց նախնական տեսքին բերուած՝ ներկայացան 1984 թուականին համազգային չափանիշով կատարուած Գլաձորի համալսարանի հիմնադրման 700-ամեայ յոբելեանի տօնակատարութեանը։

Սակայն Վայոց ձորում ու բովանդակ Հայաստանում օգնութիւն հայցող յուշարձանների քանակը թելադրում էր էլ աւելի ծաւալել վերականգնման աշխատանքները, այդ գործում ներգրաւելով նաև հասարակայնութեանը։ Այդ նպատակով, 1964 թուականին հիմնադրուեց պատմական յուշարձանների պահպանման հայկական ընկերութիւնը, որի

Նախագահն էր Մարտիրոս Սարեանը, իսկ առաջին տեղակալը՝ տողերիս հեղինակը։ Դրա գործունէութեան գլխաւոր նպատակը պատմաճարտարապետական յուշարձանների վերականգնման ազգանուէր գործին մասնակցելն էր։ Վերականգնման ենթակայ յուշարձանների նախագծումն ու իրականացումը ընկերութեան պատուէրով կատարում էին յուշարձանների պահպանութեան և վերականգման պետական վարչութեան համակարգում գործող նախագծային ինստիտուտի և շինարարական տեղամասերի միջոցով։

Առաջին ներդրումը եղաւ Գնդեվանքի եկեղեցու և գաւթի վերականգնումը, որի համար օգտագործուեց Գալուստ Կիւլպէնկեան հիմնադրամի կողմից տրամադրուած գումարը՝ քսան հազար ամերիկեան տոլար։ Նախ՝ հարկաւոր եղաւ շինանիւթը վանք հասցնելու համար Արփայ գետի վրայ կամուրջ (այն էլ երկու անգամ) ու գետակից մինչեւ վանք 5 կիլոմետրանոց ճանապարհ կառուցել։

Վերականգնման աշխատանքներն ընթացան 1968–1970 թուականներին ու իրականացուեցին ճարտարապետներ Աւետիք Միրիջանեանի նախագծով, համապատասխան վարպետների բրիգադի (Ս. Զելեբյան, Պ. Մարաբեան, Մ. Մելքոնեան, Հ. Գեւորգեան) միջոցով, վերականգնող ճարտարապետ Աշոտ Յարութիւնեանի, այնուհետեւ՝ վերականգնող շինարար Շաւարշ Մակեանի աշխողեկութեամբ։ Արդիւնքում 10-րդ դարում կառուցուած եկեղեցին ու գաւիթը յառնեցին իրենց նախնական տեսքով։

Ընկերութիւնը 1967 թուականից միաժամանակ ձեռնարկեց նաև Աբեղեի Սուրբ Աստուածածին եկեղեցու վերականգնման գործը։ Դարերն իրենց աւերիչ հետքն էին դրել հանճարեղ ճարտարապետ Մոմիկի մտայղացմամբ 1321 թուականին կառուցուած այս հոյակերտութեան վրայ, այն դարձրել գմբէթազուրկ ու կիսաւեր։ Վերականգնման աշխատանքներն իրականացուեցին ճարտարապետներ Շմաւոն և Յուլի Թամանեանի նախագծով, աշխողեկութեամբ Աշոտ Յարութիւնեանի ու Շաւարշ Մակեանի։ 1969 թուականին աւարտուեց եկեղեցու մինչեւ գմբէթի թմբուկի հիմքի վերականգնումը։ Որոշ ընդմիջումից յետոյ, երբ տեղում կատարուած պեղումներով յաջողուեց յայտնաբերել գմբէթի թմբուկին ու այն պսակող վեղարին պատկանող քարեր, ճարտարապետ Հրաչեայ Գասպարեանի նախագծով ու մշտական հսկողութեամբ և Արտաշէս Յովսէփեանի աշխողեկութեամբ յաջողուեց ամբողջացնել եկեղեցու վերականգնումը։ 1997 թ. Սեպտեմբերին, մասնակցութեամբ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի ու Սիւնեաց թեմի հոգեւոր դասի, տեղի ունեցաւ Աբեղեի Սուրբ Աստուածածին եկեղեցու օծման հանդիսաւոր արարողութիւնը։

Ընկերութեան միջոցներով 1970–1971 թթ. լիովին վերականգնուել են Եղեգիս (նախկին Ալայազ) գիւղի արեւելակողմում գտնուող Զօրաց և Սուրբ Կարապետ կամ Սուրբ Նշան փոքրաչափ ու տարբեր յօրինուածք ունեցող եկեղեցիները։

Զօրաց եկեղեցին իր յօրինուածքով աննախադէպ է քրիստոնէա-

կան աշխարհում, կառուցուել է առանց աղօթարանի։ Տեղադրուած է բարձունքին, իր եռակամար խորանով ուղղուած է բաց դաշտի կողմը։ Արեւմտեան ճակատի երեք կամարները աւերուած էին, կտրալանջերի ծածկասալերը՝ քայքայուած։ Վերականգնումը կատարուած Յուլի Թամանեանի նախագծով, վարպետներ Կամօ Մակարեանի, Պետրոս Մարաբեանի ճարտար ձեռքերով, աշխղեկութեամբ Յարութիւն Գասպարեանի։ Վերականգնուեցին խորանի եռակամար բացուածքները, սալարկուեցին խորանի և աւանդատների կամարները, իսկ տանիքները պատուեցին երկաթաքարէ (basalt) ծածկասալերով։

Սուրբ Կարապետ եկեղեցում, հաւանաբար երկրաշարժի հետեւանքով, առաջացել էին աւերման աւելի բարդ երեւոյթներ։ Թմբուկն իր տեղում որոշ չափով ոլորման էր ենթարկուել, պատերի վերնամասերն ու կտրալանջերն ամբողջապէս քայքայուած էին։ Վերականգնումը կատարուեց դարձեալ Յուլի Թամանեանի նախագծով, վարպետ Պետրոս Մարաբեանի միջոցով, Արսէն Աբրահամեանի աշխղեկութեամբ։ Վերաշարուեց թմբուկի երեսպատումը, վերականգնուեցին ճակատների վերնամասերը, երկաթաքարէ (basalte) ծածկասալերով պատուեցին կտրալանջերը։

Վերը թուարկուածներին աւելացնենք, որ պետական վարչութեան միջոցով են կատարուել Քարկոփ վանքի եկեղեցու ամրացումները։ Մաքրման աշխատանքներ են կատարուել Արատեսի վանքում, վերանորոգման են ենթարկուել Գնդեվանքի սեղանատունը, խցերը, պարիսպները։ Իսկ ընկերութեան միջոցներով ամրացուել է Արփայ գետի վրայ ձգուած միջնադարեան կամրջի ճախափնեայ խելը։

Կարծում եմ, որ բերուած փաստական տուեալները լիովին հերքում են այժմ տարածում ստացած այն թիւր կարծիքը, թէ խորհրդային տարիներին բացակայել են խնամքն ու հոգատարութիւնը մեր պատմաճարտարապետական յուշարձանների նկատմամբ։

Արուած է զգալի աշխատանք, սակայն անելիքները դեռ շատ ու շատ են։ Պահանջւում են տաճնամեակների ու մի քանի սերունդների ջանքեր, նիւթական զգալի ներդրումներ։

Ներկայ պայմաններում, երբ զգալիօրէն պակասել են պետական ներդրումները, իսկ մեր ընկերութիւնը գտնւում է հոգեվարքի վիճակում, ժամանակն է, որ Վայոց ձորի պատմաճարտարապետական յուշարձանների վերականգնման գործին իրենց մասնակցութիւնը բերեն տարածաշրջանում գործող ձեռնարկութիւնները, առաջին հերթին՝ «Ջերմուկի» բաժնետիրական ընկերութիւնը։ Եթէ դա յաջողուի, ապա աշխատանքները պէտք է ծաւալուեն Ցաղացքար վանքի Սուրբ Կարապետ եկեղեցում, որի վերականգնման նախագիծը կարող է տրամադրել պատմական յուշարձանների պահպանութեան հայկական ընկերութիւնը։

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1.- Վարազդատ Յարութիւնեան, «Հայկական ճարտարապետության պատմություն», Երեւան, 1992, էջ 126, 128։
2.- Տես Վ. Մ. Հարությունյան, «Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները», Երեւան, 1960, էջ 17-26։

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ
Պատմական գիտութիւնների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ

ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ (10-14-ՐԴ ԴԱՐԵՐ)

Գրաւոր աղբիւրները վկայում են, որ Հայաստանում շինարարական աշխատանքները լայն ծաւալ են ստացել յատկապէս պետական անկախութեան և քաղաքական կայունութեան պայմաններում, իսկ դրանց բացակայութեան ժամանակ՝ երկրի բնիկ տէրերի նուրբ ու հեռատես դիւանագիտութեան չնորհիւ։

Բագրատունեաց թագաւորական յետընթաց տարիներին հայոց երկիրը դարձեալ թեւակոխեց վերելքի և զարգացման ճանապարհը։ Հիմնադրուեցին բազմաթիւ վանքեր ու եկեղեցիներ, կառուցուեցին ամրոցաքաղաքներ, ճանապարհներ ու կամուրջներ, հիւրատներ ու իջեւանատներ, անցկացուեցին նորանոր ջրանցքներ։ Վանքերին կից գոյացան մարդասիրական հաստատութիւններ, որոնց կարիքները հոգում էին վանական միաբանութիւնները իրենց հասութաբեր հաստատութիւններից ստացած եկամուտներով և նուիրատուութիւններով։ Այս ամէնի մասին ստոյգ վկայութիւններ են պահպանուել արքայական ու իշխանական հրամանագրերում, «պայման-վճիռներում» և յատկապէս վիմական արձանագրութիւններում։

Պաշտամունքային օճախներ կառուցելիս հաշուի էին առնուում տեղանքի յարմարաւէտութիւնը, պաշտպանուածութիւնը, բնութեան և շրջակայքերի գեղագիտական ներդաշնակութիւնը։

9–14-րդ դդ. Հայաստանը, ընդ որում նաև Սիւնեաց լեռնաշխարհը, վերածուեց շինարարական լայն հրապարակի։ Իբրեւ կազմակերպիչներ և նպաստաւորողներ հանդէս եկան նահանգների ու գաւառների աշխարհիկ և հոգեւոր տէրերը[1]։ Ինչպէս յայտնի է, Սիւնիքի հոգեւոր կեդրոնը մինչեւ 839 թ. Ծղուկ գաւառի (այժմեան Սիսիանի ենթամարզ) Շաղատ գիւղաքաղաքն էր, որտեղից տեղափոխուեց Տաթեւ։ Նոր եպիսկոպոսարանում սկսւում են լայն շինարարական աշխատանքները։ Դաւիթ Բ եպիսկոպոսը (854–861) Վասակ Սիւնեաց իշխանի որդի Փիլիպէին վճարելով 10.000 դրամ, սեփականում է Տաթեւ գիւղն ու նրա մերձակայ տարածքները[2]։ Ապա նոյն իշխանի աջակցութեամբ կառուցում է եկեղեցի[3]։ Տէր Դաւթին յաջորդած տէր Սողոմոնը 1200 դրամով գնում է Դարատափ (Տանձատա՞փ) գիւղը և 881 թ. նուիրում է Տաթեւի Ս. Գրիգոր եկեղեցուն[4]։

Շինարարական լայն գործունէութիւն է ծաւալում Սիւնեաց Յովհաննէս Ե մետրոպոլիտը (888–918)։ Նա տէր Սողոմոնի օրոք Տաթեւի Ս. Գրիգոր եկեղեցու փակակալն էր, որին եպիսկոպոս էր օծել Գէորգ Բ Գառնեցին (877–897)։ Այդ շինարար հոգեւորականը որոշում է գահերէց իշխան Աշոտի (Փիլիպէի որդու, Վասակի եղբօր) աջակցութեամբ կառուցել կաթողիկէ եկեղեցի։ Այս գործում տէր Յովհաննէսին նեցուկ են կանգնում Գեղարքունիքի իշխան Գրիգոր Սուփանի ժառանգները և Բաղք գաւառի (այժմեան Կապանի ենթամարզ) գահակալ իշխան Զաքիկը՝ ապագայ կաթողիկոս Վահան Սիւնեցու պապը։

895 թ. սկսւում է Տաթեւի մայր տաճարի՝ Պօղոս-Պետրոսի կառուցումը։ Այս առթիւ Յովհաննէս մետրոպոլիտը եկեղեցու արեւմտեան պատին փորագրել է տալիս հետեւեալ յիշատակագրութիւնը. «ՅԱՄԻ ՅՈՐՈՒՄ ԹՈՒԱԿԱՆՆ ՀԱՅՈՑ ՝ ՅԽԴ։ (895) ԷՐ ԵՒ ՁԱՏԻԿՆ Ի ՆԱԽԱՍԱՐԴԻ Ի։Դ։ (4), ԵՍ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ, ՈՐ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԵՑԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՒՆԵԱՑ ՁԿՆԻ ՏԵԱՌՆ ՍԱՂԱՒՄԱՒՆԻ, ԱՐԱՐԻ ՍԿԻԶԲՆ ՇԻՆՈՒԱԾՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ»[5]։

Շինարարութիւնը տեւում է 11 տարի և աւարտւում 906 թ.։ Յովհաննէս եպիսկոպոսը գլխաւոր տաճարի շինարարութեանը զուգահեռ կառուցել է տալիս գրատներ, սրբատներ, գետնափոր գաղտնարաններ, սեղանատուն, արհեստանոց-գործատներ, մթերանոց-պահեստատներ[6]։ կանգնեցնել է տալիս խորհրդաւոր գաւազան սիւնը։ Այդ ժամանակ Տաթեւի վանքն ունէր 500 միաբան։

Տաթեւի նաւակատիքին առատ ընծաներով մասնակցում են հայոց աշխարհի բոլոր մեծերը՝ աշխարհիկ և հոգեւոր տէրերը Սմբատ Ա Բագրատունի թագաւորի և Յովհաննէս Դրասխանակերտցի պատմիչ կաթողիկոսի գլխաւորութեամբ։ Դա, յիրաւի, հայ ժողովրդի սերտ միաբանութեան վառ շքահանդէսն էր, որը պէտք է օրինակ ծառայէր յետագայ սերունդների ազգանպաստ գործունէութեան համար։

910 թ. Յովհաննէս մետրոպոլիտը գահերէց իշխան Աշոտի տիկնոջ՝ Շուշանի հետ միասին կառուցում են Վայոց ձորի Խաչիկ (հնում՝ Խաչերի խոռ) գիւղի մօտ եղած Խոտակերաց վանքը՝ Քարկոփի եկեղեցին[7]։ Այս շինարար հոգեւորականի գահակալութեան ժամանակ՝ 911 թ. կառուցւում է Վահանավանքի Ս. Գրիգոր եկեղեցին, հիմնադրւում է վանական միաբանութիւն, որի եղբայրների թիւը անցնում էր 100-ից։ Վահանավանքը աստիճանաբար դարձաւ «իբրեւ քաղաք բազմաժողով»[8]։

918 թ. վախճանւում է Յովհաննէս մետրոպոլիտը։ Սիւնեաց հոգեւոր գահին բազմում է Յակոբ Ա Դուինցին (918–958), Յովհաննէս Դրասխանակերտցի կաթողիկոսի եղբօրորդին, որը մեծ անհանգստութիւն էր պատճառելու Անանիա Մոկացի Մեծ կաթողիկոսին (946–968)։ Յակոբ Ա-ի քառամեայ առաջնորդութեան տարիներին Սիւնեաց լեռնաշխարհը, մասնաւորապէս Վայոց ձորը, պատւում է կրօնամշակութային կեդրոնների լայն ցանցով։ Դեռեւս 929 թ. Սմբատ գահերէց իշխանի տիկին

Սոփիայի և իշխան Սահակի հետ միասին շրջագայելով Վայոց ձորում, Յակոբ եպիսկոպոսը առաջարկում է Ոստին գիւղից վեր հիմնադրել կրօնական օճախ։ 932 թ. Փիլիպէ իշխանից 12.000 դրամով և մէկ պատուական գոհարով գնելով Զագեձորի (այժմեան Գորիսի ենթամարզ) Վարագակն գետի աղբրակերը (Ակները), 29 կմ երկարութեամբ անցկացնում է ջրատար՝ Տաթեւի վանքի մերձակայքում գտնուող Ցաքուտ հանդամասը ջրարբի դարձնելու և վարդուտի վերածելու ակնկալիքով[9]։ Դա յիրաւի, Դանը և վիթխարի աշխատանքը պահանջող ձեռնարկում էր, որ կատարեց Յակոբ եպիսկոպոսը աներեր կամքով ու յամառութեամբ։ 13-րդ դարում, մոնղոլական արքունիքում տիրող խժդժութիւնների ժամանակ, ջրանցքի աշխատանքը խափանուեց և նորոգուեց միայն 1294 թ. Հայրապետ եպիսկոպոսի ու տէր Յոհաննէսի ջանքերով։ Ակների մօտ՝ լեռնալանջին պահպանուել է ջրանցքի վերանորոգման մասին հետեւեալ արձանագրութիւնը.

«ՅԱՄԻ ՅՈՐՈՒՄ ԷՐ ԹՎ. ՉԽԳ (1294) ԵՍ՝ ՏՐ ՅՈՀԱՆԷՍ ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՒ ԱՂԱԻԹԻՒՔ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՒՐ ԻՄՈ ՏՐ ՀԱՅՐԱՊԵՏԱ ՏԱՐԱ ՁՁՈՒՐՍ ՎԱՐԱՐԱԿԱՆ Ի ՎԱՐԴՈՒՏՆ, ՁՈՐ ԱՃԱՊԱՏԻՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏՐ ՅԱԿՈԲ ԳՆԵԱԼ ԷՐ ԵՒ ՏԱՐԵԱԼ ԲԱՁՈՒՄ ԱՇԽԱՏՈՒ ԹԲ ԵՒ ԱՐԳԵԱՄԲՔ ՁԽԱՓԱՆԵԱԼՆ Ի ԲԱՁՈՒՄ ԱՄԱՆԱԿԻՑ ԿՐԿԻՆ ՆՈՐՈԳԵՑԱՔ ՅԻՇԱՏԱԿ ՄԵՁ ԵՒ ՆԱԽՆԵԱՑ ՄԵՐՈՑ...»[10]։

931-936 թթ. Սմբատ գահերէցի և նրա իշխանուհի տիկնոջ՝ Սոփիայի աջակցութեամբ կառուցուեց Գնդեվանքի սքանչելի եկեղեցին։ Այս մասին ստոյգ վկայութիւն է պահպանուել Ստեփանոս Օրբելեանի «Պատմութիւն տանն Սիսական» աշխատութեան էջերում, մասամբ նաեւ Գնդեվանքի վիմագրերում։ Տաճարի չինարարական արձանագրութիւնն աւարտում է պատկերաւոր մի նախադասութեամբ. «ՄԱՏԱՆԻ ԷՐ ԱՆԱԿՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ, ՇԻՆԵՑԻ ՁՍԱ ԵՒ ԵԴԻ ԱԿՆ Ի ՎԵՐԱՅ»[11]։ Շատ աւելի ուշ, Քրիստափոր վանահայրը 999 թ. կառուցում է Գնդեվանքի պարիսպը, իսկ հայր Սարգիս Բ-ն 1008 թ. Ծուղակ գաւառի Զկնարած գիւղից (Բազարչայ) գետից 24 կմ երկարութեամբ ջրատար է անցկացնում Գնդեվանքի և վանքապատկան գիւղերի կարիքները հոգալու նպատակով[12]։ Յակոբ Ա եպիսկոպոսը, դարձեալ Սմբատ գահերէց իշխանի հաճութեամբ և նիւթական աջակցութեամբ 936 թ. հիմնադրում է Հերմոնի վանքը՝ կառուցելով տեղի Ս. Գրիգոր եկեղեցին։ Նշենք, որ այս վանքի ստոյգ տեղադրութիւնը մինչեւ դարիս 50-ական թուականները որոշակի չէր և բացայայտուեց վիմագրագէտ-պատմաբան Ս. Գ. Բարխուդարեանի վերծանութիւնների շնորհիւ։ Հերմոնի վանականները զգալի դեր կատարեցին հայոց հայրապետական Աթոռը 1441 թ. մայր հայրենիքում վերահաստատելու ժամանակ։

Ստեփանոս Օրբելեանի կարծիքը Յակոբ Ա եպիսկոպոսի վերաբերեալ երկակի է. կոչելով նրան «Սիւնեաց մետրոպոլիտ և գլուխ ամենայն եպիսկոպոսաց հայոց»[13], նա չի վարանում Յակոբ Ա-ին ներկայացնել շռայլ գովեստներով. «անհամեմատելի, աստուածավայելուչ, արքայաշուք,

երջանիկ և բարի», «հանճարեղ և իմաստուն»[14]: Սակայն չի մոռանում յիշատակել Յակոբի նաև «վայրենաբարոյ գործերի մասին»[15], այսինքն՝ թէ ինչպէս այս եպիսկոպոսը ապստամբեց հայոց կաթողիկոսի դէմ և հրաժարուեց մեռոնը ստանալ հայրապետական աթոռից՝ միանալով Աղուանքի արքեպիսկոպոսին: Սա է գլխաւոր պատճառը, որ նոյն պատմիչն այս դէպքում Յակոբ Ա-ին անուանում է «ամբարտաւան, ստախօս և գոռոզ»[16]: Ի հարկէ, նշանակութիւն ունէր նաև այն պարագան, որ Յակոբ Ա-ն, միանալով հանճարեղ Գրիգոր Նարեկացու հօր՝ Խոսրով Անձեւացեաց եպիսկոպոսի հետ, ցանկանում էր բարենորոգումներ կատարել Հայոց եկեղեցու նուիրապետական (hierarchic) կառուցուածքում: Սակայն, ինչպէս Ստեփանոս Օրբելեանն է ասում, «թողցուք զայս քննել Արդարադատին Աստուծոյ»[17], չէ՞ որ «գոյ քուն և իմաստնոյ»[18]: Անանիա Մոկացի կաթողիկոսը, ժամանելով Սիւնիք, խստօրէն դատապարտում է Յակոբ Ա-ին, զրկելով Սիւնեաց Աթոռը մետրոպոլիտական աստիճանից:

Յակոբ ապստամբից յետոյ նահանգի թեմակալ եպիսկոպոս ընտրուեց Բաղք գաւառի գահակալ իշխան Ջեւանշիրի որդի Վահանը, որն այդ ժամանակ Վահանավանքի առաջնորդն էր՝ «որ էր առաջնորդ մեծի ուխտին Վահանու վանից»[19]:

Նոյն Վահանավանքում նրան եպիսկոպոս է ձեռնադրում Անանիա Մոկացի կաթողիկոսը[20]: Վահան Ջեւանշիրեանի նստավայրերը Տաթեւն ու Վահանավանքն էին: Այստեղ նա կատարեց մեծ բարեփոխումներ. կառուցեց Վահանավանքի Ս. Գրիգորի գաւիթը, սրահ-դամբարանատունը, սեղանատունը, փողրակներով խմելու ջուր բերեց Տիգրանասարի լանջերից[21]: 967 թ. Վահան եպիսկոպոսը շինարարական աշխատանքներ է կատարում Արատեսի վանքում, որի կեդրոնական զոյգ մատուռների արեւմտեան պատին պահպանուել է յիշատակագրութիւն.

«ՆԺԶ (967) Թ[ՈՒԻ]Ն ԵՍ ՎԱՀԱՆԻԿ[22] ՅԻՄՈՅ ԸՆՉԻՑ ԿԱՆԳՆԵՑԻ ՋՍՈՒՐԲ ԳԻՈՐԳ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈ ԻՄՈ. ՈՐ ԿԱՐԴԱ ՋԻՍ ՅԻՇԵՍՅԷ ԵՒ ԱՆ ՋՆԱ ՅԻՇԷ»[23]:

Անանիա Մոկացուց յետոյ Շիրակաւանում կայացած եկեղեցական ժողովը հայրապետական Աթոռին է բազմեցնում Վահան Սիւնեցուն, սակայն որոշ ժամանակ անց, Վահանը մեղադրւում է քաղկեդոնականութեանը յարելու մէջ և գահընկէց արւում:

Շինարարական աշխատանքները Սիւնիքում լայն ծաւալով շարունակուեցին նաև Յովհաննէս Է եպիսկոպոսի առաջնորդութեան տարիներին (1006–1058): Սարգիս Ա Սեւանցի կաթողիկոսի կոնդակի համաձայն նա ընդարձակում է Սիւնեաց թեմի սահմանները (յիշենք Սարգիս Ա կաթողիկոսի շրջաբերական նամակը)[24], վերստանում է մետրոպոլիտական շնորհը, վերադարձնում է յափշտակուած գիւղերն ու կալուածները, ապա նուիրւում շինարարական աշխատանքների:

1027 թ. Յովհաննէս եպիսկոպոսը դարձեալ վերականգնում է Ս. Գրիգոր եկեղեցին: Նրա բարենորոգումներին նեցուկ են կանգնում Սիւն-

եաց Վասակ թագաւորը (998–1040) և նրա քեռորդիները Սմբատն ու Գրիգորը, որոնք յաջորդաբար բազմելու էին Սիւնիքի արքունական գահին:

1043 թ. Սմբատ թագաւորի (1040–1051) աջակցութեամբ կառուցւում են Տաթեւի մայր տաճարի սրահը, գաւիթն ու այլ շինութիւնները: Այս առթիւ տէր Յովհաննէսը Տաթեւի սրահի հիւսիս-արեւմտեան մոյթի վրայ արձանագրում է .

«ՅԱՄԻ ՅՈՐՈՒՄ ԷՐ Թ[ՎԱԿԱՆՆ]:ՆՂԲ: (1043), Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍՄՊԱՏԱ, ՈՐԴՈ ԱՇՈՏՈ, ԵՍ՝ ՏՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՆԵՑԻ ՁՍՐԱՀՍ ԱՒԳՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՄՊԱՏԱ...»[25]:

Յովհաննէս Ի-ն վախճանուեց 1058 թ., Սիւնեաց առաջնորդ ընտրուեց Գրիգոր եպիսկոպոսը (1058–1116), որը վայելում էր Գրիգոր Ա. Սիւնեաց թագաւորի (1051–1072) բարոյական և նիւթական աջակցութիւնը:

«Ի ԹԱԳԱՎՈՐՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԱՊՍԱԿԵԱԼ ԱՐՔԱՅԻՆ ԳՐԻԳՈՐՈ» 1062 թ. վերականգնւում է Բղնոյ Նորավանքը[26], ինչպէս նաև Քառակերաց վանքի (Քարկոփի) եկեղեցին: Գրիգոր եպիսկոպոսը 1087 թ. կառուցում է Տաթեւի վանքի Ս. Աստուածածին կրկնայարկ եկեղեցին: Այդ ժամանակ Սիւնիքի թագաւորն էր բարեպաշտ հայկազուն Սենեքերիմը, որը նենգաբար սպանուեց սելճուկ-թուրքերի հետ բանակցելու ժամանակ, Բաղաբերդի պարիսպների տակ 1094 (6) թ.:

Սիւնիքի չինարար եպիսկոպոսների ցանկում ուրոյն տեղ է գրաւում Սարգիս Ա արքեպիսկոպոսը, որը Լիպարիտ Օրբելեանի աջակցութեամբ 1216–1221 (23) թթ. ընթացքում կառուցեց Ամաղուի Նորավանքի Ս. Նախավկայ եկեղեցին: Ս. Նախավկայի արեւմտեան մուտքի ճակատակալ քարին պահպանուել է յիշատակագրութիւն՝ հետեւեալ բովանդակութեամբ. «ԵՍ ՏՐ ՍԱՐԳԻՍ, ՔԵՌՈՐԴԻ ՏՐ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՍԻՒՆԵՑ ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ՇԻՆԵՑԻ ՁԵԿԵՂԵՑԻՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՆ ՆՈՅ ԵՒ ԼԻՊԱՐՏԻՆ ԵՒ ՆԱԽՆԵԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ ԵՐԿՈՒ ՀԱՐԱՁԱՏ ԵՂԲԱՐՑՆ, ՈՐ ՍՊԱՆԱՆ Ի ԹՈՒՐՔԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԱՑ...»[27]:

Սարգիս Ա-ն Վայոց ձորի արձանագրութիւններում կոչուած է «Նորավանքի առաջնորդ» և «Սիւնեաց վերադիտող»[28]:

Ս. Նախավկայի մի շարք արձանագրութիւններ վկայում են, որ առանձին հաւատացեալներ կարող էին հոգալ կառոյցի այս կամ այն հատուածի ծախսերը: Օրինակ՝ Սարգիս Ա-ն նշում է, որ Ս. Նախավկայի հարաւ-արեւմտեան խորանը կառուցուել է Հասան Ամաղուեցու միջոցներով[29], իսկ հարաւ-արեւելեանը՝ այս եպիսկոպոսի «ձեռ[ն]ասուն աշակերտ», եկեղեցու փակակալ Խիկարի՝ «զի նորայ արդեամբ չինեցաւ», — կարդում ենք վկայագրում[30]: «Ի հայրապետութեան ՏՐ Սարգսի» 1220 թ. Աբրաեսի վանքում փորագրուել է անուանի զօրապետ Վասակ Խաղբակեանի յաղթական բովանդակութեամբ արձանագրութիւնը, որում պատմւում է Վայոց ձորի ամրոցները սելջուկ-թուրքերից ազատագրելու մասին[31]:

Սիւնեաց նահանգը, մասնաւորապէս Վայոց ձորի գաւառը, նաև

աչխարհիկ կառոյցներով չհնացնելու ասպարէզում զգալի դեր կատարեց Սարգիս Բ եպիսկոպոսը (1263–1298), որը գրաւոր աղբիւրներում ներկայացուած է «անյաղթ հռետոր»[32], «քահանայապետ գաւառիս»[33] և այլ մակդիրներով։

Հաւատացեալներից ստացած առատ ընծաները՝ շարժական և անշարժ գոյքը[34], նա ամբողջապէս տրամադրում է կրօնական և աչխարհիկ շինութիւնների բարեկարգմանը, կառուցել է տալիս Ամաղուի Նորավանքի և Որոտնավանքի (Վաղադնի վանքի) հիւրատները, կամուրջները, որոնցից առաւել նշելին Արփայ (Արենի) գիւղի կամուրջն է, որի խելերը պահպանուել են առ այսօր։

Սիւնեաց նահանգի թեմակալ առաջնորդների ցանկում առանձնակի տեղ է գբաղեցնում մեծանուն պատմագիր, բանաստեղծ, կրօնական և քաղաքական գործիչ, Գլաձորի համալսարանի սան Ստեփանոս Օրբելեանը։ Կիլիկիայում հայոց կաթողիկոսից ձեռնադրուելով և արժանանալով մետրոպոլիտական աստիճանի, այս իշխանազունը վերականգնում է Սիւնեաց երկփեղկուած Աթոռը (Տաթեւի և Նորավանքի հակադիր թեմերը)՝ մէկ գաւազան, մէկ հոգեւոր հովիւ նշանաբանով, առանց խորութիւն դնելու նրանց միջեւ։ Նա առանձնակի ուշադրութիւն է դարձնում նահանգի հոգեւոր-կրթական օճախների գործունէութեանը, նրանց համար հայթայթելով միջոցներ[35] եւ ապահովելով բարեխնամ հոգաւորութիւն։

Ստեփանոս Օրբելեանի անունը քանիցս յիշատակւում է Սիւնեաց նահանգի, մասնաւորապէս Վայոց ձորի բազմաթիւ վիմագրերում՝ Արատեսի վանքում[36], Հերմոնի վանքում[37], Քարագլխում, («Հին Սալլի» գիւղում)[38]։ Հերհեր գիւղում (Շաչ Միակեցի արձանագրութեան մէջ)[39] և այլուր։ Ստեփանոս Օրբելեանի շինարարական գործունէութեան գլուխ գործոցը հանդիսանում է Տաթեւի՝ այժմ վերականգնուած Ս. Գրիգոր եկեղեցին։ Իր «Պատմութիւն տանն Սիսական» աչխատութեան մէջ պատմիչը ներկայացնում է այս եկեղեցում վերականգնման երեք փուլերը. առաջին անգամ Ս. Գրիգորը վերականգնուել է կառուցողներ Փիլիպէ իշխանի և Դաւիթ Բ եպիսկոպոսի ջանքերով, ապա՝ վերականգնուել է Յովհաննէս Ի եպիսկոպոսի և Սիւնեաց Սմբատ Բ Թագաւորի միջոցներով։ Իսկ 3-րդ անգամ հիմնովին վերականգնում է ինքը՝, մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելեանը[40]։

1295 թ. աւարտելով Ս. Գրիգոր եկեղեցու վերականգնումը, Ստեփանոս Օրբելեանը պատուիրում է արեւմտեան մուտքի ճակատակալ քարին արձանագրել.

«Ի ԹՎ. ՉԽԴ։ (1295). ՁՏԷՐ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՄԵՏՐԱՊԱՒԼԻՏ ՍԻՒՆԵԱՑ, ՈՐ Է ՊՐԱՒՏԱՖՐԱՆՏԷՍ ՀԱ[Յ]ՈՑ ՄԵԾԱՑ, ՈՐԴԻ ՄԵԾԱՓԱՌ ԻՇԽԱՆԻՆ ՏԱՐՍԱՒՃԻՆ, ՇԻՆՈՂ $\overline{\text{ՍԲ}}$ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՅԻՇԵՑԷՔ Ի $\overline{\text{ՔՍ}}$»[41]։

Տաճարի վերին կամարաղեղին, ներքուստ, փորագրել է տալիս վանքի տեղադրութեանը համապատասխան սքանչելի մի նախադասութիւն. «ԳՆԱՑՔ ԳԵՏՈՅ ՈՒՐԱԽ ԱՌՆԵՆ ԶՔԱՂԱՔՍ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՍՈՒՐԲ

ԱՐԱՐ ՉՅԱՐԿՍ ԻՒՐ ԲԱՐՁՐԵԱԼՆ»[42]:

Ստեփանոս Օրբելեանը վախճանուեց 1303 թ. և ամփոփուեց Ամաղուի Նորավանքի Օրբելեան իշխանազունների տոհմական դամբարանատանը: Կեանքի մայրամուտից առաջ նոյնպէս նա չդադարեցրեց անհաչտ պայքարը հռոմէական եկեղեցու հետեւորդների դէմ և Գրիգոր Անաւարզեցի կաթողիկոսի չրջաբերական թղթին տուեց մերժողական պատասխան՝ արեւելեան եպիսկոպոսների և մի չարք իշխանների անունից աւելացնելով. «Հաւան եմք մեք ընդ մեր հարսն ի դժոխս իջանել և ոչ ընդ Հռոմոց յերկինս ելանել»[43]:

Թերեւս ունիճոռ-միաբարների դէմ Ստեփանոս Օրբելեանի մղած անհաչտ պայքարն էր հիմնական պատճառը, որ պատմաբան Մ. Զամչեանը նրան կոչում է «այր խրոխտ» «ինքնահաճ» «մեծամիտ» «կոչէ զինքն մետրոպոլիտ պրոտոֆրոնդէս» «պղտորէ զմիտս բազմաց ի վերայ քաղկեդոնականաց» «զի ճարպիկ ոմն էր և ճարտար ի խօսս»[44]: Գրիգոր Անաւարզեցի կաթողիկոսին 1302 թ. յղած պատասխան նամակը Մ. Զամչեանը համարում է «աղճատանք ստայօղ բանից և անոտի զրոյցք տգիտական ճառից»[45]:

Կարծում ենք, չափազանց խիստ է ասուած Մեծն Ստեփանոսի[46] հասցէին: Գոնէ մեզ համար նման որակումները բացարձակապէս ընդունելի չեն:

Դեռեւս Ստեփանոս Օրբելեանի օրոք, 1302 թ. Սիւնեաց մետրոպոլիտական գահին բազմեց Օրբելեան իշխանազուն Յովհաննէս Օրբելը (1303–1324), որին նոյնպէս վերագրում ենք չինարար պատուանունը: Նա եւս չարունակեց անհանդուրժողական կեցուածք ընդունել հռոմէական եկեղեցու ներկայացուցիչների նկատմամբ, պաշտպանելով Հայ Առաքելական եկեղեցու դարաւոր աւանդոյթներն ու անկախ կարգավիճակը:

Յովհաննէս Օրբելը ժամանակակիցների կողմից կոչուել է «արհիական քաւչապետ»[47], «Հռչակաւոր մետրոպոլիտ», «տուն իմաստից և հանճարոյ»[48]: Նա առաւել սերտացրեց և ամրապնդեց Պռոշեան և Օրբելեան իշխանական ընտանիքների միասնութիւնը, ուստի պատահական չէ, որ Խաչի Պռոշեանը՝ «Թոռն Պռոշոյ», Յովհաննէս Օրբելին կոչում է «մեր եղբայրը»[49]:

Յովհաննէս Օրբելի չինարարական գործունէութեան մէջ նշելի է յատկապէս Արփայի (Արենիի) Ս. Աստուածածին եկեղեցու կառուցումը 1321 թ. հանճարեղ Մոմիկի ձեռքով: Ներքուստ պատկերաքանդակներով հարուստ այս գողտրիկ տաճարը կառուցուած է յիշեալ դիւղում, տիրապետող դիրք ունեցող մի բլրակի վրայ՝ ի տես ամենքի:

Ս. Աստուածածնի արեւմտեան մուտքի վերին կամարի չուրջ Մոմիկի ձեռքով փորագրուած է. «ԵՍ ՏՐ ՅՈՎ[ԱՆ]ԷՍ ԱՒՐՊԷԼ ՍԻՒՆԵ[Ա]Ց ԱՐՀԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԻՆՈՂ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՅԻՇԵԼ ԱՂԱՉԵՄ, ԵՒՍ [Ե]Ի ԶԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆՆ ԶԱՐԵԱՆ ՄԵՐՁԱՒՈՐՆ ԻՄ ԶՔԱՋ ՄԵՆԱՄԱՐՏԻԿՆ ԶԲԻՒՐԹԷԼՆ ԵՒ ԶԴԺԽՈԱՓԱՌ ՔՈ ԱՍԷՐ

ՁՈՅԳՆ ԻՒՐ ՁՎԱԽԱԽՆ ՆՈՐԱԲՈՂԲՈՋ ՁԱՒԱԿԱՒՔՆ ԻՒՐԵԱՆՑ ԲԷՇՔԷՆԻՒՆ ԵՒ ԻՒԱՆԷԻՆ, ԹՎ.:ՉՀ:(1321):
ՇԱՐԺ ԵՂԵՒ, ՄՈՄԻԿ ՎԱՐԴՊ(ԵՏ)[50]:

Հայաստանի երկրաշարժների պատմութիւնից գիտենք, որ 1319 թ. Սիւնեաց լեռնաշխարհում տեղի է ունեցել աւերիչ երկրաշարժ: Կարծում ենք, 1321-ը եկեղեցու վերականգնման տարին է: Նոյն 1321 թ. ամենայն հաւանականութեամբ դարձեալ Մոմիկի մտայղացմամբ, կառուցուել է Վայոց ձորի Սպիտակաւոր Աստուածածնի վանքը, որի նրբահիւս մանրաքանդակներն ու դիմաքանդակները մատնում են հանճարեղ ճարտարապետի ներկայութիւնը: Ի դէպ, Սպիտակաւոր Աստուածածինը, որ սկզբնաղբիւրներում կոչուել է նաև Սրկղունեաց Բոլորաբերդի անապատ, յարատեւեց մինչեւ 15-րդ դարը ներառեալ, մինչեւ «պարոն-տէր» եղիչէ արքեպիսկոպոս Օրբելեան-Բուրթելեանի գահակալութիւնը:

Սիւնեաց եպիսկոպոսական Աթոռը Յովհաննէս Օրբելից յետոյ ժառանգեց Ստեփանոս-Տարսայիճը (1324-1331): Նա Սիւնիքի իշխանաց իշխան Տարսայիճ Օրբելեանի թոռն էր, պատմիչ Ստեփանոս Օրբելեանի անհամամայր եղբայր Ջալալի և Գոնցա իշխանուհու որդին. ուսանել էր Գլաձորի համալսարանում, աշակերտելով Եսայի Նչեցուն և Սարգիս վարդապետին: Երիտասարդ հասակից ընտրուել է «արհեպիսկոպոս տանն Սիսական[51] և «Պետ երկոտասան գաւառաց Սիւնեաց»[52]:

Ստեփանոս-Տարսայիճի չինարարական գործունէութեան մէջ առանձին տեղ է գբաղեցնում հայ միջնադարեան ճարտարապետութեան ինքնատիպ նմոյշներից մէկը՝ Եղեգիս իշխանանիստ գիւղաքաղաքի «Զօրաց տաճարը», որի ընդարձակ հրապարակում տեղի էին ունենում զօրահանդէսներ և հայոց զօրքի երդմնակալութեան արարողութիւնները: «Զօրաց տաճարն» իր յօրինուածքային առանձնայատկութիւններով յիշեցնում է Բղենու Նորավանքը:

«Զօրաց տաճարի» արեւելեան պատի հիւսիսային խորշին առ այսօր պահպանուել է 1322-ով թուագրուող հետեւեալ արձանագրութիւնը. «ԵՍ ՏՐ ՍՏԵՓԱՆՈՍ ՈՐԴԻ ՋԱԼԱԼԻՆ, ԹՈՌՆ ՄԵԾԻ ՏԱՐՍԱՅԻՃԻՆ, ՀԻՄՆԱՐԿԵ(Ա)Լ ՇԻՆԵՑԻ ԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ...»[53]:

Ուղիղ 10 տարի յետոյ՝ 1332 թ. Լիպարիտ իշխանի որդի Զեսար Օրբելեանի հովանաւորութեամբ կառուցուեց Սելիմի (Սուլեմայ) նշանաւոր քարաւանատունը, ուր դադար էին առնում Գեղարքունիք և Վայոց ձոր ճանապարհահատուածն անցնող երթեւեկները: Ուշագրաւն այն է, որ այս քաղաքացիական կառոյցը հիմնադրուել և աւարտին է հասցուել Գլաձորի համալսարանի րաբունապետ Եսայի Նչեցու «օրհնութեամբ և աղաւթիւք», ինչպէս վկայում են կառոյցի հայերէն և արաբատառ պարսկերէն արձանագրութիւնները[54]:

Քննարկուող ժամանակաշրջանում հանդէս եկան հայ ճարտարապետութեան Սիւնիքի դպրոցի այնպիսի նշանաւոր դէմքեր, ինչպիսիք են

Գրանեսը, Մոմիկը, Գրիգորիկը, Շնորհաւոր Աղբարը, Բուտը, Սմբատ պատանին և այլ չինարար վարպետներ[55], որոնց անունների ցանկը շարունակաբար համալրւում է նորանոր յայտնագործութիւններով։

Պատմութիւնը նորից և նորից ուսուցանում է, որ Հայոց աշխարհը ծաղկում և վերելք է ապրել միմիայն այն ժամանակ, երբ առկայ են եղել հոգեւոր և աշխարհիկ տէրերի միասնութիւնն ու համագործակցութիւնը և ամենակարեւորը՝ ժողովրդին ծառայելու աներեր կամքն ու ազնիւ ցանկութիւնը[56]։

Սիւնիքում չինարարական գործընթացներն ընդհատուեցին 15–16-րդ դարերում քաղաքական ծանր պայմանների պատճառով (չենկրեմուրեան աւերածութիւնները, Կարա-Կոյունլու և Ակ-Կոյունլու թուրքմենական ցեղախմբերի արիւնահեղ բախումները Հայաստանի տարածքում և այլն). վերելք նկատուեց 17-րդ դարում։

Եզրափակելով նշենք, որ Սիւնիքի իշխաններն ու հոգեւորականները քաջ գիտակցում էին, որ « ... ամենայն փառք և մեծութիւն սպառելոց են և վաղիւ կորնչելոց»[57], ուստի ընկալելով «գունայնութիւն վայրկենի կեանցս» գտնում էին, որ երկիրը կարելի է չէնացնել միմիայն այն դէպքում, «երբ բանքն սպառին և գործքն թագաւորեն»[59]։ Որքան արդիական են հնչում խորիմաստ այս բառերը։

ՕԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. «Դիվան հայ վիմագրության». պրակ 3, Երեւան, 1967, էջ 240։
2. Ստեփանոս Օրբելեան, «Պատմութիւն տանն Սիսական». Մոսկուա, 1861, էջ 149 - 150։
3. Նոյն տեղում. էջ 154 - 155։
4. Նոյն տեղում. էջ 157։
5. «Դիւան հայ վիմագրության». պրակ 2. Երեւան, 1960, էջ 13։
6. Ստեփանոս Օրբելեան. «Պատմութիւն ... ». էջ 163 - 164։
7. Նոյն տեղում. էջ 171 - 174։
8. Նոյն տեղում. էջ 174 - 175։
9. Նոյն տեղում. էջ 185։
10. «Դիվան հայ վիմագրութեան». պրակ 2, էջ 78։
11. Ստեփանոս Օրբելեան, «Պատմութիւն ...» . էջ 191։
12. «Դիվան հայ վիմագրութեան». պրակ 3, էջ 9։
13. Ստեփանոս Օրբելեան, «Պատմութիւն ... ». էջ 207։
14. Նոյն տեղում. էջ 184։
15. Նոյն տեղում. էջ 201։
16. Նոյն տեղում. էջ 201,207։
17. Նոյն տեղում. էջ 202։
18. Նոյն տեղում. էջ 201։
19. Նոյն տեղում. էջ 208։
20. Նոյն տեղում. էջ 210։

21. Նոյն տեղում. էջ 175:
22. Փաղաքշական մասնիկով անձնանունները տարածուած են եղել Սիւնիքում. վիմագրերում եւ մատենագրական աղբիւրներում ունենք Աշոտիկ, Սմպատիկ, Գրիգորիկ, Վահանիկ եւ այլն:
23. Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 122:
24. Ստեփանոս Օրբելեան. «Պատմութիւն ... ». էջ 226-228:
25. «Դիւան հայ վիմագրության». պրակ 2, էջ 19:
26. Նոյն տեղում. էջ 45:
27. «Դիվան հայ վիմագրության». պրակ 3, էջ 212:
28. Նոյն տեղում. էջ 211:
29. Նոյն տեղում. էջ 212:
30. Նոյն տեղում. էջ 213:
31. Նոյն տեղում. էջ 123:
32. Նոյն տեղում. էջ 231:
33. Նոյն տեղում. էջ 223-224:
34. Նոյն տեղում:
35. Նոյն տեղում. էջ 220, 222:
36. Նոյն տեղում. էջ 126:
37. Նոյն տեղում. էջ 134:
38. Նոյն տեղում. էջ 172:
39. Նոյն տեղում. էջ 68-69:
40. Ստեփանոս Օրբելեան. «Պատմութիւն ... ». էջ 353:
41. «Դիվան հայ վիմագրության». պրակ 2, էջ 25:
42. Նոյն տեղում:
43. Ստեփանոս Օրբելեան. «Պատմութիւն ... ». էջ 337:
44. Նոյն տեղում. էջ 191:
46. «Դիվան հայ վիմագրության». պրակ 3, էջ 233:
47. Նոյն տեղում. էջ 60:
48. Նոյն տեղում. էջ 232, 233:
49. Նոյն տեղում. էջ 143, 150:
50. Նոյն տեղում. էջ 29:
51. Նոյն տեղում. պրակ 2, էջ 101:
52. «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի Հիշատակարանները». կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Երեւան, 1950, էջ 231:
54. Նոյն տեղում. էջ 177-178:
55. Ս. Բարխուդարյան, «Միջազգային հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ». Երեւան, 1963, էջ 60, 62-74, 78-86, 101-103 եւ այլն:
56. Գր. Մ. Գրիգորյան, «Սիւնիքը Օրբելեանների օրոք». Երեւան, 1981: Տե՛ս նաեւ՝ Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 177:
57. «Դիվան հայ վիմագրության», պրակ 4, երեւան, 1973, էջ 121-122:
58. «Դիվան հայ վիմագրության», պրակ 3, էջ 215-216:
59. Նոյն տեղում. էջ 216:

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐԵԱՆ
Պատմական գիտութիւնների դոկտոր
Երեւանի պետական համալսարան

ՆՈՐԱՎԱՆՔԸ ԵՒ ՀԱՅ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՆԵՐԸ ԺԲ–ԺԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Նորավանքի հետ կապուած իշխանական տների հետազօտութիւնը միաժամանակ նաեւ այդ նշանաւոր հոգեւոր կեդրոնի պատմութեան մի իւրօրինակ տարբերակի ուրուագծման փորձ կարելի է համարել։ Հարցն այն է, որ իր բազմադարեան պատմութեան ընթացքում Նորավանքը բազմաթիւ թելերով կապուած է եղել ողջ Հայաստանի իշխանական տների, անգամ օտար տիրակալների հետ։ Միաժամանակ, սակայն, ակընբախ իրողութիւն է, որ առկայ տուեալները գերազանցապէս վերաբերում են Սիւնիքի աւատատիրական տոհմերին։ Բացատրութիւնն առաւել քան պարզ է. Նորավանքը եղել է նահանգական հոգեւոր կեդրոն և նրա պատմութիւնը նաև Սիւնիքի հայ ազնուականութեան տարեգրութիւնն է։

Վանքի պատմութեան մէջ միանգամայն բացառիկ է եղել Օրբելեան իշխանների խաղացած դերը։ Նրանց ջանքերով են կառուցուել ներկայումս առաւել լաւ պահպանուած բոլոր շինութիւնները, այստեղ է գտնուում Օրբելեանների տոհմական հանգստարանը։ Օրբելեանների եկեղեցաշինական գործունէութիւնը Նորավանքում շարունակուել է աւելի քան մէկ դար, նրանց ռազմաքաղաքական ու տնտեսական հզօրութեան գրեթէ ամէն մի փուլում։ Ուշագրաւ է նաև այն փաստը, որ, գլխաւոր տոհմածիւղից զատ, Նորավանքում են յուղարկաւորուել գերդաստանի այլ ճիւղաւորումների անդամները, թէև այս երեւոյթը դիպուածային բնոյթ է կրել։

Օրբելեանների տոհմի պատմութեան առաւել մութ էջերից է այն մի քանի տասնամեակ ընդգրկող ժամանակահատուածը, երբ Վրաստանում 1176–1177 թթ. տեղի ունեցած աւատատիրական ապստամբութիւնը գլխաւորելուց և ներքաղաքական պայքարում պարտութիւն կրելուց յետոյ, իր երկու որդիների հետ միասին Լիպարիտ Օրբելեանը հեռացաւ Իրաքի սելճուկեան սուլթանութիւն։ Այստեղ նրանք սիրալիր ընդունելութիւն գտան սուլթանութեան փաստական կառավարիչ Շամս ադ-Դին Ելտկուզի կողմից, որի հետ որոշակի յարաբերութիւններ Օրբելեանները հաստատել էին դեռեւս ԺԲ դարի 60–70-ական թթ., Անիի համար մղուած պայքարի տարիներին[1]։ Ստեփանոս Օրբելեանի վկայութեամբ, Ելտկուզ աթաբեկը համապատասխան հրովարտակով Լիպարիտի որդի Էլիկում Օրբելեանին էր յանձնել Համիան (այսինքն՝ Համատան) քաղաքը որպէս «հայրենիք», միաժամանակ նշանակելով նրան «ամիրայ և

քաղաքապետ մեծ մայրաքաղաքացն Պարսից Ռէյ, Ասպահանայ և Խազուինի ամս երկոտասան»[2]: Ի յաւելումն այս բոլորի, աթաբեկը Էլիկումին կոչել է «որդի իւր»[3], այսինքն՝ ճանաչել է նրան որպէս իր անմիջական ստորակայ (վասալ): Իրանում Օրբելեանների ձեռք բերած այսչափ բարձր դիրքը և սերտ փոխյարաբերութիւնները Ելտկուզ աթաբեկի և նրա որդիների հետ՝ հնարաւոր է, չափազանցութեան որոշ տարրեր պարունակում են, բայց և մտացածին չեն: Մասնաւորապէս, Իրանի պատմութիւնից քաջայայտ է Ահար քաղաքի տիրակալ Բեչքենեանների օրինակը, որոնք սերում էին Վրաստանից և բարձր դիրքի էին հասել յաջողակ ռազմական ծառայութեան շնորհիւ[4]:

Ի դէպ, Իրանի խոշոր քաղաքները թողնելը և Էլիկումի կողմից Նախիջեւանի գաւառը Ելտկուզ աթաբեկից խնդրելը տեղի է ունեցել ոչ թէ նախնիների վրէժը լուծելու ցանկութեամբ, ինչպէս որ դէպքերը մեկնաբանում է Ստեփանոս Օրբելեանը[5], այլ աւելի դիւրութեամբ բացատրելի պարագաների թելադրանքով: Հարցն այն է, որ Ելտկուզ աթաբեկի կրտսեր որդի Խզիլ Ասլանը 1191 թ. սպանուել էր սուլթան Տուղրիլ Գ-ի (1176–1194) հետ արիւնահեղ բախման հետեւանքով, որից յետոյ Ելտկուզեանները արագօրէն թուլացել էին և ընդմիշտ հեռացել Իրանի կեդրոնական շրջաններից: Հետեւաբար, ԺԲ դարի 90-ական թթ. Էլիկում Օրբելեանը կարող էր ապաստան փնտռել միայն Ելտկուզի աւագ որդի Մուհամադ Փահլավանի սերունդներից ոեւէ մէկի մօտ, քանի որ Խզիլ Ասլանը սպանուել էր առանց ժառանգ թողնելու: Դատելով Նախիջեւանի գաւառում հաստատուելու և Գանձակի մօտ (հաւանաբար 1195 թ. յայտնի ճակատամարտի ժամանակ) Էլիկումի սպանուած լինելու փաստերից, նա իր բախտը կապել էր Աբու Բեքր Ելտկուզեանի հետ, որը 1186 թուականից իշխում էր Գանձակում և Ատրպատականում[6]: Ըստ Ստեփանոս Օրբելեանի, Էլիկումի սպանութիւնից յետոյ, նրա մանկահասակ որդի Լիպարիտն աւելի քան 10 տարի անց է կացրել Նախիջեւանում, «անծանօթ լեալ քրիստոնէութեան»[7]: Պատմիչի վկայութեան համաձայն, Լիպարիտը վայոց ձոր է տեղափոխուել այն տարիներին, երբ Վրաստանում իշխում էին Թամար Թագուհին և նրա որդի Գէորգի Լաշան, հետեւաբար շուրջ 1206–7 թթ[8]: Այսպիսով, Լիպարիտի՝ որպէս անձնաւորութեան, ձեւաւորումը և հաւունացումն ընթացել է Սիւնիքում, յաջորդ տասնամեակում: Հետեւաբար, 1216 թ. Նորավանքի Ստեփանոս Նախավկայի եկեղեցու կառուցումը ձեռնարկելիս, նա իրաւունք ունէր յայտարարելու, թէ «մանուկ գոլով դարձայ վերըստին ի լուսաւոր հաւատն սրբոյն Գրիգորի»[9]: Օրբելեանների յետագայ գործունէութիւնը Սիւնիքում հանգամանօրէն լուսաբանուած է դիտական գրականութեան մէջ[10], ուստի հարկ եմ համարում անդրադառնալ այն իշխանական տներին, որոնք գործունէութիւն էին ծաւալել երկրամասում մինչև ԺԳ դարի սկզբնաւարիները:

Նորավանքի, որպէս նկատառելի հոգեւոր կեդրոնի, գործունէութեան վաղ փուլը արդիւնք է այն անդուլ ջանքերի, որ գործադրել է

Յովհաննէս եպիսկոպոսը: Նրա պապ Համտուն Ա-ն Բաղաց թագաւորութեան նշանաւոր իշխաններից էր, իսկ հայրը՝ Հասանը «ունէր ընդ ձեռամբ զամենայն ազատս թագաւորութեանն այնմ»[11]: Յովհաննէս Համտունեանը եպիսկոպոս էր «ի վանս Յովհաննու», այսինքն՝ Վահանավանքում դեռեւս 1105 թ., ուստի նա այդ տարիներին պէտք է լիներ առնուազն 30 տարեկան, ինչպէս որ պահանջում էր դարաշրջանի կանոնական իրաւունքը[12]: 1103–1105 թթ. Բաղաց թագաւորութեանը վիճակուած արհաւիրքներից յետոյ, նա ցանկանում է բնակութիւն հաստատել Նորավանքում «մերձ անառիկ դղեկին Հրասկայ բերդոյն առ հիազօր և մեծաքանչ եկեղեցւոյն սրբոյ Կարապետին»[13]: Նորավանքի միաբանութեան կազմաւորումը, սակայն, տեղի է ունեցել առնուազն մէկուկէս-երկու տասնամեակ ուշ, երկու փուլով: Նախ՝ Յովհաննէս եպիսկոպոսն պէտք է գնացել «Պարսից Մահմուտ սուլթանին»: Ի դէմս պատմիչի յիշատակած «մեծի արքայի» պէտք է նկատի ունենալ իրաքի սելճուկեան սուլթան Մուղիս ադ-Դին Մահմուդ Բ-ին (1118–1131), որն էլ Յովհաննէսին շնորհել է համապատասխան «վարման և մանչուր»[14]: Յովհաննէս Համտունեանը, եղբայրութիւն հիմնադրելուց և Գանձակ ու Տփաղը դիւղերից «հողս և անդաստանս» ձեռք բերելուց յետոյ, բախման մէջ է մտնում Հրասեկայ ամրոցի բերդապահի հետ: Վերստին այցելելով սուլթանին, Յովհաննէս եպիսկոպոսը կարողանում է արտաքսել ոչ միայն Հրասեկայի բերդապահին, այլեւ ստանում է մերձակայ Անապատ ամրոցը, ձեռք բերելով նաև վերջինիս պատկանող 12 ագարակները[15]:

Վախճանուել է Յովհաննէս Համտունեանը 1154 թ.: Այս տարեթիւը թէև վկայուած է Ստեփանոս Օրբելեանի Պատմութեան ձեռագրերի տարբերթերցումներում[16], միանգամայն արժանահաւատ է թւում: Փոխարէնը կարելի է պնդել, որ Յովհաննէս եպիսկոպոսի 1214 թ. իր մահկանացուն կնքելու վարկածը հիմնուած է ակնյայտօրէն սխալ տարբերթերցման վրայ: Այդ են ապացուցում և ժամանակագրական հաշուարկները. 1105 թ. արդէն եպիսկոպոս Յովհաննէսը 1214 թ. կը լիներ չուրջ 140 տարեկան, ինչը անհնարին էր: Ապա՝ կարելի է վկայակոչել պատմիչի մէկ այլ տեղեկութիւնը: Վերջինիս համաձայն, Յովհաննէսին յաջորդած Սիւնիքի Գրիգոր եպիսկոպոսը վախճանուել է 1168 թ. և յուղարկաւորուել Նորավանքում «ընդ երանելի և սուրբ եպիսկոպոսին տէր Յովհաննիսի կապանեցւոյ»[17]:

Վանական միաբանութեան հիմնադրումից յետոյ Նորավանքում է հաստատուել նաև Յովհաննէս Համտունեանի եղբայր Համտունը, ապրելով որպէս կրօնաւոր մինչեւ 1157 թուականը: Ի դէպ, նրան եւս վերագրուել է նախանձելի երկարակեցութիւն (իբրեւ թէ նա ողջ է եղել մինչեւ 1231 թուականը)[18], և դարձեալ Ստեփանոս Օրբելեանի Պատմութեան բնագրի ակնյայտ աղաւաղման հետեւանքով: Ընդօրինակողները չփոթել են Զ(6) և Զ(80) տառերը, այսպիսով 74 տարի աւելի կեանք շնորհելով իշխանին:

Ինչպէս յայտնի է, Նորավանքի Սուրբ Ստեփանոս Նախավկայ եկեղեցու աւանդատները կառուցուել են Խիկար փակակալի և Հասան Ամաղուեցու միջոցներով, հետեւաբար այդ եկեղեցու և առհասարակ ամբողջ վանքի չինարարութեան ծախսերը հոգացել են գլխաւորապէս Օրբելեանները։ Նորավանքի ընտանեկան վանք լինելու իրողութիւնն ակնյայտ է դառնում, եթէ հաշուի առնենք նաև այլ իշխանական տների և վանքի միջեւ կապեր հաստատուելու ժամանակագրութիւնը և դրանց զարգացման տրամաբանութիւնը։

Այս առումով բնութագրական նիւթ է տալիս եւս երկու հինաւուրց տոհմերի պատմութիւնը։ Այսպէս, Մահեւանեանները պատկանում են այն իշխանական տների թուին, որոնք Բաղաց թագաւորութիւնում բարձր դիրք ունէին առնուազն ԺԱ դարի վերջերից[19]։ Դարձեալ Ստեփանոս Օրբելեանի վկայութիւններից յայտնի է նաև այն իրողութիւնը, որ Մահեւան իշխանը բնակեցուել էր Վայոց ձորում Իվանէ աթաբեկի նախաձեռնութեամբ և ստացել Նորավանքի մերձակայքում գտնուող Նրբոյն բերդը[20]։ Եւ այնուամենայնիւ, Մահեւանը յիշատակներ է թողնում Նորավանքում ամենավաղը 1277 թուականին[21], իսկ այստեղ յուղարկաւորուելու արտօնութիւն է ձեռք բերում խոշոր նուիրատուութիւն կատարելուց յետոյ[22]։ 1291 թ. Նորավանքին ընծաներ է տուել նաև Մահեւանի եղբօրորդի Ամիրան[23]։

Դարձեալ աստիճանաբար է տեղի ունեցել Ախթամարեանների կամ Արփայեցիների տոհմի ու Նորավանքի միջեւ կայուն յարաբերութիւնների հաստատումը։ Գրիգոր իշխանը և նրա որդի Ախթամարը երկրամասի տէրերից էին դեռեւս 1191 թուականին նախորդող տարիներին[24]։ Ախթամարը Զաքարեանների գլխաւորած ազատագրական մարտերի նշանաւոր ղեկավարներից էր և մասնակցել էր Հրասեկայ բերդի գրաւմանը[25]։ Սմբատ Օրբելեանի աննախադէպ բարձրացումից յետոյ, Ախթամարի սերունդները, հաւանաբար, խզել էին երբեմնի անմիջական կապը Զաքարեանների հետ և ընդունել Օրբելեանների գերիշխանութիւնը։ Նրանց առաջին յիշատակութիւնը Նորավանքում թուագրուում է 1260–70-ականների սկզբի ժամանակահատուածով[26], իսկ յետագայում այդ յիշատակութիւնները յաճախանում են[27]։ Փալիկ Ախթամարեանի որդի Սարգիսը յուղարկաւորուում է Նորավանքում 1331 թ.[28]։ Հնարաւոր է, որ այդ պատուին տոհմի անդամները արժանացել էին և աւելի վաղ, դեռեւս ԺԳ դարի վերջում[29]։

Միայն նիւթական խոշոր միջոցների և տարածքների նուիրատուութիւնն է, որ ուղի է հարթել խնամակալների (patron) հոգեւոր կեդրոնում յիշատակներ թողնելու համար նաև Օրբելեանների ստորակայ Թանկրեղուլեանների դէպքում։ ԺԳ դարի 40-ական թուականների վերջերին Թանկրեղուլը Սմբատ Օրբելեանի ազատներից էր և Գուտենի գիւղի տէրը[30]։ Շուրջ կէս դար յետոյ, սակայն, Թանկրեղուլի որդի Սանճարը 1302 թ. մահացել և թաղուել է Նորավանքում[31]։ Յաջորդ տարում՝

1303 թ. նա պատարագներ է ստացել Նորավանքում «զՏանծեկ իւր սահմանաւքն և այգովն» միաբանութեանը յատկացնելու չնորհիւ[32]։ Այնուամենայնիւ, նոյնիսկ ամենաշռայլ նուիրատուութիւնները բաւական չեն եղել, որպէսզի Նորավանքը դառնայ, Օրբելեաններից բացի, ուրէէ այլ իշխանական տոհմի ընտանեկան հանգստարանը։ Այս առումով Նորավանքը, անշուշտ, տարբերուել է այլ խոշոր հոգեւոր կեդրոններից (Սանահին, Հաղբատ և այլն), որոնք տոհմական դամբարան էին մի քանի նշանաւոր իշխանական տների համար։

Փաստերը վկայում են, որ Նորավանքի հետ կապեր հաստատելը կատարուել է բացառապէս Օրբելեանների թոյլտուութեամբ և օժանդակութեամբ։ Որպէս կանոն, այս առումով զօրեղ հիմք է ծառայել խնամիական կապը Օրբելեանների հետ։ Միայն այս պարագայում են Նորավանքում պատարագ ստանալու հնարաւորութիւն ձեռք բերել հայկական այլ տարածքների տիրակալները։ Վերջիններիս շարքում առաջինը պէտք է յիշատակել Իվանէ աթաբեկ Զաբեանի ականաւոր զօրահրամանատարներից իշխանաց իշխան Բուբային, որի հիմնական կալուածքները Սիւնիքի սահմաններից դուրս էին գտնուում[33]։ Սակայն նա կալուածքներ է նուիրել Նորավանքին և պատարագներ ստացել միաբանութիւնից, քանի որ նրա դուստր Ասփան՝ Լիպարիտ Օրբելեանի կինն էր[34]։ Միեւնոյն ժամանակ, 1312 թ. Նորավանքում յիշատակներ են թողել Վերին Խաչենի տէր Դոփեանները[35], որովհետեւ Տարսայիճ Օրբելեանի և Միւռա-խաթուն Հասան Ջալալեանի դուստր Ասփան ամուսնացել էր Գրիգոր Բ Դոփեանի հետ։ Աւելին, Օրբելեանների շուրջ մէկդարեայ ստորակայ շահուռնեցիները Նորավանք մուտք գործելու հնարաւորութիւն են ձեռք բերում միայն ԺԴ դարի առաջին կէսի վերջում[36] եւ թերեւս դարձեալ խնամիական կապի զօրութեամբ։ Այս օրինաչափութիւնը, այնուամենայնիւ, միշտ չէ, որ գործել է։ Այսպէս, ԺԴ դարի առաջին տասնամեակներին Նորավանքում նուիրատուութիւն է կատարել Խալաշահի դուստր Խաթունը[37], որի տոհմակիցների հոգեւոր կեդրոնը և ընտանեկան հանգստարանը Թանահատի վանքն էր։ Խալաշահեանները Խաղբակեանների (Պռոշեանների) ստորականերից էին և կարճ ժամանակահատուածում են սերտ յարաբերութիւններ հաստատել Օրբելեանների հոգեւոր կեդրոնի հետ։ Ընդ որում, այն տպաւորութիւնն է ստեղծւում, որ այսօրինակ կապերը կարծես թէ գործել են միայն մի սերնդի կենսագործունէութեան ընթացքում և յետագայում կորցրել են իրենց ուժը։

Այսիսով, աւելի քան երկու դար չարունակ Նորավանքը եղել է այն հզօր բեւեռը, որը դէպի իրեն է ձգել ժամանակի հզօր իշխանական տոհմերին։ Աշխարհիկ և հոգեւոր իշխանութիւնների բազմադարեան համագործակցութիւնն էլ արգասաւորել և հարստացրել է հայ մշակոյթը, ապահովել նրա վերելքը։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Տես Մարգարյան Հ., «Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր». Երեւան, 1980, էջ 110-121:
2. Ստեփանոս Օրբելեան, «Պատմութիւն տանն Սիսական». Մոսկուա, 1861, էջ 287:
3. Նոյն տեղում:
4. Տես V. Minorsky, Caucasia II. The Georgian Maliks of Ahar. 2. The Princes Orbeli in Persia. in : "The Turks, Iran and Caucasus in the Middle Ages" (Variorum reprints, V), London, 1978, p. 868-877.
5. Ստեփանոս Օրբելեան, էջ 288:
6. К,Э. Босворт,Мусульманские династии,М., 1971, с. 171-172.
7. Ստեփանոս Օրբելեան, էջ 290:
8. Նոր ուսումնասիրութիւնների համաձայն, Թամար թագուհու մահը տեղի է ունեցել 1207 թ. (տես «Վրաստանի պատմութեան ակնարկներ», հ. III, Թբիլիսի, 1979, էջ 339, ծան. 2, վրացերէն):
9. «Դիվան հայ վիմագրության», պրակ III, Երեւան, 1967, էջ 211, արձ. 677:
10. Տես Գրիգորյան Գ., «Սյունիքը Օրբելյանների օրոք», Երեւան, 1981:
11. Ստեփանոս Օրբելեան, էջ 254:
12. Տես Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Երեւան, 1961, էջ 304:
13. Տես Ստեփանոս Օրբելեան, էջ 254:
14. Տես նոյն տեղում, էջ 254-255: Գ. Գրիգորեանի կարծիքով, Յովհաննէս եպիսկոպոսը մեկնել է Մուհամադ Փահլավան Ելտկուզեանի մօտ (Տե՛ս Գրիգորյան Գ., նշվ. աշխ., էջ 56), բայց վերջինս սուլթանի տիտղոս երբեւիցէ չի կրել, ուստի հետազօտողի առաջարկած նոյնաւանձնացումը հիմնաւորուած չէ: Անհասկանալի է, թէ ինչո՞ւ է Վ. Հարութիւնեանը Յովհաննէսի հաստատուելը Նորավանքում թուագրում 1205 թ. (տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երեւան, 1976, էջ 916):
15. Տես Ստեփանոս Օրբելեան, էջ 255-256:
16. Տես նոյն տեղում, էջ 257, տարընթերցում 1: Ղ. Ալիշանն իր ձեռքի տակ եղած որոշ ձեռագրերի հիման վրայ նախ նշել է 1155 թ., ապա հաւանական է համարել 1164 թ. (Ալիշան Ղ., «Սիսական», Վենետիկ, 1893, էջ 184, 274, ծան. 1):
17. Ստեփանոս Օրբելեան, էջ 251:
18. Ղ. Ալիշանը համոզիչ կերպով ցոյց է տուել, որ 1231 թ. ճիշդ լինել չի կարող, բայց նրա առաջարկած սրբագրումը (1181 թ.) ոչնչով հիմնաւորուած չէ (Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 274, ծան. 1): Միեւնոյն աշխատութեան մէկ այլ էջում հետազօտողը Համտուն Բ-ի մահը ճշգրտօրէն նշում է 1157 թ. (էջ 184), վերջնականապէս չհրաժարուելով անգամ սխալ 1231 թուականից (էջ 17): Այսպիսով, Ղ. Ալիշանը յստակ տեսակէտ չի ունեցել Համտուն Բ-ի մահուան տարեթուի հարցում: Յետագայ ուսումնասիրողները խնդիրը նոր քննութեան չեն ենթարկել եւ կրկնել են աւանդական 1231 թ. (Ամատեան Հ., «Հայոց անձնանունների բառարան», Հ. Գ., Երեւան, 1946, էջ 29, Գրիգորյան, Գ., նշվ. աշխ. էջ 42):
19. Տես Ստեփանոս Օրբելեան, էջ 240-242, 247:
20. Դիվան հայ վիմագրության, էջ 242, 2րձ. 790:
21. Ստեփանոս Օրբելեան, էջ 267: Նորավանքում պահպանուել է Մահեւան իշխանի տապանաքարը «Պարոն Մահեւանա է» մակագրութեամբ: Տես Սաղումյան Ս., «Նորահայտ վիմագրեր Նորավանքից», «Հուշարձան» տարեգիրք, Բ, Երեւան, 1993, էջ 99:

23. Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», է- 220, արձ. 698: Ամիրան վախճանուել է 1317 թ., (տե՛ս Սաղումյան Ս., «Նորահայտ վիմագրեր Նորավանքից», էջ 99):
24. Տես Սաղումյան Ս., «Արենիի նորահայտ վիմագրերը», «Լրաբեր», հաս. գիտ., 1976, թիւ 10, էջ 55:
25. Ստեփանոս Օրբելեան, էջ 256:
26. Տե՛ս Դիվան հայ վիմագրության, էջ 219, արձ. 694:
27. Տե՛ս նոյն տեղում, էջ 242, արձ. 792, 793:
28. Տե՛ս Մարտիրոսյան Ա., «Մի նորահայտ տապանաքար», «Պատմա-բանասիրական հանդես», 1988, թիւ 2, էջ 154, Սաղումյան Ս., «Նորահայտ վիմագրեր Նորավանքից», էջ 98:
29. Այսպէս, Ս. Սաղումեանի կարծիքով, Ախթամարեաննեերի տոհմի առաջին անդամները Նորավանքում յուղարկաւորուել են դեռեւս 1285 թ., բայց նրա վկայակոչած վիմագրերը նշուած իշխանական տան ներկայացուցիչների յիշատակին խաչքարերի վրայ կատարուած յիշատակագրութիւններ են եւ ոչ թէ տապանագրեր (տես Սաղումյան Ս., «Նորահայտ վիմագրեր Նորավանքից», էջ 93-94):
30. Տե՛ս, Ստեփանոս Օրբելեան, էջ 297:
31. Տե՛ս, Սաղումյան Ս., «Նորահայտ վիմագրեր Նորավանքից», էջ 98:
32. «Դիվան հայ վիմագրության», էջ 221-222, արձ. 704:
33. Բուբայի մասին տես Մուրադյան Պ., «Հայաստանի վրացերեն արձանագրությունները», Երեւան, էջ 124-127, Ավագյան Ս., «Վիմական արձանագրությունների բառաքննություն», Երեւան, 1978, էջ 50-52:
34 Ստեփանոս Օրբելեան, էջ 261-2, 291:
35 «Դիվան հայ վիմագրության», էջ 239, արձ. 780:
36 Տե՛ս, նոյն տեղում, էջ 223, արձ. 707:
37. Տե՛ս, նոյն տեղում, էջ 223, արձ. 708:



ԿԱՐԵՆ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ
Պատմական գիտութիւնների թեկնածու
Հայաստանի ազգային պատկերասրահ

ԴՐՈՒԱԳՆԵՐ ՆՈՐԱՎԱՆՔԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ (ԱՐԱՏԵՍ ԵՒ ՎԵՐԻՆ ՆՈՐԱՎԱՆՔ)

Նորավանքի եպիսկոպոսական Աթոռի պատմութիւնն ընդգրկում է իրադարձութիւններով եւ մշակութային իրագործումներով հարուստ ու հետաքրքրական մի ժամանակահատուած: Նորավանքի Աթոռի հաստատմանն ու գործունէութեանը հանգամանօրէն անդրադարձել է Աբրահամ եպիսկոպոս Մկրտչեանը («Էջեր Սյունեաց աթոռի պատմությունից», Ս. Էջմիածին, 1995): Հայ Եկեղեցու միջնադարեան եպիսկոպոսական Աթոռների մէջ Նորավանքի եպիսկոպոսարանն ունեցել է մի իւրայատկութիւն՝ այն է, բուն աթոռանիստ վայրից բացի եւս երկու վանքերի՝ Արատեսի և Վերին Նորավանքի ներգրաւումը եպիսկոպոսարանի գործունէութեան մէջ, մէկը որպէս ամառային նստավայր, միւսը՝ ուսումնական կեդրոն: Այս հարցն առանձին քննութեան չի արժանացել, ուստի փորձենք առկայ սկզբնաղբիւրների օգնութեամբ ներկայացնել այն:

ԱՐԱՏԵՍԸ ՆՈՐԱՎԱՆՔԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՆՍՏԱՎԱՅՐ

Նորավանքը մեծ ծաղկման հասաւ Ստեփանոս Օրբելեանի աթոռակալութեան շրջանում, երբ նա 1287 թ. Կիլիկիայից Հայաստան վերադարձաւ մետրոպոլիտական աստիճանը ստացած, միաւորեց Սիւնեաց մեծահամբաւ թեմը և իր իշխանութեան տակ առաւ Տաթեւի ու Նորավանքի Աթոռները: Ստեփանոս Օրբելեանը 1295 թ. Տաթեւում կառուցեց Ս. Գրիգոր եկեղեցին, սակայն հիմնականում բնակւում էր Նորավանքում և այստեղ էլ 1297 թուականին աւարտեց իր «պատմութիւնը»: Հենց նրա նախաձեռնութեամբ էր, որ Եղեգիսից հիւսիս-արեւելք գտնուող բարձրադիր Արատեսի վանքը հաստատուեց որպէս Նորավանքի եպիսկոպոսարանի ամառային նստոց: Այս մասին Օրբելեանը պարզորոշ չարադրել է Սիւնեաց նահանգի պատմութեան մէջ: Նա մասնաւորապէս գրում է. «Քանի որ Նորավանքի տեղը տօթ էր, և եպիսկոպոսներն ու սպասաւորները ամառ ժամանակ չէին կարողանում այնտեղ ապրել, որոշեցինք (օգտագործել) Արատեսի վանքը, որը Եղեգիսից վերեւ է: Վանքն իր բոլոր շինութիւններով և հոգեբաժին տրուած կալուածքներով, գիւղն իր շրջակայ բոլոր սահմաններով յանձնեցինք Սուրբ Նորավանքին, որ սրա միաբաններն այն սերնդէ սերունդ տնօրինեն, վայելեն, բայց տեղը չէն և

եկեղեցին լուսաւոր պահելու համար ամենայն ջանադրութեամբ պիտի հոգ տանեն, ինչպէս մեր տան նկատմամբ է տարւում ...»: Այնուհետեւ Քարկոփի նուիրատուութեան մասին նշելով աւելացնում է. «Եւ այսուհետեւ մինչեւ յաւիտեան նրանք պիտի լինեն Նորավանքի սուրբ եկեղեցու սեփականութիւնը: Այստեղի պաշտօնեաներն էլ ժառանգորդ դառնալով այդ վանքերը չէն և եկեղեցիները՝ լուսաւոր պահելը չպիտի անտեսեն, այլ ամենայն ջանադրութեամբ դրանց նկատմամբ հոգ պիտի տանեն, ինչպէս սեփական տան նկատմամբ» (Սրեփանոս Օրբելեան, Սիւնիքի պատմութիւն, Երեւան, 1986, էջ 383):

Արատեսը Օրբելեան իր պատմութեան մէջ յիշատակում է եւս երկու անգամ, նախ Վայոց ձորի վանքերը թուարկելիս, ապա իր տիրապետութեան տակ գտնուող վանքերը թուելիս, մէկ անգամ էլ յիշատակում է վանքամերձ Արատենք գիւղը (Սրեփանոս Օրբելեան, էջ 282, 375, 396):

Արատեսի վանքի՝ Նորավանքի եպիսկոպոսարանի ամառային նստոց դարձնելու Օրբելեանի որոշման մասին արձանագրուած է նաև Արատեսում: Այստեղ մետրոպոլիտն ունի երկու արձանագրութիւն: Առաջինի թուականը եղծուած է, սակայն բովանդակութիւնը միանգամայն յստակ է: Օրբելեանը գրում է. «... ծանեալ, զի բազում ժամանակաց ժառանգութիւն էր լեալ այս եկեղեցիս Նորավանից Սուրբը ուխտին, հաստատեցի եւ ես զԱրատես, որ մեր սեփական հայրենիք էր՝ իր ամէն սահմանաւք, գեղով և հայրենիք հաստատ՝ ժառանգութիւն և հայրենիք սուրբ և գերապատուական դամբարանին մեր Նորավանից» (Դիվան հայ վիմագրության, պր. 3, կազմեց Ս. Բարխուդարյան, Երեւան, 1967, էջ 125):

Երկրորդ արձանագրութիւնը նուիրատուական է, գրուած 1301 թուականին: Այստեղ Օրբելեանը սահմանում է իր «սեփական վիճակ» հանդիսացեալ Գեղարքունեաց մի քանի գիւղերի պատկանելութիւնը Արատեսին, միաժամանակ իր որոշումը խախտողներին սպառնալով աւելացնում է. «Այլ վասն այս սահմանեցաք, որ տեղս մեր նստագահ է» («Դիվան հայ վիմագրության», էջ 126):

Այսպիսով Ստեփանոս Օրբելեանի թողած թէ՛ մատենագրական, թէ վիմագիր վկայութիւնները հաստատում են, որ հենց նրա տնօրինութեամբ Արատեսը դարձել է Նորավանքի եպիսկոպոսարանի ամառային նստոց՝ **«Նստագահ»**, ինչպէս ինքն է գրում արձանագրութեան մէջ: Այդ տեղի է ունեցել մինչեւ 1297 թուականը, որովհետեւ Օրբելեանն այդ մասին նշում է իր պատմութեան մէջ, որի շարադրանքն աւարտել է այդ թուին:

Արատեսում գրուած ԺԴ դարի երկու ձեռագիր է յայտնի: Մէկն ընդօրինակել է Խաչատուր Երզնկացին 1303 թ. Ստեփանոս Օրբելեանի պատուէրով. «... ընդ հովանեաւ սուրբ մենաստանիս՝ մականուն կոչեցեալ Արատես», իսկ միւսը՝ Պօղոս վարդապետը՝ 1310 թ.՝ «ի վանս, որ յորջորջի յԱրատես» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 17, 66):

ՕՐԲԵԼԵԱՆՆԵՐԸ ՎԵՐԻՆ ՆՈՐԱՎԱՆՔԻ ՀՈՎԱՆԱՒՈՐ

Երկրորդ վանքը, որ անմիջականօրէն առնչուել է Նորավանքի եպիսկոպոսարանին, Վերին Նորավանքն է։ Այս վանքի տեղորոշումը դեռեւս յստակ չէ, թէեւ կատարուել են ենթադրութիւններ, վանքը նոյնացուել է Շատիկի վանքի կամ Արատեսի հետ։ Ցիշեալ վերագրումները մեզ անհամոզիչ են թւում, որովհետեւ նշուած վանքերը սկզբնաղբիւրներում ամէնուրեք յիշւում են որպէս առանձին միաւորներ և դրանք նոյնացնելու որեւէ ծանրակշիռ հիմք չկայ։

Նախ փորձենք պարզել Նորավանք-Վերին Նորավանք առնչութիւնները։

Քանի որ Վերին Նորավանքի տեղն անորոշ է և ցաւօք զրկուած ենք նրա վիմագրական նիւթից, ստիպուած ենք ապաւինել հիմնականում մատենագրական և մասնաւորապէս ձեռագրերի յիշատակարանների տեղեկութիւններին։

Ինչպէս կարելի է ենթադրել Ստեփանոս Օրբելեանի վկայութիւնից, սկզբնապէս այս վանքն էլ եպիսկոպոսանիստ Նորավանքի նման հենց Նորավանք է կոչուել։ Պատմիչը թուարկելով Վայոց ձորի վանքերը գրում է. «... Նորավանքը, որը յետոյ դարձաւ եպիսկոպոսարան, միւս Նորավանքը, Ցաղաց քարը ...» (Ստեփանոս Օրբելեան, էջ 282)։ Ի միջի այլոց դաւառի վանքերի թուարկման վերջնամասում Օրբելեանը յիշատակում է նաև Արատեսի վանքը, որը, փաստօրէն բացառում է Վերին Նորավանքի ու Արատեսի նոյնացումը (աւելացնենք, որ Արատեսի բազմաթիւ վիմագրերում և այստեղ գրուած յիշատակարաններում վանքը այլ անունով չի կոչւում, այստեղ չեն յիշատակւում նաև Վերին Նորավանքի նշանաւոր վարդապետները)։

Այսպիսով Օրբելեանի ժամանակ Վերին Նորավանքն աւելի շատ հենց Նորավանք անունով էր յայտնի, դրա համար էլ նա այդպէս է նշել վանքի անունը։ Բայց հենց Օրբելեանի օրոք եպիսկոպոսանիստ վայրի հռչակն այնքան մեծացաւ, որ հաւանաբար հենց դրա պատճառով անհրաժեշտութիւն առաջացաւ «միւս» Նորավանքի անուանը լրացուցիչ որոշիչ աւելացնել։ «Վերին» զուտ աշխարհագրական մակդիրն էլ դարձաւ այդ որոշիչը։ Վերին Նորավանքը հաւանօրէն Նորավանքից աւելի բարձրադիր է։

«Վերին Նորավանք» տեղանունն առաջին անգամ յիշւում է 1302 թուականին մի ուշագրաւ յիշատակարանում, ուր ասւում է այն մասին, որ Սիւնեաց մետրոպոլիտ Յովհաննէս Օրբելը եկել է Վերին Նորավանք «Առ վարդապետան Դաւիթ և Արքայ», որոնք «ի սատար սուրբ ուխտի» խնդրել են ժողովուրդ։ Մետրոպոլիտը գրում է, որ տուել է չորս գիւղ՝ Անկեղի, Եղիան, Եղիկանց ձոր և Վաղցան «ի սեպհական ժողովուրդ և թեմ, որ զամենայն հաս և գիրաւունք սոքա սոցա տացին» (ՃԴ, 8)։ Հրամանագրի բնոյթ ունեցող այս գրութիւնն աւարտւում է նոյնպիսի պաշտօնական ոճով՝ «Գրեցաւ ի թուականիս Հայոց ՉԾԱ (1302) առաջի

Սուրբ Սիոնիս և վարթայպետին Դաւթի։ Հաստատ է գիրս կամաւն Աստուծոյ» (ԺԴ, 8)։

Ո՞վ է Վերին Նորավանքի Դաւիթ վարդապետը, որի խնդրանքին ի՛րայօժար ընդառաջելով Սիւնեաց մետրոպոլիտը վանքին չորս գիւղ է յատկացնում որպէս «սեպհական ժողովուրդ և թեմ»։ Այս հարցին պատասխանելուց առաջ պիտի մի փոքր անդրադարձ կատարենք յիշեալ ժամանակաշրջանում Վայոց ձորում տիրող վարչաքաղաքական և ուսումնակրթական իրավիճակին։ Խօսքը երկու իշխանական տների՝ Խաղբակեանների (Պռոշեաններ) ու նրանց տիրոյթում հաստատուած Գլաձորի համալսարանի և Օրբելեանների ու նրանց անմիջական հովանաւորութեան տակ գտնուող Վերին Նորավանքի վարդապետարանի մասին է։

Ջնայած Ստեփանոս Օրբելեանի պատմութեան, ինչպէս նաև Գլաձորում, Վերին Նորավանքում և Վայոց ձորի այլ վանքերուն յիշեալ շրջանում գրուած բազմաթիւ յիշատակարանների առկայութեանը, այս երկու իշխանատների ու կրթարանների փոխյարաբերութիւնների հարցը այնքան էլ պարզորոշ չի ուրուագծւում և մնում են մի շարք անորոշ հանգամանքներ։

Վարչաքաղաքական կացութեան առնչութեամբ պէտք է ասել, որ Զաքարեանների կողմից Սիւնիքի ազատագրումից ի վեր Խաղբակեանների ու Օրբելեանների միջեւ առկայ էր մրցակցութիւնը։ Խաղբակեաններն անգամ փորձում են առանձին եպիսկոպոսական Աթոռ հիմնել։ Պռոշ Խաղբակեան իշխանը Յովհաննէս անունով հոգեւորականին ուղարկում է Կոստանդին Բարձրբերդցու մօտ, եպիսկոպոս ձեռնադրւում, որը հաստատւում է Ենրջակում և աշխատում առանձին թեմ ստեղծել։ Սակայն Տարսայիճ Օրբելեանի կարգադրութեամբ Նորավանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսն ու Տաթեւից Յովհաննէս եպիսկոպոսը մեկնում են Կիլիկիա և 1267 թ. կաթողիկոս Յակոբ Ա Կլայեցուց կարգադրութիւն ստանալով վերադառնում ու լուծարքում են ինքնակոչ Աթոռը։

Մեզ հետաքրքրող ժամանակամիջոցում Սիւնեաց երկրամասի ընդհանուր տէրը Օրբելեաններն էին, նրանց տոհմն էր տնօրինում նաև մետրոպոլիտական Աթոռը, իսկ Խաղբակեանները իշխում էին Վայոց ձորի մի մասում, տարածքներ ունէին նաև այլ դաւառներում, մասնաւորապէս Կոտայքում։ Երկու իշխանատների նստավայրերը գտնուում էին Վայոց ձորում, շատ մօտ, Օրբելեաններինը՝ Եղեգիսում, Խաղբակեաններինը՝ Սրկղունքում։ Հայոց վարդապետարանի ուսուցչապետ Ներսէս Մշեցին, երբ ապահով կացարան էր փնտռում իր դպրոցի համար, դիմում է Խաղբակեաններին և նրանց հաւանութիւնը ստանալով 1282 թ. Քաջբերունիքից փոխադրւում է Վայոց ձորի Ագբերց վանք։ Այն շուտով ստանում է երկրորդ անուն Գլաձոր, որով և յայտնի է առաւելաբար։ Քանի որ Ներսէս Մշեցու (մահ. 1284 թ.) գլխաւորած դպրոցն էր Հայոց վարդապետարանը՝ բարձրագոյն հոգեւոր դպրոցը, հենց այստեղ են ուսանում նաև Օրբելեան տան հոգեւորական իշխանազունները, որոնցից առաջինը

հենց պատմիչ Ստեփանոս Օրբելեանն էր։ Նա քահանայ էր ձեռնադրել Նորավանքում 1280 թ, իսկ 1282-ից աշակերտում է Ներսէս Մշեցուն «ի կրթարանի աստուածեղէն տառից»։ Ուշագրաւ է, որ Օրբելեանն իր պատմութեան մէջ Գլաձորին միայն այս երեք բառն է յատկացրել, այն դէպքում երբ համալսարանի շրջանաւարտներն այն սովորաբար յորջորջում են «երկրորդ Աթէնք» և փառաբանում այլ մեծարական խօսքերով։

Ա յսպիսով ԺԳ դարի վերջին Խաղբակեաններն էին հովանաւորում Գլաձորը և Օրբելեանները պիտի ունենային մի հակակշիռ, որն էլ, մեր կարծիքով, դարձաւ Վերին Նորավանքն իր դպրոցով ու գրչատնով։ Սակայն չպէտք է կարծել թէ այս մրցակցութիւնն ընթանում էր բացայայտ պայքարի ձեւերով, ընդհակառակը, Գլաձորն ու Վերին Նորավանքը գործակցել են, սաներից ոմանք սովորել եւ Գլաձորում, եւ Վերին Նորավանքում։

Որոշ ժամանակ անց Օրբելեանները ստանձնեցին նաև Գլաձորի հովանաւորութիւնը։ Իսկ Եսայի Նչեցու մահից յետոյ 1337 թ. նոր րաբունապետ Տիրատուր Կիլիկեցին համալսարանը տեղափոխեց Հերմոնի վանք, որը Օրբելեանների տիրոյթում էր։ Սակայն թէ՛ դրանից առաջ, թէ յետոյ Վերին Նորավանքը մնաց որպէս Սիւնեաց եպիսկոպոսարանի և Օրբելեանների հովանաւորութիւնը վայելող կեդրոն։ Այն փաստօրէն հանդիսացել է Նորավանքի եպիսկոպոսարանի կրթամշակութային կեդրոնն իր դպրոցով ու գրչատնով։

ԴԱՒԻԹ ՎԱՐԴԱՊԵՏԸ ՎԵՐԻՆ ՆՈՐԱՎԱՆՔԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Այժմ վերադառնանք Դաւիթ վարդապետին, որն, ինչպէս տեսանք 1302 թ. դիմում է Սիւնեաց մետրոպոլիտ Յովհաննէս Օրբելին և Վերին Նորավանքի համար որպէս «սեպհական ժողովուրդ և թեմ» չորս գիւղ ստանում։ Հաւանօրէն հենց նա է 2395 թ. Գրիգոր Անաւարզեցուն ուղղուած Ստեփանոս Օրբելեանի կազմած նամակի տակ ստորագրող նշանաւոր վարդապետը։ Գլաձորի րաբունապետ Եսայի Նչեցին և Դաւիթ վարդապետը ստորագրել են յաջորդաբար, հետեւեալ ձեւակերպումներով.

«Ես՝ Եսայի, կրտսեր բանասիրաց և յետին վարժապետ, իմով աշակերտօքս համախոհ եմ և միաբան եմ այսմ գրոյ ...

Ես՝ Դաւիթ, նուաստագի քարոզ բանի և վարդապետ Հայաստանս եկեղեցւոյ, համախոհ և միաբան եմ այսմ ուղղադաւան թղթոյս որ ունի ճշմարտիւ զսուրբ հարցն աւանդութիւնն ...» (Սրեւիանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տիփլիս, 1910, էջ 462)։ Բնական է, որ Եսային ու Դաւիթն այստեղ նոյն դպրոցը չեն ներկայացնում, այլ առանձին հաստատութիւններ, ընդ որում Դաւիթը անուանւում է «վարդապետ Հայաստանի եկեղեցւոյ»։

1307 թ. Սսի ժողովից յետոյ սիւնեցիները մի թուղթ էլ ուղարկել են Կոստանդին կեսարացի կաթողիկոսին, որի տակ ստորագրել են. «... եպիսկոպոսքս Սիւնեաց՝ Տէր Յովհաննէս և Տէր Ստեփանոս և վար-

պապետքս Դաւիթ և Եսայի այլ ամենայն վարդապետօքս և վանօրէօքս» (Ց. Տաշեան, «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միխիթարեանց ի Վենետիկ», 1895, էջ 180):

Ս. Արեւշատեանը և Ա. Մաթեւոսեանը Գլաձորին նուիրուած գրքի «Համալսարանի սանները և նրանց դպրոցները» բաժնում գրում են. «ՎԵՐԻՆ ՆՈՐԱՎԱՆՔԻ ԴՊՐՈՑ» Դաւիթ րաբունապետը Օրբելեանների եպիսկոպոսանիստ Նորավանքի առաջնորդն ու տեղի դպրոցի րաբունապետն էր: Առաջին անգամ յիշւում է Անաւարզեցու դէմ համախոհականի ամէն ստորագրողների մէջ. «Ես՝ Դաւիթ նուաստ ոգի քարոզ բանի և վարդապետ Հայաստանեայ եկեղեցւոյ...» ձեւով: Որպէս րաբունապետ աշխատում էր նաև Գլաձորում, բայց Նորավանքի րաբունիների կողմից յիշւում էր նշեցուց առաջ, կամ աւելի պատուաւոր ածական-կոչումներով. այսպէս՝ «ի վարժապետութիւն մեծիս Եսայեայ և եռամեծին Դաւթայ» կամ «քաջ հաւատոյ Հայոց... Դաւթի և Եսայեայ»: Դաւիթը որպէս Օրբելեանների հոգեւոր կեդրոնի առաջնորդ ու րաբունապետ և Գլաձորի րաբունապետ, «եռամեծ» կոչուելու իրաւունք ունէր: Մահացել է 1328 թուականից առաջ և թաղուել Նորավանքում: Նրան փոխարինում է Գլաձորի սան Գիւրիոնը» (Ս. Արեւշատեան, Ա. Մաթեւոսեան, Գլաձորի համալսարանը միջնադարեան Հայաստանի լուսավորության կեդրոն, Երեւան, 1984, էջ 42): Այստեղ նշուած Նորավանքը պէտք է հասկանալ որպէս Վերին Նորավանք, որովհետեւ Դաւիթն այստեղ է առաջնորդ եղել և մահից յետոյ այստեղ էլ թաղուել է, ինչպէս վկայում են յիշատակարանները:

Ժամանակագրական կարգով ներկայացնենք Վերին Նորավանքում գրուած ձեռագրերի յիշատակարանները, ինչպէս և Գլաձորի այն յիշատակարանները, ուր յիշւում է Դաւիթը:

1312 թ. Բեներ կրօնաւորը Աւետարան է ընդօրինակել «ի գաւառիս Տեղեգեաց, ի վանս, որ Վերի Նորավանս կոչի, ընդ հովանեաւ Սուրբ Աթոնիս և Մաւրս Լուսոյ, առաջնորդութեան սուրբ րաբունապետիս Դաւթի և եղբաւրորդոյ իւր Կարապետի» (ԺԴ, 90):

Նոյն թուականին Դաւիթը ստացել է Ներսէս Լամբրոնացու Սաղմոսաց մեկնութիւնը՝ «Ձսանցող աստուածապատում երգարանիս զԴաւիթ րաբունապետն յիշեսջիք» (ԺԴ, 85): Յիշատակարանում նշւում է Տարսայիճ Օրբելեանի դստեր Ասփայի մահը:

1318 թ. Մատթէ քահանայի գրած յիշատակարանը հատուածաբար է պահպանուել, բայց այնտեղ կարդացւում է տեղանունն ու րաբունապետի անունը. «... ի տեղիս... Նորավանս, ընդ հովանեաւ...: Երջանիկ րաբունապետ Դաւթի» (ԺԴ, 150):

Փաստօրէն Դաւիթը Վերին Նորավանքում յիշւում է 1302, 1312, 1318 թուականներին: Իսկ ինչպէ՞ս է նա յիշատակւում Գլաձորում:

1309 թ. Տիրատուր Կիլիկեցին գրում է. «Գրեցաւ սուրբ Աւետարանս... ի դպրատունս, որ կոչի Գալիճոր, ի վարժապետութեան մեծիս Եսայեայ և եռամեծին Դաւթայ...» (ԺԴ, 60): Հարկ է նշել, որ այդ թուականից

առաջ և յետոյ Գլաձորում գրուած տասնեակ յիշատակարաններում Դաւթի անունը չի յիշւում, իսկ այստեղ միանգամից կոչւում է «եռամեծ», «մեծ» Եսայի րաբունապետի կողքին։

1321 թ. Գլաձորում կիւրիոն գրչի գրած յիշատակարանում նախ նշւում են կիլիկիայում գահակալող թագաւորն ու կաթողիկոսը, ապա Օրբելեան տնից սերող Սիւնեաց զոյգ եպիսկոպոսները, որից յետոյ Բուրթել Օրբելեանը և Ամիր Հասան Խաղբակեանը և վերջապէս՝ «ի վարժապետութեան սուրբ և բազմերջանիկ հռետորաց Հայոց՝ երկուց ամոլաց ճշմարիտ հաւատոյ մերոց՝ Դաւթի և Եսայեայ, ի հռչակաւոր և սուրբ մենաստան համալսարանիս Գլաձորոյ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի և աստուածընկալ վերաստացեալ դպրապետացս» (ԺԴ, 166)։

Նախորդ յիշատակարանի պէս այստեղ եւս զարմանալի է թւում Դաւթի գերակայ դիրքը, այն դէպքում, երբ նախորդ ու յետագայ տարիներին Գլաձորում գրուած տասնեակ յիշատակարաններում նրա անունն ընդհանրապէս չի նշւում։ Լ. Խաչերեանը Դաւթի մասին գրում է, թէ նա հանդիսացել է. «համալսարանի ռեկտոր. Եսայի Նչեցուց հետո երկրորդ դեմքը» (Լ. Խաչերյան, «Գլաձորի համալսարանը», Երեւան, 1973, էջ 150)։ Բայց այդ որտեղ է երկրորդ դէմքի անունը առաջին դէմքի անունից առաջ գրւում, կամ ինչու ենք Դաւթի անունը Գլաձորում հանդիպում ընդամէնը երկու անգամ՝ 1309 և 1321 թուականներին։

Մեր կարծիքով պատճառն այն է, որ Դաւիթը մշտապէս Գլաձորում չի եղել։ Նա գլխաւորել է Սիւնեաց եպիսկոպոսարանի և Օրբելեանների հովանաւորած Վերին Նորավանքի դպրոցը և ժամանակ առ ժամանակ այցելել Գլաձոր, ուր նրան ընդունել են մեծարանքով, ըստ պատշաճի, և վերը նշուած երկու յիշատակարաններն էլ դրա վկայութիւնն են։

Հարկ է նշել, որ Գլաձորը վայելում էր նաև Օրբելեանների հովանաւորութիւնը։ Դրա վառ վկայութիւնն է 1323 թուականին հենց Եսայի Նչեցու ձեռքով Ներսէս Մշեցու յիշատակին ստացած Աւետարանում գրուած յիշատակարանը, ուր գովերգելով Օրբելեան Բուրթել իշխանին, նրա կնոջն ու որդիներին, աւելացնում է. «ի ձեռն որոց հոլով չինութիւն և խաղաղութիւն գործեցաւ մեզ և ամենայն եկեղեցւոյ Քրիստոսի... և մեք մեր աշակերտաւք բազում և անթիւ գումթս բարեաց գտաք ի սոցանէ, որ զաւտարութիւնս մեր ժողովեցին, և ընկալան զմեզ ոչ իբրեւ զաւտար, այլ իբրեւ յինքեանց հարազատ ծնեալ մանկունս, գթով և սիրով զմեր ստահակութիւնս ընկալան» (ԺԴ, 182-183)։ Նչեցին այնուհետեւ յիշատակում է Սիւնեաց երկու եպիսկոպոսներին՝ Յովհաննէս Օրբելին և Ստեփանոս Տարսայիճին, ակնարկում, որ ուսանել են Գլաձորում և երախտագիտութեամբ նշում նրանց կողմից ստացած աջակցութիւնը (ԺԴ, 183, տե՛ս նաեւ Մխիթար Երզնկացու 1314 թ. յիշատակարանը՝ ԺԴ, 104)։

Այսպիսով, Դաւիթը լինելով Օրբելեանների դպրոցի րաբունապետը, դասախօսելու կամ այլ առիթով Գլաձոր այցելելու ժամանակ առանձնակի պատուով է ընդունուել այստեղ, և հնարաւոր է, որ նման այցելու-

թիւնների միջոցին, թերեւս հենց Եսայի Նչեցու ցուցումով, Գլաձորի գրչատանն աւարտուած մատեանների յիշատակարաններում Դաւթի անունը նշուել է յատուկ մեծարանքով։

Դաւիթ վարդապետի մահուան ստոյգ թուականը յայտնի չէ, բայց գերեզմանը Վերին Նորավանքում է եղել։ Դաւթին յաջորդել է Գլաձորի շրջանաւարտ Կիւրիոնը։ Նրա պատուէրով 1329 թ. Ստեփանոս գրչի ձեռքով Վերին Նորավանքում ընդօրինակուած Մեկնութիւնների գրքում պահպանուած յիշատակարանում Կիւրիոնը կոչւում է նաեւ «սպասաւոր սուրբ գերեզմանի րաբունապետին Դաւթի»։ Յիշատակարանի առաւել տեղեկաշատ հատուածը հետեւեալն է. «Հրամանաւ և արդեամբք սուրբ րաբունապետին Կիւրիոնի, առաջնորդի մեծ մենաստանիս Վերին Նորավանք կոչեցելոյ, ընդ հովանեաւ Մօրս Լուսոյ և Սրբոյ Սիոնի... արեւելեաց, ի գաւառիս որ կոչի Ձոր Վայոյ ի տէրութեան տեղոյս և գաւառիս մեծահաւատ իշխանաց իշխանի պարոն Պուրթելի... և ի դիտապետութեան սուրբ և արհիական գլխոյ տէր Ստեփանոսի, ի վարժապետութեան տանս արեւելեաց մեծարանաշնորհ հռետորի Եսաեայ, հօր և ուսուցչի վերացեալ առնս Աստծոյ սուրբ րաբունապետիս Կիրիոնի, սպասաւորի սուրբ գերեզմանի րաբունապետին Դաւթի» (Ն. Պողարեան, «Մայր Ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հ. Բ, Երուսաղէմ, 1967, էջ 316)։

ՁԵՌԱԳՐԵՐ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ ՎԵՐԻՆ ՆՈՐԱՎԱՆՔԻՑ

Կիւրիոնը 1333 թ. ձեռագիր է գրել «ի մենաստանիս վերին Նորավանս կոչեցելոյ, ընդ հովանեաւ Մորս Լուսոյ և Սուրբ Սիոնիս» (ԺԴ, 257)։ 1341 թ. Վերին Նորավանքում Յովհաննու աւետարանի մեկնութիւն է ընդօրինակել Ղուկաս քահանան. «Ղուկաս սուտ անուամբ քահանայ և աշակերտ բանի ի մենաստանս Նորավանս կոչեցեալ, ընդ հովանեաւ Սուրբ Սիոնի, առ ոտն սմին (Կիւրիոն) երջանիկ րաբունապետի» (Սմբատ Տէր Աւետիսեան, «Ձեռագիրք Նախավկայի վանաց Դարաշամբի», թիւ 115)։

Վերին Նորավանքի մասին հետաքրքրական տեղեկութիւն է պահպանուել 1360 թ. Երուսաղէմում գրուած մի «Մաշտոցի» յիշատակարանում։ Այստեղ պատմւում է այն մասին, որ Վերին Նորավանքում Կիւրիոն րաբունապետի մօտ կրթուած Սարգիս վարդապետը Սիւնեաց Ստեփանոս Սուլթանշահ արքեպիսկոպոսի ընկերակցութեամբ (Ստեփանոս Սուլթանշահի անուան ամենավաղ յիշատակութիւնն է) եկել է Կիլիկիա, այստեղ Մեսրոպ Ա (1359-1372) կաթողիկոսի ձեռամբ եպիսկոպոս ձեռնադրուել, ապա ուխտի է մեկնել Երուսաղէմ, ուր և ստացել է այդ մատեանը։ Մեզ առաւել հետաքրքրողը Վերին Նորավանքի յիշատակման ձեւն է. «... տէր Սարգիս, սնեալ և վարժեալ յարեւելս ի մայրն իմաստից և յերկրորդ յԱթէն ի Վայու ձորն, ի հռչակաւոր և յաստուածաբնակ վանսն ի Սուրբ Սիոն Վերին Նորավանս, յառաջնորդութեանն մեծին րաբունոյն Կիւրիոնին» (Ն. Պողարեան, Մայր Ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Է, Երուսաղէմ, 1974, էջ 218)։ Ինչպէս յայտնի է «մայր իմաստից, երկրորդ

Ամէնք» է կոչուել Գլաձորը։ Սարգսի ուսումնառութեան վանքերը յիշատակւում են յոգնակի թուով «վանսն», որից կարող ենք եզրակացնել, թէ նա ուսանել է եւ Գլաձորում, եւ Նորավանքում։ Բայց քանի որ միայն Վերին Նորավանքի ու նրա առաջնորդի անունն է տալիս, հաւանական է, որ հենց այստեղ է վարդապետական ձեռնադրութիւն ստացել։ Այս յիշատակարանից յետոյ Կիւրիոնի անուանն այլեւս չենք հանդիպում։

Վերին Նորավանքից յայտնի յաջորդ մի քանի ձեռագրերը ԺԵ դարից են։ Համառօտակի թուարկենք։

1456 թ. երէց Մաթէոս գրիչը Տօնական է ընդօրինակել «ի Վերի Նորավանս» (Մատենադարան, ձեռ. 993)։ Մեծ տոհմի զաւակ էր Մաթէոսը, յիշում է հօրը՝ «ըզմեծն Սուլդան», հօրեղբօրը՝ «զԻկիթ աղայն», մօրը՝ «զպարոն Թուխթէնի», որոնց անունների յիշատակման ձեւից երեւում է գրչի պատկանելութիւնը բարձր դասին։ Բացի այդ նա յիշատակում է իր հոգեւոր եղբայրներին՝ Իգնատիոս վանականին և «բանիբուն փիլիսոփա և անհաս նկարող» Եսայուն («ԺԵ դարի հիշատակարաններ», մասն Բ, Երեւան, 1958, էջ 65)։ 1473 թ. Մաթէոսը «ուրախութեամբ գոլով» մի Գանձարան է ընօրինակել Եղեգիսում՝ «Գրեցաւ գիրքս յԵղեգիս... ի վայելումն հարազատացն իմ վանականաց կրօնաւորաց՝ Իգնատիոսին, Եսայուն Նաղաչի...» (ԺԵ, Բ, 347)։

1470 թ. Յհաննէս քահանան յիշատակարան է գրել «ի վանս որ կոչի Վերի Նորավանս», նշում է «Մաշտոցի» գրիչ Յովհաննէսին, որը գրել է «ի վանս որ Մեղուս կոչի, ընդ հովանեաւ Լուսոյ Մայր Սուրբ Աստուածածնիս, առաջնորդութեան տեառն Արիստակէսի» (ԺԵ, Բ, 64-66)։

1476 թ. Պօղոս վարդապետն իր ընդօրինակած Աւետարանում հետեւեալ տեղեկաչատ յիշատակարանն է թողել։ «Եղեւ գրչագրութիւն սորայ ի գաւառիս Վայոց ձոր, որ է Եղեգեաց, սուրբ և ի հռչակաւոր մենաստանիս Վերի Նորավանս կոչեցեալ... որ ճշմարիտ հար և նման է Վերին Երուսաղէմին, ընդ հովանեաւ Սուրբ Սիովնի, որ մայր ամենայն եկեղեցեաց և Լուսոյ Մօր Սուրբ Աստուածածնիս, և սուրբ նշանացս, բազմահոյլ և բազմաժողով և սուրբ վարդապետաց նահատակաց Դաւիթ և Առաքել...» (ԺԵ, Բ, 399)։ Վերջին հատուածը համեմատելի է 1302 թ. յիշատակարանի «առ վարդապետն Դաւիթ և Արքայ» ձեւակերպումին (որոնց մօտ էր եկել Յովհաննէս Օրբելը)։ Արդեօ՞ք Դաւթի գործընկերը, որի անունն այլ աղբիւրներում չի հանդիպում, այս յիշատակարաններից մէկում չի շփոթուած, մանաւանդ որ «Արքան» հոգեւորականների շրջանում եզակի անուն է։ Կամ եթէ Առաքելն ու Արքան նոյն մարդն է, արդեօ՞ք երկրորդ անունը վարդապետի մականունը չէ։ Արքայ անուան «Առքայ» ձեւն է պահպանուել Աշտարակի 1280 թուականի մի արձանագրութեան մէջ (Ս. Սաղումյան, «Աշտարակ», Երեւան, 1998, էջ 181)։

Պօղոս վարդապետը յիշատակարանի շարունակութեան մէջ նշում է, որ գրել է։ «Առ ոտս քոյ և արի բաբունապետիս Դաւիթ վերակոչելոյ՝ խիստ ճգնազգեաս և առաքինի Ճ (100)-ամեայ ճգնելով, և ուսուցչին իմոյ

և հոգեւոր գիս անարժանս վերստին ծնաւղի Սարգիս արի և քալ բարեւնապետին հայ և առաջնորդի սուրբ ուխտիս, որ բազում հոգաբարձութեամբ խնամող է վանիցս Շատիկ Միայնակեցի» (ԺԵ, Ք, 399): Փաստօրէն Վերին Նորավանքի առաջնորդը եղել է նաև Շատիկ վանքի հոգաբարձուն:

1484 թ. Գրիգոր աբեղան Յովհաննէս աբեղայի պատուէրով Աւետարան է ընդօրինակել «ի երկնահանգէտ և մեծահռչակ սուրբ ուխտիս Վերի Նորավանս» («ԺԵ դարի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, մասն Գ, Երեւան, 1967, էջ 57):

1490 թ. Աբրահամ գրիչը Անանիա աբեղայի պատուէրով ընդօրինակել է Շարակնոց. «ի վանս որ կոչի Վերի Նորավանս, ի սուրբ մենաստանիս, ի դուրս Սուրբ Սիովնիս և Սուրբ Աստուածածնիս, և Սուրբ Գրիգորիս և այլ սրբուհեանց... և դամբարանաց սուրբ վարժապետաց... և յարհեպիսկոպոսութեան մերոյս նահանգի տէր Եղիշէի՝ յազգէ Բուլթէլանց...» (ԺԵ, Գ, 147):

1495 թ. Գրիգոր աբեղան «աստուածաբան և քալ րաբունապետ» Աբրահամի պատուէրով Աւետարան է ընդօրինակել (Մատենադարան, ձեռ. 5303) «ի երկրիս Վայոց ձորոյ, ի գաւառս Եղեգիս և սուրբ ուխտիս որ կոչի Վերի Նորավանս, ընդ հովանեաւ Սուրբ Սիովնիս և սուրբ Աստուածածնիս...» (ԺԵ, Գ, 214):

1658 թ. մի ձեռագիր է նորոգուել «ի գեղաքաղաքիս յԵղեգիս, ի նահանգիս Շատիկոյ, Նորավանից սուրբ անապատիս» (Վ. Հակոբյան, «ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, Երեւան, 1984, էջ 819):

Ինչպէս տեսնում ենք Վերի Նորավանքի գործունէութիւնը ձգւում է մինչեւ ԺԷ դար:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՈՒՂԵՆՇՈՒՄ ՎԵՐԻՆ ՆՈՐԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ժամանակին Գլաձորն ու Վերին Նորավանքը գրեթէ համազօր ուսումնական կեդրոններ են եղել, բայց Աղբերց վանք Գլաձորը շատ շուտ է հեռացել պատմական ասպարէզից: Ճիշդ է, համալսարանի գոյութիւնը շարունակուել է (Հերմոն, Որոտնավանք, Տաթեւ), սակայն բուն վանքը անչքացել և Եսայի Նչեցուց յետոյ (1337 թ.), փաստօրէն, այլեւս չի յիշատակւում: Այլ է Վերին Նորավանքի պարագան, ուր ինչպէս տեսանք բազմաթիւ մատեաններ են գրուել նաև աւելի ուշ շրջանում: Սակայն Վերին Նորավանքն էլ տեղորոշման հարցում առայժմ Աղբերց վանքի բախտակիցն է: Այդ հարցը կարող է լուծուել Վայոց ձորի համեմատաբար քիչ հետազօտուած վանքերի յետագայ ուսումնասիրութեամբ:

Իսկ մինչ այդ, վկայաբերենք Մոմիկի մի արժէքաւոր յիշատակարանի պարունակած տեղեկութիւնները, որոնք գուցէ օգտակար լինեն Վերին Նորավանքը որոնող մասնագէտներին:

1331 թ. յիշատակարանում Մոմիկը պատմում է, որ Յովհաննէս Օրբէլի պատուէրով եպիսկոպոսանիստ Նորավանքում՝ «ի հրեշտակերամ

մենաստանիս Նորավանից, ի դամբարանի մեծ և պատուական իշխանացն Սմբատայ և Տարսայիճին» 1307 թ. սկսուել է մի Աւետարանի գրչութիւն, բայց չի կարողացել աւարտել տեսողութեան կորստի պատճառով: Գործն աւարտել են Մոմիկի գործընկերները՝ «Յոհաննէս գրիչ զթերին ելից, եւ Թորոս՝ զոսկենկարան»: Ձեռագիրը գրուել է. «յաղագս փրկութեան հոգւոյ և մարմնոյ և յարեւշատութիւն և պահպանութիւն մեծ և քաջազաւր իշխանաց իշխանին Բիւրթէլին»: Մոմիկի յիշատակարանում փառաբանւում են նաև Բուրթելի կինը՝ «արքայաշուք դշխոյափառն» Վախախը, որդիներ Բեչքէնն ու Իվանէն: Որոշ ժամանակ անց Մոմիկի տեսողութիւնը վերականգնւում է և նոր եպիսկոպոս Ստեփանոս Տարսայիճը նրան յանձնարարում է գրել Ձեռագրի յիշատակարանը, միաժամանակ մատեանը կազմել է տալիս: Հենց կազմելու վայրի մասին յիշատակութեան մէջ է, որ նշւում է «միւս» Նորավանքը, միաժամանակ յայտնւում է այստեղ Բուրթելի կառուցած նորաշէն եկեղեցու մասին: Մոմիկը գրում է. «Յուսովն որ առ Յիսուս զկնի սակաւ ամաց լոյս աչաց իմոց դարձաւ առ իս ի թուիս ՉՉ (1331), և զյիշատակարանս արարի և գրեցի հրամանաւ տէր Տարսայիճին մականուն, տէր Ստեփանոսի որդւոյ Ջալալին: Որ հրամանաւ և արդեամբք մեծ պարոնին Բիւրթէլին յայսմ ամի զարդարեաց զԱւետարանս ոսկով և արծաթով ի մայրաքաղաքիս յԵղեգիս, ի Նորավանս, զոր իւրով ի նոր չինեալ եկեղեցի կատարեաց՝ յանուն սրբուհւոյ Աստուածածնին և սրբոյն Նիկողայոսի և Քրիստափորոյ սրբոյ» (Հ. Քիւրտեան, Դարձեալ Թորոս Տարոնացի, «Բազմավէպ», 1947, 9-10, էջ 216-217):

Այստեղ յիշուած Նորավանքը երբեմն նոյնացուել է եպիսկոպոսանիստ Նորավանքի, իսկ Ս. Աստուածածինը՝ Բուրթելաշէն դամբարան եկեղեցու հետ, որն ընդունելի չէ, թեկուզ միայն այն պատճառով, որ այդ վանքը շատ հեռու է Եղեգիսից (Բուրթելաշէնը կառուցուել է 1339-ին և այլն): Մոմիկը գտնւում էր եպիսկոպոսանիստ Նորավանքում, այստեղ էլ գրել է յիշատակարանը, իսկ Ձեռագիրը ոսկով և արծաթով զարդարուել, այսինքն կազմուել է այլ տեղում՝ «ի մայրաքաղաքիս յԵղեգիս՝ ի Նորավանս»: Այստեղ կարող է երկու ենթադրութիւն լինել, կամ խօսքը վերին Նորավանքի մասին է, կամ Մոմիկը «Նորավանք» ասելով նկատի ունի նոր կառուցուած վանք: Բայց առաջին տարբերակն աւելի հաւանական է թւում, որովհետեւ, ինչպէս ստորեւ կը տեսնենք, այլ աղբիւրների վկայութիւններ եւս հաւաստում են վերին Նորավանքի՝ Եղեգիս քաղաքին շատ մօտ գտնուելը: Բացի այդ, Ձեռագիրը կազմելու չէին ուղարկի նորաշէն մի եկեղեցի, այլ այնպիսի տեղ, ուր կար մասնագիտացած գրչատուն: Ինչ վերաբերում է «Վերին» բառի բացակայութեանը, ապա ինչպէս տեսանք, Մոմիկի աւագ ժամանակակիցը՝ Ստեփանոս Օրբելեանը վանքը կոչում է «միւս» Նորավանք:

Շատ կարեւոր է Եղեգիսի Նորավանքում Բուրթելի յանձնարարութեամբ Ստեփանոս Տարսայիճի 1331-ին աւարտած նորաշէն եկեղեցւոյ մասին վկայութիւնը: Մեր կարծիքով այն կարող է նոյնանալ այսպէս կոչ-

ւած «Զօրաց» տաճարի հետ։ Այն գտնւում է Եղեգիսի հիւսիս-արեւելեան ծայրամասում, բարձրադիր ու գեղատեսիլ վայրում, Ս. Աստուածածին անունն է կրում և արեւելեան պատին ունի երեք արձանագրութիւն։ Կեդրոնական լուսամուտի շուրջ գրուած է. «Տէր Աստուած Յիսուս Քրիստոս աւգնէ Բիւրթելին, Բէչքէին և Իվանէի» (*«Դիվան հայ վիմագրության», էջ 108*)։ Պատի խորշերի կամարաձեւ կիսաշրջաններին ևս արձանագրութիւններ կան, մէկում ասւում է՝ «Ես Տէր Ստեփանոս, որդի Զալալին, թոռն մեծի Տարսայիճին հիմնարկեալ չինեցի եկեղեցիս յանուն սրբուհոյ Աստուածածնայ...», միւս արձանագրութիւնը հողմահարուած է, ընթեռնելի է՝ «...յիշատակի և նվիրանի ուղերձ մեծ էլիկումի, Բիւրթել անուն քաջ...» (*«Դիվան հայ վիմագրության», էջ 108*)։ Վիմագրական այս տուեալները մինագամայն համահունչ են Մոմիկի յիշատակարանի տեղեկութիւններին, ուստի կարող ենք ասել, որ յիշատակագրի խօսքը հենց այս եկեղեցու մասին է։ Ինչ վերաբերում է եկեղեցու անուանը, ապա Մոմիկի նշածը՝ «եկեղեցի կատարեաց՝ յանուն սրբուհւոյ Աստուածածնին և սրբոյն Նիկողայոսի և Քրիստափորոյ սրբոյ», ամենայն հաւանականութեամբ վերաբերում է եռախորան այս եկեղեցու խորաններին. կեդրոնականն է գլխաւորը կոչուել է Ս. Աստուածածին, իսկ կողայինները՝ Ս. Նիկողայոս և Ս. Քրիստափոր։ Եկեղեցիների խորանների առանձին անուն ունենալը սովորական երեւոյթ է եղել, իսկ որ Բուրթելի միջոցով Ստեփանոս Տարսայիճի կառուցածը հենց մէկ եկեղեցի էր, երեւում է նոյն յիշատակարանից՝ «ի նոր չինեալ եկեղեցի կատարեաց»։

Այսպիսով, կարծում ենք, որ Մոմիկի նշած Նորավանքը Եղեգիսի ծայրամասում գտնուող «Զօրաց» եկեղեցու մօտերքում է, ուր և 1331 թ. չքեղօրէն կազմուել է նրա սկսած, Յովհաննէս գրչի ու Թորոս Տարոնացու աւարտած ձեռագիրը։ Կազմարարութեան տեղի ընտրութիւնը պատահական չէր, բարձրարուեստ, ոսկեզօծ կազմեր պատրաստւում էին խոշոր գրչատներում, իսկ Վերին Նորավանքի գրչատունը հենց այդպիսին էր։

Վերին Նորավանքի ու Եղեգիսի մերձաւորութիւնն է ակնարկւում Մաթէոս գրչի վերը նշուած 1456 և 1473 թթ. յիշատակարաններում, ինչպէս և 1658 թ. մի յիշատակարանում, ուր ասւում է, որ ձեռագիրը նորոգել է. «ի յերկիրս Վայո ձորոյ, ի գեղաքաղաքիս յԵղեգիս, ի նահանգիս Շաւարկոյ, Նորավանից սուրբ անապատիս» (*«ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, էջ 819*)։

Վերին Նորավանքը բարձրահայեաց ու գեղեցիկ դիրք է ունեցել, ինչպէս կարելի ենթադրել Պօղոս վարդապետի 1476 թ. յիշատակարանի բնութագրումից՝ «Վերի Նորավանս... որ ճչմարիտ հար և նման է վերին Երուսաղէմին»։

Մեր կարծիքով Վերին Նորավանքը պիտի փնտռել Օրբելեանների իշխանանիստ Եղեգիսի մօտ (յիշենք Մոմիկի վկայութիւնը՝ «ի մայրաքաղաքիս յԵղեգիս՝ ի Նորավանս»)։ Նշենք, որ Զօրաց տաճարի հիւսիս-արեւմտեան կողմի լեռներում, տեղացիների հաւաստմամբ, եկեղեցիների

աւերակներ ունեցող առնուազն երկու հնավայրերի հետքեր են պահպանուել: Հարկ է նաև նկատի ունենալ, որ ինչպէս Աղբերց վանք — Գլաձորի պարագայում Ս. Ստեփանոս եկեղեցին, այնպէս էլ Վերին Նորավանքում Լուսոյ Մայր Ս. Աստուածածին և Ս. Սիոն եկեղեցիները կարող էին ճարտարապետական առումով բնաւ էլ մեծնդիր ու նշանակալից կառոյցներ չլինել: Դրանք հնուց ի վեր գոյութիւն ունեցող փոքր վանքեր էին, որոնք հռչակ ստացան այստեղ հաստատուած դպրոցների շնորհիւ:

ԵՊԻԿՈՊՈՍԱՆԻՍՏ ՆՈՐԱՎԱՆՔԸ ՆԱԵՒ ԴԱՄԲԱՐԱՆ ԵՒ «ՃԳՆՈՂԱԿԱՆ ՅԱՐԿ»

Նորավանքը որպէս եպիսկոպոսանիստ կեդրոն ոչ միայն կառուցապատուած էր չքեղ եկեղեցիներով, այլեւ անկասկած ունեցել է հարուստ մատենադարան, դիւան, գրչատուն: Վանքի առաջնորդներից շատերը գիտական ու մշակութային հակումներ ունեցող, յաճախ՝ ժամանակի ամենաուսեալ մարդիկ էին, ինչպէս օրինակ Ստեփանոս Օրբելեանը և նրան յաջորդած՝ Գլաձորի չրջանաւարտներ Յովհաննէս Օրբելն ու Ստեփանոս Տարսայիճը: Սակայն Նորավանքում գրուած և մեր օրերը հասած ձեռագրերը փոքրաթիւ են (յայտնի են Նորավանքում գրուած ստոյգ տեղորոշուած երեք ձեռագրեր՝ Մոմիկի ընդօրինակած 1292 թ. Աւետարանը, Մատենադարան, ձեռ. 2848, նոյն գրչի սկսած 1307 թ. Աւետարանը, որ յետոյ կազմուել է Վերին Նորավանքում, և 1451 թ. ընդօրինակուած մի «Մաշտոց», Մատենադարան, ձեռ. 6950): Սակայն, ինչպէս վերը նշուեց, Նորավանքի եպիսկոպոսարանն այն առանձնայատկութիւնն ունէր, որ անմիջականօրէն ընդգրկում էր եւս երկու վանքեր, Արատեսը՝ որպէս ամառային նստավայր՝ «նստագահ» և Վերին Նորավանքը, որտեղ եղել է Նորավանքի եպիսկոպոսարանի դպրոցն ու գրչատունը:

Այնուամենայնիւ, բացի եկեղեցական վարչական կեդրոն լինելուց Նորավանքին նաև վերապահուած էր լինել Օրբելեանների դամբարանավայր և ճգնակեաց հոգեւորականների կացարան:

1414-ին Գրիգոր կրօնաւորը Գրիգոր Տաթեւացու Հարցմանց գրքի ընդօրինակութիւնը սկսել է Հերմոնի վանքում, որոշ ժամանակ եղել Նորավանքում, ապա գործն աւարտել Եղվարդում. «եղեւ սկիզբն... ի վանս Հերմոնի, առ ոտս մեծ րաբունոյն Յովաննէս հռետորի և միջայմուխ եղեալ ի ճգնողական յարկին Նորայվանս և աւարտ գրչութեան սորա ի... յԵղիվարդ» (Լ. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, Երեւան, 1955, էջ 163): Հետաքրքիր է որ Նորավանքն այստեղ անուանուում է «ճգնողական յարկ»: 1486 թ. Վերին Նորավանեցի գրիչ Մատթէոսի որդիներ Իգնատիոսն ու Ստեփանոսն իրենց հօր Գանձարանը նուիրել են Եղիշէ արքեպիսկոպոսին, այն Նորավանքում պահելու համար: Յիշատակարանում գրում են՝ «տուաք զմեր հօր՝ տէր Մատթէոսի ձեռագրած Գանձատետրս ի ձեռն տէր Եղիշայ արհիեպիսկոպոսին, որ դնէ ի սուրբ ուխտն ի Նորավանս, անջինջ յիշատակ մեզ... և նա խոստացաւ

ի ձեռն խարազն ճգնաւոր միաբանացն, որ ժողովին ի սուրբ ուխտն և զմեզ ի ժամ աղօթիցն յիշեն և «Աստուած ողորմի» ասեն և պատարագեն...»: Նշւում է նաև Աւագ Սուրբ Նշանը, կասկած չթողնելով, որ խօսքը եպիսկոպոսանիստ Նորավանքի մասին է (ԺԵ, Գ,85): Այս երկու յիշատակարաններում էլ ակնարկւում է Նորավանքի միաբանութեան խստակրօն վանական ճգնակեցութիւնը: Այստեղ հարկ է նաև յիշել, որ Նորավանքը ճգնակեացների բնակավայր է եղել եպիսկոպոսարանիստ դառնալուց շատ աւելի վաղ ժամանակ: Դեռևս ԺԱ դարում Վահանավանքից այստեղ եկած Յովհաննէս եպիսկոպոսն իր շուրջն է հաւաքում «կրօնաւոր ու ճգնակեաց» հոգեւորականները, ինքն էլ «ապրում էր մեծ ճգնութիւններով» (Սրեփհաննս Օրբելեան, էջ 288-289): Վանական այս աւանդոյթները, ինչպէս տեսնում ենք, Նորավանքում յարատեւել են:

Նորավանքը Օրբելեանների տոհմի գերեզմաններն ամփոփող վայր էր, ուր եկեղեցիներում շարունակաբար պիտի պատարագ մատուցէին բարձրաստիճան հանգուցեալների հոգու փրկութեան համար: Պատահական չէ, որ յիշատակարաններում ու վիմագրերում վանքը «փառաբնակ, հոյակապ, հռչակաւոր» անուանումով մէկտեղ կոչւում է նաև «դամբարան մեծ իշխանաց», «սուրբ և գերափառ դամբարան» (Ստ. Օրբելեան): Յիրաւի, Նորավանքի չորս եկեղեցիներից երկուսը՝ Ս. Գրիգորն ու Ս. Աստուածածինը իշխանական եկեղեցի-դամբարաններ են իսկ Ս.Ստեփանոս Նախավկայի գաւիթը՝ բարձրաստիճան հոգեւորականների հանգստարան: Տեղի միաբանները պարտաւոր էին բարեխղճօրէն կատարել սահմանուած պատարագներն ու այս կամ այն հանգուցեալի հոգեհանգստի ծէսը՝ ինչպէս վիմագրերից մէկում Տարսայիճի կին Մինա խաթունն է պահանջում՝ «... Հանդէսիւ աւրհնեսցեն զչիրիմս» («Դիվան հայ վիմագրության», էջ 238): Հարկ է նշել, որ Նորավանքում են յուղարկաւորուել նաև Օրբելեանների ենթակայ ազնուական տոհմերի որոշ ներկայացուցիչներ, որոնք այդ իրաւունքին արժանացել են միայն խոշոր նուիրատուութիւններ կատարելուց յետոյ (տես ասպ. Հ. Մարգարեանի յօդուածը):

Վանքի վիմագրերը, կատարուած բազմաթիւ նուիրատուութիւնները վկայում են, որ այն մեծ ուխտավայր է եղել, ընդ որում եկել են թէ՛ ունեւորներ, թէ հասարակ մարդիկ ու կարօտեալներ, որոնց համար յատուկ հոգատարութիւն է ցուցաբերել Ստեփանոս Օրբելեանին նախորդած Սարգիս Բ եպիսկոպոսը: Նա Նորավանքի մօտ հիւրատուն է կառուցել («չինեցի զհիւրատունս»), խոշոր նուիրատուութիւններ յատկացրել, որպէսզի «մուտքն (եկամուտը) ի հիւրերին պէտքն անցուցանեն, որ աւտարքն և կարաւտեալքն ուտեն, պարոնացն և երախտաւորացն աղաւթք և «Աստուած ողորմեա» ասեն» («Դիվան հայ վիմագրության», էջ 246):

Փաստօրէն Նորավանքի միաբաններն ապրել են աւելի շատ ճգնաւորական, աղօթական կենցաղով, միաժամանակ ապահովել Օրբելեան բազմաթիւ իշխանազունների դամբարանների, նաև առաջնորդների ու մետրոպոլիտների յիշատակին նուիրուած ծիսական արարողակարգը:

Թերեւս Նորավանքի միաբանների այսօրինակ զբաղուածութիւնն է նաև պատճառ դարձել, որ եպիսկոպոսարանը որպէս դպրոց և գրչատուն հովանաւորել է մեկ այլ վանական կեդրոն՝ Վերին Նորավանքը։

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Օրբելեանների մետրոպոլիտական իշխանութեան շրջանում Նորավանքի եպիսկոպոսարանը ոչ միայն ծաղկման շրջան է ապրել, այլեւ իւրովի ընդարձակել գործունէութեան ոլորտը։ Բնակլիմայական նկատառումներով Արատեսի բարձրադիր վանքը դարձել է մետրոպոլիտների ամառային նստավայր, իսկ կրթամշակութային նպատակների համար օգտագործուել ու հովանաւորուել է Օրբելեան իշխանների նստավայր Եղեգիսի մօտ գտնուող Վերին Նորավանքն իր դպրոցով ու գրչատնով։



Ս. Գրիգոր եկեղեցի. պապանաքարեր

ԳԱԳԻԿ Գ. ՍԱՐԳՍԵԱՆ
Պատմական գիտութիւնների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ

ՆՈՐԱՎԱՆՔԻ ՆՈՒԻՐԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՄԻ ՏԵՂԱԴՐՈՒԹԵԱՆ ՃՇԳՐՏՄԱՆ ՓՈՐՁ

Միւնեաց աշխարհի Վայոց ձոր գաւառի հռչակաւոր Նորավանքի որմերից, խաչքարերի, տապանաքարերի և առանձին բեկորների վրայից հաւաքուել, վերծանուել ու հրատարակուել են 187 արձանագրութիւն[1]*: Վանքի պատմութեան ուսումնասիրման համար, ի թիւս տարաբնոյթ այլ արձանագրութիւնների, մեծապէս կարեւորւում են նուիրատուական վկայագրերը, որոնք թուով 24-ն են:*

Արձանագրութիւններից երկուսը նուիրատուական-շինարարական են. Հասան Ամաղուեցին եւ Խիկար փակակալն իրենց «հալալ արդեամբ» նպաստաւորել են վանքի Ս. Կարապետ եկեղեցու երկու աւանդատների շինարարութիւնը[2]*:*

Եւս երկու վիմագրում փաստուած է առանձին անհատներին կատարուած նուիրատուութիւններ. Լիպարիտ Օրբելեանը 1221 թ. ընդարձակ վկայագրում յիշում է սելճուկեան Իլկոտուզ աթաբեկի կողմից իր հօրը՝ Իլիկումին, Համիան քաղաքը, իսկ Իվանէ Զաքարեան աթաբեկի կողմից՝ իրեն «զՀրաշկաբերդ իւր կերովս» նուիրելու մասին[3]*:*

Միւս նուիրագրով Տարսայիճ Օրբելեանը Նորավանքի ճարտարապետ Սիրանեսին (մեծահամբաւ Մոմիկի ուսուցչին), որ «եկեղեցի չինեց անվարձ Նորայվանս ... նրա դատմանն փոխարէնք»[4] *կատարուած աշխատանքների դիմաց իբրեւ պարգեւ տալիս է Աղազար (Եղիազար) Ղուեր-Ծեցի ճորտ գիւղացուն, իբրեւ հայրենիք, այն է անձնական սեփականութիւն՝ «յազգէ յազգ»*[5]*:*

Յուշարձանների միւս նուիրագրերում արձանագրուած են վանքին կատարուած անչարժ եւ չարժական գոյքի զանազան նուիրատուութիւններ:

Այս նուիրատուութիւնների չնորհիւ Նորավանքը տէր է դառնում բազմաթիւ կալուածների, այդ թւում բնակավայրերի, կառոյցների, եկամտաբեր հաստատութիւնների, հողակտորների, այգիների և այլն:

Ըստ արձանագրական վկայութիւնների, հաւաստուած և լրացուած Ստ. Օրբելեանի հաղորդումներով, Նորավանքը որպէս նուէր ստացել է հետեւեալ գիւղերը:

1. *Ագարակի ձոր*
2. *Տխարբ*

3. Ջիվա
4. Քարկոփ
5. Արատես
6. Տանծեկ
7. Աւեշ
8. Անապատ
9. Ազատ
10. Ս. Սահակ
11. Աբասաշէն
12. Աղբերիս (Օրբելեան)
13. Ներքոյն (Օրբելեան)(6)

Առաւել մեծ թիւ են կազմում վերը նշուած և եօթ այլ գիւղերից ու տեղավայրերից նուիրուած հողակտորներն ու արտերը.

Այգի

1. Դաեկոյ քար
2. Յաղթայ
3. Խանգահի
4. Եչօ քար (Շատենց)
5. Մարգարտի
6. Ախթամարենց
7. Արփայ գիւղից
8. Ջիվա գիւղից (ձեռատունկ)
9. Ակոռի գիւղից (նորատունկ)
10. Գնիշիկաձոր գիւղից
11. Վեդիից (Նորպեռի)
12. Ձեռատունկ։

Հողակտոր

1. Մորդակ
2. Ակոռի գիւղից
3. Վեղիից
4. Մարդական Փորակ (Ներքոյն գիւղից)
5. Վարդուտ (Ագարակի ձոր գիւղից)
6. Լճադուռ (Ազատ գիւղից)
7. Ակներ (Սարի գիւղից)
8. Թզենի (Ակներ գիւղից)

Արտ

1. Ճոկա

Վանքի տնտեսական պէտքերի համար եկամուտներ են ապահովել նուիրաբերուած կառոյցներն ու հասուքթաբեր հաստատուքիւնները.

1. Հովատուն
2. Չորս խոցտաքատուն
3. Հիւրատուն

4. երկու ակնով ջրաղաց
5. չորս սենեակ
6. չորս դուռն տուն
7. Հնձան

Նուիրագրերում շարժական գոյքի տեսականին սահմանափակւում է հետեւեալներով.

1. արծաթի խաչ
2. Յայսմաւուրք ձեռագիր
3. Տօնապատճառ ձեռագիր
4. մատնատուփ
5. վեցկի
6. քսան ոչխար
7. երեք ջորի

Խնդրոյ առարկայ վիմագրերում զարմանալիօրէն սակաւ են ուղղակի դրամական նուիրատուութիւնները։ Ահկայ է այդպիսի մի վկայութիւն. ոմն Շնհաւոր Ս. Կարապետին նուիրել է ճ (100) դեկան (դահեկան)։

Արձանագրական վկայութիւնների քննութիւնը ցոյց է տալիս, որ անշարժ գոյքի նուիրատուութիւնները իրականացուել են երկու եղանակով՝ որպէս սեփական («Հայրենիք») և ուրիշից գնուած («գանձագին»)։ Երկրորդ դէպքում, երբեմն, մատնանշւում է գնման գումարի չափը։ Ստեփանոս Օրբելեանն իր եղբայր Ջալալից Ս. Սահակ և Աբասաչէն գիւղերը գնել է 21000 դրամով, Ջուրջի թոռ Ամիրան Յաղթայ այգին Տարսայիճ Օրբելեանից՝ 4000 դրամով, Խալաշահի դուստր Խաթունը Արփայ գիւղի մէկ այգու համար վճարել է ընդամէնը 300 ասիտակ, իսկ Դոփի թոռ Գրիգորը Շատենց և Մարգարտի այգիների համար՝ 1500 ասիտակ։ Դրամաչափերի այս տարբերութիւնները հիմնականում պայմանաւորուած են նուիրաբերուող առարկայի հասութաբերութեան աստիճանով։

Նորավանքի նուիրատուները Օրբելեան և այլ իշխանական տների ներկայացուցիչներն են և եկեղեցականներ. Լիպարիտ, Սմբատ, Տարսայիճ, Ստեփանոս Օրբելեաններ, վանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոս, Արփայի Աղթամարեան Ալփասլանը, Խաչենի Հասան-Ջալալ իշխանի դուստրը, Տարսայիճի կողակից Մինախաթունը, Դոփ իշխանուհու թոռ Գրիգորը և այլք։

Նորավանքի նուիրատուական արձանագրութիւններն արժէքաւորւում են նաև մի շարք ուշագրաւ եզրերի առկայութեամբ, որոնց վերհանումն ու լուսաբանումը լրացնում են մեր գիտելիքները միջնադարեան Հայաստանի վանական (եւ ոչ միայն) տնտեսութիւնների, ի մասնաւորի հասութաբեր հաստատութիւնների վերաբերեալ (խոցոտաքատուն, հովատուն, հովանոց)[7]։

Խնդրոյ առարկայ վիմագրերում հետաքրքրութիւն և կարեւորութիւն է ներկայացնում նաև աշխարհագրական անունների տեղորոշման ու ճշգրտման խնդիրը։ Բազմաթիւ բնակավայրեր ցայսօր պահպանել են

իրենց միջնադարեան անուանումները. Ագարակաձոր, Ջիվա, Քարկոփ, Տանծիկ, Արփայ, Գնիշիկ, Արատես, Վեղի: Մի քանիսը տեղորոշուել են աղբիւրագիտական և տեղագրական պրպտումների շնորհիւ. Տխարը, Անապատ, Աւեչ, Ակոռի, Ազատ: Որոշ բնակավայրերի տեղադրութիւնը, դեռեւս, որոշուած կամ ճշդուած չէ:

Վերջին խնդրի կապակցութեամբ ներկայացնում ենք տեղադրութեան ճշգրտման մի փորձ, թերեւս՝ վարկած:

*Նորավանքի նուիրատուական արձանագրութիւններից՝ բովանդակութեամբ, աղբիւրագիտական և պատմագրական արժէքով աչքի է ընկնում Ս. կարապետ եկեղեցու (6 արձանագրութիւններում և Ստ. Օրբելեանի մօտ, վանքի այս եկեղեցին կոչւում է Ս. Ստեփանոս Նախավկայ. **խմբ.**) հիւսիսային պատին, ներքուստ, փորագրուած բաւական ընդարձակ վկայագիրը (22 տող), որի հեղինակը պատմիչ Ստեփանոս Օրբելեան մետրոպոլիտն է: Նա արձանագրել է Նորավանքին կատարած նուիրատուութիւնները: Մտորեւ բերում ենք խնդրին վերաբերող նուիրատուութեան հատուածը.*

... ԵՏՈՒ ՉԻՄ ՀՈԳՈ ՄԱՍՆՆ ԲԱԺԻՆ ԱՅ ԵՒ ԺԱՌԱՆԳ ՍԲ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՉՉՎԱ ԳԵՂՆ ԻՒՐ ԲՈԼՈՐ ՍԱՀՄԱՆԱՒՔՆ ԱՉԱՏ ՅԱՄԵՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՀԱՐԿԱՑ Ի ԴԻՎԱՆԷ Ի ԽԱԼԱՆԷ ԵՒ ՅԱՄԵՆ ՉԱՐԷ, ՉՈՐ ԳՆԵԼ ԷԻ ՅԻՄ ԱԽՔԱՒՐԵՆ Ի ՉԱԼԱԼԷՆ ԵՒ ՏՎԵԼ Ի ԳԻՆՆ :ԻԱ:(21) ՀԱՉԱՐ ԴՐԱՄ ԵՒ Ի ՓՈՇԱՀԱՆՔՆ ՉՍԲ ՍԱՀԱԿ ԵՒ ՉԱԲԱՍԱՇԷՆ ԵՒ ԱՅԼ ԵՏՈՒ ՀԱԼԱԼ ՀԱՅՐԵՆԱԲԱԺՆԷՆ Ի ՀՐՇԿԱԲԵՐԴ, ՉՔԱՐԿՈՓՎԱՆՔՆ ԻՒՐ ՍԱՀՄԱՆԱՒՔՆ ԵՒ ՅԵՂԵԳԵՑ ՉՈՐԻՆ՝ ՉԱՐԱՏԷՆՄՆ ԻՒՐ ԳԵՂՈՎՆ ԵՒ ԱՄԵՆ ՀԱՅՐԵՆԻՔՆ Ի ՄԱՍ ԺԱՌԱՆԳՈՒԹԻ...[8]:

Ծանօթ. Հրատարակիչը Փոշահանք տեղանունից առաջ վրիպել է ի նախդիրը, իսկ Քարկոփվանքն-ը վերծանել է Քարկոփէլանքն: Նուիրատրում մեզ հետաքրքրում է Փոշահանք տեղանունը:

Այս տեղանուան ժամանակագրօրէն առաջին յիշատակութիւնը պահպանուել է Բջնիի Ս. Աստուածածին եկեղեցու հարաւային պատին փորագրուած մի արժէքաւոր վիմագրում, որի անհրաժեշտ հատուածը ներկայացնում ենք ստորեւ.

ԹՎԻՆ ՆՀ (1031). ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ, ԱՅՍ ՀՐԱՄԱՆՔ Է ԻՄ ՏՆ ՊԵՏՐՈՍԻ, ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ՍՄԲԱՏԱ ՇԱՀԱՆՇԱՀԻ, ՈՐ ՀԱՍՏԱՏԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆ Ի ԲՋՆԻ ՔԱՂԱՔ ՉՍԲ ԱՃԱՃԻՆՍ ՀԻՄՆԱՐԿԵԱԼ ԿԱՏԱՐԵԱՑ ԳՐԻԳՈՐ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ, ՈՐԴԻ ՎԱՍԱԿԱՅ ԵՒ ՏՎԱՆ ՎԻՃԱԿ Ի ՍԲ ԱՃԱՃԻՆՍ Ի ՓՈՇԷՀԱՆԻՑ ՄԻՆՉԵՒ Ի ՆԻԳ ... ԵՒ ՅԱՂՍՏԵՒ ԵՒ ԾԱՐ ԳԵՏ ... ԵՒ ԱՌԱՋԻՆ ՍԱՀՄԱՆԱՀԱՏ ՎԻՃԱԿ Ի ԱԹՈՌ ... ՀԱՍՏԱՏԵՑԱՔ ԱՐՁԱՆԱԳՐՈՎ ԵՒ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԱՒ ՉՍԱՀՄԱՆԱՀԱՏ ՎԻՃԱԿԻՍ ՍՈՐԱՅ, ՈՐ Է ԱՐԵՒԵԼԻՑ Ի ԾԱՐ ԳԵՏՈ ՄԻՆՉԵՒ ԳԵՏՆ ԱԽՈՒՐԻԱՆ ՅԱՆԻՈՅ...[9]:

1031 *թ. Հայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձի և Յովհաննէս-*

Սմբատ Բագրատունի թագաւորի հրամանով կազմաւորւում է Բջնիի եպիսկոպոսական թեմը և որոշւում են այդ թեմի աշխարհագրական սահմանները։ Այստեղ Փոչէհանը նշուած է որպէս թեմի վիճակի, թերեւս հարաւային սահմանագաւառը։

Փոչահանք-Փոչեհանքի երրորդ և վերջին յիշատակութեանը հանդիպում ենք Ստեփանոս Օրբելեանի Պատմութեան մէջ։ Պատմիչը խօսելով 1258 թ. Սմբատ Օրբելեանի՝ Մանգու խանի արքունիքից մեծ պատիւներով, ինքնիշխանութեան իրաւունքով և օգնական զօրքով հայրենիք վերադառնալու մասին, գրում է, որ նա Հայաստանում «էառ և զեղեգիս գաւառն Վայոց ձորոյ, զՓողահանան[10] զՈւրծ և զՎէդի իւր ձորովն մինչեւ յերերոնս և ի կոտայան և ի Գեղարքունի բազում չէնս և աւանս»[11]։

«Փոչեհանք» աշխարհագրական եզրի ստուգաբանական, տեղադրական քննութեանը առանձին ակնարկ է նուիրել վիմագրագէտ-լեզուաբան Ս. Ավագեանը[12]։ Նա առաջինն է ուշադրութեան հրաւիրել Նորավանքի վիմագրում ՓՈՇԵՀԱՆՔ-ից առաջ ի նախդիրի առկայութեանը, ինչը հիմնովին փոխում է բառակապակցութեան իմաստը։ Այսինքն ոչ թէ թուարկւում են Փոչեհանք, Ս. Սահակ և Աբասաչէն գիւղերը, այլ Փոչեհանքում գտնուող Ս. Սահակ և Աբասաչէն բնակավայրերը։ Ս. Ավագյանն անդրադառնում է նաև նախորդ հրատարակիչների կողմից ՓՈՇԱՀԱՆՔ-ի (նրանց մօտ՝ Փողահանք) տեղադրութեանը, չհամաձայնելով վերջիններիս՝ Փողահանք-Գիւշխանկ[13] նոյնացմանը։ Այս նոյնացման կողմնակիցներից է նաև Սիւնիքի պատմութեան գիտակ, վիմագրագէտ Գր. Գրիգորեանը, Գիւմուշխանկն առնչելով տեղում արծաթի հանքավայրերի գոյութեանը[14]։ Ս. Ավագեանը ի նախդիրի գոյութեան հաւաստմամբ գտնում է, որ «տուեալ դէպքում գործ ունենք ոչ թէ գիւղանուան, այլ Վայոց ձորի գաւառակի կամ տեղամասի հետ»[15]։ Շարունակելով միտքը, Օրբելեանի վերոյիշեալ հաղորդման նկատառմամբ, նա եզրակացնում է. «Ուրեմն Սմբատը գրաւել է Եղեգիսը, ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԻԻՍ ԳԱՒԱՌԱԿՆԵՐԸ՝ ՓՈՂԱՀԱՆՔԸ, ՈՒՐԾԸ, ՎԵԴԻՆ ...»[16] (ընդգծումը մերն է – Գ. Ս.)։

Ս. Ավագեանի միւս եզրայանգմամբ Փոչահանք, «անուանումը կարող է առաջանալ գունաւոր հողի կամ կաւի հանքավայրի անունից»[17]։

Ս. Ավագեանը վերն ընդգծուած հատուածում Ուրծ և Վեդի (առայժմ մի կողմ թողնելով Փոչահանքը) գաւառները կամ գաւառակները տեղադրում է Վայոց ձորում, ինչը «Աշխարհացոյց»-ի և մատենագրական ու վիմագրական տուեալներով հաւաստուած չէ։ Ուրծը և Վեդին մշտապէս եղել են Այրարատ նահանգի գաւառներից (Վեդին աւելի ուշ յիշատակմամբ), սահմանակից Վայոց ձորին։

Եթէ աշխարհագրական բաժանմամբ Ուրծը, Վեդին չեն մտել Վայոց ձորի մէջ, ապա այլ պատկեր է իշխանական տիրոյթների տեղաբաշխման պարագայում։ Սկզբնաղբիւրները վկայում են, որ Օրբելեանները ստուար տիրոյթներ են ունեցել նաև Այրարատ նահանգի գաւառներում։

Գր. Գրիգորեանը խօսելով Ջալալ Օրբելեանի մասին, մատնանշում է մեծանուն Գ. Յովսէփեանի այն կարծիքը, համաձայն որի «Ջալալ իշխանի կալուածները եղել են Ջուա (այժմ՝ Ջիվա) գիւղի արեւմտեան կողմում, Ջանախչի գետակի (այժմեան ՀՀ Արարատի մարզի Ջանգակատուն գիւղը – Գ. Ս.) վերին հոսանքներում, ուր գտնւում է Ջինջիրլուի» Ս. կարապետ վանքը, հնում Սպիտակաւոր Աստուածածին կոչուած»[18]։ Կարեւորում ենք Գ. Յովսէփեանի եզրակացութիւնը, որ «Ջալալի ժառանգութեան սահմանները նոյնանում են մօտաւորապէս Ուրց և Արած գաւառակների հետ, Վեդի գետակի հոսանքներում»[19]։

Այս իրողութիւնը մեզ հնար է տալիս փաստելու, որ Ստեփանոս Օրբելեանը եղբօրից գնել է ոչ միայն Ջվան, այլեւ Ջալալի տիրոյթներում գտնուող Փոչահանք գաւառակի Ս. Սահակ և Աբասաչէն գիւղերը, և այդ բոլորի համար վճարել է 21000 դրամ։

Ի հետեւումն վերը նշուածի, փորձենք որոշել Փոչահանքի տեղադրութիւնը։ Ստեփանոս Օրբելեանի վկայութեան մէջ Փոչահանքը նշուած է մի կողմից Վայոց ձորի, միւս կողմից՝ Ուրծ և Վեդի գաւառների կամ գաւառակների հարեւանութեամբ, այսինքն, թւում է թէ պատմիչն այդ աշխարհագրական միաւորները նշել է հերթականութեան կամ սահմանակցութեան սկզբունքով, ինչը հիմնականում համապատասխանում է (բացառութեամբ Փոչահանքի) «Աշխարհացոյց»-ի տուեալներին։ «Աշխարհացոյց»-ում այս գաւառներին սահմանակից նշուած է Արած փոքր գաւառը։ Այս գաւառատունը 7-րդ դարից յետոյ չի յիշատակւում, ուստի հնարաւոր ենք գտնում գաւառի ուշ անուանափոխումը։

Վերադառնալով Օրբելեանի վկայութեանը՝ Վայոց ձոր, Փոչահանք, Ուրծ, Վեդի, ակամայից գայթակղութիւն է առաջանում Փոչահանք-Արած նոյնացման, ինչը, կարծում ենք, յարիր կը լինէր «Աշխարհացոյց»-ի գաւառաբաժանմանը։ Մեր այս վարկածին նեցուկ կարող են լինել մի շարք կռուաններ.

1. Ստեփանոս Օրբելեանը Նորավանքին նուիրել է Ջալալից գընուած տարածքներ, որոնք ընդգրկուած են եղել Այրարատ նահանգի հարաւ-արեւելեան ծայրագաւառներում՝ Ուրծ, Վեդի և հնում Արած կոչուող.
2. Փոչահանք-Արած անուանափոխումը աշխարհագրօրէն տեղաւորւում է «Աշխարհացոյց»ի գաւառաբաժանման մէջ։
3. Փոչահանքը հանդիսացել է Բջնիի (Արարատեան) թեմի վիճակի սահմանը, ըստ այդմ չէր կարող մտնել Վայոց ձորի մէջ, որը պատկանում էր Սիւնեաց թեմին.
4. Փոչահանք տեղանուան առնչումը գունաւոր հողի կամ կաւի հանքավայրի հետ, ինչի մերօրեայ առհաւատչեան կարող է լինել կրաշաղախի (cement) հումքահանքերի հսկայական առկայութիւնը նշուած գաւառների տարածքում։

ՃԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. «Դիվան հայ վիմագրության», պր. 3, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երեւան, 1967, էջ 209–246 (137 արձ.)։ Սուրեն Սաղումյան, «Նորահայտ վիմագրեր Նորավանքից», «Հուշարձան», տարեգիրք, հ. Բ, Երեւան, 1987, էջ 91–103 (59 արձ.)։
2. «Դիվան հայ վիմագրության»,, պր. 3, էջ 212, 213, արձ. 679, 680։
3. Նոյն տեղում, էջ 211, արձ. Ստեփանոս Օրբելեանն այս արձանագրութեան ազատ շարադրանքում Իվանէի նուիրատուութեանը յաւելում է՝. «բազում գիւղս ի Վայոց ձոր, ի Գեղարքունի, ի Կոտայսն եւ ի Կայեն» (Ստեփանոս Օրբելեան, «Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1910, էջ 360)։ Իվանէի նոյն նուիրատուութիւնը Օրբելեանի երկի մէկ այլ հատուածում ներկայացուած է հետեւեալ կերպ. Իվանէն «հրամանաւ թագաւորին տայ փոխան հայրենեացն Լիպարտի անանցական գրով զՀրաշկաբերդ իւր գաւառովն եւ այլ բազում գեղօրէս ի Վայոց ձոր, ի Կոտայսն զԷլառն եւ այլ գիւղս յոլովս ի Գեղարքունի զՀամասբի եւ այլ գեղօրէս բազում, ի Կայեն զԱղստեւ իւր կերովն» (Օրբելեան, էջ 397)։
4. «Դիվան հայ վիմագրության»,, պր. 2, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երեւան, 1960, էջ 52, արձ. 125։
5. Ս. Ա. Ավագյան, «Վիմական արձանագրությունների բառաքննություն», Երեւան, 1978, էջ 127։
6. Ցուցակը տես նաեւ՝ Գր. Գրիգորյան, «Սյունիքի կալվածատիրությունը», 9–13-րդ դարերում, Երեւան, 1973, էջ 61։
7. Այս եզրերը մասնագիտական գրականութեան մէջ հիմնականում մեկնաբանուած են, ուստի անհարկի ենք գտնում նոր անդրադարձը։
8. «Դիվան հայ վիմագրության»,, պր. 3, էջ 215–216, արձ. 685։
9. Արձանագրութիւնը քանիցս հրատարակուած է (Շահխաթունեանց, Ալիշան, Սմբատյանց, Մանուչարյան)։ Այդ վերծանութիւններում տեղ են գտել մի շարք սխալներ, ուստի բերում ենք մեր վերծանութիւնը։
10. Ս. Բարխուդարյանը մատնանշելով այն հանգամանքը, որ Նորավանքի վերաբերեալ արձանագրութեան նախորդ հրատարակիչները (Զալալեանց, Ալիշան, MAK, Լալայան) Փոշահանքը վերծանել են Փողահանք, հիմք ընդունելով Ստ. Օրբելեանի տոյն յիշատակութիւնը, միանգամայն իրաւացիօրէն գտնում է, որ Փոշահանք--Փողահանք «ձեւատրումը հեշտութեամբ կարող էր կատարուել ձեռագրի մէջ, գրիչների մեղքով» («Դիվան հայ վիմագրության»,, պր. 3, էջ 216, արձ. 685, ծանօթութիւն)։
11. Օրբելեան, էջ 411։
12. Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 338–340։
13. Գնդեվանքից ոչ հեռու գտնուող բնակավայր։
14. Գր. Գրիգորյան, «Սյունիքը Օրբելյանների օրոք», Երեւան, 1981, էջ 141։
15. Ս. Ավագյան, նշվ. աշխ. էջ 340։
16. Նոյն տեղում։
17. Նոյն տեղում, էջ 339։
18. Գր. Գրիգորյան, «Սյունիքը Օրբելյանների օրոք», էջ 113։ Գ. Յովսէփեան, «Տարսայիճ Օրբելեանի եւ Մինախաթունի սերունդը», «Հասկ», Ա. տարի, Անթիլիաս, Լիբանան, 1948, էջ 12։
19. Գ. Յովսէփեան, նշվ. աշխ. էջ 12

ՅՈՒՍԻԿ ՄԵԼՔՈՆԵԱՆ
Պատմական գիտութիւնների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ

ՅԱՂԱՑ ՔԱՐ ՎԱՆՔԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՆՈՐԱՅԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան և ազգագրութեան ինստիտուտի հնագիտական ջոկատը 1986-1992 թթ. պեղումներ է իրականացրել պատմական Սիւնիքի Վայոց ձոր գաւառի Յաղացք քար վանքում, ներկայիս Արտաւոյնք գիւղից շուրջ 6,5 կմ հիւսիս-արեւելք, լեռնաշղթայի արեւահայեաց լանջի վրայ:

Այս մենաստանը Հայաստանի 10-17րդ դարերի հոգեւոր և մշակութային նշանաւոր կեդրոններից մէկն է: Այն բազմիցս յիշատակւում է մատենագրական աղբիւրներում և վիմական արձանագրութիւններում: Յաղացք քար անուան յիշատակութեամբ հնագոյն վկայութիւնը վերաբերում է 5-րդ դարին՝ պարսկական նուաճողների դէմ մղուող ազատագրական պայքարի հետ կապուած: Համաձայն Ստ. Օրբելեանի, Վայոց ձորով դէպի Արցախ նահանջող հայոց զօրաջոկատը, հետապնդող պարսից բանակի դէմ տուել է մի քանի մարտ, որոնցից մէկը՝ Յաղացք քար վանքի դիմաց[1]:

Յաջորդ յիշատակութիւնը վերաբերում է 10-րդ դարին: Պատմիչ Ստեփանոս Տարօնացու վկայութեամբ, Աբաս Ա Բագրատունու տիրապետութեան շրջանում (930-952) Հայաստանում ծաւալուած շինարարական աշխատանքներով, ի թիւս այլ վանքերի, միաբանութեան առաջնորդ Հայր Ստեփանոսի ջանքերով Յաղացք քարը ծաղկում էր ապրում, «... և Յաղացք քար և Վայոց ձորի ի ձեռն հօր Ստեփանոսի . . .»[2]:

Մատենագրական յաջորդ վկայութիւնը վանքի մասին վերաբերում է 11-րդ դարի կէսին: Ըստ Ստ. Օրբելեանի, 1041 թ. այստեղ կառուցումներ են իրականացուել հայր Վարդիկի վանահայրութեան տարիներին[3]:

Վանական յուշարձանախմբի կառոյցների որմերին և յուշակոթողների վրայ փորագրուած են 10-16-րդ դարերի բազմաթիւ արձանագրութիւններ, որոնք հաւաստում են նշուած ժամանակաշրջանում վանքի ծաղկման մասին[4]: Այնքան մեծ էր Յաղացք քար վանքի տեղն ու դերը Սիւնեաց հոգեւոր կեանքում, որ մատենագիրների երկերում և վիմական արձանագրութիւններում այն յիշատակւում է իբրեւ «Բարձրահռչակ սուրբ առաքինարան» և «Հրեշտակաբնակ սուրբ ուխտ» անուանումներով:

1331 թ. Սիւնեաց հոգեւոր առաջնորդ Ստեփանոս Տարսայիճի (Տարսայիճի թոռը, Ջալալի որդին) պատուէրով ընդօրինակուած աւետա-

ըանում Ստեփանոս գրիչը Մետրոպոլիտի մասին գրում է. «տէր և վերատեսուչ գահերէց և գլուխ արհիերէց աթոռոյս Սիւնեաց Տաթեւոյ և Նորավանից և Ցաղացքարոյ, պետ երկոտասան գաւառաց ...»[5]:

Փաստօրէն Ցաղաց քարը Տաթեւի և Նորավանքի հետ միասին համարուել է Սիւնեաց հոգեւոր աւագ աթոռներից մէկը:

Ցաղաց քարը տարիներ ի վեր եղել է մասնագէտ ուսումնասիրողների ուշադրութեան կեդրոնում (19-րդ դարի տեղագիր ուսումնասիրողներ, Գ. Յովսէփեան, Հ. Եղիազարեան, Ս. Մնացականեան, Ս. Բարխուդարեան և այլք)[6]:

Վանքը բաղկացած է երկու յուշարձանախմբից: Արեւելեան խմբի երկու եկեղեցիները, կառուցել է հայր Վարդիկը 1041 թուականին: Ստ. Օրբելեանը գրում է. «... չինէ պայծառ եկեղեցիս երկու ի հանգստարանի առաջին սուրբ հարցն, զմին գմբէթայարկ յանուն սրբոյ Կարապետին, և զմիւսն սագաչէն, հրաշալի յօրինուածովը»[7]: Խմբի Ս. Կարապետ եկեղեցին արտաքուստ ուղղանկիւն-քառանկիւնի, ներքուստ խաչաձեւ յօրինուածքով կենտրոնագմբէթ կառոյց է: Այն չարուած է երկաթաքարի (basalt) զանգուածեղ սրբատաշ քարերով և յարդարուած բուսական ու երկրաչափական զարդարանքներով: Կառոյցին առանձին չուք են հաղորդել հերալտիկ և կոփտորական քանդակները: Ուշագրաւ են հիւսիսային որմին ագուցուած առիւծի և ցուլի մենամարտ ներկայացնող, ինչպէս նաև հարաւային որմից ընկած, մագիլների մէջ գառ բռնած արծուի բարձրաքանդակները: Բարձր ճաշակով են յարդարուած յատկապէս կառոյցի պատուհանները և խաղողի ու նռան քանդակներով ոճաւորուած հարաւային միակ մուտքի բարաւորը:

Յուշարձանախմբի յաջորդ կառոյցը Ս. Նշան երկյարկանի դամբարան եկեղեցին է: Առաջին յարկում՝ ներքուստ ուղղանկիւն-քառանկիւն յօրինուածքով, պայտաձեւ խորանով եկեղեցին է, որը արեւմտեան կողմում գաւիթ ունի: Երկրորդ յարկում կառուցուած է մատուռ-աղօթատուն: Հետաքրքիր լուծում ունի կառոյցի արեւմտեան ճակատը, որի զարդն են կազմում 3,25 և 2,80 մետր երկարութեամբ դեղաքանդակ խաչքարերը:

Ցաղաց քար վանքի յուշարձանների երկրորդ խումբը առաջինից հեռու է չուրջ հարիւր մետր: Այն գբաղեցնում է բաւական ընդարձակ տարածութիւն: Այստեղ առկայ են երկու եկեղեցի, սիւնասրահներ, գաւիթ, դարպաս-միջանցք, մատուռ, ձիթհան և բազմաթիւ այլ շինութիւններ: Յուշարձանախմբի գլխաւոր կառոյցներից է Ս. Աստուածածին եկեղեցին: Այն արտաքուստ ուղղանկիւն-քառանկիւն, ներքուստ խաչաձեւ յատակագիծով, չորս մոյթերով կառոյց է: Հետաքրքիր է յուշարձանի չորս աւանդատների մուտքերի դասաւորութիւնը, ինչը եզակի է միջնադարեան Հայաստանի ճարտարապետութեան մէջ: Ունի երկու մուտք՝ արեւմուտքից և հարաւից: Իր ճարտարապետական կերպով նման է Սիւնիքի 9-10-րդ դդ. նոյնատիպ կառոյցներին և թերեւս վերաբերում է վերը

յիշատակուած Ստեփանոս վանահօր ժամանակներին։

Եկեղեցուն կից, նրա հարաւային կողմում, ակներեւաբար 11–րդ դարում կառուցուել է սիւնասրահ, որը վանքի համեմատաբար լաւ պահպանուած կառոյցներից մէկն է։ Յուշարձանախմբի յաջորդ եկեղեցին Ս. Յովհաննէս միանաւ թաղակապ սրահն է։ Շարուած է երկաթաքարի (basalt) կոպտատաշ քարերով և կրաշաղախով։ Հարաւային մասում ունի երկու աւանդատներ, որոնց միջեւ թաղակապ ծածկով խորանն է։ Եկեղեցու արեւելեան որմին փորագրուած է թուական ՆԼԸ (989)[8]։ Ս. Յովհաննէսի և Աստուածածնին կից սիւնասրահի միջեւ ձգւում է միջանցքը, որի արեւելեան մասում վանքի կամարակապ դարպասն է։ Որմերին պահպանուել են մի շարք արձանագրութիւններ։ Վերոյիշեալ երկու եկեղեցիների շուրջը պահպանուել են և այլ կոթողային կառոյցների աւերակներ, որոնք գրեթէ ամբողջութեամբ ծածկուած էին (մինչ պեղումները) հողի ստուար շերտով։ Գլխաւոր յուշարձանախմբի շուրջը տարածւում է միջնադարեան ընդարձակ բնակատեղին, որը զբաղեցնում է մի քանի հեկտար մակերես։

1976–ին սկսուած պեղումները կեդրոնացուեցին յատկապէս վանքի արեւմտեան յուշարձանախմբում։ Ս. Յովհաննէս եկեղեցուց հարաւ բացուել է նրա հարաւային որմին կից կառուցուած սիւնասրահը (12x5 մ)։ Շարուած է երկաթաքարի (basalt) սրբատաշ քարերով և կրաշաղախով։ Որմերի պահպանուած բարձրութիւնը հասնում է մինչեւ 3,5 մետրի։ Համեմատաբար լաւ է պահպանուել Ս. Յովհաննէսի հարաւային որմին յենուած սիւնաշարը։ Սրահը հարաւային և արեւմտեան կողմից է եղել բաց։ Այսօր առկայ է հարաւային սիւնաշարը՝ կամարների հիմքի քարերով։ Շինութեան արեւելեան մասում աղիւսաշար յատակով փոքր փակ կառոյց է (3,25x2,20), որը ներգծուած է սիւնասրահի ընդհանուր ծաւալի մէջ։ Սիւնասրահի գեղարուեստական յարդարանքի մասին են վկայում յայտնաբերուած ճարտարապետական մանրամասները՝ քանդակազարդ քարերը, հիւսիսային սիւնաշարի խոյակների գլանաձեւ և ատամնաշար քանդակները եւ այլն։ Ուշագրաւ է սլաքաձեւ կամարներով յարդարուած զանգուածեղ քարերից մէկը, որի ստորին մասում, դուրս չեչտուած ելուստի վրայ քանդակուած են երկու սափորներ, իսկ դրանց կեդրոնում՝ առիւծի գլուխ։

Նորաբաց սիւնասրահն իր ճարտարապետական յօրինուածքով կըրկնում է Ս. Աստուածածին եկեղեցու հարաւային կողմի սրահի ձեւերը։ Այս երկու կառոյցները ակներեւաբար հիմնարկուել են միաժամանակ։ Նմանատիպ սիւնասրահները տարածուած են Սիւնիքի 10–11–րդ դդ. հոգեւոր կեդրոններում. այդ առումով բնորոշ են Որոտնավանքի, Վահանավանքի և Տաթեւի սիւնասրահները։

1987–89 թթ. պեղումների ընթացքում բացուել են Ս. Յովհաննէս եկեղեցու արեւմտեան կողմի գաւիթը, որն ունի 150 մ^2 մակերես։ Շարուած է երկաթաքարի ճեղքուած քարերով։ Յատակին բացուել են գաւթի

ծածկը կրող չորս սիւների տեղաշարժուած խարխխները։ Գաւթի մաքրման ժամանակ Ս. Յովհաննէս եկեղեցու արեւմտեան պատին արտաքուստ յենուած, բացուել են մուտքի երկու կողմերի որմնացքները, որոնք մեծ տարածում ունեն միջնադարեան Հայաստանի վանական համալիրներում (Ամաղու, Յովհաննավանք, Թեղենեաց եւ այլն)։ Գաւթի յատակն ամբողջովին ծածկուած է տապանաքարերով, որոնց զգալի մասը ունեն մարդկային գծագիր պատկերներ և արձանագրութիւններ։ Գաւթի պեղումներից յայտնաբերուել են քանդակազարդ քիւեր, պատուհանի պակներ, եկեղեցու մանրակերտ, որոնք վկայում են կառոյցի հարուստ գեղարուեստական յարդարանքի մասին։ Սիւնասրահի և գաւթի պեղումներից յայտնաբերուել է երեք չինարարական արձանագրութիւն։ Յայտնաբերուել են 60-ից աւելի խաչքարեր և տապանաքարեր, որոնց մեծ մասը ունեն 10-17-րդ դարերի յիշատակագրեր։

1988-ին Ս. Աստուածածնին եկեղեցուց արեւելք, 1,5 մետր հեռաւորութեան վրայ բացուել են ուղղանկիւն խորանով եկեղեցու (6,6x4,4 մ) մնացորդները։ Շարուած է երկաթաքարի սրբատաշ և կոպտատաշ քարերով։ Յատակին երեք հարթ տապանաքարեր են, որոնցից մէկը՝ 1445 թ. արձանագրութեամբ։ Ակտեղ գտնուել է մի սալաքար, որի վրայ փորագրուած արձանագրութիւնը վերաբերում է 1222 թ. իրականացուած եկեղեցու վերանորոգմանը։

1989-ին բացուել են միջանցք-դարպասի վրայ կառուցուած մատուռ յիշեցնող փոքր եկեղեցու հիմնապատկերը (3x2,7 մ)։ Նոյն թուականին պեղուել է միջանցքի տարածքը։ Ակտեղ յայտնաբերուել են խաչքարեր և տապանաքարեր։ Գտնուել է 1311 թ. հետաքրքրական մի արձանագրութեան երկու քարերը։ Ակն թէև թերի է, սակայն մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում, քանի որ վերաբերում է Սիւնեաց նշանաւոր մետրոպոլիտ Յովհաննէս Օրբելին։ 1992-93 թթ. պեղումներ են իրականացուել վանքի Ս. Աստուածածնին եկեղեցու արեւմտեան մասում, որտեղ բացուել է բաւական մեծ չափերի (16,6x7 մ) սիւնասրահը։ Ակն կառուցուած է երկաթաքարի կոպտատաշ (սրբատաշ են միայն կառուցողական (constructive), կրող մասերը) քարերով և կրաշաղախով, ունի աղիւսաշար յատակ։

Պեղումների միջոցին վանքի տարածքից յայտնաբերուել է 85 արձանագրութիւն, որոնք ունեն չինարարական, նուիրատուական և յիշատակագրային բովանդակութիւն։ Արձանագրութիւններից մէկը փորագրուած է մի հարթ սալի վրայ, բաղկացած չորս տողից։ Վերաբերում է Ս. Յովհաննէսի վերանորոգմանը։

1. ⌊ԹՎ⌋ՈՀԱ (1222) ՎԵՐԸՍՏԻՆ ՆՈ
2. ՐՈԳԵՑԱՒ ԵԿԵՂԵՑԻՍ Ի ՁԵՌ
3. Ն ՇՍԻՈՒՐԻՆ ԵՒ $\overline{\text{ՍԲ}}$ ՀԱՐՔՍ ԳՐԵՑԻՆ Ա (1) ԺԱՄ ՃՐ
4. ԱԳԱԼՈՒՑԻՆ ՇՍՈՒՐԻՆ ԿԱՏԱՐԻՉ ՀՐԱՄԱՆԱՑՍ ԱՒՀԻՆ $\overline{\text{ՅԱՅ}}$

(նկ 2)։

Նոյն եկեղեցու 1281 թ. վերանորոգմանն է վերաբերում յաջորդ արձանագրութիւնը, որ փորագրուած է եղել կառոյցի այս աշխատանքներով վերականգնուած քիւի քարերի վրայ։ Այն թերի է, գտնուել են մի քանի քարերը միայն.

:Թ:Չ: Լ: (1281) ԿԱ[ՄԱՒՆ ԱՅ]...Ս ՆՈՐՈԳԵՑԻ ՍԲ ՅՈ[ՎԱՆԵՍ]...

[ՍԲ]ՈՒԽՏԻՍ ԿԱՄԱԿՑՈՒԹՔ ՍԲ ԵՂԲԱՐՑ...ՎԱԵԼՍ ՅԱՂԱՒԹ ՅԻՇԵՑԵՔ (նկ.1)։

Ցայտնի է, որ այդ տարիներին Սիւնիքի մեծ իշխանն ու կողմնակալը Տարսայիճ Օրբելեանն էր, որի անունից այլ արձանագրութիւններ կան վանքում։ Վիմագրում թէև չի նշուած նորոգողի անունը, սակայն թուականը և «նորոգեցի սբ Յովհաննես» արտայայտութիւնը հաստատում են, որ այն կատարուել է Տարսայիճի իշխանապետութեան տարիներին (1272–1290)։ Որ վերջինս Ցաղաց քարում նորոգման աշխատանքներ է կատարել, երեւում է Ստ. Օրբելեանի հետեւեալ վկայութիւնից. «Սա չինեաց եկեղեցիս և արար բազում արդիւնս ի վանորայս. ետ և ի վանսն Ցաղաց Քարոյ դիւղ ի Գառնակերն և այգի մի ի Մաճառակայ ձորի և գրէ ինքեան արձան ի վերայ սրբոյ Կարապետին և կարգէ պատարագս երիս ամ յամէ, ... նորոգէ և բազում եկեղեցիս խախտեալս և հնացեալս»։

Բաւական ընդարձակ մի արձանագրութիւն է պահպանուել Ս. Յովհաննէսի գաւթի ներսում.

ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ՄԱՄԱՅՍ ԻՄ ԱՐԴԵԱՄԲՔ ՆՈ
ՐՈԳԵՑԻ ՉԵԿԵՂԵՑԻՍ ԵՒ ՉԻՄ ԱՐԾԱԹ
Ի ԽԱՉՆ ԱՅԼ ԵՏՈՒ ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔՍ ԳՐԵՑ
ԻՆ Ի ՏԱՐԻՆ .Ե.(5) ԺԱՄ ԻՄ ՀԱՒՐՆ ՍԵՒԱԴԵՒ Չ
ԱՏԿԻ ՃՐԱԳԱԼՈՒՑԻՆ ՈՐ ԽԱՓԱՆԷ Դ
ԱՏԱՊԱՐՏԻ, ԿԱՏԱՐԻՉՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ (նկ. 4)։

Տառաձեւերից դատելով արձանագրութիւնը փորագրուել է 13–14-րդ դարերում։ Այս ժամանակաշրջանում մի քանի Սեւադաններ են յայտնի Սիւնիքից և Արցախից, սակայն մեզ յայտնի չէ, թէ ով է արձանագրութեան մէջ վկայուածը և իր դուստրը։

Շինարարական բովանդակութեամբ յաջորդ արձանագրութիւնը գտնուել է Ս. Աստուածածնի արեւելեան մասում։ Այն ընկած քարերից մէկի վրայ է, 5 տողից.

Թ ՈԿԴ(1215), ՅՈՐՈՒՄ ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԱՎ ԵԿԵՂԵՑԻ[Ս]ՉԵ
ՌՆ ՏԱՏՈՒՆԻ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՍԲ ՈՒԽՏԻՍ ԳՐԵՑԻՆ Ի
ՏԱՐԻՆ Դ (4) ԱՒՐ ԺԱՄ ՁԽԱՉԳԻՒՏՆ :Ք:(2) ԻՒՐ ԵՒ :Ք: (2) ԿԱՏԻՆ: ԿԱՏ
ԱՐԻՉ ՀՐԱՄԱՆԱՅՍ ԱՒՐՀՆԻՆ Ի ՏԷ ԵՒ ՈՐ ՀԱԿԱՌ
ԱԿՆ ԿԱՆ ԴԱՏԱՊԱՏԻՆ Ի ՔԷ (նկ. 3)։

Արձանագրութեամբ երկու քարեր են յայտնաբերուել միջանցքի արեւելեան մասից։ Ընկել են դարպասի վրայի նորայայտ եկեղեցու արեւելեան որմից։ Արձանագրութիւնը թերի է, պակասում է քարերից

առնուազն մէկը։

_ ԵՍ ՏՐ ՈՒՌՊԵԼ ՍԻՒՆԵԱՑ Ե[ՊԻՍԿՈՊՈՍ] ... ՍԱՀՄԱՆԵՑԻ Ի ՏԱՐԻՆ ՉՄԾԱ/

ԾՆԻՆ ՏԱՒՆԻ Գ (3) ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ... Բ (2) ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ ՏԱՒՆՆ ԱՌՆԵՆ ՄԵՐ ՄԱՒՐՆ ՈՒՏԻԱ ԵՒ ԻՒՐ ԾՆՈՂԱՑՆ ...Ն ՄԻԱԲԱՆՈՒԹԵ ՍԲ ՈՒԽՏԻՆ ՅԱՂԱՑ ՔԱՐՈ ... Ի Թ ՉԿ (1311) (նկ. 6)։

Նորայայտ արձանագրութիւնը գրուած է Յովհաննես Օրբել Սիւնեաց եպիսկոպոսի անունից։ Ինչպէս յայտնի է վերջինս Սիւնիքի մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելեանի հօրեղբայրը Իվանէի թոռն էր։ Իր ուսումնառութիւնն ստացել է Գլաձորի համալսարանում, աշակերտել րաբունապետ Եսայի Նչեցուն։ 1302 թ. Ստ. Օրբելեանի առաջարկութեամբ ընտրուել է Սիւնեաց եպիսկոպոս, իսկ վերջինիս մահուանից յետոյ (1303 թ.) զբաղեցրել է նահանգի մետրոպոլիտական աթոռը (1303–1324)։

Նորագիւտ արձանագրութեան վերոբերեալ հատուածը վերաբերում է Սիւնեաց հոգեւոր առաջնորդի կողմից պատարագներ սահմանելուն։

Ինչպէս վերը նչեցինք, Ս. Յովհաննէսի գաւթի յատակը ամբողջովին ծածկուած է տապանաքարերով, որոնց մեծագոյն մասն ունեն արձանագրութիւններ։ Սիւնեաց աշխարհի քաղաքական կեդրոն Եղեգիսի մերձակայքում գտնուելու հանգամանքը նպաստել է, որ վանքը հանդիսանայ դամբարանատուն ինչպէս տարբեր իշխանական տների ներկայացուցիչների, այնպէս էլ գաւառի մեծահարուստ պարոնների համար։

Այսպէս, տապանագրերից տեղեկանում ենք, որ այստեղ են թաղուած Լիպարիտ իշխանը (1281), Գրիգոր Մածնաբերդեցու կինը՝ իշխանուհի Խոսւականը (1301), պարոններ Դեսը, (1446), Գոնցան (1467), Խոչիշը (1460), այլ աշխարհիկ և հոգեւոր գործիչներ։ Այստեղ է թաղուած վանքի առաջնորդներից Գրիգոր եպիսկոպոսը, որը մահացել է 1510 թ.։ Տապանաքարի վրայ կարդում ենք. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍ/ԿՈՊ[ՈՍ]ԻՆ ԹՎ ՀԱՅՈՑ ՋԾԹ (1510), (նկ. 13)։ Նրա մասին յիշատակութիւն է պահպանուել Ալեքսանոս աբեղայի կողմից 1489 թ. Յաղաց Քարում ընդօրինակուած ձեռագրում. «Արդ գրեցաւ առաջնորդութեան սուրբ ուխտիս Գրիգոր եպիսկոպոսին»։ Գրիգոր եպիսկոպոսը յիշւում է նաև 1492 թ. Աւետարանի Խաչատուր քահանայի գրած յիշատակարանում. «Արդ գրեցաւ ... առ ոտս փառաւոր և մեծազգի արհեպիսկոպոս տէր Գրիգորի»։ Յիշեալ Աւետարանում Խաչատուր գրիչն իր մասին գրում է. «Յիշեցէք զգծողս քահանայս», իսկ գաւթի տապանաքարերից մէկի վրայ կարդում ենք. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԽԱՉԱՏՈՒՐ Ք/ԱՀԱՆԱՒԻՆ ԹՎ ՋԽԵ (1496), (նկ. 15), որն անշուշտ վերաբերում է յիշեալ Յաղաց քարեցի Խաչատուր գրչին։

Վերը նշուած 1483 թ. տօնացոյցի յիշատակարանում կարդում ենք. «Արդ գրեցաւ ... ձեռամբ յոգնամեղ և պիտականուն Ալեքսանոս անուամբ միայն և յանուն աբեղայի ...»։ Գաւթի մաքրման աշխատանքների ժամանակ գտնուած բազմաթիւ խաչքարերից մէկի յիշատակագիրը վերա-



բերում է այս Ալեքսանդրին։

Գաւթի տապանաքարերի արձանագրութիւններից տեղեկանում ենք, որ այստեղ են թաղուած Բարսեղ, Յովհաննէս, Թումա քահանաները, մի-աբանութեան առաջնորդները, Ստեփանոս Եպիսկոպոսը և այլք։ Ի դէպ, Թումայի յիշատակին եւս երկու խաչքար է կանգնեցուել, մէկը գաւ-թում, միւսը՝ վանքի բակում։ Վերեւում յիշատակուած Խաչատուր քա-հանայի ընդօրինակած Աւետարանի յիշատակարանից տեղեկանում ենք, որ ձեռագրի ստացողն ու վանքին նուիրողն է գրչի հարազատ եղբայր Թանկագիզը, որի յիշատակին երկու խաչքար է կանգնեցուել Յաղաց քարում.

ՈՒԲ ԽԱՉՍ ԹԱՆԿԱԶԻԶԻՆ (նկ. 17) եւ ԹՎ ՋԽԸ (1499) ԽԱՉՍ ԹԱՆԿԱԶԻԶԻՆ ԲԱՐԵԽԱԻՍ Է (նկ. 16) արձանագրութիւններով։ Խա-չատուր և Թանկագիզ եղբայրների հարազատների անունների յիշատա-կութեամբ եւս մի քանի խաչքարեր են գտնուել գաւթի և շրջակայքի պեղումների ժամանակ։

Արձանագրութիւնները հարուստ նիւթեր են պարունակում ինչպէս վանական միաբանութեան գործունէութեան ամենատարբեր ոլորտների վերաբերեալ, այնպէս էլ տուեալներ են հաղորդում առաջնորդների մասին, յայտնի են դառնում նորանոր անուններ։ Այսպէս. խաչքարերից մէկի արձանագրութիւնից տեղեկանում ենք, որ վանքի նշանաւոր վանահայր Վարդիկն ունէր եւս երկու եղբայր՝ Մեսրոբ կրօնաւորը և Մկրտիչը։

Վանքում յայտնաբերուած արձանագրութիւնների մէջ մեծ թիւ են կազմում յիշատակագրերը, որոնք փորագրուած են խաչքարերի և տապանաքարերի վրայ։ Քանի որ դրանք ամբողջութեամբ հրատարակութեան ենք ներկայացրել այլ առիթով, ուստի բերում ենք մի քանիսը, մեր ընտրութեամբ։

Խաչքարի պատուանդան, գտնուում է Ս. Նշան եկեղեցուց մօտ քսան մետր հարաւ-արեւելք։ Յիշատակագիրը հինգ տողից է։

ԵՍ ԽԱՉԱՏՈՒՐ ՆՎԱՍՏ ՔԱՀԱՆԱ ԹՈՌՆ ԱԲՈՒՄՈՒՌԱՅԻ ԻՆՉ Հ
⌊ԱՅՈՑ⌋ ԹՎ։ ՆՂԶ (1047)
ԷՐ ԿԱՆԿՆԵՑԻ Զ ՍԲ ՆՇԱՆՍ Ի ԲԱՐԵ
ԽԱԻՍՈՒԹԻՒՆ ԱՌ ՃՁ ՎԱՍՆ ՀՈԳՈՅՍ
⌊ՓՐԿՈՒԹԵԱՆ ՅԱՂԱԻԹՍ ⌊ՅԻՇԵՑԵՔ⌋ (նկ. 8)։

Խաչքար, գտնուում է Ս. կարապետ եկեղեցուց մօտ քսան մետր հարաւ, ստորին մասում փորագրուած է հինգ տող.

։Թ։ Ո։Կ։Թ։ (1220) ԿԱՆԳՆԵ
ՑԱԻ ԽԱՉՍ Ի ԲԱՐ
ԵԽԱԻՍՈՒԹԻ ՎԱ
ՍԱԿԱՅ ՈՐԴՈՅ ԳՈ
ՂԱ ՔՈՒՐԴԻ (նկ. 5)։

Արձանագրութեան մէջ յիշատակուած անձնաւորութիւնները մեզ յայտնի չեն։ Գողա (կարելի է վերծանել Գոռա) Քուրդ անձնանունը մատենագրութեան մէջ վկայուած է մէկ անգամ՝ 11-րդ դարում, Կորա Քուրդ ձեւով։ Վերջինս Սիւնեաց գահերէց իշխան Սմբատի որդին էր[9]։

Խաչքար, գտնուում է Ս. կարապետ եկեղեցու հարաւ-արեւմտեան կողմում։ Պատուանդանից խոնարհուելիս կոտրուել է բաժանուելով երկու մասի։ Կոթողի քիւին և հարաւային կողմին փորագրուած է 29 տողից հետեւեալ յիշատակագիրը.

Ի ԹՎ ՉԻԴ (1275) ՅԱՆՈՒՆ/ ՃՅ_ԵՍ ԹԱԹԵՈՍ/ՆՈՒԱՍՏ/
ԾԱՌԱՅ/ ԵՒ ԵՐԿՐ/ՊԱԳՈՒ/ ԽԱՉԵԼՈՅՆ ԸՍ/ՏԱՑԱՅ ԶԽԱՉՍ/
ԱՇՏԱ/ՐԱԿ ԱՆ/ՄԱՏՈՅ/Ց ԵՒ ԶԵ/Ն ՃՁԱ/ՄՈՒԽ Հ/ՈԳՈՅ ԻՄ/ՈՅ
ԵՒ ԾՆ/ՈՂԱՑ Ե/Ւ ԵՂԲԱՐ/Ց ԻՄՈՑ/ ԵՒ ՎԱՐԴԱ/ՊԵՏԻՆ ԻՄՈ/Յ
ՈՐՔ ԿԱՐԴԱՑՔ ՅԱ/ՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԵ/Ք ՃՁ (նկ. 7)։

Յիշատակագիրը հետաքրքրութիւն է ներկայացնում միջին դարերում խաչքար-կոթողի ընկալման առումով։ Այն որակուած է որպէս «անմատոյց աշտարակ» և «զէն աստուածամուխ»։

Խաչքար, կանգնած է եղել Ս. կարապետ եկեղեցու հարաւային պատի



տակ։ 1988 թ. Հայաստանի կառավարութիւնն այս կոթողը նուիրել է ռուսաց եկեղեցուն, քրիստոնէութեան ընդունման 1000-ամեակի կապակցութեամբ։ Արձանագրութիւնը փորագրուած է եղել քիւին (ամբողջովին քայքայուած) և ստորին մասում, ուր կարդացւում է երեք տող.

ՉԳԵՂԵՑԻԿ ՏԻՈՔ ՄԱՆՈՒԿ
ՉՏՂԱ ՍՄԲԱՏ ԵՒ ՉԲԱՐԻ
ԾՆԱՒՂՔՆ ԻՒՐ ՅԱՂԱԹՔ ՅԻՇԵՔ (նկ. 18)։

Խաչքար Ս. Յովհաննէսի գաւթում, ստորին մասում՝ երկու տող.

ՍՔ ԽԱՉՈՅ ԲԱՐԵԽԱՒԻՍ ՍՏԵՓԱՆ
ՈՍ ԵԻՍԼ ԿՈՊՈՍԻՆ։ ԹՎ ՌԴ (1555)։

Արձանագրութեան մէջ վկայուածՍտեփանոս եպիսկոպոսը աղբիւրներում չի յիշատակւում։ Ենթադրում ենք, որ նա եղել է վանքի վանահայրերից մէկը։

Խաչքար, ընկած է Ս. Կարապետի հարաւային կողմում։ Արձանագրութիւնը ստորին մասում ունի երկու տող. թուականը՝ խաչաթեւերի անկիւններում.

Թ ՆՃԹ (1010) ՔՍ ԱՃ Ի ՉԵՌՆ ՆՇԱՆԻ ՔՈ ԱՒ
ԳՆԵԱ ԻՆՉ ԹԵՈԴՈՐՈՍԻ ԵՒ ՈՂՈՐՄԵԱ։

Խաչքար Ս. Յովհաննէսի սիւնասրահից, արձանագրութիւնը եզրերին.

ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ ԱՄՊԱՏԱ ՔԱՋՈՐԴՈՑ։ Թ ՈԿԸ (1219)։

Խաչքար, գտնւում է վանքի արեւելեան յուշարձանախմբի գերեզմանատանը։ Ստորին մասում 14 տող.

ԳԵՐԵՋ/ՄԱՆ Ա/ԻՏԱՐԻ/ ԵՒ /ՄԵ/ՂԱՒՈ/ՐԻ Ա/ՐԴ Ո/ՂՈՐՄԵ/ԱՑ ԱՃ
Ի ՉԵՌՆ Ս/ՐԲՈՑ ԵՒ Հ/ԱՄԱ/ՐԵԱ ՅԻ (871) ԹԻՒՍ։

Արձանագրութիւնը չափազանց կարեւոր է։ Եթէ վերծանուած թուականը ստոյգ է, ապա յայտնի է դառնում Հայաստանում թուագրուած ամենավաղ խաչքարերից մէկը։ Արձանագրութեան վերջաւորութիւնը կարելի է մեկնաբանել նաև «...համարեայ ի թիւս», այսինքն՝ ակնարկ է սրբերի շարքը դասելու մասին։

Տապանաքար գաւթից.

Թ ՃԼ (1281) ՉՍԱՅ ԻՇԽԱՆԻՆ ԼԻՊԱՐՏԻ ... (նկ. 9)

Արձանագրութեան վերջին բառը չի ընթերցւում։ Նշուած ժամանակաշրջանում վայոց ձորում այդ անունով իշխաններից մեզ յայտնի է Իվան Օրբելեանի որդի Լիպարիտը, որը Սիւնեաց նշանաւոր տէրերի՝ Սմբատի և Տարսայիճի եղբօր որդին էր։ Լիպարիտ իշխանի անուան վերջին յիշատակութիւնները վերաբերում են 13-րդ դարի 90-ական թուականներին[10]։ Թէև յայտնի չէ նրա մահուան ստոյգ թուականը, սակայն ակնյայտ է, որ Յաղաց քարի տապանագրում յիշատակուած իշխանը Իվանէ Օրբելեանի որդի Լիպարիտը չէ, եթէ անգամ ենթադրենք, որ գրիչը արձանագրութեան մէջ բաց է թողել թուականի միաւորը։

Տապանաքար գաւթից.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՐՈՆ ԴԵՏԻՆ ԹՎ ՊՂԵ (1446) (նկ. 10)։

Տապանաքար գաւթից, վրան գրուած երեք տող.

ԹՎ ՉԾ (1301) ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԷՍՈՒԱԿԱՆԻՆ ԱՄՈՒՍԻՆ
ԳՐԻԳ/ՈՐՈ ՄԱԾՆԱԲԵՐԴԵՑՈ (նկ. 11)։



Այս արձանագրութիւնը առաւել կարեւորւում է նրանով, որ մեզ է հաղորդում Ուտեաց աշխարհի հզօր ամրոցներից մէկի՝ Մածնաբերդի տէր Գրիգոր իշխանի և նրա կնոջ՝ Խոսւականի անունները։ Մածնաբերդը, ինչպէս նաև Տաւուշի որոշ շրջաններ և ամրոցներ (Տաւուշ, Նոր Բերդ և այլն) մտնում էին Տաշիր-Զորագետի կիւրիկեան թագաւորութեան կազ-

մի մէջ[11]: 12-րդ դարի սկզբին (1111-1113 թթ. միջեւ) սելճուկների հարուածներից կորցնելով իրենց տիրոյթները՝ Աբաս և Դաւիթ կիւրիկեաններն ամրանում են համապատասխանաբար Տաւուշ և Մածնաբերդ ամրոցներում[12]: Փաստօրէն Տաշիր-Զորագետի թագաւորութեան անկումից յետոյ մինչեւ 13-րդ դարի կէսերը կիւրիկեանների չառաւիղները իրենց ձեռքում էին պահում վերոյիշեալ ամրոցները[13]: 1250-ական թուականներից յետոյ Մածնաբերդի կիւրիկեաններից վերջինը յայտնի է Թաղիադինի որդի Սարգիսը[14]: Ցաղաց քարի պեղումներով բացուած տապանագրում յիշատակուած Գրիգոր Մածնաբերդցին և Խոսրովանն ակներեւաբար կիւրիկեանների չառաւիղներ են, ընդ որում իշխանուհու Ցաղաց քարում թաղուելու փաստը թերեւս վկայում է այն մասին, որ վերջինն ինչ-ինչ պատճառներով ապաստան է գտել համեմատաբար կայուն քաղաքական վիճակում գտնուող Վայոց ձորում, ուր և կնքել է իր մահկանացուն:

Տապանաքար գաւթից, վրան երեք տող.

ՉԻՇԽԱՆՈՒՀԻ ՉՀԱՆԿՈՒՑԵԱԼՆ Ի ՔՍ ՉՊ[Ա]Ր[ՈՆ] ԳՈՆ/ՑԱ
Յ[ԱՂ]ԱՒԹՍ ՅԻ[ՇԵՑԷՔ]: Թ ՉԺՉ (1467) (նկ. 12):

Տապանաքար գաւթից, վրան երկու տող.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՐՈՆ ԽՈՇԻՇԻՆ ԹՎ ՉԺԹ (1460) (նկ. 14):

Արձանագրութիւններում յիշատակուած պարոններ Դեսը, Գոնցան և Խոչիչը աղբիւրներում չեն վկայուած և մեզ անյայտ է նրանց ով լինելը: Ենթադրում ենք, որ Սիւնեաց աշխարհի այդ շրջանի քաղաքական կեդրոն Եղեգիսի մերձակայքում գտնուելու հանգամանքը նպաստել է Ցաղաց քար վանքին հանդիսանալու դամբարանատուն, ինչպէս տարբեր իշխանական տների ներկայացուցիչների, այնպէս էլ Վայոց ձորի մեծահարուստ պարոնների համար: Վերջին վիմագրում յիշատակուած Խոչիչը թերեւս Խուշուշի բարբառային ձեւն է: Անուան յիշատակութիւնը յայտնի է Վահանավանքի պեղումներից[15]:

Ցուշակոթողի վրայ, երկու տող.

Թ ՆԼԵ (986): ՀԱՅՐ/ՍՏԵՓԱՆՈՍ (նկ. 19):

Ս. Աստուածածնի արեւմտեան սիւնասրահ, որմնասեան քարին երկու տող.

ՎԱՍԱԿ Յ/ԻՇԵՑԷՔ (նկ. 20):

Ցուշակոթողի վրայ հինգ տող.

Թ: Ն:Ջ: /957 թ./ Կ/ԱՏԱՐԵ/ՑԱՒ ՔՐԻ[Ս]Տ[Ա]ՓՈՐ Ք/ԱՀԱՆԱ ... (նկ. 21):

Արձանագրութեան վերջին մասը չի պահպանուել, գտնուել է կոթողի վերին մասը միայն: Ցուշակոթողի վրայ, երկու տող.

ՍԱՀԱԿ ԵՐԷՑ (նկ. 22):

Ցուշակոթողի վրայ.

Թ ՆԼԷ (1048) ԳՈՈՐԳ (նկ. 23):

Գէորգ անճանաչ/վիմագրում՝ Գորգ/ գրիչը կրկնել է Ո տառը:

Ցուշակոթողի վրայ, վեց տող: Գտնուել է Ս. Յովհաննէս եկեղեցու



դաւթի պեղումների մէջոցին։ կոթողը 11-րդ դարի է, աւելի ուշ այն օգտագործուել է որպէս շինաքար։ Վրան խաչաքանդակ է փորուել, որի պատճառով խաթարուել է վերջին չորս տողերի տառերի մի մասը։

:Թ:Ն:Ղ:Է ԷՐ (1043) /ԿԱՏԱՐԵՑԱՒ Պ/ՈՂՈՍ ՔԱՀԱՆԱ

ՔՍ Ի ԵՂԲԱՅՐ / ՈՎԱՆԻՍԻ ՅԱՂ/ԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ (նկ. 24)։

Յուշակոթողի վրայ, եօթ տող։

ՁՁ ՈՂՈՐՄԵԱՅ/ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՔԱ/ՀԱՆԱԻ ՈՐԴՈ ԳՈՐ/ՈՁՎԱՅՈ ԵՒ ԳՈՐԳԱ/ ԻՒՐ ՔՎԵՐՈՐԴՈՅՆ /Ի/ ՔՈՒՄ ԳԱԼԸՍՏԵԱՆԴ :Հ:/ Թ։

ՇԹ։ ԷՐ (1060) (նկ. 25)։

Վիմագրում յիշատակուած Քրիստափոր քահանան տակաւին մեզ անյայտ է և աղբիւրներում չի հանդիպում։ Հետաքրքիր է Գորոզվաց անունը, որն ակներեւաբար կապուած է Արցախի նշանաւոր Գորոդու

բերդի հետ(16)։ Նշուած անուանումը յիշատակուած է եւս մի անգամ Վահանավանքի մեծ տաճարին կից սինասրահում 1061 թ. «Խաղբակ Որդոաց»[17]։

Յուշակոթողի վրայ, վեց տող.

ՀԱՅ[ՈՑ] Թ ՆՂԶ (1047) /ԷՐ ԿԱՏԱՐԵՑԱՒ/ ԱՄԵՆԱՒՐՀՆԵԱԼՆ/
ՊԵՏՐՈՍ ՔԱՀԱՆԱ/ Ք̅Ս̅ Ի ՅԱՅԱՒԹՍ/ ՅԻՇԵՑԷՔ (նկ. 26)։

Յուշակոթողի վրայ, վեց տող.

Հ/ԱՅՈՑ/ Թ ՇԼ (1081) ԵՐ/ԿԱՏԱՐԵՑԱՒ/ ՅՈՎՀԱՆՆԵՍ/
ԵՂԲԱՅՐ ՊՈՒՂՈ/ՍԻ Ք̅Ս̅ /Ի/ ՅԱՂՈՒԹ/Ս ՅԻՇԵՑԵՔ (նկ. 27)։

Վերոբերեալ տաս արձանագրութիւնները փորագրուած են վանքի Ս. Կարապետ եկեղեցու հարաւային մասում գտնուող գերեզմանատան յուշակոթողների վրայ։ Գերեզմանական այս ինքնատիպ կոթողները մինչեւ մէկ մետր երկարութեամբ, երկաթաքարէ, յղկուած մակերեսով, ստորին մասում նեղացող պոչուկաձեւ վերջաւորութեամբ սալեր են։ Կոթողի այս տիպը լայն տարածում ունի միջնադարեան Հայաստանում (յայտնի են բազմաթիւ օրինակներ)։ Եթէ մեզ յայտնի այլ յուշարձանների նմանատիպ կոթողների վրայ փորագրուած են վարդակներ, փոքրիկ խաչեր և յաւերժութեան խորհրդանիշ պատկերներ, ապա Ցաղաց քարի օրինակները զուրկ են քանդակներից։

Առաջին անգամ գիտական շրջանառութեան մէջ դրուող նորայայտ վիմագրերն անտարակոյս կարեւոր արժէք են ներկայացնում Սիւնիքի Վայոց ձոր գաւառի պատմութեան համար։ Բացայայտւում են Ցաղաց քարի վանական միաբանութեան գործունէութեան զանազան ոլորտները, պատմական անձանց անունները, շինարարական աշխատանքների նոր փաստեր, ճշգրտւում է այս նշանաւոր հոգեւոր կեդրոնի առաջնորդների ցանկը։

Արձանագրութիւնների վերծանութիւնը բերում է այն համոզման, որ Ցաղաց քարը գտնուելով Սիւնեաց աշխարհի նշանաւոր քաղաքական կեդրոններից մէկի՝ Եղեգիսի մերձակայքում, հանդիսացել է նաև տոհմական դամբարանատուն գիւղաքաղաքի առաւել նշանաւոր մարդկանց՝ իշխանական տների ներկայացուցիչների և հոգեւոր գործիչների համար։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. «Պատմութիւն Նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 69-70։
2. Ստեփանոսի «Տարօնացւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական», ՍՊբ, 1885, էջ 176։
3. Ստ. Օրբելեան, «Պատմութիւն», էջ 340։
4. «Դիվան հայ վիմագրության»,, պրակ 3, Ս. Բարխուդարյան, Երեւան, 1967, էջ 142-153, Յ. Մելքոնեան, «Նորայայտ արձանագրութիւններ Ցաղաց Քար վանքից», Հանդէս ամսօրեայ, Վիեննա, թիւ 1-12, էջ 62-85։

5. «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 231:
6. Ս. Ջալալեանց, «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», մասն Բ, Տփղիս, 1858, էջ 160-163: Багадзе А. Кавказ в древних памятниках христианства, в кн. Акты собранные Кавказской Археографической комиссией, Т. v, Тифлис, 1875, с. 993-1107, Т. VI, част II, Т. 1876, с. 885-905.
Քաջբերունի, «Ճանապարհորդական նկատողութիւնք», «Արարատ», 1888 թիւ, Ե, էջ 300, 304-305: Ղ. Ալիշան, «Սիսական», Վենետիկ, 1893, էջ 152-157: Ե. Լալայան, «Վայոց ձոր կամ Դարալագեազ», «Ազգագրական հանդէս», 26, Թիֆլիս, 1905, էջ 23-26: "Материалы по археологии Кавказа, XII, М, 1916, с. 106112, Գ. Հովսեփյան, «Խաղբակյանք կամ Պրոշյանք հայոց պատմութեան մէջ», հտ. 1, Վաղարշապատ, 1928, էջ 38, 69, 122, 163, 178, 179: Հտ. 3, Նիւ Եորք, 1942-43, էջ 4: Հ. Եղիազարյան, «Ցաղաց քար վանք կամ Ղռշավանքը եւ նրա վիմագիր արձանագրությունները», «Էջմիածին», 1970, Դ, էջ 41-50: Ս. Մնացականյան, «Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը», Երեւան, 1960: Դիվան, 3:
7. Ստ. Օրբելեան, «Պատմութիւն», էջ 340:
8. Դիվան, պր. 3, էջ 141:
9. Ստ. Օրբելեան, էջ 328:
10. Ստ. Օրբելեան, էջ 475:
11. «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 119: Մխիթար Գոշ, «Կաթողիկոսք եւ դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դարու», Ղեւոնդ Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 385-386:
12. Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Երեւան, 1961, էջ 151-152:
13. Ղ. Մովսէսեան, «Լոռիի Կիւրիկեան թագաւորներու պատմութիւնը», Վիեննա, 1923:
14. Նոյն տեղում, էջ 58-62:
15. Գ. Գրիգորյան, «Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները», «Լրաբեր» հաս. գիտ. 1970, 10, էջ 86:
16. Շ. Մկրտչյան, «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները», Երեւան, 1985, էջ 99-101:
17. Գ. Գրիգորյան, «Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները», էջ 92:



Վահրամ Ճգնաւորի տապանաքարը

ԱՍՏՂԻԿ ԳԵՒՈՐԳՅԱՆ
Արուեստագիտութեան թեկնածու
Մատենադարան

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐԸ
14-15ՐԴ ԴԴ.

Միջնադարեան հայ մշակոյթի, ինչպէս և հայ գրչութեան ամենաբեղուն օջախներից մէկը եղել է Սիւնիքը։

Սիւնեաց 12 գաւառներից ամենամեծը Վայոց ձորն էր։ 13-14 դարերում Վայոց ձորի ուսումնագիտական կենտրոնը, ինչպէս գիտենք, Գլաձորի համալսարանն էր (1282-1338 թթ.), որտեղ ուսուցուող կարեւոր ճիւղերից մէկը գրչութեան, մանրանկարչութեան արուեստն էր։

Մեր նպատակից դուրս է Գլաձորի համալսարանի մանրանկարիչներին անդրադառնալը, քանի որ նրանց վերաբերեալ բաւականաչափ գրականութիւն կայ։ Այստեղ վաղուց ճանաչուած անուններ են՝ Մոմիկը, Թորոս Տարոնացին, Աւագը, Մատթէոսը և ուրիշներ։

Վայոց ձորում վանքապատկան դպրոցներ էին հիմնադրուել նաև Հերմոնում, Եղեգիսում, Բոլորբերդ անապատում, Ամաղուի և Վերին Նորավանքերում, Շատին անապատում և այլուր։ Ցիշեալ վանքերի գրչատներից կ՚ուզենայինք անդրադառնալ միայն Հերմոնում և Եղեգիսում ընդօրինակուած ձեռագրերի մանրանկարչութեանը և ներկայացնել յատկապէս այն նկարիչների գործերը, որոնք մինչեւ այժմ չեն արժանացել ուշադրութեան։

Ցայտնի է, որ Հերմոնի դպրոցը հանդիսացել է Գլաձորի համալսարանի անմիջական շարունակողներից մէկը։ Հերմոնի ուսումնակրթական գործունէութեան մասին մեզ հասած առաջին գրաւոր տեղեկութիւնը վերաբերում է 14-րդ դարի սկզբներին։ Գլաձորի համալսարանի րաբունի Տիրատուր Կիլիկեցին 1338 թուականին, Եսայի Նչեցու մահուանից յետոյ, մի խումբ սանների հետ տեղափոխուեց Հերմոնի վանք, որը գտնուում էր Սիւնեաց Բուրթել Օրբելեան իշխանի և նրա որդիներ Պէչքէնի ու Իվանէի հովանաւորութեան ներքոյ։

Տիրատուրը եղել է Կիլիկեան մի շարք գրչատներում, ապա Գլաձորում և այնուհետեւ Հերմոնում, որտեղ նրա անունը աշակերտների կողմից յիշւում է որպէս «Մեծ և երիցս երանեալ հռետոր, առ որ կամք դեգերեալ ի վարժ կրթութեան»[1]։

Տիրատուրի ընդօրինակութեամբ յայտնի է մէկ Աւետարան, գրուած 1209 թ., Գլաձորում, որի նկարազարդումը վերագրւում է իրեն[2]։ Անշուշտ Տիրատուրը մեծ դեր է կատարել Հերմոնի մանրանկարչութեան արուեստի ձեւաւորման գործում։

Հերմոնի դպրատան մասին մեզ հասած մատենագիտական տուեալներով, 14-15րդ դարերում ստեղծուած ձեռագրերից պահպանուել են 32-ը, որոնցից 4-ը՝ 14-րդ դարից են, իսկ 28-ը՝ 15-րդ դարից: Մաշտոցի անուան Մատենադարանում կայ 17 ձեռագիր, իսկ մնացածը պահւում է այլ հաւաքածուներում: Այս ձեռագրերից մէկում յիշատակւում է գրիչ և ծաղկող Գրիգորի անունը: Նա նոյնպէս եկել էր Գլաձորից, եղել է Տիրատուր կիլիկեցու աշակերտներից և ընդօրինակել մի քանի մատեաններ, որոնցից մէկի գրիչ Սիոնը գրում է. «Արդ, եղեւ սկիզբն և կատարումն սորին ի նահանգիս Սիւնեաց, ի գաւառս որ կոչի Զոր Վայոց, ի մենաստան Հերմոնի վանս անուանեալ, ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի, ի թուականութեանն Հայկազեանս տոհմի եաւթն հարիւր ինսուն և եաւթներորդի աւետարանչի նկարի ներքեւում նկարիչը գրում է. «Ձծաղկող Սուրբ Աւետարանիս զփցուն Գրիգորս յիշեայ ով Սուրբը Հայր...»: Իսկ չափածոյ յիշատակարանում Գրիգորը գրում է.

«Նուաստս Գրիգորս որ գրեցի,
Ձծաղիկս ու գիրքս կազմեցի
.....
Եւ վատատէս յաչիցս էի,
Բայց հարկ արին ու ամաչեցի»[4]:



Ս. ՅՈՒՆԴ (Հերմոն, Մատենադարան, ձեռ. 6305)

Հայ մինչնադարեան մանրանկարչութիւնն ուսումնասիրելիս մասնագէտների ուշադրութեանն են արժանացել նաև արուեստի այնպիսի արժէքներ, որոնց ոչ միայն ծաղկողների անուններն են անյայտ եղել, այլ՝ գրչութեան վայրն ու որոշակի ժամանակը: Այդպիսի ձեռագրերից մէկը Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 6305 Աւետարանն է: Անուանի արուեստաբան Լ. Ա. Դուրնովոն բարձր գնահատելով ձեռագրի արուեստը և ելնելով նրա ոճական ընդհանրութիւնից, որ նկատել էր Գրիգոր Տաթեւացու նկարազարդած Աւետարանում, յիշեալ

ձեռագիրը վերագրեց Տաթեւի դպրոցին, իսկ նկարները վերագրեց Գրիգոր գրչին[5]: Արուեստաբան Ա. Միրզոյանը ձեռագրի նկարները վերագրեց Անանուն Սիւնեցուն[6]: Մինչդեռ, գրիչն իր մասին յիշատակում է. «Եւ զգծող սրբոյ Աւետարանիս զԳրիգոր պիտակ քհյ.»[7]:

Ո՞վ էր այս Գրիգորը: Պարզւում է, որ Գրիգորը եղել է Գլաձորի համալսարանի սաներից: 1335 թ. Գլաձորում նա ընդօրինակել է մի ժողովածու, որի օրինակը չնորհել էր Եսայի Նչեցին[8]: Այնուհետեւ գալով Հերմոնի վանք և աշակերտելով Տիրատուրին, 1338 թ. ընդօրինակել է Դիոնիսոս Արիսպագացու մատեանը, որտեղ յիշատակում է. «...գծագրեցաւ ի նահանգիս Վայոց ձոր, ի վանս Հերմոնի...»[9]:

«Գծող», «գծագրող» բառերը նշանակում են նկարող[10]: Ուրեմն, դժուար չէ հետեւցնել, որ այս Գրիգորը Տիրատուր րաբունապետի սանն էր, չնորհալի գրիչ և նկարիչ, հաւանաբար վերը յիշուած 1348 թ. Աւետարանի միեւնոյն ծաղկողը, որն արդէն գանգատւում էր տեսողութիւնից: Սակայն այդպէս էլ անյայտ էր մնում Աւետարանի ընդօրինակման ժամանակը:

Մատենադարնաում մեզ յայտնի դարձաւ մի թղթեայ Աւետարան, որն ընդօրինակուել էր Հերմոնի վանքում, 1423 թ., գրիչն է Յովհաննէսը[11]: Դա րաբունապետ Յովհաննէս Կոլոտիկի ժամանակ էր: Առաջին իսկ հայեացքից դժուար չէր նկատել, որ այս Աւետարանի տէրունական նկարները սերտօրէն առնչւում են 6305 ձեռագրի նկարների հետ: Դրանց յօրինուածքային ու ոճական աղերսները համոզում են, որ ստեղծուել են միեւնոյն գրչատանը՝ Հերմոնի վանքում:

Յովհաննէս գրիչը 1415 գրչագրած ժողովածուում գրում է. «Գրեցաւ տխեղծ մատամբ Յովհաննէս պիտակ եամ, ի թուականս ՊԿԴ (1415) ի վանքս Հերմոնի, առ դրան Սուրբ Լուսաւորչիս և Սուրբ դամբարանաց, սուրբ վարդապետաց Տիրատրոյ, Գրիգորի և այլոց»[12]: Հերմոնում պահպանուած Գրիգորի տապանաքարի վրայ մակագրուած է. «Այս է հանգիստ Գրիգորի քահանայի, որ փոխեցաւ առ Քրիստոս, տարաժամ հասակի թվ. ՋՂԷ (1348)[13]:

Քանի որ Գրիգորի նկարազարդած 6305 Աւետարանի Հին Կտակարանին վերաբերող նկարները անաւարտ են մնացել, նշանակում է ձեռագիրը հաւանաբար գրուել է այդ ժամանակաշրջանում՝ մահուանից քիչ առաջ: Յետագայ տարիներին, թիւ 6305 Աւետարանը պահուել է Հերմոնի վարժատան գրքերի արկղների մէջ և գաղափար օրինակ դարձել թիւ 9552 ձեռագրի համար: Գրիչ Յովհաննէս Մեծոփեցին 1394 թուին Հերմոնում ընդօրինակած ձեռագրում յիշատակում է, որ այդ ժամանակ Հերմոնի դպրոցը անօրինում էր Ծերուն րաբունաբետը և ձեռագրի ընդօրինակման համար գաղափար օրինակը վերցրել է վանքի հին վարժարանի գրքերի արկղների միջից. «Գտեալ եղեւ ի յարկեղս գրոց ի հին վարժարանի ի Հերմոնի վանս կոչեցեալ առ ոտս Ծերուն րաբունոյ...»[14]: Սակայն, ծանօթանալով 6305 և 9552 ձեռագրերի ընդօրինակման արուես-

տին, որտեղ ակնյայտ են յօրինուածքների նմանութիւնները, այնուամենայնիւ դրանք լուսանկարչական պատճէնահանումներ չեն և նկատւում է նկարիչներից իւրաքանչիւրի ստեղծագործական միջամտութիւնը։ Համեմատութեան համար ծանօթանանք այս երկու ձեռագրերում եղած մի քանի տէրունական նկարների պատկերագրութեան հետ։

Հերմոնի այս երկու ձեռագրերում էլ «Աւետումը» ներկայացուած է այն տարբերակով, որտեղ Գաբրիէլ հրեշտակը Մարիամին հանդիպում է աղբիւրի մօտ։ Սիւնիքի մանրանկարչութեանը բնորոշ է հենց այս տարբերակը։ «Քրիստոսի ծնունդը» մանրանկարի պատկերագրութիւնը նոյնպէս երկու ձեռագրերում էլ համարեայ միեւնոյն յօրինուածքն ունի (նկ. 2, 3), որտեղ առկայ է Քրիստոսի լոգանքի պատկերումը, որ յայտնի է օտար աղբիւրներից (սիրիական, բիւզանդական), իսկ Հերմոնի նկարիչ Գրիգորի համար հաւանաբար գաղափար օրինակ է հանդիսացել «Թարգմանչաց» Աւետարանը, որը սեփականութիւնն էր Հերմոնի վանքի հովանաւոր Սիւնեաց Գրիգոր իշխանի[15]։

Թիւ 6305 ձեռագրում Աստուածամօր ձեռքում պատկերուած պըտուղը ունի տարբեր մեկնաբանում.

ա. որպէս նուռ, որը խորհրդանշում է Եսայի մարգարէի գուշակումը՝ կոյս Մարիամից որդի ծնելու հանգամանքը,

բ. ենթադրւում է, որ Մարիամի ձեռքին խնձոր է, այս անգամ կապուած ժողովրդական աւանդութեան հետ, որը դարձեալ խորհրդանշում է Մարիամի կուսութիւնը։

«Մուտք Երուսաղէմ» յօրինուածքը նոյնպէս հիմնականում կրկնըւում է, իսկ որոշ մանրամասներ՝ յատկապէս Երուսաղէմի պատկերը ներկայացուած է փոքր ինչ խորքի ճարտարապետական կառոյցի տարբերակով։

«Ղազարոսի յարութիւն» աւանդական պատկերագրութիւնում սովորաբար Քրիստոսի ետեւում կանգնած են նրա աշակերտները, իսկ Ղազարոսի քոյրերը՝ Քրիստոսի ոտքերի մօտ։ 6305 ձեռագրում Ղազարոսի քոյրերը կանգնած են դիմացը՝ ժողովրդի հետ, 9552 ձեռագրում, հաւանաբար տեղի սղութեան պատճառով Քրիստոսի աշակերտները կանգնած են դիմացը, Ղազարոսի քոյրերի հետ, իսկ ժողովուրդը բացակայում է։

Սիւնիքի մանրանկարչութեանը հարազատ է նաև Քրիստոսի յարութիւնը աւետող փողահարող հրեշտակների առկայութիւնը, որի օրինակը հանդիպում է Մոմիկի 1302 թ. Նորավանքում ընդօրինակած Աւետարանում։ Նման ընդօրինակութիւնը պատկերուած է նաև Հերմոնի այդ երկու Աւետարաններում, որոշ տարբերակով։ 9552 ձեռագրի Յարութեան պատկերում բացակայում են գերեզմանը հսկող զինուորները և գերեզման այցելող իւղաբեր կանայք։ Սակայն, յօրինուածքի վերին մասում պատկերուած է Քրիստոսի և Մարիամ Մագդաղենացու հանդիպման պահը։ Յովհաննէս աւետարանչի մօտ ասւում է, որ Մարիամը տեսաւ յարութիւն առած Քրիստոսին, որն ասաց. «Մի դիպչիր ինձ, որովհետեւ չեմ վեր

ելեալ առ Հայրն իմ» (Յովհ. գլ. Ի, 1–17)։ Նկարիչը Քրիստոսին պատկերել է պարտէզում, բոլորովին պատանի, սպիտակ զգեստով, որը խորհրդանշում է նրա համբարձումը, իսկ նրանց միջեւ ընկած տարածութեան վրայ պատկերուած նուռն ծառը խորհրդանշում է առաքեալներին և համապատասխանում է Մարիամին յղուած նրա խօսքին. «Բայց դու գնա իմ եղբայրների մօտ և նրանց ասա. ես վեր եմ ելնում իմ Հօր մօտ և ձեր Աստուծոյ մօտ»։



Ուշագրաւ են 9552 ձեռագրի անուանաթերթերի ձեւաւորումները, որոնք տարբերւում են 6305 Աւետարանի հարուստ բուսական զարդամօտիւներից։ Այստեղ, հիմնականում զարդը միահիւսուած է խորհրդանշական պատկերներով։ Օրինակ, Մատթէոսի աւետարանի անուանաթերթի կիսախորանի կենտրոնում Աստուածամայրն է մանկան հետ։ Մարկոս աւետարանչի «Ս» առիւծագիր սկզբնատառից բացի, անուանաթերթում պատկերուած են Քրիստոսի զօրեղութիւնը խորհրդանշող առիւծները (նկ. 4)։

Ղուկասի մօտ՝ խաչի աջ և ձախ կողմերում եզներ են, որոնք խորհրդանշում են Քրիստոսի պատարագը։ Յովհաննէսի մօտ՝ Քրիստոսի պատկերը պահել են զոյգ արծիւներ, որպէս Քրիստոսի անմահութեան խորհուրդ, որն ըստ Աւգուստինոսի մեկնութեան «արծուի նման սաւառնում է մարդկային անզօրութիւնը հաւաստող ամպերի վրայ»[16]։

Աւետարաններում լինում են նկարներ, որոնց բովանդակութիւնը վերցուած է Հին կտակարանից, նպատակ ունենալով պահպանել Հին և Նոր կտակարանների կապը նաև պատկերների միջոցով։ Այդ կապի ստեղծման համար նկարիչները նախընտրել են պատկերագրական դրուագներ «Ծննդոց Գրքի» արարչագործութիւնից՝ Ադամի և Եւայի մեղագործութիւնն ու դրախտից արտաքսումը, իսկ Վասպուրականի աւետարաններում, դրա հետ մէկտեղ լայն տարածում են գտել Աբրահամի զոհաբերման պատկերը, կապուած Քրիստոսի խաչելութեան հետ, մարդկութիւնը մեղքերից փրկելու համար։

Գրիգոր Ծաղկողի թիւ 6305 Աւետարանի Հին կտակարանին վերաբերող նկարները անաւարտ են և չեն ընդօրինակել թիւ 9552 ձեռագրում։

թիւ 6305-ում նկարիչը չորս ամբողջական էջեր նուիրել է Ադամին և Եւային.

ա. Աստուած Ադամի կողից ստեղծեց Եւային – Սա արարչագործութեանը վերաբերող ընդունուած պատկերագրութիւն է,

բ. Ադամն ու Եւան դրախտում – Նկարիչը Ադամին ու Եւային պատկերել է պալատական համազգեստով ու թագով, իսկ նրանց մէջտեղում կենաց ծառն է: Բացառիկ մի նկար, որը աստուածաշնչեան կանոնիկ պատկերաշարում չի հանդիպում: Ինչպէս երեւում է, նկարիչն ընտրել է Աստուածաշնչի այն աւանդումը, երբ Աստուած հաստատեց նրանց ամուսնութիւնը և Ադամն Աստծու կողմից հրաման ստացաւ իշխելու երկրի վրայ ստեղծուած բոլոր արարածներին, քանի որ նա ստեղծուել էր բնական իմացական և հոգեւոր դիրքերով օժտուած և Տէրը նրան փորձելու համար դրել էր Եդեմայ դրախտում իբրեւ թագաւոր[16]:

Առանձին էջով ներկայացուած է մեղսագործութեան պատկերը, այս անգամ միեւնոյն ծառի մօտ, Ադամն ու Եւան մերկացած: Ուշագրաւ է նաև դրախտից արտաքսման ինքնատիպ պատկերը:

Հայկական գրքարուեստում արարչագործութեան պատկերներն ունեն իրենց տարբերակները, որոնք մեծ մասամբ կրում են արեւմուտքի ազդեցութիւնը[17]:

Հերմոնի այս երկու ձեռագրում էլ կիրառուել են գրքի գեղարուեստական յարդարման միեւնոյն եղանակները՝ նկարները տեղափոխուած են բնագրի տարբեր էջերում: Բացի այդ, երկու ձեռագրում էլ խախտուած են նկարների հերթական կարգը: Թիւ 9552 Աւետարանի յետագայի յիշատակարանից (1652 թ.) տեղեկանում ենք, որ այն եղել է գերութեան մէջ. «... մանաւանդ և ես՝ Յովհաննէսըս ԳՌ դկ. (3000դեկա) տուի, զԱւետարանս թափեցի գերութենէ»[18]: Հաւանաբար դա է եղել պատճառը, որ գերութիւնից ազատուած, քայքայուած ձեռագիրը յետագայում վերակազմուելիս խախտուել է նկարների դասաւորութիւնը: Հնարաւոր է, որ 6305 ձեռագրի նկարները նոյնպէս տեղաշարժուել են միեւնոյն պատճառով:

Սակայն, բանն այն է, որ ինչպէս տեսանք, մանրանկարների համեմատութիւնը որքան էլ մօտեցնում է նրանց պատկերագրական, ոճական, կերպարների կառուցողական նմանութիւնը, այնուամենայնիւ դրանց յօրինուածքները երբեք նոյնութեամբ չեն կրկնւում, այլ՝ կարծես մէկը միւսին լրացնող միջոցներ են՝ նկարչի ստեղծագործական ներշնչանքի արտայայտման հնարանքների միջամտութիւններ: Միեւնոյն յօրինուածքի որոշ մանրամասի տարբերակումը, կարծում ենք, օրինաչափ երեւոյթ է իւրաքանչիւր ստեղծագործողի համար: Նմանութիւնը պէտք է փնտռել ոճական առանձնայատկութեան մէջ և այս է, որ ակնյայտ է այս երկու ձեռագրում:

Ինչ վերաբերում է Լ.Ա. Դուրնովոյի կողմից նկատուած 6305 ձեռագրի նկարների ոճական ընդհանրութեանը Գրիգոր Տաթեւացու

նկարազարդած 7482 Աւետարանի նկարների հետ՝ թուում է, որ այդ երկու ձեռագրերում առկայ են յօրինուածքային, ոճական ու գունային լուծման ակնյայտ տարբերութիւններ։ Բայց, քանի որ Հերմոնում նկարազարդուած 9552 Աւետարանը յայտնի չի եղել և ընդհանրապէս գրչութեան այդ կենտրոնից գեղարուեստական հարուստ ձեւաւորում ունեցող որեւէ մատեան ուշադրութեան չի արժանացել, այդ իսկ պատճառով Լ. Ա Դուրնովոն 6305 ձեռագրի նկարազարդման մօտաւոր աղերսները տեսնելով Գրիգոր Տաթեւացու մօտ, ձեռագիրը վերագրել է Տաթեւի դպրոցին։

15-րդ դարի երկրորդ կէսում Հերմոնի վանքի աչքի ընկնող ծաղկողներից էր Եսայի Նաղաշը։ Նա իր կրթութիւնն ստացել էր տեղում, աշակերտելով Սարգիս րաբունապետին։ Նրա անունն առաջին անգամ յիշատակել է Գարեգին Յովսէփեանը[19]։ 1456 թ. նկարչին տեսնում ենք Վերին Նորավանքում, որտեղ նկարազարդել է Մատթէոս գրչի ընդօրինակած «Տօնականը»։ Գրիչը Եսայուն անուանում է. «Բանիբուն փիլիսոփայ և անհաս նկարող, որ երփն-երփն գունով ծաղկափթիթ զարդարեաց ըզհրաշափառ մեծաշուք Սուրբ Տօնականս»[20]։ Եսային 1473 թուականին նորից Հերմոնում էր։ Նրա նկարազարդումներում զգալի նմանութիւն է նկատւում Գլաձորի մանրանկարչութեան հետ։ Առանձին համլք ունեն կիսախորաններն իրենց վարդեակներով ու բուսական զարդերով (նկ. 5)։ Աւետարանիչներին պատկերելիս նկարիչը ցուցաբերել է ինքնատիպ մօտեցում։ Առանձնապէս աչքի են ընկնում նկարների գունային յագեցուածութիւնն ու նրանց տոնային լուծումը։

Հերմոնում ընդօրինակուած գրչագրերի մեծ մասը (ժողովածուներ, մեկնութիւններ) ունեն սակաւ նկարազարդում։

Հերմոնի վանքի գրչատանն ստեղծուած ձեռագրերի մինչեւ օրս անյայտ նկարիչների և նրանց գործերի յայտնաբերումն ու ուսումնասիրումը մեզ բերում է այն համոզման, որ այդ դպրոցը հանդիսացել է հայ մանրանկարչութեան արժէքաւոր օջախներից մէկը։ Այստեղ չարունակուելով գլաձորեան արուեստի որոշ աւանդութիւններ, միաժամանակ ստեղծուել են ինքնատիպ գործեր։ Ուստի, Հերմոնի մանրանկարիչները մեծ ներդրում ունեն Սիւնիքի մանրանկարչական արուեստի զարգացման գործում։

Մի երկու խօսք Օրբելեանների նստավայր Եղեգիսի չնորհալի նկարիչների մասին։

Եղեգիսում նկարազարդուած և մեզ հասած ամենավաղ ձեռագիրը դա Թանատեցի գրիչ և ծաղկող Յովհաննէսի 1297 թ. Աւետարանն է[21]։ Այստեղ մանրանկարչութիւնը ծաղկում է ապրել 14-րդ դարի առաջին կէսերին։

Յայտնի է Եղեգիսի անուանի նկարիչ Սարգսի անունը, որը այստեղ էր եկել Գլաձորից։ Մատենադարանում է Սարգսի ընդօրինակած 1306 թուականի Աւետարանը, որտեղ նկարիչը ցուցաբերել է հասուն վարպետութիւն (ձեռ. 10525)։ Մանրանկարների ուսումնասիրութիւնը կատարել



Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ (Մատենադարան, ձեռ. 10525)

է Սիրարփի Տէր-Ներսէսեանը, երբ ձեռագիրը Ամերիկայում էր[22]: Մատենադարան է բերուել 1972 թ. երջանկայիշատակ Բ. Ջուղասզեանի ջանքերով[23]: Դժբախտաբար ձեռագիրը մեզ է հասել խիստ անկանոն վիճակում. վեց տէրունական նկարներից ամբողջական են մնացել միայն երեքը՝ «Յարութիւն Քրիստոսի», «Յարութիւն Ղազարոսի», «Դժոխքի աւերումը»: Մնացած նկարներից պահպանուած մասունքները փակցուած են իրար վրայ: Ամբողջական են նաև երեք խորանները: Այս մատեանը Մատենադարանում հարստացել է ժամանակին նրանից անջատուած նոր մասունքներով, որոնք լրացուցիչ արժէքաւոր տուեալներ են հաղորդում ծաղկողի արուեստի մասին: Ձեռագրում չափազանց կարեւոր են նաև նկարների խորհրդարանական գունաբաժանումները: Ելնելով ձեռագրի արուեստի կատարելութիւնից, պէտք է ենթադրել, որ դա նկարչի առաջին և միակ աշխատանքը չէր կարող լինել: Եւ իսկապէս, պարզուեց, որ Լոս-Անջելեսի համալսարանում պահուող ձեռագրերից մէկը դա Գլաձորում ընդօրինակուած 14-րդ դարի Աւետարան է, որը ուսումնասիրութեան էր արժանացել Կալիֆորնիայի հայագիտական ամբիոնի վարիչ Աւետիս Սանջեանի և Նիւ Եորքի գեղարուեստի ինստիտուտի ճանաչուած արուեստագէտ դոկ. Թովմաս Մեթիւսի կողմից[24]: Յայտնի է դարձել, որ ձեռագիրը նկարազարդել են մի խումբ նկարիչներ, որոնց թւում էր նաև Թորոս Տարոնացին, իսկ գլխաւոր նկարիչը, ինչպէս նկատել է Ս. Տէր-Ներսէսեանը, եղել է յիշեալ Սարգիսը[25]:

Եղեգիսի չնորհալի նկարիչներից մէկն էլ Բարդողիմէն է (Բարդաղիմէ), որի անունը յայտնաբերուեց իր ընդօրինակած ձեռագրերի խորանազարդերում: Նա համարուել է «Ոսկեգիր գրչապետ»: Կրթութիւնն ստացել է Խաչատուր Կեչառեցու մօտ: Բարդողիմէի 1314-1315թթ. ընդօրինակած Աւետարանի հովանաւորներն են եղել Սիւնեաց իշխաններ Բուրթել և Բուղդա եղբայրները[26]: Աւետարանի գեղարուեստական յար-

դարանքն սկսւում է խորաններով։ Ոճական արումով սրանք աւելի հարազատ են քանդակագործական արուեստին, ունեն զուսպ գունաչար, որտեղ գերիշխում է որդան կարմիրը, համադրուած կապոյտի հետ։ Աւելի տպաւորիչ են խորանների թէ՛ քառանկիւնների և թէ՛ դրանց լուսանցազարդերի կենդանակերպերը՝ հիւսուած բուսական զարդերի հետ, որոնք պատկերաւոր խորհրդանշաններ են։ Լուսանցքներից մէկում պատկերուած է պտղաբերութեան հովանաւոր վիշապապոչ թռչնագլուխ կենդանի, որի ոճաւորուած թեւի վրայ վեր է խոյացել բուսական զարդը։

Համաբարբառի խորաններից յետոյ տեղադրուած է հիւսածոյ խաչ, որի հիմքում ընկած հիւսուածքազարդ վարդեակ (նկ. 7), խաչի անկիւններում գրուած է. ՏՐ ԱՇ ՅՍ ՔՍ։

Խաչի երկու կողմերում կիսալուսնաձեւ բուսական զարդի վրայ կանգնած թռչունները խորհրդանշում են եկեղեցու անմահութեան գաղափարը։ Հիմքի վարդեակի երկու կողմերում Բարդողիմէի գրած երկաթագիր չափածոյ տողերն են, որոնք վերաբերում են Քրիստոսի խաչելութեանն ու յարութեանը։ Խաչի նման իմաստաւորուած ձեւաւորումը տարածում է գտել Սիւնիքի 11–14-րդ դարերի խաչքարային արուեստում (Ցաղաց քար, Հերհեր, Աղաւնաձոր, Նորավանք, Քարագլուխ), որպէս Քրիստոսի խաչելութեան և փրկագործութեան խորհրդանիշ։ Հարուստ են նաև անուանաթերթերի ձեւաւորումները։ Ղուկաս աւետարանիչի անուանաթերթի քառանկեան ներքեւի ժապաւէնի վրայ Բարդողիմէն թողել է իր մակագրութիւնը. «Բարդաղիմէ» (նկ. 8)։ Ձեռագրում պահպանուել են երեք աւետարանիչների պատկերները, որոնք աղերսւում են Մոմիկի 1292 թ. Աւետարանի կերպարների հետ, որտեղ պահպանուած են մոնումենտալութիւնը, գեղանկարչական միեւնոյն եղանակն ու գունային գամմայի լոկալիզմը, ընդհուպ մօտենալով մանրանկարչական արուեստին (նկ. 9)։ Այս ընդհանրութիւնը թերեւս բխում է երկու գրչատների՝ Նորավանքի և Եղեգիսի նկարիչների սերտ համագործակցութիւնից, որտեղ բացայայտօրէն զգացւում է մեծ ուսուցչի՝ Մոմիկի ազդեցութիւնը։

Բարդաղիմէից պահպանուել է մէկ այլ Աւետարան, դարձեալ իր ոճին բնորոշ յարդարանքով, սակայն ցաւօք մնացակեր է։ Խորանները երկուսի վրայ պահպանուել են նկարչի անուան հետքերը. «(Բ)արդաղ հանդերձ ծնողաւք, յիչ...»[27]։ Եւ աւետարանիչների որոշ մասը։ Այս նկարիչն իր արուեստով կարող է համարուել Սիւնիքի մանրանկարչական արուեստի երեւելի վարպետներից մէկը։

Մի երկու խօսք էլ Ամաղուի Նորավանքի և Վերին Նորավանքի մանրանկարիչների մասին։ Նորավանքի գրչատունը ծաղկում է ապրել 14-րդ դարում, Սիւնեաց հոգեւոր առաջնորդ Յովհաննէս Օրբելու ժամանակ և նրա անմիջական ղեկավարութեամբ։ Այստեղ ընդօրինակուել են բազմաթիւ ձեռագրեր։ Նշանաւոր մանրանկարիչ, ճարտարապետ ու քանդակագործ Մոմիկն իր գործունէութիւնը դրսեւորեց հիմնականում Նորավանքում։ Նրա մասին հրապարակուել են բազմաթիւ ուսումնասիրու-

թիւններ։ Այստեղ ձեռագիրը է ընդօրինակել նաև Մոմիկի գործընկեր Պօղոս Ակնեցին, որը Կիլիկիայում արդէն ճանաչուած նկարիչ էր և 1307 թուականին Յովհաննէս Օրբելու պատուէրով Նորավանքում գրչագրեց մի Աւետարան, որն այժմ գտնւում է Վենետիկի Մխիթարեանների Մատենադարանում։[28]

Գարեգին Յովսէփեանը Պօղոսին դասել է այն արուեստագէտների շարքին, որոնք Կիլիկիայից Գլաձոր էին եկել որպէս հասուն վարպետներ «սրանք իրենց հետ բերած արուեստն ու տեխնիկան պատուաստում էին Գլաձորի դպրոցին»[29]։ Պօղոսի մանրանկարչական արուեստին անդրադարձել է նաև Արամ Աւետիսեանը[30]։ Պօղոս Ակնեցու ձեռագրերից Գ. Յովսէփեանին և Ա. Աւետիսեանին յայտնի են եղել երկուսը, ընդօրինակուած Գլաձորում։ Մինչդեռ յայտնի դարձաւ, եւս 12 ձեռագիր, որոնցից 7-ը ընդօրինակուել են Կիլիկիայում (1267-1284 թթ.), Ակներում, Սիոնկլայում, Արքակաղնում, Հոհանց անապատում։ Իսկ 7-ը՝ Սիւնիքի տարբեր գրչատներում՝ Գլաձորում, Հերմոնում, Ամաղուի և Արատեսի վանքերում։ Մատենադարանի ձեռագրերի շարքում մեզ յայտնի դարձաւ Պօղոսի 1280 թ. Արքակաղնում գրչագրած Աւետարանը, որի պատուիրատուն է Ակնեցի Դաւիթ եպիսկոպոսը[31]։

Նորավանքում ընդօրինակուած շատ ձեռագրեր այժմ պահւում են տարբեր մատենադարաններում՝ Վրաստանում, Նոր-Ջուղայում, Բրիտանական թանգարանում, նաև մեր Մատենադարանում։

Սիւնիքում ունեցել ենք նաև Նորոյ վանք, կամ՝ Վերին Նորավանք։ Քանի որ Ամաղուի Նորավանքը և Վերին Նորավանքը սերտօրէն կապուած են եղել և միեւնոյն առաջնորդանիստն են ունեցել, բնականաբար միեւնոյն ծաղկողները հանդիպում են երկու վանքերում էլ։ Գրիչ և ծաղկող Պօղոս Ակնեցուն տեսնում ենք նախ՝ Գլաձորում, Մոմիկի հետ, ապա՝ գործակցել են Ամաղուի Նորավանքում, իսկ 1310 թ. նա ձեռագիր է ընդօրինակել Արատեսում[32]։ Մեծ է նկարիչ Պօղոս Ակնեցու արուեստի դերը որպէս Կիլիկիայի և Սիւնիքի մանրանկարչութեան կապող օղակ։

Այսպէս, չնորհիւ այն հանգամանքի, որ Սիւնիքի գրչատները լայն հնարաւորութիւն են ունեցել շփուելու թէ՛ դրսի և թէ՛ բուն Հայաստանի գրչատների հետ և իրենց գրչատներում ունենալով հարուստ ձեռագրական հաւաքածու, այստեղ ստեղծուել է գրքի գեղարուեստական ձեւաւորման աւանդոյթները պահպանող բազմաբովանդակ ու բազմաոճ տեսականի, որտեղ նկարիչներից իւրաքանչիւրը ցուցաբերել է իր որոշակի մօտեցումը։ Հենց սա էլ հարստացրել է Սիւնիքի մանրանկարչութիւնը, արժէքաւոր ներդրում կատարելով հայ մանրանկարչութեան արուեստում։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Խաչիկեան Լ., «ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Երեւան 1950, էջ 303: Տես նաեւ՝ Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 125:
2. Աւետիսյան Ա., «Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը», Երեւան, 1971, էջ 83:
3. Տէր-Աւետիսեան, «Յուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի», Ամենափրկիչ վանքի, Վիեննա, 1970, ձեռ... թիւ 48:
4. Տէր-Աւետիսեան Ս. նոյն տեղում, էջ 224բ:
5. Դուրնովոյ Լ. Ա., «Հայկական մանրանկրչութիւն», ալբոմ, Երեւան, 1967, էջ 202-203, նկ. 62, 63:
6. Սիրզոյան Ա., «Գրիգոր Տաթեւացի եւ Անանուն Սիւնեցի», ալբոմ, Երեւան, 1987:
7. Ձեռ... 6305, թ. 126բ:
8. Մատենադարան, ձեռ. 1141:
9. «ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատարաններ», էջ 303:
10. Աղայան Է., «Արդի հայերէն բացատրական բառարան», Երեւան, 1976:
11. Մատենադարան, ձեռ. 9552:
12. Մատենադարան, ձեռ. 1128, էջ 192բ:
13. Ղարիբյան Խ., «Գլաձոր», Երեւան, 1983, էջ 54, 59:
14. «ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», էջ 608:
15. Մատենադարան, ձեռ. 2743:
16. Ա. Սիրզոյանի նշուած ալբոնում այս նկարը ներկայացուած է իբրեւ Բիւզանդական Կոստանդին կայսրն իր մայր Հեղինէի հետ:
17. Գեւորգյան Ա., «Արարչագործության պատկերի տարբերակները եւ սկզբնաղբյուրները հայկական մանրանկարներում», Երեւան, ԳԱԱ «Լրաբեր», 1982, հ. 4:
18. Հակոբյան Վ., «Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», Երեւան, 1984, հ. Գ, էջ 508:
19. Յովսէփեան Գ., «Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ», Անթիլիաս, 1970, էջ 277-ի ծանօթագրութիւն:
20. Մատենադարան, ձեռ... 993, թ. 768բ:
21. Գեւորգյան Ա., «Հայ մանրանկարիչներ», Մատենագիտութիւն 9-19-րդ դդ., Կահիրէ, 1998, նկարիչ 300, ձեռ. 7482:
22. Der-Nersessian S., Evangelie du Madenadaran N 10525 de l'an 1306 contribution à l'Etude de la miniature en Siwnik an XIVe siècle, Revue des études Arméniennes, Paris, 1982, p. 327,
23. Չուգասզեան Բ., «Հայերէն ձեռագրեր Ամերիկայի Միացեալ Նահանգներում», Բանբեր Մատենադարանի, հ. 12, երեւան, 1977, էջ 223:
24. Sanjian A., Mathevos T., The Gladdzor Cospal Book of the Karlu Fourtkuth at UCLA, Հայ արուեստին նուիրուած երկրորդ միջազգային սիմպոզիում, հ. 4 1991, էջ 24, 33:
25. Der-Neersessian S,. նշուած աշխատութիւնը, էջ 313:
26. Մատենադարան, ձեռ. 9721:
27. Մատենադարան, ձեռ. 4096:
28. Վենետիկ, Ս. Ղազարի մատենադարան, ձեռ. 1917:
29. Յովսէփեան Գ., նշուած աշխատութիւնը, էջ 270:
30. Աւետիսյան Ա., նշուած աշխատութիւնը, էջ 80:
31. Մատենադարան, ձեռ. 4446:
32. Մատենադարան, ձեռ. 4096:

ՔՆԱՐԻԿ ԱՒԵՏԻՍԵԱՆ
Հայաստանի ազգային պատկերասրահի
աւագ գիտաշխատող

ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՊԱՏԿԵՐԱՔԱՆԴԱԿՆԵՐԸ ԱՐԵՆԻՈՒՄ ԵՒ ՆՈՐԱՎԱՆՔՈՒՄ

Աստուածամօր կերպարը որպէս բարութեան, վսեմի ու կատարեալի խորհրդանիշ ապրում է իւրաքանչիւր հաւատացեալի հոգում: Եւ դարեր շարունակ առ Բարձրեալն ուղղուած աղօթքներում յաճախ ենք մրմնջում նրա սուրբ անունը՝ խնդրելով միջնորդ լինել մեր և Աստծոյ միջեւ, ամոքել վշտերը, օգնել գտնելու հոգու խաղաղութիւն: Աստուածամօր առաջին կերպարները և նրա անունը կրող առաջին եկեղեցիները յայտնի են քրիստոնէական մշակոյթի ձեւաւորման շրջանից: Աւանդոյթի համաձայն, ինչպէս հաւաստում են գրաւոր աղբիւրները, Աստուածամօր առաջին դիմապատկերը նոճենու փայտի վրայ նկարել է Յովհաննէս Աւետարանիչը, որը սուրբ Կոյսի ննջումից յետոյ ցաւերը բժշկելու յատկութիւն է ստացել: Այս հրաշագործ նկարի հետ կապուած յետագայ պատմութիւնները առնչւում են Հայաստանի հետ, որի մասին մանրամասն շարադրուած է պատմահայր Մովսէս Խորենացու անունով մեզ հասած «Թուղթ առ Սահակ Մամիկոնեան» գրուածքում[1]: Բարդուղիմէոս առաքեալը 60-68-ական թուականներին Հայաստանում քարոզչութեան ժամանակ իր հետ բերում է նաև նուէր ստացած Աստուածամօր վերոյիշեալ պատկերը: Նա, Վանայ լճից հարաւ-արեւմուտք ընկած մի վայրում, հիմնադրում է Սբ. Աստուածածին եկեղեցին և Հոգեաց վանքը, ուր և պահ է տալիս այդ սուրբ մասունքը՝ Աստուածամօր պատկերը: Հայ մատենագրութեան և ժողովրդական բանահիւսութեան մէջ Աստուածամօր պատկերի մասին յիշատակութիւնները հասնում են մինչեւ 19-րդ դար[2]:

Հայ միջնադարեան արուեստում, և ընդհանրապէս համաքրիստոնէական մշակոյթի մէջ Քրիստոսից յետոյ տարածուածը Աստուածամօր պատկերն է: Անշուշտ այս իրողութիւնն ունի իր պատմական ու դաւանաբանական հիմնաւորումը: Դեռեւս, 431 թ. Եփեսոսի երրորդ տիեզերաժողովում, որին մասնակցում էր նաեւ Հայոց Եկեղեցին, Կոյս Մարիամը ճանաչուեց որպէս Աստուածամայր, և հաստատուեց նրա պաշտամունքը: Բնականաբար դա իր ազդեցութիւնն ունեցաւ քրիստոնէական արուեստում որոշ թեմաների առաջացման և յետագայ զարգացման վրայ:

Աստուածամայրը խորհրդաբանօրէն եկեղեցու գաղափարի կրողն է, նա սուրբ է, Աստուածածին, տիրուհի (թագուհի), բարեխօս ու հովանաւոր: Նրա կերպարի բնորոշ գծերը կապւում են բարու, առաքինութեան, գթասրտութեան, մեղքի ու ապաշխարանքի, մահուան ու հոգու փըր-



Արեւիի եկեղեցու քանդակը

կութեան մասին քրիստոնէական ուսմունքի հիմնադրոյթներին, որոնք ծնունդ են տուել համաշխարհային արուեստի հրաշագեղ ստեղծագործութիւնների և այսօր էլ չարունակում են մնալ որպէս անսպառ ներշնչումի ու նոր արարումների ակունք։

Հայաստանում Աստուածամօր պատկերի առաջին օրինակները պահպանուել են վաղ միջնադարեան քանդակագործութեան նմուշներում։ Յայտնի են Թալինի, Օձունի, Հառիճի, Բերդաձորի, Խարաբավանքի, Կողբի քանդակազարդ կոթողների (4–7–րդ դդ.), ինչպէս նաև Օձունի (6–րդ դ.), Պեմզաշէնի (7–րդ դ.), եկեղեցիների Աստուածամօր բարձրաքանդակները։ Յիշեալ յուշարձանների վրայ Աստուածամայրը հիմնականում պատկերուում է դիմահայեաց դիրքով, կանգնած կամ գահաւորակին նըստած, մանուկ Յիսուսը ձախ թեւին։ Աստուածամօր պատկերագրական այս տիպը յայտնի է «օդիգիտրիա» անուանումով և բաւականին տարածուած է եղել վաղ շրջանի արեւելաքրիստոնէական արուեստում։ Արուեստագիտութեան մէջ ընդունուած է այն տեսակէտը, որ օդիգիտրիայի պատկերագրական տիպի ձեւաւորման օրրաններից մէկը Հայաստանն է։ Այս տեսակէտի հեղինակաւոր աղբիւրներից մէկն է «Քրիստոնէական պատկերագրութեան ընդհանուր հանրագիտարանը»[3]։

Վաղմիջնադարեան հայ արուեստում «Աստուածամայրը մանկան հետ» յօրինուածքը յայտնի է օդիգիտրիայի պատկերագրական տիպի տարբերակներով։ Տարածուած է յատկապէս Աստուածամայրը մանկան հետ երկֆիգուր յօրինուածքը, ուր կանգնած կամ գահաւորակին նստած Աստուածամօր ձախ կողմում՝ երբեմն սուրբ դրքով կամ մագաղաթա-



Նորավանքի եկեղեցու բարաւորի քանդակը

գալարով մանուկ Յիսուսն է։ Հանդիպում է նաև գահակալ Աստուածամօր երկու կողքերին հրեշտակներով բազմաֆիգուր տարբերակը։ Միջնադարեան հայ արուեստի յետագայ շրջանում նոյնպէս «Աստուածամայրը մանկան հետ» պատկերը ամենատարածուած թեմաներից է, որոնց հետաքրքիր օրինակները տեսնում ենք մանրանկարչութեան, քանդակագործութեան, աւելի ուշ նաև, այսպէս կոչուած, եկեղեցական գեղանկարչութեան մէջ։

Անդրադառնանք 13–14–րդ դդ. հայկական ճարտարապետութեան նշանակալից յուշարձաններից երկուսի՝ Արենիի Սբ. Աստուածածին եկեղեցու և Նորավանքի Աստուածամօր պատկերաքանդակներին։ Ինչպէս յայտնի է, հայկական եկեղեցիների արտաքին յարդարանքում, հիմնականում, նախապատուութիւնը տրւում է զարդային նախշերին, իսկ տէրունական թեմաները քիչ են հանդիպում։ Սակայն, եղած սակաւաթիւ թեմատիկ պատկերների շարքում առանձնանում են Աստուածամօր պատկերաքանդակները։ Որոշ յուշարձանների վրայ դրանք միակ ֆիգուրատիվ յօրինուածքներն են։ Ինչպէս նկատել է Ստեփան Մնացականեանը՝ «Աստուածամոր պատկերումը մուտքերի ճակատակալ քարերի վրա հատուկ տարածում է ստանում 13–14–րդ դարերում, մասնավորապես, Վայոց Ձորում»[4]։ Այս երեւոյթը որպէս Վայոց Ձորի արուեստի առանձնայատկութիւններից մէկը, յատուկ է նաև տեղի մանրանկարչական դպրոցին։ Հարկ է յիշատակել չնորհալի մանրանկարիչ Թորոս Տարոնացու (14–րդ դ. առաջին կէս) ստեղծած Աստուածամօր ինքնատիպ պատկերները, որոնք

տեղ են գտել անգամ անուանաթերթի յարդարանքում։

Աստուածամօր պատկերաքանդակները զարդարում են Արենիի և Սպիտակաւորի, Օրբելեան իշխանական տան հոգեւոր և մշակութային կեդրոն Նորավանքի եկեղեցիները։

Արենիի Սբ. Աստուածածին եկեղեցու և Նորավանքի Սբ. Ստեփանոսի գաւթի Աստուածամօր պատկերաքանդակների հեղինակն է միջնադարի նշանաւոր վարպետ Մոմիկը։ Նրա բազմաբեղուն գործունէութիւնը հայ արուեստի գանձարանը հարստացրեց այնպիսի մնայուն արժէքներով, որոնք ժամանակին դպրոցի դեր ու նշանակութիւն են ունեցել Վայոց Ձորի մշակութային կեանքում, իսկ այսօր զարմանք ու հիացմունք են պատճառում ստեղծագործական յղացման կատարելութեամբ և գեղարուեստական արտայայտչականութեամբ։ Բացի վերոյիշեալից, վարպետի գործերից յիշատակելի են Ստեփանոս Օրբելեանի Աւետարանի անգուգական մանրանկարները (Մատենադարան, ձեռ. թիւ 6792), ճարտարապետական համարձակ լուծումներով և ինքնատիպ պատկերաքանդակներով Արենիի եկեղեցին ու Նորավանքը, հայկական խաչքարային արուեստի գոհարներ հանդիսացող Ստեփանոս Օրբելեանի և Թամթա իշխանուհու խաչքարերը։

Վարպետի կենսագրութիւնից շատ քիչ բան է յայտնի։ Որոշ կցկտուր տեղեկութիւններ են պահպանուել նրա նկարազարդած ձեռագրերի յիշատակարաններում և ժամանակի վիմական արձանագրութիւնների մէջ։ Անյայտ է Մոմիկի ծննդեան տեղն ու ժամանակը։ Մահացել է Նորավանքում, ուր ամփոփուել է աճիւնը և խաչքար կանգնեցուել՝ «ՅԻՇԵԱ ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ ՁՄՈՄԿԱ ՀՈԳԻՆ ԵՒ ՈՂՈՐՄԵԱ» արձանագրութեամբ[5]։ Ցայտնի է նաև, որ գործունէութեան առաջին շրջանում եղել է մանրանկարիչ։ Անուան առաջին յիշատակութիւնը հանդիպում է Վիեննայի Մխիթարեան միաբանութիւնում պահուող 1233–34 թթ. «Հաւաքածոյ ժողովածուում. «ՁՄՈՄԻԿ ՆԿԱՐԻՉ ԽՈՐԱՆԻՍ ՅԻՇԵՑԷՔ ԱՂԱՉԵՄ»[6]։ Մոմիկից պահպանուել է երեք վաւերական և մէկ անստորագիր ձեռագիր մատեան։ Նա եղել է Գլաձորի մանրանկարչական դպրոցի վարպետներից մէկը, «թերեւս ղեկավարել է գրչատունը», — ինչպէս եզրակացնում է Արամ Աւետիսեանը[7]։ Մոմիկը մանրանկարչութեամբ զբաղուել է մինչեւ 1307 թուականը։ Աչքի հիւանդութեան պատճառով անաւարտ է մնացել այդ թուականին սկսած Աւետարանի նկարազարդումը։ Բազմաշնորհ արուեստագէտը յետագայում հանդէս է գալիս որպէս ճարտարապետ և քանդակագործ՝ չարունակելով ստեղծագործել Օրբելեան իշխանների պատուէրով ու հովանաւորութեան ներքոյ։

Մոնղոլ խաների հետ վարած ճկուն քաղաքականութեան շնորհիւ Օրբելեանները կարողացան 13–14–րդ դդ. Սիւնիքում հաստատել իրենց իշխանութիւնը, պահպանել տիրոյթների յարաբերական անկախութիւնն ու խաղաղ պայմաններ ստեղծեցին տնտեսական կեանքի և մշակոյթի զարգացման համար։ Այդ ժամանակաշրջանում Մոմիկը որպէս Օրբելեան

իշխանական տան գլխաւոր ճարտարապետը, նրանց՝ Սիւնիքի, Վայոց Ձորի կալուածքներում իրականացրել է իր մի շարք յղացումները։

Առաւել մանրակրկիտ և ամբողջական ուսումնասիրութեան է արժանացել մանրանկարիչ և ճարտարապետ Մոմիկի գործունէութիւնը[8]։ Վարպետի կերտած քանդակներին, յատկապէս՝ Աստուածամօր պատկերաքանդակներին, արուեստաբանները անդրադարձել են հպանցիկ կերպով, որպէս ճարտարապետական կառոյցի զեղարուեստական ամբողջականութեան մի մասի։ Սակայն Աստուածամօր պատկերաքանդակները եկեղեցիների յարդարանք լինելով հանդերձ, իրենց պատկերագրութեամբ և ստեղծագործական յղացումով ինքնուրոյն գեղարուեստական արժէք ունեն, որը պայմանաւորուած է ժամանակի ճեւամտածողութեան, գեղարուեստական դպրոցի և Մոմիկի արուեստի առանձնայատկութիւններով։

Առաջինը քննենք Արենիի Աստուածամօր պատկերաքանդակը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ եկեղեցին Մոմիկի վաւերական կառոյցներից է։ Եկեղեցու շինարարական արձանագրութեան մէջ յիշատակւում է նաև այն կառուցող վարպետի անունը՝ «ԹՎ։ ՉՀ։ (1321) ՇԱՐԺ ԵՂԵՒ ՄՈՄԻԿ ՎԱՐԴՊ[ԵՏ]»[9] Եկեղեցու արտաքին և ներքին յարդարանքում ներդաշնակ ամբողջութիւն են կազմում ճարտարապետական ինքնատիպ լուծումներն ու քանդակային ճեւաւորումները։ Ներսում չորս առագաստների վրայ պատկերուած են աւետարանիչների խորհրդանշանները՝ հրեշտակի (մարդ), թեւաւոր ցուլի, արծուի և թեւաւոր առիւծի բարձրաքանդակները, իսկ արտաքին յարդարանքում քանդակային ճեւաւորում ունի միայն գլխաւոր՝ արեւմտեան չքամուտքը, որը զարդարուած է «Աստուածամայրը մանկան հետ» հարթաքանդակով։

Կեդրոնում՝ սլաքաձեւ, կամարակապ, միակտուր քարի ծաղկահիւս խորքին, գահին փոխարինող գորգի վրայ նստած է Աստուածամայրը՝ ձախ ծնկին՝ մանուկ Յիսուսը։ Աստուածամօր մարմնից որոշ չափով հեռու և որոշակի չարժման մէջ գտնուող մանկան աջը օրհնելու դիրքում է, ձախ ձեռքին ունի մագաղաթի փաթոյթ։ Այս յօրինուածքի մի տարբերակը, որն աւելի հարուստ է ներքին բովանդակութեամբ և գեղարուեստական արտայայտչամիջոցներով, զարդարում է Նորավանքի Սբ.Ստեփանոս եկեղեցու գաւիթը։ Երկրաշարժից վնասուած գաւթի վերականգնման ժամանակ են ստեղծուել Աստուածամօր և պատուհանի ճակատակալ քարի՝ ինքնատիպ պատկերագրութեամբ նշանաւոր Հայր Աստծոյ պատկերաքանդակները։ Այստեղ կամարաղեղի չթաքարային մոտիվով լայն զարդագօտու ներսում ամփոփուած յօրինուածքի խորքի վրայ պատկերուած Աստուածամօր կողքին աւելացել են մարդկային կերպարներ՝ աւելի փոքր չափերով, մինչեւ գօտկատեղ, դիրքով և մարմնի չարժումով դէպի կեդրոն դարձած։

Մոմիկի կերտած Աստուածամօր այս պատկերաքանդակը որոշ աղերսներ ունի «Աստուածամայրը մանկան հետ» յօրինուածքի բազմակերպար տարբերակի հետ, այն էական տարբերութեամբ, որ գահակալ Աստուա-

ծամօր կողքերին պատկերուող հովանաւոր հրեշտակների (Թալինի կոթողի պատուանդանի քանդակը) կամ էլ Գաբրիել և Միքայէլ հրեշտակապետերի (Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու բարձրաքանդակը) փոխարէն Նորավանքում պատկերուած են սրբեր: Աստուածամօր աջ կողմում գտնուող կերպարի ձեռքի ժապաւէնի արձանագրութիւնը աւարտում է «Եսայի» բառով: Եթէ նկատի ունենանք այն, որ միջնադարեան արուեստում ընդունուած է պատկերուողի անունը գրել նրա գլխավերեւում կամ մակագրութեան վերջում, ապա կարող ենք վստահօրէն ասել, որ տարեց մարդու պատկերով և լուսապսակով սուրբը Եսայի մարգարէն է, մանաւանդ, որ ձեռքի ժապաւէնին Քրիստոսի ծնունդը նախանշող նրա գուշակութեան բառերն են փորագրուած: Այս և պատկերաքանդակի միւս արձանագրութիւններին կ'անդրադառնանք յետոյ:

Նորավանքում Աստուածամօր ձախ կողմում պատկերուած անձի ով լինելը որոշելու համար զուգահեռներ անցկացնենք նմանօրինակ յօրինուածքների միջեւ: Միջնադարեան հայ արուեստի եզակի յուշարձանի՝ Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու (10-րդ դ.) արեւելեան ճակատին Ադամի հարթաքանդակի ներքեւում պատկերուած են Յովհաննէս Մկրտիչ և Եղիա մարգարէները՝ «ղէմ ղիմաց կանգնած, վկայող մարդու յատկանշական դիրքով», – ինչպէս նկատում է Սիրարփի Տէր-Ներսէսեանը[10]: Չի բացառւում, որ մեր պատկերաքանդակի վրայ պատկերուածը նոյնպէս Յովհաննէս Մկրտիչն է: Այս եզրակացութեան օգտին է հաւաստում սրբի ղէմքի բարձրութեան վրայ, ղէպի Աստուածամայրը ուղղուած արձանագրութեան առաջին բառը՝ «ՁԱ[ՅՆ]», որը մարգարէի յայտնի խօսքի սկիզբն է: Մարգարէների պատկերումով յօրինուածքի բովանդակութիւնը այլ մեկնաբանութիւն է ստանում, և ասես, «ապահովում է» պատուհանի ճակատակալ քարին վեր խոյացող Հայր Աստծոյ պատկերաքանդակի հետ ունեցած իմաստային ներքին կապը:

Մոմիկի կերտած «Աստուածամայրը մանկան հետ» յօրինուածքներն իրենցից ներկայացնում են վաղմիջնադարեան հայ արուեստում լայն տարածում գտած դահակալ օդիգիտրիայի պատկերագրական տիպը: Աւանդական պատկերաքանդակների հետ համեմատելով Մոմիկի յօրինուածքները, առաջին հայեացքից ուշադրութիւն է գրաւում քանդակային մակերեսի մանրակրկիտ մշակում: Ամենայն խնամքով ու նրբութեամբ են կերտուած Աստուածամօր և մանկան կերպարները, յստակ գծագրուում են նրանց ղէմքերը, ոճաւորուած հագուստների սահուն ծալքերը, խորքի զարդանաչխը կազմող բոյսերի ու ծաղիկների իւրաքանչիւր տերեւն ու թերթիկը, խորքից երկրաչափական զարդաճեւերով առանձնացող գորգը: Այստեղ դրսեւորուում են ոչ միայն Մոմիկի աշխատաեղանակի և ոճի առանձնայատկութիւնները, այլ նաև ժամանակաշրջանի արուեստի ազգային ըմբռնումներում կատարուած տեղաշարժերը: Այսպէս՝ վաղ շրջանի պատկերներին բնորոշ քանդակային մակերեսի մշակման ընդհանրացուած ձեւը, տէրունական տեսարանների ընդգծուած կոթողային հնչե-

դուքիւնը, ինչպէս տեսնում ենք, տեղի են տալիս կերպաւորման նորանոր ձեւերի ու գեղարուեստական արտայայտչամիջոցների։ 12–13–րդ դդ. արուեստի գործերում արդէն տէրունական տեսարանները պահպանելով քրիստոնէական դաղափարախօսութեան խորհրդանշան–պատկերի կանոնակարգուած սխեման, ձեւակերտման տեսակէտից, աւելի յաճախ, պատմողական, նկարագրական բնոյթ ունեն։ Այս առանձնայատկութիւնները լաւագոյնս դրսեւորուած են Մոմիկի կերտած Աստուածամօր պատկերաքանդակներում։

Շնորհաչատ վարպետի անհատականութիւնն ակնառու է նաև քանդակների յօրինուածքային կառուցուածքում, ուր գահակալ օդիգիտրիայի պատկերագրական աւանդական սխեման որոշակի փոփոխութեան է ենթարկուել։ Վաղ շրջանի բազմաթիւ օրինակներից մեզ յայտնի Աստուածամօր պատկերաքանդակներում մօր և մանկան կերպարները, սովորաբար, միեւնոյն դիրքն ունեն՝ հիմնականում պատկերուում են դիմահայեաց։ Իսկ Մոմիկի քանդակներում նրանց կերպարները տարբեր դիրքերով են. Աստուածամայրը պատկերուած է դիմահայեաց, մանուկ Յիսուսը՝ երեք քառորդ շրջուած դէպի մայրը։ Աւելին, բաւականին ազատ ու անկաշկանդ են նրանց շարժումները։ Մանկան մի փոքր ետ գցուած գլխի, ձախ ուսի և արմուկի ներքեւ ուղղուած գիծը, երկար շապկի տակից ուրուագծուող ծնկների ու բոկոտն ոտքերի դիրքը այն տպաւորութիւնն են թողնում,ասես, մանուկը կարող է դուրս «պրծնել» մօր գրկից։ Այս տպաւորութիւնն աւելի է չեչտւում Աստուածամօր՝ իրարից նկատելի հեռու դրուած ոտքերի դիրքով։ Մանկան աչխոյժ շարժումը, և ընդհանուր տօնական հոգեվիճակը ամբողջանում է չքեղ խորքի ծաղկանկարով։

Անդրադառնանք մի առանձնայատկութեան եւս. Մոմիկի ուշադրութեան կեդրոնում են դէմքերը, որոնք պատկերուած են բաւականին ծաւալային և որոշակի արտայայտութեամբ։ Յաւօք սրտի, երկու յուշարձանների վրայ էլ մօր և մանկան դէմքերի ներքեւի մասը եղծուած է, որը խանգարում է դիմապատկերների ամբողջական ընկալմանը։ Սակայն ակնյայտ է, որ Մոմիկը ստեղծել է Աստուածամօր դիմապատկերի իր նախասիրած տարբերակը՝ ձուաձեւ դէմք, կամար յօնքերի տակ ընդգծուած խոշոր, լայն բացուած աչքերի հեռուն ուղղուած հայեացք, որը յոյս ու վստահութիւն է ներշնչում։ Գլխաչորի հաւասար ծալքերը ճակատի վրայ աւելի շատ զարդարանքի դեր են կատարում։ Աստուածամօր դէմքի մշակման այս ձեւը տեսնում ենք նաև Մոմիկի նկարազարդած ձեռագիր մատեաններում։ Նչենք 1302 թ. Ստեփանոս Օրբելեանի մանրանկարները։ Հարթային մշակումով մարմինների և աւելի նիւթական, արտայայտիչ դէմքերի պատկերումը՝ միջնադարեան արուեստի պատկերագրական կանոնի դրսեւորումներից մէկն է, որին քաջատեղեակ վարպետը այն համօրէն օգտագործել է քանդակներում։

Առանձնակի ուշադրութեան արժանի նորութիւն է պատկերաքանդակների ծաղրանկար խորքը, որի մէկ այլ օրինակ միջնադարեան հայ

քանդակագործութեան մէջ մեզ յայտնի չէ։ Այն կազմուած է շրջանաձեւ պատյտի մէջ գտնուող ոճաւորուած արմաւիկների և ծայրերը դուրս ոլորուած եռատերեւ բոյսերի մոտիվներից, և գորգի՝ աւելի պարզ, երկրաչափական զարդաձեւերից։ Այսպիսով Մոմիկը մշակել է հայկական մանրանկարչութեան մէջ լայն տարածում գտած արմաւիկների և եռատերեւ բոյսերից կազմուած զարդանախշի իր տարբերակը, որը տեսնում ենք նաև նրա ծաղկած ձեռագրերում։

Համեմատենք 1292 թ. Աւետարանի (Մատենադարան, ձեռ. թիւ 2848) Մատթէոսի Աւետարանի և Արենիի հարթաքանդակի զարդապատկերները։ Թէ՛ Աւետարանի ուղղանկիւն ճակատամասում, թէ քանդակի խորքի վրայ միեւնոյն զարդանախշն է, իսկ ձեռագրի խաչանիշ լուսանցազարդի և քանդակի ուղղահայեաց եզրերին նոյն ոճաւորումով տերեւազարդն է։ Նկատելի են վարպետի նախասիրութիւնները ու ձեռագրին բնորոշ գծերը, որոնք մշակուել են նրա մանրանկարներում և յետագայում չարունակուել միւս գործերում։

Ազգային աւանդական մշակոյթի և անհատական մօտեցման մի իւրօրինակ համադրում է Մոմիկի արուեստը։ Նորից գալիս ենք այս եզրակացութեանը՝ տեսնելով, թէ ինչպիսի հմտութեամբ է վարպետը Աստուածամօր պատկերաքանդակներում ներմուծել քրիստոնէական արուեստում լայն տարածում գտած խորհրդանշական պատկերները։ Արենիի հարթաքանդակի խորքի վրայ աջից և ձախից խաղողի երեքական ողկոյզներ են քանդակուած։ Աւելի բարձր ռելիեֆով արուած խոշորահատիկ ողկոյզները առանձնանում են խորքից և իրենց ձեւով յիշեցնում Զուարթնոցի (7–րդ դար) որթագալարի գօտու զոյգ ողկոյզները։ Նորավանքի բարձրաքանդակի վրայ Աստուածամօր գլխաւերեւում, լուսապսակի խորքին թեւատարած աղաւնի է պատկերուած, մանկան ոտքերի տակ՝ մէկ այլ թռչուն, իսկ մարմնից ներքեւ՝ առիւծ։

Խաղողը որպէս ս. աղաւնին՝ Սուրբ Հոգու խորհրդանշան յայտնի է դեռեւս վաղ քրիստոնէական շրջանից։ Առիւծը, ըստ Գրիգոր Տաթեւացու մեկնաբանութեան, նոյնպէս խորհրդանշում է Քրիստոսին։ Նա հիմնուելով Փրկչին վերաբերող՝ «Ահա յաղթեց առիւծը որ Յուդայի ցեղիցն է՝ Դաւթի արմատը...» (Յայտնութիւն, Ե, 5) արտայայտութեան վրայ «Գիրք հարցմանցում» գրում է. «Առիւծ է կոչւում մեր Տէր Յիսուս Քրիստոսը»[11]։ Բացի այդ, Սուրբ Գրոց բառարանում կարդում ենք՝ «...կը կարծուի թէ Յուդայի ցեղին նշանն առիւծն է»[12]։ Քրիստոնէական արուեստի նշանային լեզուի տարածուած արտայայտամիջոցները, տուեալ դէպքում վերոյիշեալ խորհրդանշանները հարստացնում են պատկերաքանդակների ներքին՝ «հոգեւոր» բովանդակութիւնը»։

Վարպետի այսպիսի մօտեցումը մեզ համար կարեւորում է նաև այն իրողութիւնը, որ քրիստոնէական արուեստը բոլոր ժամանակներում խորհրդանշան–պատկերների կուռ կառուցուածք ունեցող մի համակարգ է, որի բովանդակած նիւթն ու մեկնութեան բանալին, հիմնականում,

զետեղուած են միեւնոյն սկզբնաղբիւրի՝ Աստուածաշնչի մէջ։

Մի քանի խօսք պատկերաքանդակների արձանագրութիւնների մասին։

Արենիի յօրինուածքը երիզող կամարաղեղից դուրս փորագրուած է եկեղեցու չինարարական արձանագրութիւնը, որը դիտւում է ամբողջովին առանձին և իր բովանդակութեամբ ոչնչով չի առնչւում պատկերաքանդակի հետ։ Բոլորովին այլ «հնչողութիւն» ունեն Նորավանքի գաւթի պատկերաքանդակի արձանագրութիւնները, որոնք իրենց արտայայտած մտքի, գանուելու տեղի չնորհիւ, ասես, գրաւոր խօսքի միջոցով լրացնում ու իւրովի են մեկնաբանում յօրինուածքի բովանդակութիւնը։

Ուշադրութիւն է գրաւում Աստուածամօր և մանկան գլխավերեւի ուռուցիկ կամարաղեղին արուած արձանագրութիւնը, որը շարունակւում է շքամուտքի վերեւի հորիզոնական չրջանակի վրայ։ Այս արձանագրութիւնը հայ վիմագրութեանը նուիրուած աղբիւրներում տարբեր ձեւով է վերծանուել։ Վերջին և հաւաստի տարբերակը Սուրէն Աւագեանի ընթերցած՝ Աստծուն ուղղուած փառաբանական այս խօսքն է՝ «ԱՅՍ Է ԱՌ ԻՄ ԱՒՐՀՆԵԱԼ ԵՒ ԱՀԵՂ ԱՆՈՒՆՆ Ա(ՍՏՈՒԱ)Ծ Ի ԾԱԳԱՑ ՄԻՆՉ Ի ԾԱԳՍ ԾԱԳԻՆ ՈՐ ՈՉ ՀԱՏ ԵՒ ՈՉ ՎՃԱՐ»[13]։ *Եսայի մարգարէի ձեռքի ժապաւէնի վրայ փորագրուած են՝* «ԱՅՍ ԿՈՅՍ ԵՍԱՅԻ», *որը Քրիստոսի ծնունդը կանխագուշակող մարգարէի հետեւեալ խօսքի առաջին բառերն են՝* «... *ահա կոյսը կը յղանայ և կը ծնի մի որդի, և նորա անունը կը կանչէ Էմմանուէլ»* (Եսայիայ, է, 14)։ *Միջնադարում ընդունուած կարգի համաձայն, տեղի սղութեան պատճառով, գրուած են միայն առաջին երկու բառերը։ Այսպիսի «համառօտած» մի արձանագրութիւն, ծաղկանկար խորքին ներհիւսուած տառերով, արուած է Աստուածամօր ձախ կողմում։ Ըստ Մուրատ Հասրաթեանի, արձանագրութիւնը բովանդակում է Յովհաննէս Մկրտչի յայտնի արտայայտութիւնը՝* «ՉԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՅ ՅԱՆԱՊԱՏԻ»[14]։

Արձանագրութիւնների բովանդակութիւնից աւելի մեզ հետաքրքրում է պատկերաքանդակի խորքի և ծաղկանկար, գեղագիր տառերի ներդաշնակ համադրումը, որն իր բնոյթով եզակի է և ուրիշ ոչ մի այլ յուշարձանի վրայ չի հանդիպում։ Ինչպէս նկատում է Մ. Հասրաթեանը, Նորավանքի այս բարձրաքանդակը «հայ միջնադարեան քանդակագործութեան միակ օրինակն է «արաբեակ» կոչվող զարդանախշի»[15]։

Աստուածամօր մէկ այլ պատկերաքանդակ զարդարում է Նորավանքի համալիրի վերջին և հայ միջնադարեան ճարտարապետութեան եզակի յուշարձաններից մէկի՝ Բուրթելաշէն Սբ. Աստուածածին եկեղեցի-դամբարանի առաջին յարկի շքամուտքը։ Յուշարձանն աչքի է ընկնում ոչ միայն ճարտարապետական համարձակ լուծումներով, այլ նաև շքեղ և նրբաճաշակ զարդաքանդակներով ու թեմատիկ պատկերներով։ Աստուածամօր վերոյիշեալ պատկերաքանդակի վերեւում, երկրորդ յարկի շքամուտքի ճակատակալ քարին պատկերուած է Քրիստոսը՝ Պօղոս և Պետրոս

առաքեալների հետ։ Դրանից վեր, ռոտոնդայի սիւների վրայ «Աստուածամայրը մանկան հետ» յօրինուածքն է, նաև «Աստծոյ կամքով ու արդար վաստակով» եկեղեցին կառուցող կտիտորներ Բուրթել իշխանի և նրա որդու՝ Բեչքենի բարձրաքանդակները[16]։ Ճարտարապետական այս ինքնատիպ յղացման հեղինակը նոյնպէս Մոմիկն է։ Նա դեռևս 1292 թուականին նկարազարդած Աւետարանի լուսանցքներից մէկում պատկերել է մի եռայարկ եկեղեցու մանրակերտ։ Եթէ նկատի ունենանք այն հանգամանքը, որ յուշարձանների դեկորատիվ մանրամասները քանդակւում էին վերջում, իսկ Սբ. Աստուածածնի չինարարութիւնը աւարտուել է Մոմիկի մահից վեց տարի յետոյ՝ 1339 թուականին, ապա, բնականաբար, հարց է ծագում, թէ ով է դեկորատիվ հարուստ յարդարանքի և, ամենակարեւորը՝ վերոյիշեալ պատկերաքանդակների հեղինակը։ Այս հարցի վերաբերեալ կան տարբեր տեսակէտներ[17]։

Առաջին իսկ հայեացքից նկատելի է, որ այս եկեղեցու է՛ւ երկու յարկերի չքամուտքերի ընդհանուր յարդարանքը, եւ պատկերաքանդակների ոճական ու կատարողական առանձնայատկութիւնները շատ գծերով տարբերւում են Մոմիկի միւս գործերից։ Եթէ Արենիի եկեղեցու և Նորավանքի չքամուտքերի հիմնական զարդարանքը կամարաղեղների ներսում ամփոփուած Աստուածամօր պատկերաքանդակն է, ապա այստեղ պատկերաքանդակները չքամուտքի ընդհանուր յարդարանքի մի մասն են կազմում՝ լրացնելով եկեղեցու արեւմտեան ճակատի գեղարուեստական ամբողջականութիւնը։ Երկրորդ յարկ տանող աստիճանների չքամուտքերի զարդաքանդակ շրջանակների ճարտարապետական ու քանդակային ձեւերը աւելի ակտիւ յուզական ներգործութիւն ունեն, քան պատկերաքանդակները։

Մեզ հետաքրքրող «Աստուածամայրը մանկան հետ» յօրինուածքն իրենից ներկայացնում է աւանդական դահակալ օդիգիտրիայի պատկերագրական այն տիպը, որի դասական օրինակներից մէկն է Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու արեւմտեան պատի Աստուածամօր բարձրաքանդակը։ Ինչպէս Աղթամարի պատկերաքանդակի վրայ, այստեղ նոյնպէս հարթ խորքի վրայ պատկերուած գահակալ Աստուածամայրը դրկել է գոգին նըստած մանուկ Յիսուսին և նրա երկու կողքերին, դէպի կեդրոն շրջուած, բարեխօսի դիրքով կանգնած են Գաբրիէլ և Միքայէլ հրեշտակապետերը։ Աստուածամօր գլխի բարձրութեան վրայ փորագրուած է. «Մ[Ա]ՅՐ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ», իսկ հրեշտակապետերի ոտքերի մօտ՝ «Գ[ԱԲ]Ք[ՐԻԷԼ]» եւ «Մ[Ի]Ք[ԱՅԷԼ]» համառօտագիր արձանագրութիւնները։

Այս յօրինուածքը համեմատելով Մոմիկի կերտած Աստուածամօր պատկերաքանդակների հետ, տեսնում ենք, որ դրանք տարբերւում են ոչ միայն կառուցուածքային, այլ նաև գեղարուեստական առանձնայատկութիւններով։ Այստեղ քանդակային մակերեսի մշակումը բաւականին ընդհանրացուած է։ Աստուածամօր, մանկան և հրեշտակապետերի մարմինները, յստակ գծագրութեամբ թռչնաթեւերը, հագուստների դեկորատիվ

յարդարանքը պատկերուած են սխեմատիկ ձեւով։ Ակնյայտ է մէկ ուրիշ վարպետի ձեռագիր։ Պատկերման այս ձեւերը բնորոշ են նաև «Քրիստոսը Պօղոս և Պետրոս առաքեալների հետ» յօրինուածքին և ռոտոնդայի սիւների քանդակներին։

Ռոտոնդայի՝ դէպի արեւմուտք ուղղուած կեդրոնական սեան վրայի «Աստուածամայրը մանկան հետ» յօրինուածքը որոշ ընդհանրութիւններ ունի Սբ. Ստեփանոս եկեղեցու գաւթի պատկերաքանդակի հետ։ Գահակալ Աստուածամօր և նրա ձախ ծնկին նստած մանկան դիրքերը, Յիսուսից ներքեւ քանդակուած առիւծն իրենց ձեւերով յիշեցնում են Մոմիկի յայտնի յօրինուածքը։ Մեծ արուեստագէտի չունչն ու ոգին է զգացւում նաև եկեղեցու զարդաքանդակների վրայ։ Շքամուտքերի շրջանակը կազմող ժանեակահիւս զարդաժապաւէնները, ինչպէս նաև երկրորդ յարկի շքամուտքը երիզող զարդանախշի ութանկիւն վարդեակները մեզ ծանօթ են Մոմիկի 1308 թուականին կերտած խաչքարից։

Ինչպէս յայտնի է, եկեղեցու շինարարութիւնը աւարտուել է Մոմիկի մահից վեց տարի յետոյ, այլ քարգործ վարպետների կողմից։ Չի բացառւում, որ նրանք եղել են Օրբելեան իշխանական տան գլխաւոր ճարտարապետ և քանդակագործ Մոմիկի աշակերտները և մասնագիտական հմտութիւններ ձեռք բերել նրա գլխաւորութեամբ աշխատելու ընթացքում։ Ամենայն հաւանականութեամբ քանդակազարդումները կատարելու ժամանակ նրանք օգտուել են Մոմիկի կողմից նախկինում ստեղծուած զարդանախշերի ու քանդակների նախօրինակից։ Այդ են վկայում եկեղեցու ճարտարապետական ու քանդակային կերպարին բնորոշ յատկանիշները, որոնք բխում են Մոմիկի արուեստից։

Կարող ենք ենթադրել, որ տաղանդաւոր Մոմիկի արուեստի անմիջական շրջանակներում աշխատող, աւելին, նրա սկսած գործը շարունակող յաջորդ սերնդին պատկանող վարպետի ստեղծագործութեան արդասիքն են Բուրթելաշէն Սբ. Աստուածածին եկեղեցու քանդակազարդումները։

Աստուածամօր պատկերաքանդակների ուսումնասիրութիւնը հաւաստում է Մոմիկ արուեստագէտի ստեղծագործական ինքնատիպութեան մասին, որն արտայայտւում է պատկերի իմաստային ու յուզական փոխկապակցութեան նորովի ըմբռնումներով, յօրինուածքի ընդհանուր կառուցուածքի դինամիկ հաւասարակշռութեամբ, ընդհանուր հիւսուածքում խորհրդանշական պատկերների և զարդանախշերի իմաստային կապով։

Մոմիկի արուեստի ներգործութեան շրջանակները չեն սահմանափակւում իր ապրած ժամանակաշրջանով։ Նրա համարձակ յղացումները այսօր էլ ոգեշնչման աղբիւր են ժամանակակից արուեստագէտների համար։ Որպէս ամենաթարմ օրինակ նշենք 1998 թուականին վերակառուցումից յետոյ Քաշաթաղի Սբ. Յարութիւն եկեղեցու նոր շքամուտքը զարդարող «Աստուածամայրը մանկան հետ» հարթաքանդակը։ Քանդա-

կազործ Արտաշէս Յովսէփեանի ստեղծագործական անհատականութեամբ պայմանաւորուած թեմայի մեկնաբանման նորովի մօտեցումները համահունչ են Մոմիկ վարպետի ոգեղէն պատկերաքանդակներին։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. «Սրբոյն Հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1843, էջ 290-295:
2. Ղազարյան Մ., «Մովսէս Խորենացին եւ արվեստը», Եր., 1992 թ., էջ 63-64:
3. Lexikon Der Christlichen Ikonographie, All Gemeine Ikonographie. Herder, h. 3, էջ 168:
4. 4. Մնացականյան Ս. Խ., «Վարպետաց վարպետներ, Մաճուել, Տրդատ, Մոմիկ», Եր., 1982 թ, էջ 156:
5. «Դիվան հայ վիմագրության», պրակ 3, Եր., 1967 թ., էջ 243, Կ. Մաթեւոսյան, Մոմիկ, Երեւան, 1999, էջ 22:
6. Աւետիսյան Ա. Ն., «Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը», Եր., 1971 թ., էջ 64:
7. Նոյն տեղում, էջ 52:
8. Տես՝ Բարխուդարյան Ս., «Միջնադարյան հայ ճարտարապետներ եւ քարագործ վարպետներ», Եր., 1968 թ.: Ավետիսյան Ա., նշուած աշխ.: Մնացականյան Ս. Խ., նշվ. աշխ.:
9. «Դիվան հայ վիմագրության», պրակ 3, Եր., 1967 թ., էջ 29:
10. Սիրարփի Տէր-Ներսեսեան, «Հայ արվեստը միջնադարում», Եր., 1975 թ., էջ 87:
11. Գրիգոր Տաթեւացի, «Գիրք հարցմանց», Կ. Պոլիս, 1729 թ., էջ 315:
12. «Քառարան Սուրբ Գրոց», Կոստանդնուպոլիս, 1881 թ., էջ 49:
13. Ավագյան Սուրեն, «Վիմագրական պրպտումներ», Եր., 1986 թ., էջ 124:
14. Հասրաթյան Մ., «Հայ ճարտարապետության եւ քանդակագործության նորահայտ հուշարձաններ Նորավանքում», ՀՍՍՀ ԳԱ, «Լրաբեր», հասարակական գիտութիւնների, Եր., 1984 թ., թիւ 8, էջ 61:
15. Հասրաթյան Մ., նշվ. աշխ., էջ 60:
16. Արձանագրութեան ամբողջական տեքստը՝ «ԿԱՄԱՒՆ $\overline{ԱՅ}$ ԵՍ ՊԱՐՈՆ ԲԻՒԹԷԼ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ՎԱԽԱԽ ԵՒ ՈՐԴԻՔ ԻՄ ԲԵՇՔԵՆ ԵՒ ԻՆԱՆԻԿ ՇԻՆԵՑԱՔ ՋԵԿԵՂԵՑԻՍ ՄԵՐ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ», «Դիվան հայ վիմագրության», պրակ 3, Եր., 1967 թ., էջ 240:
17. Ըստ Ս. Մնացականյանի, ռոտոնդայի պատկերաքանդակները Մոմիկինն են, իսկ շքամուտքերի թեմատիկ քանդակներն ու զարդաքանդակները այլ վարպետների կողմից են արուել: Ս. Մնացականյան, նշվ., էջ 173-174:

«ՆՈՐԱՎԱՆՔ - 99»
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԴՐՈՅԹՆԵՐԸ

«Նորավանք-99» գիտաժողովից առաջ պլպազրուել էին եւ մասնակիցներին բաժանուեցին կարդացուող զեկուցումների դրոյթները: Ստորեւ ներկայացնում ենք այն զեկուցումների դրոյթները, որոնք չեն հրապարակում սոյն ժողովածուում, քանի որ լոյս են տեսել այլ հրատարակութիւններում:

ՄՈՒՐԱՏ ՀԱՍՐԱԹԵԱՆ
Ճարտարապետութեան դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ Արուեստի ինստիտուտ

ՆՈՐԱՎԱՆՔԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

*Նորավանքի հնագոյն՝ **Ս. Կարապետ** եկեղեցին, գտնուում է հիմնական յուշարձանախմբի հարաւային կողմում: Նրա աւերակները բացուեցին 1982-1983 թթ. պեղումների ժամանակ, որի շնորհիւ պարզուեց եկեղեցու՝ մինչ այդ անյայտ յօրինուածքը՝ միանաւ կամոդիկէ: Եկեղեցին չունի չինարարական արձանագրութիւն, իսկ Ստեփանոս Օրբելեանը նշում է, որ այն կառուցուել է. «Յառաջ քան զայս բազում ժամանակօք, վաղաւուրբք և հնագոյն ամօք...»: Ս. Կարապետ եկեղեցւոյ կառուցման հաւանական ժամանակաշրջանը կարելի է համարել Թ դարը:*

*Ս. Կարապետ եկեղեցուն կից է վանքի գլխաւոր՝ **Ս. Ստեփանոս Նախավկայ** եկեղեցին, որը կառուցել են իշխան Լիպարիտ Օրբելեանը և Սարգիս արքեպիսկոպոսը 1216-1221 թթ. (օծումը տեղի է ունեցել 1223 թ.): Թէ՛ բազմաթիւ արձանագրութիւններում և թէ պատմիչների մօտ, վանքի այս եկեղեցին կոչւում է Ս. Ստեփանոս Նախավկայ, սակայն գրականութեան մէջ մեծ մասամբ սխալմամբ անուանւում է Ս. Կարապետ: Եկեղեցին ունի ներքուստ խաչաձեւ, չորս անկիւններում երկյարկ աւանդատներով, արտաքուստ ուղղանկիւն յօրինուածք: Գմբէթը քանդուել էր 1840 թ. երկրաշարժից և վերակառուցուել 1980-ական թթ.:*

*Ս. Ստեփանոս Նախավկայ եկեղեցուն կից է **Ս. Գրիգոր** եկեղեցատապանատունը (ճարտարապետ՝ Սիրանես), որը 1275 թ. կառուցել է Տարսայիճ Օրբելեանը՝ որպէս դամբարան իր եղբօր՝ 1273 թ. զոհուած իշխանաց իշխան Սմբատի գերեզմանի վրայ: Այստեղ յետագայում թաղուել են կառուցողը՝ Տարսայիճ Օրբելեանը, նրա որդիներ Փախրադոլան եւ Էլիկումը, թոռը՝ Բուղտան, իշխանուհիներ Մինան եւ Թամթան,*

այսինքն՝ Ս. Գրիգոր եկեղեցին ծառայել է որպէս Օրբելեանների տոհմական տապանատուն։ Հայկական ճարտարապետութեան մէջ սա եզակի դէպք է, երբ տոհմական տապանատունը նաեւ եկեղեցի է։

Ս. Ստեփանոս Նախավկայ եկեղեցուն արեւմուտքից կից է գաւիթը, որը նոյնպէս ծառայել է որպէս Օրբելեանների տապանատուն։ Այն կառուցել է Սմբատ Օրբելեանը 1261 թ.։ Սակայն ներսում հիւսիսային և հարաւային պատերին եղած 1232 թ. և 1256 թ. նուիրատուական արձանագրութիւնները վկայում են, որ գաւթի շինարարութիւնը սկսուած է եղել ոչ ուշ, քան 1232 թ., իսկ 1261 թ. այն սոսկ աւարտուել է։ Ս. Նախավկայի եկեղեցու և գաւթի քանդակները մեծ արժէք ու հետաքրքրութիւն են ներկայացնում։ Յատկապէս առանձնանում են արեւմտեան մուտքի և լուսամուտի ճակատակալ քարերի բազմիմաստ պատկերաքանդակները։

Ս. Աստուածածին՝ «Բուրթելաշէն» եկեղեցին գտնւում է համալիրի հարաւարեւելեան կողմում։ Հաւանօրէն շէնքի առաջին յարկը տապանատուն է եղել, բայց այժմ ներսում ոչ մի տապանաքար չկայ։ Շէնքի երկրորդ յարկը դրսից և ներսից խաչաձեւ է՝ արեւելքում կիսաշրջանաձեւ խորանով, որի երկու կողմում թաղածածկ աւանդատներ են։ Խորանը բեմ չունի, սակայն յատակի մակերեսից դուրս եկող առաջին յարկի խորանով կամարը վկայում է, որ նախատեսուած է եղել այն բեմով ծածկել և դա ինչ-ինչ պատճառներով չի իրականացուել։

Բուրթելաշէնի յօրինուածքը բնորոշւում է առանձին յարկաբաժինների ծաւալների տարբեր լուծումների՝ զանգուածեղ և գետնահար առաջին յարկի, համեմատաբար բարձր, ուղղաձիգ ջլատումներով երկրորդ յարկի և թեթեւ սլացիկ սիւնազարդ գմբէթի զուգակցումով։ Շէնքի յարդարանքի գեղարուեստական արտայայտչականութիւնը գլխաւորապէս պայմանաւորուած է արեւմտեան ճակատով, որն աչքի է ընկնում ձեւաւորման արտակարգ ինքնատիպութեամբ։ Կան մի շարք այլ տուեալներ, որոնք Բուրթելաշէնի ճարտարապետական-գեղարուեստական վերլուծութեան հետ մէկտեղ թոյլ են տալիս եկեղեցին Մոմիկ վարդապետի ստեղծագործութիւնը համարել։

Վայոց ձորի լաւագոյն յուշարձանախումբը՝ Սիւնեաց եպիսկոպոսանիստ Նորավանքը, լաւագոյնն է նաև այդ ժամանակաշրջանի ողջ Հայաստանում, և իրաւամբ համարւում է ԺԴ դարի հայկական արուեստի «Հանրագիտարան»։

ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ
Պատմական գիտութիւնների թեկնածու
Մատենադարան

ՆՈՐԱՎԱՆՔԸ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Տասնեւհինգ տարի առաջ, 1984 թուականին Հայաստանում տօնուեց Գլաձորի համալսարանի 700-ամեակը։ Մինչ այդ, պեղումներ էին կատարուել Վայոց ձորի Ստեփանոս Սիւնեցու դամբարանին մօտ՝ Թանատի վանքում, որի արդիւնքները տպագրուեց, հրապարակուեցին այլ ուսումնասիրութիւններ, Եղէգնաձորի շրջակայ վանքերից մէկը վերածուեց Գլաձորի համալսարանի պատմութեան թանգարանի, որի մուտքի դիմաց վեր խոյացաւ խաչքարատիպ բազալտակերտ եօթ կոթողների շարքը, որպէս խորհրդանիշ համալսարանում դասաւանդուող եօթ ազատ արուեստների, որոնք դասաւանդւում էին նաև Եւրոպայի համալսարաններում, մինչեւ 15-րդ դարը, անշուշտ, աստուածաբանական գիտութիւններից յետոյ։

*Ի հարկէ, այդ օրերին էլ յայտնի էր Ստեփանոս Օրբելեանի՝ համալսարանի րաբունապետ Եսայի Նչեցուն յղած թղթում, նրան **«Ճիսուսական համալսարանացն պէտ և ձիր իմաստից»** որակումը տալու փաստը, բայց ուշադրութեան «չէր արժանանում» «Ճիսուսական Համալսարանացն» արտայայտութիւնը։*

Վերականգնուած Նորավանքը, ոչ միայն ուշադրութիւն հրաւիրեց Սուրբ աթոռանիստի մետրոպոլիտ վերատեսուչ և րաբունապետ Ստեփանոս Օրբելեանի Համալսարաններին տուած որակումի և նրանց մէկից աւելի լինելու փաստի վրայ, այլեւ ստիպեց «գտնել» երկրորդ համալսարանը, որպէսզի Եսայի Նչեցին իրաւամբ կոչուէր «Ճիսուսական համալսարանացն պէտ»։

Ինչպէս երեւում է, Գլաձորի և Նորավանքի համալսարանները միաւորուել են Եսայի Նչեցու ընդհանուր ղեկավարութեան ներքոյ, աւելի կազմակերպուած և նպատակասլաց գործելու համար։ Դրա վկայութիւնն է նաև այն, որ նրանց րաբունապետները միասին են յիշատակւում, թէ՛ Գլաձորի և թէ Նորավանքի գրիչների մօտ։

ՅԱԿՈԲ ՔԷՕՍԷՅԵԱՆ
Բանասիրական գիտութիւնների թեկնածու
Մատենադարան

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼԵԱՆԻ ԴԱՒԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

Միջնադարեան Հայաստանի եկեղեցաքաղաքական, կրթամշակութային նշանաւոր գործիչներից մէկն է Ստեփանոս Օրբելեանը (1250–1303), *որի առաջնորդութեան օրոք զգալիօրէն մեծանում է Սիւնեաց Միացեալ եպիսկոպոսական Աթոռի ինչպէս տնտեսական, այնպէս էլ եկեղեցաքաղաքական, հոգեւոր հզօրութիւնը։ Նա իր գործուն մասնակցութիւնն է բերում միաբարների դէմ Հայ Եկեղեցու մղած պայքարին։ Պապական Արեւմուտքի հոգեւոր, եկեղեցավարչական, քաղաքական ծրագրերի ու յաւակնոտութիւնների առաջն առնելու նպատակով Օրբելեանը գրում է մի շարք աշխատութիւններ՝ «Ողբ ի դիմաց կաթողիկէին...»՝ 1299–1300 թթ., «Թուղթ վասն հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ...»՝ 1302 թ., «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց»՝ 1303 թ.։ Այս գործերի մէջ Օրբելեանը պախարակելով կաթոլիկ եկեղեցուն ծառայագրուած հայ կղերականներին՝ ներկայացնում է արեւմտամետ կողմնորոշման վտանգաւոր հետեւանքները եկեղեցու և ազգի համար, կոչ է անում հաւատարիմ մնալ սրբազան աւանդութեամբ բիւրեղացած Ազգային եկեղեցու սկզբունքներին։ Այդ սկզբունքների հաստատման համար հեղինակն օգտագործում է տարբեր բնոյթի աղբիւրներ (դաւանաբանական, կանոնական, ծիսական, հայրախօսական)։ Աղբիւրների մի մասը ներկայացնում է քաղկեդոնական դաւանութիւնը, իսկ միւսը՝ առաւել ծաւալուն մասը, ի հեճուկս քաղկեդոնականութեան, կոչուած է վաւերացնել Հայ Առաքելական եկեղեցու դաւանական դրութեան ճշմարտացիութիւնը։

ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ
Պատմական գիտութիւնների թեկնածու
Մատենադարան

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐԸ

Հայ գրիչների ջանքերով Հայաստանում և նրա սահմաններից դուրս հազարաւոր ձեռագրեր են ընդօրինակուել։ Հսկայական կորուստներից յետոյ, այսօր, աշխարհում հաշոււում է մօտ 30 *հազար ձեռագրական մի-*

աւոր, գրուած շուրջ 1500 գրչութեան կեդրոններում։

Ձեռագրեր են գրուել, խմբագրուել նաև Սիւնեաց Վայոց ձորի մէկ տասնեակից աւելի գրչութեան կեդրոններում։

Վայոց ձորի մեզ յայտնի հնագոյն գրչութեան կեդրոնից՝ Մամասայից, ընդամէնը մէկ Աւետարանի յիշատակարան է հասել մեզ, գրուած Մկրտիչ գրչի ձեռքով։ Վայոց ձորի գրչութեան կեդրոններում գրուած ձեռագրերը մեծ մասամբ 13–17 դարերից են։ Դրանց հիմնական մասն էլ Գլաձորի համալսարանի սանների, վարդապետների երեք տասնեակից աւելի ընդօրինակութիւններ են։ Համալսարանի Ստեփանոս, Վարդան, Տիրատուր, Պօղոս Կիլիկեցիների, Սարգիս, Թորոս Տարոնացի գրիչների ու ծաղկողների կողքին, Հերմոնի վանքում՝ Մովսէս, Սիմէոն, Գրիգոր գրիչներն են, Նորավանքում և Վերին Նորավանքում՝ Բեներ, Կորիւն, Մաթեւոս, Մոմիկ, Արատեսում՝ Խաչատուր Երզնկացի գրիչը։ Այս գրիչների ընդօրինակութեամբ մէկ կամ երկու ձեռագիր է հասել մեզ։

Շուրջ մէկ տասնեակից անցնում են 15–17-րդ դարերում Հերմոնի և Վերին Նորավանքի, Թանահատի գրչութեան կեդրոնների ձեռագրերը։ Գրիգոր, Աբրահամ, Երեմիա, Ալեքսանոս գրիչների հետ, Սրկղունքում ձեռագրեր է օրինակում Դաւիթը, Բոլորաբերդում՝ Աբրահամը։ Ձեռագրեր են հասել նաև Ցաղաց քարից։ Մէկական ձեռագրեր են հասել Շատիկից, Զորեվանքից, Երերան անապատից, Խնձորուտից, Աղաւ անապատից։

Նշուած կեդրոններում ոչ միայն գրում, ծաղկում, կազմում և բազմացնում էին ձեռագրերը, այլեւ ստեղծում մատենագրական երկեր, մեկնողական, վերլուծական գործեր։

Գլաձորը, Հերմոնը, Նորավանքը և այլ խոշոր կեդրոններն ունէին իրենց մատենադարանները, որոնցում պահւում էին յատկապէս ընտիր և հին օրինակներ, որոնցից օգտւում էին գրիչներն ու մանրանկարիչները։

ՍՈՒՐԷՆ ՍԱՂՈՒՄԵԱՆ
Պատմական գիտութիւնների թեկնածու
ՀՀ Պատմութեան եւ մշակոյթի յուշարձանների
պահպանութեան եւ վերականգնման վարչութիւն

ՆՈՐԱՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԸ

«Աչխարհաճանաչ հանդիսարան» Ամաղու Նորավանքի վիմագիր արձանագրութիւնները արժանահաւատ տեղեկութիւններ են պարունակում միջնադարեան Հայաստանի պատմութեան տարաբնոյթ խնդիրների վերաբերեալ։ Դրանց թիւը հասնում է 250-ի, որոնցից հնագոյնը՝ Հայր Յովհաննէսի անուամբ վիմագիրն է, «ՀԱՅՐ ՅՈՎԱՆԻՍ ՅԱՂԱԹՍ ՅԻՇԵՑԷՔ», որը հաւանօրէն պատկանում է վանքի առաջին վանահայր

Յովհաննէս եպիսկոպոսին (մահ. 1164), իսկ նորագոյնը՝ ոմն Գրիգորի ինքնագիրն է՝ 1703 թ.։

Վիմագրական այս ընդգրկուն նիւթը ուշադրութեան է արժանացել դեռ 13-րդ դարում՝ Սիւնեաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելեանի կողմից, իսկ աւելի ուշ հետազօտութեան առարկայ դարձել մի շարք բնասէրների համար։

Նորավանքի վիմագրերի պատկառելի մասը չինարարական-նուիրատուական են։ Ս. Ստեփանոս Նախավկայ եկեղեցու հիւսիսային պատի արձանագրութիւնը (1221) ուշագրաւ մանրամասներ է հաղորդում ինչպէս չինարարական ձեռնարկման, այնպէս էլ Օրբելեան տոհմի անցեալի եկեղեցու կառուցման, կատարուած նուիրատուութիւնների մասին և այլն։

Իշխանաց իշխան Սմբատը 1261 թ. կառուցում է Նորավանքի գաւիթ-ժամատունը, նորոգում եկեղեցին, գիւղեր ու այգիներ նուիրում, իսկ միաբանութեանը պատարագաժամեր է սահմանում ծնողների՝ Լիպարիտի ու Ասիայի և եղբայրների համար։ Վանքին առատաձեռնաբար նպաստաւորում են Եւ Օրբելեանները, եւ թագաւորազարմ Մահեւանեանները, բազում բարեգործներ ու մեկենասներ, ուխտագնացներ։ Միայն 13-րդ դարում վանքին տրուած նուիրատուութիւնների արժէքը, մօտաւոր հաշւարկներով, կազմել է աւելի քան 200 կիլոգրամ ոսկի, որի մէջ չեն ներառուած շատ գիւղեր ու կալուածքներ, հասոյթներ ու եկամուտներ, ագարակներ, չահութաբեր տներ ու կուղպակներ, այգիներ, անասնահօտեր եւ այլն։ Գոյացող այս միջոցներով խնամւում էր բազմանդամ միաբանութիւնը, սանները, երթեւեկ պաշտօնեաները, հիւրերը, հատուցւում քարգործ վարպետներին, ճարտարապետներին, արհեստաւորներին, մշակներին։

Դամբարանային կառոյցների մէջ իւրայատուկ է Սմբատի (մահացած՝ 1273 թ.) տապանատունը կամ Ս. Գրիգոր եկեղեցին (կառուցել է Տարսայիճ Օրբելեանը, ճարտարապետն է Սիրանեսը 1235-ին), որի մէջ ամփոփուած են պատմական նշանաւոր անձանց աճիւնները։

Իսկ ահա մետրոպոլիտ Ստեփանոսը թաղուած է գաւթում (մահ.՝ 1303 թ.)։ Արձանագրուած տապանաքարից բացի, նրա յիշատակին գեղակերտ խաչքար է կանգնեցուել Ստեփանոսի սանի և յաջորդի՝ Յովհաննէս Օրբելի կողմից, (այժմ՝ Էջմիածնի գանձատունը), որի ստորին մասում բազմաչնորհ արուեստագէտ Մոմիկը հետեւեալ արձանագրութիւնն է թողել. «ԵՄ ԱՒՐՊԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍ, ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՒՐՆ ԻՄ ՏԷՐ ՍՏԵՓԱՆՈՍԻՆ։ ԹՎ. ՉՃԳ-1304։ ՄՈՄԻԿ ՎԱՐԴՊԵՏ»։

Նորավանքում շատ են ուրիշ անուանի մարդկանց գերեզմանները, հակիրճ տապանագրերով։ Պատմագիտական արժէքից բացի, Նորավանքի վիմագրերը կարեւորւում են նաև տեղական խօսուածքի, անձնանունների և այլ մանրամասների տեսանկիւնից։ Նորավանքի վիմագիր արձանագրութիւններն ունեն գիտամշակութային ու ճանաչողական բացառիկ արժէք և մնալու են որպէս յետագայ ուսումնասիրութիւնների առատաբուխ սկզբնաղբիւր։

ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ
Պատմական գիտութիւնների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՏԱՊԱՆԱՔԱՐԱՅԻՆ ՔԱՆԴԱԿՆԵՐԸ (ԿՌՈՒԻ ԹԵՄԱՆ)

1. *Հայաստանի ուշ միջնադարեան (14–18-րդ դդ.) տապանաքարային պատկերաքանդակի վերջին տարիների հետազօտութիւնները թոյլ են տալիս հաւաստել, որ այն հիմնականում արտացոլում է մահը յաղթահարելու ժողովրդական-առասպելական պատկերացումները։ Տապանաքարային քանդակի գլխաւոր «կերպարը» հանգուցեալն է, որը հանդէս է գալիս իտէալական կերպաւորումով և իտէալական միջավայրում։*

2. *Առկայ նիւթի քննութեամբ հնարաւոր է առանձնացնել «յաւերժ խնճոյքի», «յաւերժ կռուի», «անմխիթար սգի», «հոգեհանգստեան պատարագի» թեմաները, արքայի, ռազմիկի, որսորդի, հովուի, ուսումնասէրի, երաժշտի կերպարները։*

3. *Վայոց ձորի տապանաքարերը յատկապէս ուշագրաւ նիւթ են մատակարարում կռուի թեմայի վերականգնման համար։ Այս թեմայի պատկերագրական դրսեւորումները Վայոց ձորում վկայուած են չատ աւելի վաղ (սկսած 13-րդ դարից), քան այլ տարածքներում, և ըստ երեւոյթին, կապուած տեղական նախարարական տների ակտիւ ռազմական գործունէութեան հետ, աւելի մանրամասն են ներկայացնում թէ՛ թեմայի առանձին կողմերը, թէ ռազմիկի կերպարը։*

4. *«Յաւերժ կռուի» շրջանակներում հանգուցեալը ներկայանում է որպէս հեծեալ ռազմիկ և խիզախ որսորդ (մարդակերպ կոդաւորում), որպէս ցուլ յօշոտող առիւծ, ճիրաններում գառ կամ կաքաւ խեղդող արծիւ (կենդանակերպ կոդաւորում)։ Ռազմիկի կենդանակերպ կերպարի քննութեան համար առաջնային նշանակութիւն ունեն յատկապէս Նորավանքի երկու տապանաքարերի պատկերաքանդակներն ու արձանագրութիւնները։*

5. *Պատկերաքանդակների քննութեամբ հնարաւոր է վերականգնել նաև սպառազինութեան ընդհանուր պատկերը, զէնքերի տեսականին, դրանք կրելու և ներկայացնելու հիմնական ձեւերը։*



ՀՐԱՉԵԱՅ ԳԱՍՊԱՐԵԱՆ
Ճարտարապետ
1700-ամեակի ճարտարապետական գրասենեակ

ՆՈՐԱՎԱՆՔԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԵՒ ՎԱՆՔԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ

Ս. Աստուածածինը կառուցուած է Նորավանքի համալիրի հարաւարեւելեան կողմում՝ հիմնական յուշարձանախմբից մօտ 30 մետր հեռաւորութեան վրայ: Պատկանում է 13–14-րդ դարերում տարածում գտած երկյարկանի եկեղեցի-դամբարան տիպին (Գոշավանք, Եղուարդ, Կարբի, Կապուտան), որոնց ծագումնաբանական ակունքները տանում են դէպի վաղ միջնադարեան երկու յարկաբաժիններով դամբարանային կառոյցները:

Նորավանքի Ս. Աստուածածին եկեղեցի-դամբարանը կիսով չափ աւերուել էր 1840 թ. երկրաշարժից և կանգնած էր վերջնական կործանման եզրին: Յուշարձանի արտակարգ նշանակութիւնը նկատի ունենալով՝ 1948 թուականին յուշարձանների պահպանութեան կոմիտէն սկսեց նրա վերանորոգումը: Նախագիծը (հեղինակ՝ Ա. Բալասանեան) կազմուած է 1946 թ. գիտարշաւի նիւթերի հիման վրայ, որի կազմում չափագրութիւնները կատարել էին Սիվկովը և Լ. Սաղոյեանը:

Այս վերանորոգման ընթացքում, ըստ Կ. Յովհաննիսեանի, նախապէս պեղուեց յուշարձանի տարածքը, որից յետոյ նպատակայարմար համարուեց վերաշարել երկրորդ յարկի արեւելեան և հիւսիսային ճակատները՝ որմածքը խիստ խարխլած լինելու պատճառով: Այդ աշխատանքների ընթացքում ճակատների ընդհանուր յօրինուածքները նախապէս հաւաքուել և շարուել էին գետնի վրայ, որտեղ նրանց առանձին մասերը լրացուել էին պեղումներից յայտնաբերուած բեկորների միջոցով: Կառոյցը վերանորոգուեց մանանակիօրէն (սիւնազարդ դմբէթի պահպանուած բեկորների քանակութիւնն անբաւարար է համարուել այն վերականգնելու համար): Վերականգնուեցին դմբէթակիր համակարգը կրող կամարները, թաղերը, ինչպէս նաև առանձին մանրամասներ: Իսկ ամբողջութեամբ յուշարձանը ծածկուեց նման դէպքերի համար ընդունուած թիթեղով, որը պէտք է առժամանակ կանխէր կառուցուածքը մթնոլորտային տեղումներից վնասուելուց և այն պահպանէր յետագայ ուսումնասիրութիւնների համար:

Արժանին հատուցելով յետպատերազմեան դժուարին տարիների բարդ իրավիճակներում և ճանապարհների բացակայութեան պայմաններում այդ դժուարին աշխատանքներն իրականացնողներին՝ այնուամենայ-

նիւ պէտք է նշել, որ 1948 թ. վերանորոգման ընթացքում թոյլ են տրուել մի քանի սխալներ, որոնք սրբագրուեցին 1989 թ. կատարուած ամբողջական վերականգնման նախագծային աշխատանքների ժամանակ։

Յուշարձանների պահպանման և օգտագործման վարչութեան «Արփի» գիտաարտադրական արուեստանոցի կողմից, մինչեւ Ս. Աստուածածին եկեղեցի-դամբարանի վերականգնողական աշխատանքներն սկսելը՝ 1982-86 թուականների ընթացքում, արդէն ամբողջութեամբ վերականգնուել էր Նորավանքի ճարտարապետական համալիրի կազմի մէջ մտնող Սո. Նախավկայ եկեղեցին, գաւիթը, Սմբատի դամբարանը, ինչպէս նաև կոնսերւացուել էին Ս. Կարապետ եկեղեցուց մեզ հասած հատուածները։ 1996-98 թթ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինի հովանաւորութեամբ, Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակի տօնակատարման գրասենեակի և Սիւնեաց թեմի կազմակերպմամբ, ինչպէս նաև գանատահայ բարերարներ՝ Տէր և Տիկին Տիգրան և Տիանա Հաճէթեանների մեկենասութեամբ՝ Օրբելեան Բուրթել իշխանի կառուցած հրաշակերտ եկեղեցի-դամբարանն այժմ վերականգնուած է ամբողջութեամբ։

Նախատեսւում է նաև վերականգնել վանական համալիրը շրջափակող պարսպապատերը, Ս. Աստուածածին եկեղեցի-դամբարանից հիւսիս արեւելք գտնուող երկու մատուռները, կառուցել վանատուն, մատաղարան, բարեկարգել համալիրի ներքին տարածքը ամբողջութեամբ, կառուցել անհրաժեշտ օժանդակ շինութիւններ եւ այլն։



Ansicht der Burg Hohenstein

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ Առաքելական Ս. Եկեղեցու Սիւնեաց Թեմի «Նորավանք» Հայագիտական Տարեգիրքը 5
Խմբագրական

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի ձեռամբ վերաբացուեց հռչակաւոր Նորավանքը 8
Մամլոյ Դիւան Մայր Աթոռի

«Նորոգող Հնութեանց, Նորոգեա՛ եւ Զիս, Նորոգ Զարդարեա՛» Հայրապետական Խօսք Նորավանքի օծման առիթով 14
Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ուխտի Օրը Նորավանքում 2000 թուականին
Առաջնորդարան Սիւնեաց Թեմի 16

Սիւնեաց թեմում գործող եկեղեցիները 19

Սիւնեաց թեմը վերազարթօնքի ճանապարհին 21

Մետրոպոլիտութիւնը Հայոց մէջ 26
Տ. Շահէ Արքեպիսկոպոս Ածէմեան

Վայոց Ձորի քառակերտ գանձերը 33

Վայոց Ձորի պատմաճարտարապետական յուշարձանների պահպանութեան եւ վերականգնման ուղղութեամբ գործադրուած ջանքերը 38
Վարազդատ Յարութիւնեան

Սիւնեաց Եպիսկոպոսների շինարարական գործունէութիւնը (10-14րդ դարեր) 45
Գրիգոր Գրիգորեան

Նորավանքը եւ հայ իշխանական տները ԺԲ-ԺԴ դարերում 55
Հայրապետ Մարգարեան

Դրուագներ Նորավանքի Եպիսկոպոսական աթոռի պատմութիւնից (Արատես եւ Վերին Նորավանք) 62
Կարեն Մաթեւոսեան

Նորավանքի նուիրատուական արձանագրութիւնները
եւ մի տեղադրութեան ճշգրտման փորձ 77
Գագիկ Գ. Սարգսեան

Ցաղաց Քար վանքի պեղումները եւ
նորայայտ արձանագրութիւնները 84
Յուսիկ Մելքոնեան

Վայոց Ձորի մաներանկարիչները 99
Աստղիկ Գեւորգեան

Աստուածամօր պատկերաքանդակները Արենիում եւ
Նորավանքում 110
Քնարիկ Ավետիսեան

«Նորավանք-99» Գիտաժողովի զեկուցումների դրոյթները 122

Տօնք Եկեղեցականք 134

ՏՕՆՔ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ 2001 թ.

Ծնունդ եւ Յայտնութիւն	Յուն.	6
Անուանակոչութիւն	Յուն.	13
Ծնունդ Ս. Յովհաննու Կարապետին	Յուն.	15
Բարեկ. Առաջաւորաց	Փետր.	4
Ս. Սարգիս	Փետր.	10
Տեառնընդառաջ	Փետր.	14
Ս. Վարդանանց	Փետր.	22
Բուն Բարեկենդան	Փետր.	25
Ս. Գրիգոր Լուսաւորչի մուտն ի Վիրապն	Մարտ	31
Աւետումն	Ապրիլ	7
Ծաղկազարդ	Ապրիլ	8
Զատիկ	Ապրիլ	15
Երեւումն Ս. Խաչի	Մայիս	13
Համբարձումն	Մայիս	24
Հոգեգալուստ	Յունիս	3
Ս. Հռիփսիմեանց	Յունիս	11
Ս. Գայիանեանց	Յունիս	12
Ս. Շողակաթ վանքի	Յունիս	14
Ս. Գրիգոր Լուսաւորչի ելն ի Վիրապէն	Յունիս	16
Տօն Ս. Էջմիածնի	Յունիս	17
Բարեկ. Լուսաւորչի	Յունիս	24
Գիւտ նշխարաց Սուրբ Գրիգոր Լուսաւորչի	Յունիս	30
Ս. Սահակ, Մեսրովբ	Յուլիս	5
Բարեկ. Վարդավառի	Յուլիս	15
Վարդավառ	Յուլիս	22
Բարեկ. Ս. Աստուածածնի	Օգոստ.	5
Վերափոխումն	Օգոստ.	12
Ս. Յովակիմ եւ Աննա	Օգոստ.	21
Ծնունդ Ս. Կուսին	Սեպտ.	8
Բարեկ. Ս. Խաչի	Սեպտ.	9
Խաչվերաց	Սեպտ.	16
Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի	Սեպտ.	23
Ս. Գէորգ	Սեպտ.	29
Վարագայ Ս. Խաչ	Հոկտ.	30

Սրբոց թարգմանչաց	Հոկտ.	13
Գիւտ Խաչի	Հոկտ.	28
Ս. Հրեշտակապետք	Նոյ.	10
Բարեկ. Յիսնակաց	Նոյ.	18
Ընծայումն Ս. Աստուածածնի	Նոյ.	21
Ս. Թադէոս եւ Ս. Բարդուղիմէոս	Դեկտ.	1
Յղութիւն Ս. Աստուածածնի յԱննայէ	Դեկտ.	9
Բարեկ. Ս. Յակովբայ	Դեկտ.	9
Ս. Յակովբ	Դեկտ.	15
Ս. Դաւիթ մարգարէ	Դեկտ.	24
Ս. Ստեփաննոս	Դեկտ.	25
Ս. Պետրոս եւ Ս. Պօղոս	Դեկտ.	27
Ս. Որդւոցն Որոտման	Դեկտ.	29



«ՆՈՐԱՎԱՆՔ»
ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ
ՍԻՆԵԱՑ ԹԵՄԻ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ

Համակարգչային շարուածքը՝ Ժաննա Մաթեւոսեանի
Սրբագրիչ՝ Վահանդուխտ Դերձեան

Լուսանկարներ՝
Բազէ Հրայրի
e-mail: hawk@videotron.ca

Տպագրութիւն
DICK ART DESIGN
Ա. Տ. Մանավեան - Մոնրէալ